As a major type of audiovisual translation, subtitling is viewed as one of the most challenging fields in translation study due to its special and temporal limits.

Generally, subtitling can be defined as the simultaneous presentation of translated materials on the screen. According to Audiovisual translation scholars (Gottlieb, Diaz-Cintas and Remeal), subtitles are divided into two main groups intralingual and interlingual subtitling. Intralingual subtitling is the subtitling within the same language, while interlingual subtitling is the one between two languages (Gambier 2014: 49). Although, both types of subtitling are widely applicable, within the scope of this article we will go deep into the interlingual subtitles with the focus on interlingual Armenian-English translation and subtitles of an Armenian movie.

Given a number of specificities of subtitling (of technical nature, too), Diaz-Cintas singles out *spatial, temporal, linguistic considerations of subtitling*. (Diaz-Cintas 2012: 274). From the spatial consideration, subtitles are known to contain an average of 37 characters, temporal limits ranging from one second to six seconds.

Out of the above-stated three considerations, the linguistic aspect can be the most challenging one, taking into account cultural components that are vague for the target language audience. However, the challenge becomes even more serious when the latter is viewed as a medium for rendering realia. As linguacultural phenomena, *realia* (Vlakhov and Florin, Leppihalme)

are known by different names “*cultural words*”(Newmark), “*Culture-specific concepts*” (Baker), can be defined as words or expressions that can imply concepts which are partially or totally unknown to the target culture. They can be abstract or concrete and may refer to different spheres of life (Baker 1992:21). Pedersen goes further and uses the term “*extralinguistic culture-bound references*” (ECR)

A large variety of translation methods and strategies identified by scholars (Pedersen, Diaz-Cintas and Remael) are very similar in essence, as revealed by the brief definitions thereof, yet they are named differently in the respective theories, e.g. one of the most common strategies for incorporating the cultural word into the target language due to lack of the equivalent translation is **retention**, a term suggested by Pedersen and **loan** by Diaz-Cintas and Remael (2007:202). The idea of literal translation is expressed through **direct translation** by Pedersen which is subdivided into **calque and shifted** (2005:5), and **calque** by Diaz-Cintas and Remael (2007:202). Both scholars come up with a term **explicitation**, however the definitions are different. What Diaz-Cintas and Remael (2007:203) the term **explicitation** is closer in meaning to Pedersen’s **generalization** (2005:6), as both terms are used to refer to the process of replacing something specific by something more general. **Generalization** strategy is subdivided into **hyponymy** and **other** types. Pedersen’s **explicitation**, which involves expansion of the text, or spelling out anything that is implicit in the ST, is a part of a larger group termed **specification**, where the ECR is left in its untranslated form, but information that is not present in the ST is added, making the TT ECR more specific than the ST ECR (Pedersen 2005:4). Both scholars suggest the term **addition** which is a form of explicitation (Diaz-Cintas and Remael 2007:207).

The idea of replacing a cultural concept from one language to another is known as **transposition** by Diaz-Cintas and Remael (2007:204), while the same idea is introduced through the term **substitution** by Pedersen, which is subdivided into **cultural substitution and paraphrase**, the latter is further subdivided into paraphrase with **sense transfer** and (where the ST ECR is removed, but its sense or relevant connotations are kept by using a paraphrase) and **situational paraphrase** (every sense of the ST ECR is completely removed, and replaced by something that fits the situation, regardless of the sense of the SC ECR.)(Pedersen 2005:6-9). It’s worth mentioning that Diaz-Cintas and Remael come up with a **substitution** strategy which is presented as a variant of **explicitation**, restored when spatial constraints do not allow for the insertion of a longer term (Diaz-Cintas and

Remael 2007:204). The extreme strategy of omitting the cultural word is termed **omission** both by Diaz-Cintas and Remael and by Pedersen.

Apart from the above-mentioned strategies, Diaz-Cintas and Remael come up with two strategies that cannot be found in Pedersen's classification, namely **lexical recreation**, which is also known as the invention of a neologism and **compensation**, where translational loss is restored by overtranslating. The latter is quite popular for rendering humour in movies (Diaz-Cintas and Remael 2007:206).

Among the above stated strategies, Pedersen's Taxonomy for Extralinguistic Cultural references shall be deemed the most expedient, given its comprehensiveness and applicability to the linguistic material under study. Although it overlaps with the Diaz-Cintas and Remael's classification, it proposes a more distinct and circumstantial approach.




Figure 1. ECR Transfer Strategies (Pedersen 2005: 4)

In order to give the general insight to the transfer of the Armenian realia in subtitling, as well as to analyze and single out the above-stated three aspects of subtitling, a contemporary Armenian movie “*The Line*” has been selected. The movie tells the story of 4 childhood friends who have to face the horrors of war. It depicts the events of the Nagorno-Karabakh war of the early 1990s. Therefore, the choice is conditioned not only by the abundance of realia, but also by the popularity of the film among Armenians and the importance of its message.

The comparative method is applied through the distinction of the original movie script, the translated English subtitles and the suggested alternative translations, presented in the tables below. To show the main aspects of subtitling, the break for a single line, with maximum 37/38 characters, is presented in square brackets, while curly brackets are used to indicate the split into two lines.

<i>Armenian Realia</i>	<i>English Translation</i>	<i>Suggested translation</i>
<p>-Քիճա, եթե կյանքիցդ հոգնել ես, գնա քեզ Կիկյանից քից: -Էդ բանը եթե հերդ աներ, ազգից մի այլանդակ կպակասեր, իմացա՞ր: (0:48:28 -0:48:36)</p>	<p>[You old buzzard, go jump from the bridge...] {{If your dad did that, there would] [be one freak less in the nation.}}</p>	<p>[You, geezer, don't want to live,] [go jump from the bridge...] {{If your dad did that,] [we'd have one moron less.]}</p>

In the above mentioned example we come across the following realia: «**քիճա**», «**Կիկյան**», and «**այլանդակ**». The first «**Քիճա**» is a typical Armenian direct address to middle aged or elderly people with a negative connotation. The same realia is used within the passage twice, in the first case the translator rendered it by a slang word “**old buzzard**”, and in the second case with a completely different word units- “**old sod**”. In both cases the contextual message was delivered. However, for keeping the stylistic coloring, a more frequently used slang word “**geezer**” can be suggested, using the **sense transfer**, which expresses not only the meaning, the style of the passage, but is more economical from the spatial point of view.

Within the same passage we come across another realia «**Կիկյան**» (Kievyan) which is the name of one of the most famous bridges in Yerevan, it is also famous for the high rate of suicide cases. The translator rendered the

idea by **omitting** the name and substituting it with the word “**jump from the bridge**”. Given the fact that the official name of the bridge is quite long (“the Great Bridge of Hrazdan”) and by rendering the name by colloquial “**Kievyan**”, the translation will not give any insight to the audience, the translator’s decision of applying **generalization** strategy, more specifically **hyponymy**, is quite justified.

The next realia is a vulgarism which is expressed in the passage twice. In one case the meaning is conveyed by a colloquial word “**freak**” and in another passage by “**creep**”. The **situation paraphrase** does not fully express the pragmatic meaning and stylistic coloring, given that the words do not have the same intensity as the Armenian realia. With the use of the same strategy the meaning of the vulgar word in both passages can be rendered though “**moron,(asshole)**”.

From the point of view of subtitles, the line should be broken at a logical point, therefore the parts of a complex verb cannot be splitted as it is done by movie subtitler [If your dad did that, there would] [be one **freak** less in the nation.] More logical line break is suggested [If your dad did that,] [**we’d have one moron.**], without contradicting the spatial and temporal criteria.

Armenian Realia	English Translation	Suggested translation
Ինչ ասի՞ր: Ասում եմ՝ մի քիչ կամաց քշի: Տ n, ոնց ուզեմ տեսց էլ կքշեմ: Լկստրված լակոտր , փու: Սրբի հլը: Բա կում մարդիկ են քայլում, այլանդակ , կամաց քշի ասում եմ... (0:48:37 -0:48:49)	[What did you say?] [I said, slow down.] [It’s none of your business.] [Selfish, spoiled youngster.] [Wipe that up!] {[People are passing here, you creep.] [Don’t drive so fast.]}	[What did you say?] [I said, slow down.] [None of your fucking bussiness.] [Spoiled bastard.] [Wipe that up!] {[People are walking here, you moron.] [Don’t drive so fast.]

Another realia in the passage is expressed by an interjection «**տո**», which is again typical of the Armenian colloquial speech. The interjection is **omitted** in the English version; however, the contextual idea of a young boy addressing an old man in the most disrespectful manner was partially

transferred by “**It’s none of your business.**” However, the style and the intentions are not rendered, since the interjection gives the idea that the interlocutor is ill-bred which is not quite clear in the English version. Using **situational paraphrase** the meaning of the interjectional realia can be rendered through the word “**fucking**”-“None of your **fucking** business”.

In the same passage we come across a vulgar expression «**լիստրված լալոյր**» which in this specific case can be considered a realia. The expression is transferred by “**selfish, spoiled youngster**”, which is expressed by three separate words and does not fully convey the pragmatic meaning. The Armenian vulgar word «**լալոյր**» stands for an *illegitimate child* which can be rendered by the use of **official equivalent** “**bastard**” instead of “**spoiled youngster**”. What refers to the attribute «**լիստրված**» the use of one word “**spoiled**”, through **situational paraphrase**, is justified to render the same meaning and stylistic coloring. From temporal and spatial considerations, with the suggested translation 26 characters are reduced to 15, which gives more time for the subtitle to remain on the screen.

Armenian Realia	English Translation	Suggested translation
Հետո ինչ է՛: Անդաստիարակի մեկը... Ի՛, լավ չե՛ս բիծա... Նստի ավտոդ քշի գնա ստեղից: Լսի քեզ ինչ եմ ասում, սրբի՛, շուտ արա... (0:48:50-0:48:57)	[So what?] [Ill-bred idiot.] {[Have you lost your mind?] [Listen here, old sod. Wipe your spit right now.]}	[-So what?] [-Ill-bred idiot.] [-Wha... lost your mind, you geeser?] [-Just drive off.] [Listen up! Wipe your spit right now.]

In many cases a single letter, let alone a word, has the power of conveying stylistic coloring and changing the perception of a passage. Here, one letter «**ի՛...**» is used as an interjection expressing surprise and frustration. For this realia, the translator used the extreme strategy of **omission**, which can be easily restored and rendered, through the **situational paraphrase**, by “**wha...**”, the contracted version of the word “**what**”, to express the same emotions.

The next realia typical of the colloquial style «**լավ չես**» is rendered into English by **sense transfer** “**Have you lost your mind?**” which conveys the same meaning. However, the expression can be condensed with the help of ellipses “**Lost your mind?**” It should be noted that in this passage some

expressions are omitted in order to fit into temporal and spatial criteria. In particular, the sentence «Նստի ավտոդ քշի գնա սրտեղից» has been omitted, but can be easily restored without contradicting the screen space and time limits with the help of a short expression “*Just drive off*”, which rendered both the meaning and the stylistic coloring.

The above-mentioned three examples are the logical continuation of the same scene. Therefore, given the fact that the dialogue is emotional and expresses frustration, from temporal and spatial criteria, sometimes there is an overlap of the characters’ speeches. However, considering omission to be an extreme method, we suggest to use contracted versions of the words or synonyms with fewer characters.

<i>Armenian Realia</i>	<i>English Translation</i>	<i>Suggested translation</i>
<ul style="list-style-type: none"> - Օո, սլուխը լավ էլ տեղն է ընգել: - Սուրե՛ն... - Հըն... - Տե՛ս, ինչ իմ ասում... իմ դուխս էլ, սլուխս էլ միշտ տեղն ա ըլել: - Ապրի՛ս: (0:53:37-0:53:46) 	<ul style="list-style-type: none"> - [I see, his sense of hearing has well improved.] - [Suren...] - [What?] - {[Listen to what I’m telling you.] [I’ve always had excellent hearing and courage.]} - [Fine fellow!] 	<ul style="list-style-type: none"> - [Hey, he got his hearing back.] - {[Suren, - What?]} - {[Listen up! Both my hearing], [and spirit have always been just fine.]} - [That’s my man!]

This is a conversation among soldiers in the war zone, where everyone speaks his dialect. In this example we have an interjectional realia specific to Gyumri dialect which is expressed by **situation paraphrase “I see”** in the English version. Since «**օո**» is usually addressed to a male, through **sense transfer**, the interjection “**hey**” can be a better choice; 5 characters vs. 3. The character, implying that the friend’s hearing has recovered after concussion, uses “**his sense of hearing has well improved**” which ends up as a long line loaded with too many characters and does not properly transfer the idea, therefore, we suggest to paraphrase it into “**Hey, he got his hearing back**” to economize the characters.

The interlocutor replies with another modern realia «**դուխս** էլ ա տեղը». The word «**դուխ**» is a Russian borrowing (дых), which is widely used

in the Armenian colloquial speech. The word stands for the idea of *moral strength* and does not have an exact equivalent in the Armenian language. Taking into account its frequent use and the fact that it has been used as a slogan for the recent Armenian Velvet Revolution, the word has turned into a rooted Armenian realia. In the passage the word meaning is rendered by “**courage**” which only partly conveys the sense and the contextual idea. By using *sense transfer* the idea and style can be rendered by “[... **Both my hearing] [and spirit have always been just fine]**” instead of “[I’ve always had excellent hearing and **courage**]”.

It is worth mentioning, that the first line contains 46 characters, violating the accepted norms of subtitling. The suggested option contains only 38 characters and renders both the meaning and the style. The second line, both the initial and the changed one, exceeds the number of the characters. Therefore, instead of “*Listen to what I’m telling you*” we suggest to use “*Listen up!*” which has only 21 characters and expresses the exact same idea as the Armenian original text. Dividing the second part into two logical lines, we get [*Suren, Listen up! Both my hearing*], [*and spirit are unbreakable.*] while the subtitles can appear on the screen for around 4 seconds.

The speaker’s response «սպրհիս» in this specific passage can be viewed as a realia, given the fact that it does not express gratitude or appreciation per se, but rather admiration and content which cannot be expressed though the expression “*well done*”. In the English version we have “**Fine fellow!**” which transfers the meaning but sounds artificial and does not convey the stylistic coloring of the expression. Therefore, with the use of *situational paraphrase* strategy, the colloquial expression “**That’s my man!**” is an adequate translation. The expression contains 14 characters and can appear on the screen for 2 minutes without contradicting the spatial and temporal considerations of subtitling.

Armenian Realia	English Translation	Suggested translation
Ութսունութին մեր ընտանիքը հրավիրված էր Սպիտակ հարսանիքի... ես հիվանդ էի չգնացի, պապս էլ բոլկոտել էր էր հարսանիքի	{[In 1988 our family was invited] [to a <i>wedding party</i> in Spitak.]} {[I was sick, so I didn’t go. My grandfather also didn’t go;} [he was against the marriage.]} [Since he	{[In 1988 our family was invited] [to a <i>wedding</i> in Spitak.]} {[I was sick, so I didn’t go.] [My granpa was against the marriage]} [He is a real badass...] [he didn’t like the groom’s father]

<p>դեմ, պապս դեմք ա... բոլորտել էր, որովհետև չէր սիրում փեսայի հորը: Մի խոսքով՝ երկուսով մնացինք Երևանում: (1:12:11-1:12:28)</p>	<p>didn't like the groom's father.] [My grandpa is a real weirdo.] [Basically, the two of us stayed in Yerevan.]</p>	<p>[So, the two of us stayed in Yerevan.]</p>
---	--	--

In the above mentioned example the main character tells about the horror of the earthquake of 1988, explaining why his sister ended up deaf. Mentioning that his grandfather refused to go to a wedding in Spitak, he refers to him with an Armenian realia «**դեմք ա**». The realia is widely used in colloquial speech and is used to refer to a person who is different in a good way, however, in this specific context, the character has an intention of emphasizing that his grandfather is a tough man. Applying **situation paraphrase**, the translator used the word “**weirdo**” to render the realia, which has a positive connotation but does not transfer the speaker’s pragmatic intent. Taking into account the given implicit meaning of the word, with the use of the same strategy, we consider the word “**badass**” to be a better option.

The comparative analysis of the above-mentioned examples showed that the realia used in the extracted dialogues were expressed by **interjections (3)**, **colloquial words (3)**, **vulgar words (2)** and only in **1** case we came across a realia expressed by a **proper name**. In translation, realia are rendered with a loss of stylistic coloring. For this purpose, two of the ECR Transfer Strategies, as subtypes of **paraphrase** strategy, were used. Both the translator and we applied strategies of **sense transfer** and **situational paraphrase**. In two cases the translator used **omission**, an extreme strategy, which could be easily rendered through **situational paraphrase**. It is worth mentioning that the omitted realia were the ones expressed by interjections, which are the inseparable Armenian linguo-cultural phenomena. We came across one case of **generalization** strategy, used by the translator, where the word “*bridge*” was used instead of its proper name. The choice was justified, as the proper name, used in the passage did not give any insight to the viewers. From temporal and spatial perspectives of subtitling, the issues were minor and could be resolved though the use of condensation and contraction.

REFERENCES

1. Baker, M. In *Other Words*, A coursebook on translation, Routledge, London and New York. 1992. 304.
2. Díaz Cintas, J. and Remael, A., *Audiovisual Translation: Subtitling*. Manchester, St. Jerome Publishing, 2007. 272.
3. Díaz Cintas, Jorge. *Subtitling: theory, practice and research*. 2012. 285-299. Available from:
https://www.researchgate.net/publication/314278174_Subtitling_theory_practice_and_research [accessed June 12 2018]
4. Gambier, Y. The position of audiovisual translation studies. In C. Millán & F. Bartrina (Eds.), *The Routledge handbook of translations studies*. London, UK: Routledge. 2014: 45–59.
5. Gottlieb, H. Subtitling: A new university discipline. In C. Dollerup, et al. (Eds.), *Teaching translation and interpreting*. Amsterdam: John Benjamins. 1992: 161-70.
6. Leppihalme, R., Translation strategies for realia. In Kukkonen, P. & Hartama-Heinonen, R. (eds.) *Mission, Vision, Strategies, and Values: A Celebration of Translator Training and Translation Studies in Kouvola.* Helsinki: Helsinki University Press, 2001: 139–148.
7. Newmark, P., *A Textbook of Translation*. Prentice Hall International vUIO Ltd., Hertfordshire 1988: 292.
8. Pedersen, J. How is culture rendered in subtitles? In S. Nauert (ed.) *Proceedings of the Marie Curie Euroconferences ‘MuTra: Challenges of Multidimensional Effects of Substituting Cultural References in Subtitling 47 Translation’*, Saarbrücken, 2005. 26 May.
9. Влахов С, Флорин С. Непреводимото в превода. Реалии.-- Български език, 1980, кн. 2-3, с. 168—187
Wlachow C, Vlorin C. Neprewodimoto w prewoda. Realii.-- B#lgarcki esik, 1980, kn. 2-3, с. 168—187
http://samlib.ru/w/wagapow_a_s/vlahovdoc.shtml

Film

1. Մկրտչյան, Մ. *Կյանք ու կռիվ*. Հայաստան, Sharm Pictures. 2016. Available at: <https://www.youtube.com/watch?v=eP6RTSdvA-E&t=12s>
Mkrtchyan, M. *Kyanq ow kr'iv*. Hayastan, Sharm Pictures. 2016. Available at: <https://www.youtube.com/watch?v=eP6RTSdvA-E&t=12s>

ՆԱՐԻՆԵ ԳԻՇՅԱՆ - ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿՅԱՆՔ ՈՒ ԿՈՒՎ» ՖԻԼՄԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր՝ Աուդիովիզուալ թարգմանություն, ներլեզվային և միջլեզվային ենթագրեր, թարգմանական ռազմավարություն, արտալեզվական մշակույթով պայմանավորված ռեֆերենտներ, տարածական և ժամանակային չափանիշներ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել իրականությունների ենթագրային թարգմանական առանձնահատկությունները հայերենում և դրանց պահպանման եղանակներն անգլերենում: Հոդվածում զուգադրվել են հայկական «Կյանք ու կոիվ» ֆիլմից և համարժեք անգլերեն ենթագրային թարգմանությունից ընտրված իրականությունների օրինակներ: Վերլուծվել է իրականությունների թարգմանության համարժեքությունը՝ համապատասխան թարգմանական ռազմավարությունների կիրառմամբ, ինչպես նաև դիտարկվել է անգլերեն ենթագրերի համապատասխանությունը հաստատված չափանիշներին, մասնավորապես՝ լեզվական, ժամանակային և տարածական: Հետազոտության արդյունքում կարող ենք նշել, որ ոչ բոլոր դեպքերում է թարգմանչին հաջողվել պահպանել իրականությունների իմաստը և համապատասխանությունը ենթագրային չափանիշներին: Իմաստային մակարդակում շեղումները հիմնականում կապված են ձայնարկությունների միջոցով արտահայտված իրականությունների հետ, որոնք բաց են թողնվել անգլերեն թարգմանվածքում: Ենթագրերի ժամանակային և տարածական չափանիշներից շեղումները փոքրաթիվ են և շտկելի՝ կառուցվածքային խտացման և ավելի կարճ տարբերակների կիրառմամբ:

НАРИНЕ ГИШЯН - ТРУДНОСТИ ПЕРЕВОДА РЕАЛИЙ В АНГЛИЙСКОМ ПЕРЕВОДЕ ФИЛЬМА «ЛИНИЯ»

Ключевые слова: аудиовизуальный перевод, внутриязыковые и межъязыковые субтитры, реалии, переводческая стратегия, экстралингвистические культурные референты, пространственные и временные параметры

Данная статья посвящена изучению особенностей перевода реалии посредством субтитрования на армянском и стратегии их сохранения на английском. В статье сравниваются примеры реалий из армянского фильма «Линия» и их английский перевод с субтитрами. В статье рассматривается адекватность перевода с использованием

соответствующих стратегий перевода, а также соответствие английских субтитров установленным критериям (лингвистическим, временным и пространственным). В результате исследования можно отметить, что не во всех случаях переводчик сумел сохранить смысл реалий и их соответствие параметрам субтитров. На семантическом уровне отклонения в основном связаны с реалиями, выраженными через междометия, которые были опущены в английском переводе. Что касается временных и пространственных параметров субтитра, отклонения незначительны и могут быть решены путем использования синтаксических конденсаций и сжатия.

Ներկայացվել է՝ 05.10.2020

Գրախոսվել է՝ 04.10.2020

**Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի հաղորդակցման և թարգմանության
ամբիոնի կողմից՝ 04.10.2020**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԻ
ԼԵԶԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՈՒՇ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ վերնագիր, առցանց մամուլ, միջոճական ներթափանցումներ, օտարաբանություն, ժարգոն, բառախաղ, շրջասույթ, հոնգրոսկան հարցում, միակազմ նախադասություն, ռճական երանգավորում

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, հեռահաղորդակցության միջոցների հասանելիությունն այսօր դյուրացրել են տեղեկատվության ստացումը, և արդեն դժվար է պատկերացնել արդի հասարակությունը՝ առանց էլեկտրոնային մամուլի: Այդ հասարակության մի ստվար զանգված կախվածության մեջ է ինչպես սոցցանցերից, այնպես էլ առցանց պարբերականներից, մի մեծ հատված էլ տեղեկատվության պասիվ սպառող է:

Տեղեկատվությունն ավելի գրավիչ դարձնելու և ավելի լայն լսարան ներգրավելու, ինչպես նաև տեղեկատվության ընկալումն ավելի արդյունավետ դարձնելու գործում մեծ դեր ունեն վերնագրերը (http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%BE%D5%A5%D6%80%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80; <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%BE%D5%A5%D6%80%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80>), որոնք խնայում են ընթերցողի ջանքերը՝ հետաքրքրող լուր որոնելու գործընթացում: Էլեկտրոնային մամուլի արդի լսարանը հակված չէ թերթերի ծայրից ծայր ընթերցանությանը: Ժամանակակից ընթերցողը «սքաներ» է, որն արագ անցնում է նկարներով ու վերնագրերով, և ուշադրությունը կարող է գամել առաջին իսկ պարբերությանը՝ հենց վերնագրի շնորհիվ: «Ընթերցողի համար յուրօրինակ ուղեցույց է վերնագիրը, որով սրվում է հետաքրքրությունը, ուշադրությունը հրավիրվում հաղորդվող նյութի վրա: Ճիշտ ընտրված վերնագիրը նյութի բովանդակության խտացված անվանումն է» (Հայոց լեզու և խոսքի մշակույթ 2016:377):

Եթե տեքստը որևէ կերպ վերնագրված է, ապա տեքստի հասցեատիրոջը մի տեսակ պարտադրվում է տվյալ տեքստում որսալ վերնագրի պարփակած գաղափարը, բովանդակությունը: Վերնագիրը՝ որպես տեքստակազմիչ միավոր, կարելի է ասել, ամենապատասխանատու միավորն է. այն կոչված է ընդգրկելու

գերբովանդակությունը: Վերնագրի ընտրությունը, այսպես ասած, գերբովանդակության համառոտագրությունն է: Սա տեքստի այն միավորն է, որի շնորհիվ հեղինակը ներկայացնում է իր մտքի սահմանները տվյալ տեքստում, իսկ տվյալ տեքստն ընկալողի համար վերնագրի շնորհիվ կամ պատճառով ուրվագծվում են ի՛ր մտածելու սահմանները տվյալ տեքստի շրջանակում: Այսինքն՝ տեքստի վերնագիրը մտքի ընթացքի ճշգրտիչ, ուղղորդիչ միավոր է, որը, միանշանակ, ձև, բայց բովանդակային աղոտ պարունակություն ունեցող միավոր է (http://ysu.am/files/07S_Hovhannisyan.pdf):

Վերնագրերի դասակարգման տարբեր փորձեր են արվել ոլորտի մասնագետների կողմից: Ռուս լեզվաբան Ի. Գալպերինը վերնագիրը պատկերավոր կերպով համեմատում էր չբացված պարույրի հետ (Гальперин 1981:133-134), համարում այն կողավորված տեղեկատվություն, տեքստի չբացահայտված բովանդակություն, լեզվական միավոր, որն օժտված է տեքստը միաժամանակ սահմանափակելու ու ամբողջացնելու կարողությամբ: Գալպերինը նաև դասակարգումներ է արել՝ **վերնագիր-խորհրդանիշ, վերնագիր-թեզիս, վերնագիր-մեջբերում, վերնագիր-հաղորդագրություն, վերնագիր-ակնարկ, վերնագիր-պատմություն:**

Ռուս լրագրող, մեդիա-տեսաբան Ա. Միրոշնիչենկոն վերնագրի երեք հիմնական տեսակ է առանձնացնում՝ **փաստական, պատկերավոր-խաղային, վերնագիր-կլիշե** (Мирошниченко, 2012): Առաջինն ամենատարածվածն է մամուլում. սովորաբար այն պարզ նախադասություն է՝ պարտադիր բայով, որով հաղորդվում է հիմնական միտքը կամ տեքստի ինտրիգը: Բայի առկայությունը կենդանություն է հաղորդում, քանի որ ավելի կարևոր է արդեն տեղի ունեցողը (հմմտ. «Հորդանանի թագավորը ցրեց Կառավարությունը» (azatutyun.am, 01.02.2011)): Պատկերավոր վերնագիրը հուզական արձագանք է արթնացնում՝ ընթերցողին ներգրավելով տեքստ: Այս տեսակ վերնագրերում գործածվում են բառախաղեր, կազմվում են վերնագրի և ենթավերնագրի համադրությամբ, և կարող են անջատվել միջակետով (հմմտ. «Հրդեհ Քարակերտ գյուղում. տուժածներ չկան» (armenpress.am, 04.25.2020)): Վերնագիր-կլիշեներում գործածվում են աֆորիզմներ, շտամպներ, թևավոր արտահայտություններ, առած-ասացվածքներ, ասոյթներ, հայտնի կարգախոսներ, հանրահայտ անձանց, քաղգործիչների դասական դարձած արտահայտություններ, որոնք օժտված են մեծ հուզականությամբ (հմմտ. «Ինչ ցանես, այն էլ կհնձես» (hraparak.am, 27.06.2020)):

Ժամանակակից ռուս լեզվաբան Ա. Նեկրասովան (<https://moluch.ru/conf/phil/archive/301/13190/>) տարբերակում է **վերնագիր-լրատու**, որը հայտնում է տեքստում պարունակվող ամենակարևոր տեղեկատվությունը (հմմտ. «Սիլվիո Բերլուսկոնին կորոնավիրուսով է վարակվել» (azatutyun.am, 03.09.2020)), **վերնագիր-վազող տող**, երբ իբրև վերնագիր է ծառայում նյութի սկզբնական մի հատված (հիմնականում հեռուստաալիքներում է հանդիպում), **վերնագիր-հավաստում** (ամփոփ շարադրանք). անուղղակիորեն պատմում է մի իրադարձության մասին, թաքցնում է ուղղակի գնահատականները, ներկայացվում է հեզնանքով (հմմտ. «Տրակտորիստի աղջիկը». պատգամավորի անեկդոտը՝ «Դույե»-ի թեմայով» (armtimes.com, 22.09.2020)), **վերնագիր-մեջբերում** (ուղղակի կամ անուղղակի). կրկնապատկում է ընթերցողների հետաքրքրությունը (հմմտ. Ջախարովա. «ՆԱՏՕ-ն իրավունք չունի միջամտել Բելառուսում, իսկ ՌԴ-ն պարտավոր է» (Iragir.am, 29.08.2020)), **վերնագիր-ինտրիգ**, նշում է մի փաստ՝ առանց այն ամբողջությամբ բացահայտելու՝ հողվածի ընթերցումը հետաքրքրելու և խրախուսելու նպատակով: Այս կաղապարով օրինակները բազմաթիվ են հայալեզու էլեկտրոնային մամուլում, ինչպես՝ «Սերժ Սարգսյանը կորոնավիրուսի թեստ էր հանձնել. պատասխանը հայտնի է» (a1plus.am, 08.09.2020), **վերնագիր-կոչ**, կարգախոս, դիմում (հմմտ. «Եվ այդ մեկ մարդը դո՛ւ ես» (news.am, 12.06.2020)):

Ոլորտի մեկ այլ փորձագետ Դանիել Մորիսոնն առանձնացնում է երկու տեսակի վերնագիր՝ ուղղակի, որը խոստանում է փոխանցել պահանջված տեղեկատվությունը, և վերնագրեր, որոնք նման գործառույթ չունեն (<https://infotruck.wordpress.com/2011/11/24/how-to-write-great-head-and-deks/>): Մորիսոնը թվարկում է հաջողված վերնագրի երեք հատկանիշ՝ պարզություն, բովանդակայնություն, գրավչություն՝ միևնույն ժամանակ նկատելով, որ հոեետորական տարրը պիտի լինի չափավոր. թեթևամիտ վերնագիրը հուշում է, որ նաև հողվածն է նմանատիպ:

Արդի մամուլը բոլորովին այլ է՝ որակապես տարբեր նախորդ ուսումնասիրողներից, միանգամայն այլ խնդիրներով ու մարտահրավերներով, և սույն ուսումնասիրության նպատակն է ներկայացնել հայալեզու էլեկտրոնային մամուլի նյութերի վերնագրերի լեզվի բառապաշարային և քերականական մի շարք հատկանիշներ՝ որոշ չափով լցնելով առցանց պարբերականների՝ լեզվի մասին հրապարակում առկա վակուումը:

Վերնագրեր ստեղծելու տեխնիկան և մեթոդները բազմազան են: Ամենից առաջ դրանք գրվում են թավ, մեծ տառաչափով՝ դյուրացնելու

ընթերցանությունը, ուշադրություն գրավելու: Վերնագիրը նյութը բաց չթողնելու յուրօրինակ գովազդ պիտի լինի, երկրորդ՝ մոտիվացնող, որ ընթերցողը որոշի, այնուամենայնիվ, կարդալ, երրորդ՝ լինի տեղեկատվական, եթե անգամ ընթերցողը որոշի բավարարվել միայն վերնագրով, այն բավականաչափ փաստեր պիտի պարունակի կատարվածի վերաբերյալ որոշակի պատկերացում կազմելու, իրականությունն ընդհանուր ուրվագծելու համար (<https://jrnlist.ru/head-newspaper/>):

Վերնագրերի ձևավորման հարցում, իհարկե, կարևորվում է լրագրողի կրթական, ընդհանուր առումով՝ գրագիտության, աշխարհաճանաչողության մակարդակը (Դավթյան 2006:185): Ինչ խոսք, յուրաքանչյուր ժանր թելադրում է իր կանոնները, և վերնագրի լեզվաոճական յուրահատկությունները գերազանցապես պայմանավորվում են ժանրով: Տեղեկատվական ժանրերում հիմնականում գերիշխող են փաստերի չոր շարադրանք պարունակող կարճ վերնագրերը՝ ձևավորված լրագրողի չեզոք վերաբերմունքով (հմմտ. «Էյֆեյյան աշտարակը փակել են պայթյունի սպառնալիքի պատճառով» (armenpress.am, 23.09.2020)): Հարցազրույցներում սովորաբար վերնագիր է ընտրվում խոսակցի առավել ընդգծված մտքերից (հմմտ. Արմեն Սարգսյան. «Ժողովրդին դիմելը ծայրահեղ միջոց չէ» (mediamax.am, 07.02.2020)): Մեծ թիվ են կազմում հեղինակային, գրական-գեղարվեստական ստեղծագործությունների մոտիվներով, ինչպես նաև թևավոր խոսքերով, դարձվածքներով կազմված վերնագրերը (հմմտ. «Թրամփի գլխին սև ամպեր են կուտակվում» (parstoday.com, 13.12.2017)): Իհարկե, դրանք պիտի արտացոլեն հոդվածի հիմնական իմաստը, գաղափարը, հաղորդագրությունը: Հաջող վերնագիրը հենց այնպես չի հայտնվում, թեև կարող է նույնիսկ հայտնվել ինքնաբերաբար. այն լրագրողի մտածողության և բանականության դրսևորման թերևս ամենակարևոր ձևերից մեկն է, իրադարձությունները ընդհանրացնելու, գնահատելու կամ համառոտագրելու լրագրական շնորհի ակնառու ապացույցը (Լրաբեր հասարակական գիտությունների 1998:№ 2):

Առցանց պարբերական մամուլի հրապարակումների վերնագրերի լեզուն աչքի է ընկնում լեզվական միջոցների բազմազանությամբ, լեզվի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների առատությամբ:

Բառապաշարի ընտրությունն ամենից առաջ պայմանավորված է հրապարակախոսական ոճի անմիջականությամբ, ոչ մշակվածությամբ, հուզական երանգավորում ունեցող բառերի ու արտահայտությունների առատությամբ: ՁԼՄ-ի ոճը խիստ բարդ և բազմաշերտ է ընդգրկման ոլորտներով, այստեղ սովորական են միջոճական ակնհայտ ներթափանցումները. բառապաշարը զգալի չափով ընդհանրություններ ու շփման եզրեր է հանդես բերում գեղարվեստական, գիտական և խոսակցական ոճերի բառերի հետ: Բացի բառապաշարային ավանդական շերտերից՝ լրատվանյութերում հանդիպում են ոչ ավանդական միավորներ, որոնցից են դիպվածային բառերը (ՎԷՄ 2020, ապրիլ-հունիս 2 (70):95)՝ իրենց բնորոշ անսպասելիությամբ («**Աղբբեջանոտ** վերնագրերին չեմ անդրադառնա, ուղղակի ամոթ է» (168.am, 24.05.2019), «**Հարգելի՛ ձերքայլականներ**, քայլ արեք...» (news.am, 24.05.2020), հեղինակն այդկերպ է դիմում ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներին): Սոցցանցերի ազդեցությամբ՝ արդի էլեկտրոնային մամուլը հեղեղված է օտարաբանություններով, հասարակաբանություններով, ժարգոնային բառերով ու գոեհիկ արտահայտություններով, որոնք չեզոք գրական լեզվի ֆոնին գրավում են ընթերցողների ուշադրությունը և նպաստում գնահատողական տեղեկատվության փոխանցմանը: Բերենք օրինակներ՝ «Թքած ունենալուց մինչև փաթած ունենալը մեկ քայլ է» (hraparak.am, 19.03.2019), «Դանիելենք չեն պատրաստվում «զադնի» դնել» (mamul.am, 18.07.2017), «Հակաիշխանական ՀԿ-ները ՊԵԿ-ի «պրիցեյի» տակ են» (armlur.am, 20.02.2020), «Հանրակրթական դպրոցներում «քաղաքական չիստկա» է սպասվում» (irates.am, 09.09.2020), «Պետական ապարատը խոդ են տվել Ծառուկյանի դեմ» (news.am, 09.09.2020), «Էդմոն Մարությանն ու ԼՀԿ-ականները «թռած են»» (hraparak.am, 23.06.2020), «Այդ դեպքում ինչո՞ւ ՀՀԿ-ն «քցեց» նման փայլուն արդյունք արձանագրած վարչապետին» (aravot.am, 23.10.2019): Ցավով պիտի արձանագրենք, որ նմանատիպ բառապաշարով է ծայրից ծայր հեղեղված էլեկտրոնային մերօրյա մամուլը, և եթե տեղ-տեղ ոճական նկատառումներով արդարացված է ժարգոնային տվյալ միավորի կիրառությունը, ապա գերակշիռ դեպքերում գործ ունենք ընթերցող գրավելու և հավանումներ ապահովելու նպատակով կիրառված խորամանկության հետ:

Սակավ հանդիպում են գրաբարյան ասույթներով («Մահ իմացեալ», բայց ոչ թե «վասն հայրենյաց», այլ «վասն կերակուրի» (news.am, 11.06.2016), «Գարեգին Երկրորդի սենսացիոն գնահատականը. կաթողիկոսների խոսքը կմնա՞ ձայն բարբառո հանապատի» (armtimes.com, 18.09.2017)), արևմտահայերենով համեմված («Ալ բա՛վ է «դիմակային» բռնի բարություն անեք...» (7or.am, 25.07.2020)) վերնագրեր:

Լրագրանյութերի վերնագրերում ոչ միայն լայնորեն տարածված են օտարաբան կառույցները, այլև հանդիպում են ոճական նկատառումներով հայերեն տառադարձված միավորներ, ինչպես՝ «Տրետի պայլոտ նա լունու» (news.am, 09.07.2020). Երկրորդն ակնարկում է սահմանադրական բարեփոխումները, «Յա-յա, դաս իսթ ֆանթասթիշ» կամ «Շտանգեն ցիրկուլ» (ilur.am, 30.06.2014), նյութը, որը մարմնամարզիկ Յուրի Վարդանյանի՝ Վրաստանում ՀՀ դեսպան նշանակվելու մասին է:

Հաճախադեպ է **հականշությունը**. հակադրությամբ կազմված խոսքն ավելի հուզական է ու ազդեցիկ, ինչպես՝ «ՄՄ թե՛ ԵՄ. բացասական ու դրական կողմերը» (a1plus.am, 25.02.2014), շեքսպիրյան հերոսի հայտնի խոսքի նմանությամբ («**Լինե՛լ, թե՛ չլինել...»**)՝ «Գնա՛լ, թե՛ մնալ. այս է խնդիրը» (aravot.am, 28.06.2015), «Էդմոն Մարուքյանը կզնա լուսավո՞ր, թե՛ մութ ճանապարհով» (7or.am, 22.06.2020), «Փնթփնթո՞ց, թե՛ կյանք...» (armtimes.com, 10.04.2020): Հակադրելով առաջին հայացքից չհակադրվող երևույթներ՝ հեղինակը յուրօրինակ դիպուկություն, արտահայտչականություն ու պատկերավորություն է հաղորդում նյութին: Հանդիպում են մարզական մեկնաբանության մոտիվներով կազմված վերնագրեր՝ «Սորոս **VS** Քոչարյան» (Yerevan.today, 13.03.2019), «Ռուսաստան **VS** ԱՄՆ. ո՞ւմ գենքն է ավելի լավը Հայաստանի համար» (armeniasputnik.am, 03.11.2018), «Կորոնավիրուս **vs** սպորտ» (sport.news.am, 22.03.2020), շախմատային եզրերով՝ «ՀՅԴ-ն պատրաստվում է **շախ և մատ** անել» (168.am, 19.11.2019), «**Ցուզցվանգ** Ալիևի համար» (Iragir.am, 15.07.2020):

Ժամանակակից էլեկտրոնային մամուլի տեսադաշտը բավական ընդարձակ է. այն թիրախավորում է հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառները: Վերը նշվեց, որ վերնագրերի լեզվական ատաղձ են ծառայում նաև տարբեր ստեղծագործությունների անվանումներ, ինչպես՝ «**Ո՞րն է, բաբո՛, մեր հայրենիք**» (hraparak.am, 08.02.2014)՝ Շիրազի բանաստեղծության հանգույն: Հաճախ դրանք միտումնավոր կերպով փոփոխվում են՝ ընթերցողին գայթակղելու ու ասելիքի ազդեցությունն ուժեղացնելու նպատակով, ինչպես՝ «Ինչո՞ւ է աղմկում Ծառուկյանը» (armtimes.com, 20.09.2020)՝ «**Ինչո՞ւ է աղմկում**

գետը» կինոժապավենի նմանությամբ: Ռեժիսոր Ռոման Բալայանի ֆիլմի վերնագիրը ևս ոգեշնչում է լրագրողներին. **«Թռիչքներ երազում և արթմնի**. Արմեն Աշոտյանի երազը» (4rd.am, 06.01.2020), **«Թռիչքներ ոչ երազում»** (168.am, 20.11.2013): Ամերիկացի ժամանակակից գրող Մարկ Մենտոնի հայտնի գրքի վերնագիրն էլ է (**«Թքած ունենալու նուրբ արվեստը»**) հաճախ թևեր տալիս լրագրողների երևակայությանը, ինչպես՝ **«Թռնելու նուրբ արվեստը»** (mamul.am, 25.08.2020), ակնարկվում է անպատեհ ժամանակ պաշտոնյայի արձակուրդ գնալը, **«Ժողովրդին շեղելու նուրբ արվեստը»** (hayeli.am, 28.08.2019), իսկ **««Ասֆալտին փոելու» նուրբ արվեստը»** (hrapararak.am, 06.03.2020), ՀՀ վարչապետի հայտնի խոսքը՝ կարգազանցների մասին, նույնպես շարունակում է իմաստային զարգացում ստանալ: Կամ՝ Լ. Քերոլի **«Ալիսը հրաշքների աշխարհում»** ստեղծագործության նմանությամբ՝ **«Կատերինան հրաշքների աշխարհում**. Գորդոնն այցելել է Հայաստան և սեր խոստովանել» (armeniasputnik.am, 17.09.2019):

Վերնագրերում ոճական ընդգծված գունավորման շնորհիվ լայնորեն կիրառվում են առած-ասացվածքներ, դրանց փոփոխված տարբերակներ: Դա ևս ընթերցողի վրա ազդելու կարևոր միջոց է, քանի որ լրագրողներին թույլ է տալիս գունագեղ կերպով արտահայտել հրապարակված տեղեկատվության իրենց գնահատականը (<https://studfile.net/preview/3302327/page:3/>): Բերենք օրինակներ՝ **««Տաշած քարը գետնին չի մնա»**. Ս. Սարգսյանը պարզապես է բաժանում» (a1plus.am, 24.03.2018), **«Քայլած քարը գետնին չի մնում**. Վիլեն Գաբրիելյանին դեռ 2018-ից էին պաշտոն խոստացել» (tert.am, 07.02.2020)., **քայլած՝ 2018-ի հայտնի քայլարշավին մասնակցած: Կամ՝ «Ասա՝ ով է խորհրդականդ, ասեմ՝ ով ես դու»** (irates.am, 09.09.2020), հմմտ. **«Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու»:**

Ձևաբանական իրողություններից նշելի է **կրավորաձև կառույցների** կիրառությունը՝ **«Բացահայտվել է ռումբի մասին կեղծ ահազանգի հեղինակը**. ԱԱԾ» (azatutyun.am, 19.12.2019), **«Պարզվել են զինձառայողի մահվան որոշ մանրամասներ»** (livenews.am, 26.06.2019): Տարածված են **սահմանական եղանակի** ժամանակաձևերը, որոնք իրողությունը, փաստը արձանագրելու, ներկայացնելու ոճականորեն չեզոք միջոցներ են՝ ի տարբերություն մյուս եղանակների, որոնք սուբյեկտիվ վերաբերմունք են արտահայտում (Հայոց լեզու և խոսքի մշակույթ 2016:385): Գերիշխող են **անկատար ներկան**՝ **«Թրամփը երկու ամսով դադարեցնում է օրինական ներգաղթը դեպի ԱՄՆ»** (azatutyun.am, 22.04.20), **անցյալ վաղակատարը**՝ **«Իրանն արձակել է ռազմական նշանակության առաջին արբանյակը»** (azatutyun.am, 22.04.20), սրանց

համեմատ քիչ են **անցյալ կատարյալով** ձևերը՝ «Արմեն Շահգեղյանը թողեց ՀՖՖ-ում իր պաշտոնը» (armtur.am, 16.08.2020): Հանդիպում են **պայմանականի ապառնիով** ձևեր՝ «Ռուսաստանը Բելառուսին 7000 տոննա հնդկաձավար և 2000 տոննա բրինձ կմատակարարի (tert.am, 22.04.20):

Վերնագրերի ոճական ձևավորմանն առավելագույն մասնակցություն են ունենում նաև **շաղկապները**: Տարածված է հատկապես **կրկնադիրների** կիրառությունը, որով ընդգծված հակադրություն է ստեղծվում, ինչպես՝ «Կա՛մ ԿԲ–ն ժողովրդին կտանի բանկ, կա՛մ ժողովուրդը իրենց կուղեկցի բանտ» (news.am, 04.06.2019), «Հայաստանում կա՛մ կոռուպցիան պիտի լինի անհնար, կա՛մ այնքան նվազ, որ հանրային օրակարգում նման հարց չլինի. վարչապետ» (armtimes.com, 25.08.2020): Պայմանավորված խոսքի տնտեսման օրենքով՝ հաճախադեպ են **մասին** կապով կառույցները՝ «Արարատ Միրզոյանը՝ Արսեն Զուլֆալայկյանի հրաժարականի դիմումի մասին» (a1plus.am, 10.09.2020):

Շարահյուսական առանձնահատկություններից հարկ է նշել երկկազմ նախադասությունների լայն կիրառությունը: Հանդիպում են նախադասությունների հնչերանգային բոլոր տեսակները: Գերակշռում են **պատմողականները**, որոնք տեղեկատվական ժանրերի լեզվական հիմքն են. դրանցով հաստատվում կամ ժխտվում է որևէ փաստ (հմմտ. «Ամուլսարի շուրջ կրքերը չեն հանդարտվում» (azatutyun.am, 23.09.2020), **հարցական հնչերանգով** կառույցները՝ «Բանակցային սեղանին մադիրիդյան սկզբունքներն են» (news.am, 24.09.2020), «Ովքե՛ր են ցուցարարների իրական դաշնակիցները» (armtimes.am, 20.09.2020): Առանձին խումբ են կազմում ոճական ընդգծված երանգավորմամբ **հռետորական հարցումները**, երբ լրագրողն ընթերցողի ուշադրությունը հրավիրում է թիրախի վրա: Հեղինակը հարցադրումը կատարում է ոչ թե պատասխան ստանալու նպատակով (հարցի պատասխանը ինքն էլ գիտի, ունկնդիրներն էլ), այլ ցանկանում է ունկնդիրների ուշադրությունը հրավիրել ասույթի միջուկի, այսինքն՝ այն խնդիրների վրա, որոնք հուզում են ոչ միայն իրեն, այլև բոլորին (Պապոյան, Բաղիկյան 2003:72): Օրինակ՝ «Մի՞թե նախարարի համար դժվար է խոսել Ցեղասպանության մասին» (artsakhpress.am, 23.04.2015): Երբեմն հեղինակն ինքն էլ հնարավոր պատասխանն է առաջարկում՝ «Ինչի՞ վրա է Կառավարության հույսը: Գուցե վարկերի՞» (168.am, 22.06.2019): Մեծ թիվ են կազմում միջակետով տրոհված կառույցները, երբ վերնագրի վերջին մասը նախորդի պատասխանն է կամ բացատրությունը, ինչպես՝ «Քանի՞ մարդ կհավաքվի Քոչարյանի կամ Վանեցյանի շուրջ. Ենգիբարյանը վստահ է՝

ձեռքի մատներից մի քիչ շատ» (armtimes.com, 01.08.2020): «Քանի՞ բիզնես է փակվել Հայաստանում կորոնավիրուսի ժամանակ. մտահոգիչ թվեր երեք ամսում» (news.am, 22.06.2020): Հարցականների համեմատ սակավաթիվ են **բացականչական** («Ինչե՛ր ասես, որ չեն անի աճ «նկարելու» համար. շճեցնող տվյալներ» (armlur.am, 25.08.2016)), **ըղծական** («Երանի այդ նավը ծովում խորտակվեր» (azatutyun.am, 07.08.2020)), **հրամայական** («Հեռացի՛ր, քանի դեռ ուշ չէ». հայտնիների կոչը՝ Լուկաշենկոյին» (aravot.am, 13.08.2020) հնչերանգով նախադասությունները:

Տարածված են հեղինակի ազգանուն+ուղիղ խոսք կամ հակառակ կադապարներով վերնագրերը, ինչպես՝ «Մխիթարյան. «Ես հեռացել եմ Անգլիայից և էլ չեմ ուզում խոսել Անգլիայի մասին»» (azatutyun.am, 11.09.2019), ««Իշխանությունը ոչ ոքի չեմ տա». Լուկաշենկո» (tert.am, 10.09.2020):

Լրատվամիջոցներում զանգվածային և տարասեռ լսարանի վրա անուղղակի ազդեցությունն ուժեղացնելու համար օգտագործվում է լեզվի բառակապակցման ողջ ներուժը՝ արտահայտիչ միջոցների որոնմամբ՝ դրանով իսկ մասնակցելով լեզվական ճաշակի զարգացմանը և սոցիալական գիտակցության փոփոխությանը: Հաճախադեպ են համադաս անդամներով կառույցները, ինչպես՝ «Պողոսը, Լենինն ու Հայաստանը» (medialab.am, 18.06.2020), որոշիչ-որոշյալով («Լատենտ Հայաստան» (news.am, 15.09.2020)), հատկացուցիչ-հատկացյալով («Ցեղասպանության դասերը» (aravot.am, 24.04.2020)) կապակցությունները:

Էլեկտրոնային թերթերում խոսքի խնայողության սկզբունքն ամենից ավելի վերնագրերում է գործում, ուստի մեծ թիվ են կազմում ինչպես զեղչված անդամներով, այնպես էլ միակազմ նախադասությունները, շարահարական կապակցությունները: Տարածված է հատկապես ստորոգյալի զեղչումը՝ «Արեն Մկրտչյանը՝ Լոռու մարզպետ» (news.am, 17.09.2020), «Հայաստանում կորոնավիրուսով հիվանդների թիվը՝ 45152» (itares.am, 09.09.2020): Ոճական ընդգծված երանգի շնորհիվ ասելիքն ավելի դիպուկ, պատկերավոր ու հուզական են դարձնում և խոսքի սեղմությանը նպաստում **միակազմ նախադասությունները**: Բերենք **դիմավոր միակազմ նախադասության** օրինակներ, երբ գործողություն կատարողները դեմքով և թվով անորոշ են, ինչպես՝ «Ասում են...» (irates.am, 09.09.2020), «Աշխատավարձերն ու թոշակները կբարձրացնեն գուցե 3301 թվականին» (aurorane.ws, 22.03.2018), «Շվարած ենք». իմքայլականներին հրահանգել են թիվ ապահովել՝ 1 մլն դրամ (168.am, 25.02.2020), «Սահակաշվիլին կրկին ձերբակալեցին» (azatutyun.am,

08.11.2018): **Անդեմ նախադասությունների** օրինակներ՝ «Նոր հրդեհ Բեյրութի նավահանգստում» (a1plus.am, 10.09.2020), «Բողոքի ակցիա կառավարության դիմաց» (a1plus.am, 10.09.2020), «Պայթյուն Երևանում» (armeniasputnik.am, 26.08.2020): Հաճախուհեա է **շարահարությունը**՝ բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցության անշաղկապ եղանակը, ինչպես՝ «Չի ընտրվի՝ կվերադառնա հանրային դաշտ» (panorama.am, 05.03.2020):

Վերնագրեր ստեղծելու ազդեցիկ հնար է ոճական բանադարձումը: Լեզվի արտահայտչական այդ միջոցներից տարածված են հատկապես **բառախաղն ու շրջասույթը**, որոնք հուզականություն ու դիպուկություն են հաղորդում խոսքին: Բառախաղի օրինակներ՝ «Մի՛ դիր **դիմակ**, որ չդառնաս **դիակ**» (hayeli.am, 13.08.2020), «**Կանաչող** Սևանն ու «**կանաչով**» բնապահպանները» (7or.am, 27.07.2020), «կանաչով», այսինքն՝ ԱՄՆ դոլարով, այսինքն՝ վարձված բնապահպանները: Սարկազմն ապահովվում է նաև շրջասույթով՝ «**Ապշերոնյան սնապարծը** կրկին դատարկաբանությունների և ցածրորակ բարբաջանքների տարափ է տեղացել Հայաստանի հասցեին» (news.am, 07.07.2020), խոսքը Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի մասին է: «Շուտով սպասվում է երկու նախարարի հրաժարական. դա խոստացել է անձամբ **առաջին դեմքը**» (pastinfo.am, 09.09.2020), ակնարկվում է ՀՀ վարչապետը, «Մի կուսակցության **կոճակ սեղմողներին** փոխեցինք մեկ այլ կուսակցության **կոճակ սեղմողներով**» (168.am, 08.03.2019), նկատի ունի կողմ քվեարկող պատգամավորներին: Խոսքի հուզական ներգործությունն ուժեղացնելու նպատակով կիրառվում է **կրկնություն**՝ «Համբերել, համբերել մինչև վերջ» (aravot.am, 15.01.2009):

Վերլուծական երկար հոդվածներում հանդիպում են **ենթավերնագրեր**: Դրանք հոդվածի ընթերցման խթանիչ են, օգնում են ընթերցողին ընտրություն կատարել՝ որտեղից սկսել կամ շարունակել հոդվածը, հասկանալ տեքստի թիրախային ուղղությունը, կոնկրետացնում են որևէ միտք, մանրամասներ հաղորդում: Ենթավերնագրերով հարուստ են armeniasputnik.am էլեկտրոնային թերթի նյութերը: Այսպես, «Հայաստանի հարավի զբոսաշրջային գանձերը. հատուկ հետաքրքրասերների համար» հոդվածն (20.09.2020) ունի «Արենի», «Նորավանք», «Տաթև», «Ինձորեսկ», «Քարահունջ» ենթավերնագրերը:

Ամփոփենք: Մամուլի ընթերցումը սկսվում է վերնագրից, ուստի վերջինի հիմնական գործառույթն ընթերցողին հակիրճ ձևով տեղեկացնելն է լրագրանյութի բովանդակության մասին: Հանրային հետաքրքրություն ներկայացնող զգայուն թեմաների վերաբերյալ հրապարակախոսությունը ևս պահանջում է ճշգրտություն,

նրբանկատություն, և լրագրողը պետք է բացառի ընթերցողին մոլորեցնելու հնարավոր փորձերը:

- Վերնագրերը լինում են ինչպես չեզոք, այնպես էլ հեղինակային ակնհայտ վերաբերմունք պարունակող, և ժանրից ժանր գործ ունենք տարբեր պատկերների հետ: Դժվար չէ նաև միայն վերնագրից էլ կոահել՝ իշխանամե՞տ է տվյալ պարբերականը, թե՞ ընդդիմադիր:
- Առցանց մամուլի հրապարակումների վերնագրերում միահյուսված են գրական և խոսակցական բատաշերտերը, մեծաթիվ են ժարգոնային միավորները, օտարաբանությունները: Դրանցում տեղ են գտնում հայտնի ստեղծագործությունների վերնագրերի, թևավոր խոսքերի համաբանությամբ կազմված արտահայտություններ:
- Ձևաբանական հատկանիշներից նշելի են սահմանականի ժամանակաձևերի լայն կիրառությունը, որոշ կապերի ու շաղկապների տարածվածությունը:
- Իբրև վերնագրեր են գործածվում զեղչված անդամներով, միակազմ, ըստ խոսքի նպատակադրման և դրա հետ կապված հնչերանգների՝ տարբեր նախադասություններ (առավելապես պատմողական ու հարցական):
- Վերնագրերում հանդիպում են խոսքին արտահայտչականություն հաղորդող ոճական բանադարձումներ՝ բառախաղ, շրջասույթ, կրկնություն:

Ինչ խոսք, լեզվական ինչ միավորներ էլ պարունակեն, հաջողված են այն վերնագրերը, որոնք համապատասխանում են բովանդակությանը, ընթերցողին չեն ստիպում վերստին կարդալ վերնագիրը, նորույթն ինքնատիպ են ներկայացնում, դրա էության մեջ են վարպետորեն թափանցում, հետաքրքիր կողմերից գնահատում, դարձնում թափանցիկ կամ տեսանելի: Որպես կանոն, այդպիսիք հեռու են խրթինությունից, ձգձգվածությունից, գիտական եզրերի չարաշահումներից, ավելորդ խորհրդավորությունից: Իսկ ավելորդ պաթոսից խուսափելու համար նույնպես հարկավոր է լեզվական ճաշակ և չափի զգացողություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Յու. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, ԵՊՀ հրատ., Ե., 2016:
2. Դավթյան Յու., Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, Ե., 2006:
3. Խառատյան Ա., Լրատվության ժանրը Հայաստանի մամուլում, ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1998, № 2:

4. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, ԵՊՀ հրատ., Ե., 2003:
5. Гальперин И., Текст как объект лингвистического исследования, М., 1981.
6. Мирошниченко А., Работа в пресс-службе. Журналистика для пресс-секретарей, М., 2012.
7. <https://infotruck.wordpress.com/2011/11/24/how-to-write-great-hed-and-deks/> Last retrieved 20.09.2020.
8. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%BE%D5%A5%D6%80%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80> Last retrieved 20.09.2020
9. http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%BE%D5%A5%D6%80%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80 Last retrieved 20.09.2020
10. http://ysu.am/files/07S_Hovhannisyan.pdf Last retrieved 20.09.2020
11. <https://jrn1st.ru/head-newspaper> Last retrieved 20.09.2020
12. <https://moluch.ru/conf/phil/archive/301/13190/> Last retrieved 20.09.2020

REFERENCES

1. Avetisyan Yow. & owrishner, Hayoc lezow & xosqi mshakowyt', EPH hrat., E., 2016
2. Davt'yan Yow., Ar&elahay mamowli lezown hetxorhrdayin shrjanowm, E., 2006
3. Xar'atyan S., Lratvovt'yan jhanry' Hayastani mamowlowm, HH GAA, Lraber hasarakakan gitowt'yownneri, 1998, № 2
4. Papoyan A., Badikyan X., Jhamanakacic hayoc lezvi sharahyowsowt'yown, EPH hrat., E., 2003
5. Gal'perin I. , Текст как об"ект лингвистического issledovanija, М., 1981
6. Mirosnichenko A., Rabota v press-sluzhbe. Zhurnalistika dlja presssekretarej M., 2012
7. <https://infotruck.wordpress.com/2011/11/24/how-to-write-great-hed-and-deks/> Last retrieved 20.09.2020
8. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%BE%D5%A5%D6%80%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80> Last retrieved 20.09.2020
9. http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%BE%D5%A5%D6%80%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80 Last retrieved 20.09.2020

10. http://ysu.am/files/07S_Hovhannisyan.pdf Last retrieved 20.09.2020
11. <https://jrnlist.ru/head-newspaper> Last retrieved 20.09.2020
12. <https://moluch.ru/conf/phil/archive/301/13190/> Last retrieved 20.09.2020

АНУШ ХАЧАТРЯН - ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ ЗАГОЛОВКОВ ЭЛЕКТРОННОЙ ПРЕССЫ

***Ключевые слова:** заголовок, интернет-пресса, стилистические проникновения, варваризм, жаргон, каламбур, перифраз, риторический вопрос, односоставное предложение, стилистическая окраска.*

Чтение прессы начинается с заголовка, который является ключом к статье, поэтому основная функция заголовка заключается в кратком информировании читателя о содержании статьи. Встречаются как нейтральные, так и авторские заголовки, с подчеркнутой эмоциональной окраской. Они различаются от жанра к жанру, к тому же в армянской прессе разная картина в проправительственных и оппозиционных газетах. Заголовки включают названия известных произведений, выражения из фильмов, песен, пословиц, их модифицированные варианты. Журналист использует различные синтаксические конструкции: односоставные предложения, риторические вопросы и т. д.

ANUSH KHACHATRYAN - LANGUAGE FEATURES OF ELECTRONIC PRESS TITLES

***Keywords:** headline, online press, interstitial penetrations, varvarism, jargon, pun, periphrasis, rhetorical question, one-member sentences, stylistic coloring*

The reading of the press begins with the headline, which is the key to the article, so the main function of the headline is to briefly inform the reader about the content of the article. Headlines are both neutral and with an obvious authorial attitude, with accentuated emotional coloring. They differ from genre to genre. In addition, we have different pictures in pro-government and opposition newspapers. They include the names of famous works, expressions from movies, songs, proverbs, their modified versions. The journalist uses various syntactic structures: one-member sentences, rhetorical questions, incoherence, etc.

Ներկայացվել է՝ 25.09.2020

Գրախոսվել է՝ 25.09.2020

**Երաշխավորվել է ԵՊՀ Հայ բանասիրության
ֆակուլտետի կողմից՝ 04.09.2020**

АНАЛИЗ ПОЭТИЧЕСКОЙ ЛЕКСИКИ СО СЛОВАРНЫМИ ПОМЕТАМИ,
РЕАЛИЗУЮЩЕЙ ЭСТЕТИЧЕСКУЮ ФУНКЦИЮ ЯЗЫКА

ТАГУИ ХОДЖАЯН

Ключевые слова: поэтическая лексика, словарные пометы, стилистически маркированная семема; метафора.

В статье анализируются некоторые виды поэтической лексики с пометами в словарях; слова, не имеющие ранее возвышенного значения, но получившие его вследствие убывания частотности их употребления; слова, имеющие и сохранившие свое возвышенное значение; слова, имеющие возвышенное значение, но потерявшие его; многозначные слова, имеющие несколько помет; слова, имеющие несколько стилистически маркированных семем; метафоры.

Поэтический язык - “система правил, лежащих в основе художественных текстов, как прозаических, так и стихотворных, их создания и прочтения (интерпретации); эти правила всегда отличны от соответствующих правил обиходного языка” (ЛЭС). Его лексика дифференцируется стилистически. Стилистически окрашенные слова могут быть ограничены определёнными типами речи, условиями речевого общения или жанрами литературы (научная лексика, поэтическая лексика)¹.

Целью данной статьи является выявление видов поэтической лексики с пометами в словарях. Это в первую очередь слова с пометами gehoben, указывающие на высокий стиль их употребления (Gatte, Gewand, allebendig, allzugleich, entschlafen и др.), поэтизмы с пометами dichterisch (Minne, Eiland, Zähre, Eos, Philomela, Zephir, Pegasus, Morpheus, Demant, der/die Verblichene). Часто это композиты (Dreigestirn, Weltenraum, Himmelsbraut, dämmergrau, Himmelsbogen Erdenkloß, Erdenwurm, Sternenzelt, Dreigestirn).

Эстетический (поэтический) потенциал имеют также эвфемизмы, эстетическая функция которых состоит в том, что они используются в

¹ <https://les.academic.ru/580/Лексика>

качестве более изящных и элегантных обозначений тех явлений действительности, которые могут отрицательно восприниматься реципиентом. Они используются в разных сферах, например, в поэзии, для того чтобы избежать упоминания “грубых материй”, таких как смерть, болезни и др.

С.Д. Суняйкина и С.Д. Афтайкина приводят довольно полный перечень поэтической лексики, зафиксированной в словарях. При этом выделяются существительные, глаголы, прилагательные, наречия. Среди существительных имеются корневые слова (*das Antlitz, die Minne, die Zährei* др.), дериваты (*das Gestade, das Gezelt, allzugleich* и др.) и композиты. Среди композитов с эстетическим потенциалом можно выделить детерминативные композиты (*die Himmelsbraut, Erdenschoß, Lobgesang, Mondenglanz* и др.), копулятивные композиты (например, *das Dreigestirn*), субстантивации (*der Sang, der/die Verblichene* и др.), заимствования (напр. *der Demant* от французского *diamant*). Эстетическую функцию в тексте имеют также имена из мифологии (*die Eos, die Philomela, der Zephir, der Morpheus, der Pegasus* и др.) (Суняйкина 2001; Афтайкина 2012).

Слова с эстетическим потенциалом имеют в основном четыре вида словесных помет в словарях: устаревшее (*veraltet*), высокий стиль (*gehoben*), поэтическое (*dichterisch*), эвфемистическое (*verhüllend*).

Среди слов, имеющих возвышенное значение с пометами *gehoben* и *dichterisch*, можно выделить четыре группы:

1. Слова, не имеющие ранее возвышенного значения, но получившие его вследствие убывания частотности их употребления, например:

Antlitz, das (gehoben) происходит из *ahd. antlizzi* и употреблялось раньше без каких-либо стилистических созначений, затем его вытеснило *mhd. gesichte*, современное *Gesicht*, которое вначале означало просто процесс зрения, позже приобрело значение атрибутов лица, т.е. все, что есть на лице.

danieden (veraltet) – *unten auf der Erde*

danieder (gehoben) – в современном языке это слово можно встретить лишь в религиозном значении “*auf der Erde*” в отличие от потустороннего мира и в связи с *hienieden, danieden*.

Demant, der (dichterisch) - *Diamant* – бриллиант. Г. Пауль отмечает, что раньше форма *Demant* наряду с поэтическим употреблением использовалась и в прозе, а в средние века большее распространение

имел заимствованный латинский эквивалент *adamas* или *adamant* (Paul 1959).

Eiland, das (dichterisch) – Insel – может соответствовать слову mhd. *einlant*, *eilant* “затерянная страна”. В древневерхненемецком это слово уже имелось и распространилось, вплоть до фризского *eilant*, в котором первая часть имеется в современном немецком языке как *Aue* в значении Insel (besonders in einem fließenden Gewässer) (Duden). Это значение содержится и в слове Eiland (Paul 1959). Следовательно, первоначально слово было общеупотребительным и стилистическое созначение оно получило позже.

erbleichen (gehoben) – bleich werden, erblassen

Lenz, der (dichterisch) – Frühling – ahd. *lenzo*, mhd. *lenze*, западногерманское слово (ср. англ. *Lent* “Fastenzeit”); *lang* (nach den länger werdenden Tagen) В ранневерхненемецком *Lenz* было общепринятым обозначением для более позднего *Frühling*. В 18 веке *Lenz* стало использоваться в поэзии и превратилось в поэтическое слово.

Minne, die (altertümelnd) – любовь. Бывает так, что созначение слова может изменяться многократно в течение его употребления при неизменности его основного значения, как это произошло с данным словом. До 15 века *minne* было обычным словом для обозначения любви, затем значение этого слова приобрело пейоративное созначение и стали избегать его употребления, однако позже это созначение исчезло, *Minne* возродилось с положительным созначением и его стали использовать в рыцарской любовной лирике.

Zähre, die (veraltet, dichterisch) – слеза. Слово пришло из ahd. *zah(h)ar*, mhd. *zaher*, имеется в англ. *tear*. Современная форма слова *Zähre* образовалась из множественного числа *zähere*, которое используясь все реже перешло в группу возвышенной лексики

2. Слова, имеющие и сохранившие свое возвышенное значение.

erdgeboren (gehoben) – sterblich, irdisch – смертный, земной

Erdensohn, der (dichterisch) – der Mensch als irdisches sterbliches Wesen. Erdenwurm – слабый Gen. В слове Erde более новая форма в композитах Erdensohn, Erdenkloß с первым компонентом Erde. Первоначальная форма была Erd- (поэтич. Erde-) как в словах Erdgeschoß, Erdboden, Erdöl.

Odem, der (dichterisch) – дыхание. Впервые Odem вместо Atem использовал Лютер, а затем через употребление в Библии слово вошло в поэтический лексикон.

Wonne, die (gehoben) – hoher Grad der Beglückung, des Vergnügens, der Freude. Слово восходит к got. *wunan* “sich freuen” и первоначально не имело возвышенного созначения.

wonnetrunken (gehoben) – trunken vor Wonne.

3. Слова, имеющие возвышенное значение, но потерявшие его.

Gatte, der (gehoben) – Ehemann. Слово Gatte происходит из mhd. *gate* – “der einem anderen gleichsteht, mit ihm zusammengehört”. До 18-го века значение слова было шире и означало супруга и супругу, но затем произошло сужение значения. С самого начала слово Gatte принадлежало возвышенной торжественной речи, и приобрело, как следствие, поэтическое созначение, которое оно затем потеряло и стало постепенно вытесняться из языка.

4. Многозначные слова, имеющие несколько помет.

dahinfahren – 1.a. *wegfahren* (dichterisch); b. *vorüberfahren* (dichterisch); 2. (gehoben, veraltet) *sterben*; *dahinfahren* используется в значении «*wegfahren*» и «*vorüberfahren*» в поэтических текстах, а в значении «*sterben*» оно устарело и имеет возвышенное созначение.

erbleichen (veraltet, dichterisch) – умирать

5. Слова, имеющие несколько стилистически маркированных семем.

dahinfliegen (gehoben) – 1. *wegfliegen* – улететь; 2. *sehr rasch vergehen, verfliegen* – улетучиться

В поэзии используются с возвышенным значением также:

dämmerhell (dichterisch) – (beim Wechsel der Tageszeiten) vom Dunkeln ins Helle und vom Hellen ins Dunkle

erglimmen mhd. (dichterisch) – zu *glimmen* beginnen, glimmernd aufleuchten

himmelan (dichterisch) – zum Himmel empor – вверх к небу.

Одним из основных языковых средств, пополняющих эстетический потенциал поэтической лексики, являются метафоры. Система образных средств в поэтическом языке довольно хорошо изучена в работах К.С. Горбачевича, В.П. Григорьева, Н.А. Кожевниковой, Б.А. Ларина и др. Семантика слова имеет свойство трансформироваться и создавать приращения, придающие языковым элементам дополнительное значение. Этому могут способствовать дополнительные семы в значении слова, которые могут возникать в лексических единицах, когда определенные образы сопутствуют лексической единице в данном контексте. В словарях зафиксированы такие метафоры как:

Himmelspforte (dichterisch) – небесные врата

Sternenauge (dichterisch) – strahlendes Auge – сияющие глаза

Windsbraut (dichterisch) – Wirbelwind, heftig brausender Wind – смерч

Рассмотрим метафору der Nebelschleier, состоящую из двух лексем Nebel и Schleier. Семантическую структуру лексемы Nebel рассмотрим на нескольких уровнях анализа, сравнивая при этом определения по словарю Langenscheidt:

Nebel –

I-ый уровень анализа: Nebel – Wolken (aus Dunst), die sich...

II-ой уровень: Wolke – eine große Menge von sehr kleinen Wassertropfen...

III-ий уровень: Dunst – eine Art dünner leichter Nebel...

Второй компонент композита Nebelschleier имеет два значения: Schleier – 1. Ein dünnes Stück Stoff... 2. Eine Schicht aus kleinen Tropfen...

Метафора Nebelschleier образовалась по ассоциации благодаря тому, что в обоих компонентах сложного слова Nebelschleier имеются итеративные семы “Tropfen” и “dünn”.

Метафора die Schneehaube образовалась при соединении двух зрительных образов («картинок»²), а именно, зрительного образа сугроба, который имеется у нас благодаря нашему знанию о мире, и чепца, который, как мы знаем из художественной литературы, также был белого цвета и, надетый на голову, имел выпуклую форму.

В метафоре die Rosenzeit, состоящей из двух слов, первое слово Rose является символом любви в немецкой поэзии XVIII-XIX веков³ (Круглова, 2003), здесь имеется в виду “время любви”.

Отметим, что если в метафорах Nebelschleier и Schneehaube метафорический образ создается в первую очередь при помощи второго компонента композиты, то в метафоре Rosenzeit он создается за счет символического восприятия первого компонента.

Таким образом, среди единиц поэтической лексики с пометами, реализующих эстетическую функцию языка, мы выделяем следующие группы: слова, не имеющие ранее возвышенного значения, но получившие его вследствие убывания частотности их употребления; слова, имеющие и сохранившие свое возвышенное значение; слова,

² И.А.Стернин выделяет в концепте базисный когнитивный слой и чувственно-образное ядро, «картинки» (см.: Стернин, 2001:58-65)

имеющие возвышенное значение, но потерявшие его; многозначные слова, имеющие несколько помет; слова, имеющие несколько стилистически маркированных семем; метафоры.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Афтайкина С.Д. Закономерности эволюции значений немецких поэтизмов // В мире науки и искусства: вопросы филологии, искусствоведения и культурологии: сб. ст. по матер. XVII междунар. науч.-практ. конф. – Новосибирск: СибАК, 2012.
2. Горбачевич К.С. Словарь литературного языка и язык художественной литературы // Словарные категории: Сб. статей / Отв. ред. Ю.Н. Караулов. -М.: Наука, 1988.
3. Григорьев В.П. О некоторых проблемах лингвистической поэтики // Теория поэтической речи и поэтическая лексикография. -Шадринск: ШГПИ, 1971
4. Стернин И.А. Методика исследования структуры концепта. В сб.: Методологические проблемы когнитивной лингвистики. Воронеж, 2001.
5. Кожевникова Н.А. Словоупотребление в русской поэзии начала XX в. / Под ред. В.П. Григорьева. М., 1986. - 253 с.
6. Круглова Е.А. Символика розы в русской и немецкой поэзии конца XVIII - начала XX веков: Опыт сопоставления: дис. ... канд. филол. наук, 2003.
7. Ларин Б.А. Эстетика слова и язык писателя. Л., 1974.
8. Суняйкина С.Д. Поэтизмы в современном немецком языке : диссертация ... кандидата филологических наук : 10.02.04.- Саранск, 2001.- 166 с.: ил. РГБ ОД, 61 02-10/370-5
9. ЛЭС - Лингвистический энциклопедический словарь под ред. В.Н.Ярцева, Москва, "Советская энциклопедия", 1990.
10. Duden– Deutsches Universalwörterbuch (2007) Dudenverlag. Mannheim-Leipzig-Wien-Zürich.
11. Langenscheidts Großwörterbuch (1998) Berlin u. München.
12. Paul, Hermann (1959) Deutsches Wörterbuch. 6.Auflage, bearbeitet von Alfred Schirmer.

REFERENCES

1. Aftajkina S.D. Zakonomernosti jevoljucii znachenij nemeckih pojetizmov // V mire nauki i iskusstva: voprosy filologii, iskusstvovedenija i kul'turologii: sb. st. po mater. XVII mezhdunar. nauch.-prakt. konf. – Novosibirsk: SibAK, 2012.
2. Gorbachevich K.S. Slovar' literaturnogo jazyka i jazyk hudozhestvennoj literatury // Slovarnye kategorii: Sb. statej / Otv. red. Ju.N. Karaulov. -M.: Nauka, 1988.
3. Grigor'ev V.P. O nekotoryh problemah lingvisticheskoj pojetiki // Teorija pojeticheskaj rechi i pojeticheskaja leksikografija. -Shadrinsk: ShGPI, 1971
4. Sternin I.A. Metodika issledovanija struktury koncepta. V sb.: Metodologicheskie problemy kognitivnoj lingvistiki. Voronezh, 2001.
5. Kozhevnikova N.A. Slovoupotreblenie v russkoj pojezii nachala XX v. / Pod red. V.P. Grigor'eva. M., 1986. - 253 s.
6. Kruglova E.A. Simvolika rozy v russkoj i nemeckoj pojezii konca XVIII - nachala XX vekov: Opyt sopostavlenija: dis. ... kand. filol. nauk, 2003.
7. Larin B.A. Jestetika slova i jazyk pisatelja. L., 1974.
8. Sunjajkina S. D. Pojetizmy v sovremennom nemeckom jazyke : dissertacija ... kandidata filologicheskikh nauk : 10.02.04.- Saransk, 2001.- 166 s.: il. RGB OD, 61 02-10/370-5
9. LjeS - Lingvisticheskij jenciklopedicheskij slovar' pod red. V.N.Jarceva, Moskva, "Sovetskaja jenciklopedija", 1990.

ԹԱԳՈՒՇԻ ԽՈՋԱՅԱՆ - ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՆՇՈՒՄՆԵՐՈՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊՈԵՏԻԿ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր՝ պոետիկ բառապաշար, բառարանային նշոյթավորում, ոճական նշոյթավորում ունեցող սեմեմներ, փոխաբերություն

Հոդվածում վերհանվում են բառարանային նշոյթավորում ունեցող պոետիկ բառապաշարի մի քանի տեսակներ՝ բառեր, որոնք նախկինում չեն օգտագործվել վերամբարձ ոճով, նախկինում բարձր ոճով օգտագործված, բայց հետագայում այն կորցրած բառեր, մի քանի նշում ունեցող բազմիմաստ բառեր, մի քանի ոճական նշոյթավորում ունեցող սեմեմներ, փոխաբերություններ:

**TAGUHI KHOJAYAN - THE ANALYSIS OF MARKED POETIC LANGUAGE
ACTUALIZING THE AESTHETIC FUNCTION OF THE LANGUAGE**

Keywords: *poetic language, language with marks, stylistically marked sememes, metaphors*

The article analyses units of marked poetic language actualizing the aesthetic function of the language, in which we singled out the following groups: words which weren't used in the literary style but which acquired certain connotation in the course of their frequency decrease; words which lost their connotational meaning; polysemantic words having several stylistically marked meanings, sememes; metaphors.

**Ներկայացվել է՝ 03.10.2020
Գրախոսվել է՝ 01.10.2020**

ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԿԱՆԱՉ
ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ

ԴԻԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հիմնաբառեր՝ Հրանտ Մաթևոսյան, «Կանաչ դաշտը», թարգմանվածք, համարժեքություն, բառային համարժեք, քերականական համարժեք, բանասիրական մեկնարկեստ, լեզվաոճական, լեզվաբանաստեղծական, գրականագիտական մեթոդ

Հոդվածի գլխավոր **թեման** Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի և դրա անգլերեն թարգմանվածքի համեմատական քննությունն է, որի **նպատակն** է բացահայտել, թե որքանով է թարգմանվածքը համարժեք բնագրին, և թե ինչպես են հաղթահարվել թարգմանության ընթացքում երևան եկած **խնդիրները**՝ համարժեքության հասնելու համար: Առանձնակի ուշադրության են արժանանում բնագրային տեքստի և թարգմանվածքի այն հատվածները, որոնք բանաստեղծական ռիթմի և պատկերավորության խտացում են, հարուստ են բառային և շարահյուսական արտահայտչամիջոցներով՝ բառային հարակրկնությամբ, շրջուն շարահայտությամբ և այլն: Համարժեքության գնահատման համատեքստում քննվում են բառային համարժեքների տեսակները՝ հաստատուն, տարբերակային, համատեքստային (դիպլոմատային), դարձվածքների թարգմանության համարժեքությունը, իրակությունների թարգմանության եղանակները և քերականական-շարահյուսական համարժեքության տեսակները: Քննությունը կատարվում է **լեզվաոճական, լեզվաբանաստեղծական և գրականագիտական մեթոդներով**: Բնագիրը և թարգմանվածքը դիտարկվում են բանասիրական մեկնարկեստի՝ հերմենևտիկայի ընձեռած հետազոտական եղանակով, որն ազդարարում է. մասը վկայում է ամբողջի, ամբողջը՝ մասի էությունը:

Եթե ինձ երբևէ հարցնեին, թե որն է հաջողության հասնելու բանային, կպատասխանեի. «Սիրելի գործով զբաղվելը, որը շատ նման է ստեղծագործելուն. երկու դեպքում էլ սերն է դրդապատճառը, միջոցն ու արդյունքը: Համենայն դեպս, ինձ համար այդպես է»: Գրականությունը, ներառյալ նիհիլիստական, դեկադենտական գրականությունը, ստեղծվում է կյանքի հանդեպ եղած սիրուց, քանի որ «մեկ անգամ տրվածը»,

իմանալի ու անիմանալի իրականությունն անմահացնելու անսահման ձգտումը գրողին մղում է ո՛չ միայն վավերագրելու ապրածն ու չապրածը, այլև վերստեղծելու այն, այլև ստեղծելու **իր** տիեզերքը, իր աշխարհը, իր հովիտը, և այն ապրեցնելու իր պատկերացրած կյանքով՝ նաև հաճախ այն բնակեցնելով իր ստեղծած մարդկանցով:

Հրանտ Մաթևոսյանը, ինչպես և համաշխարհային գրականության շատ մեծեր, նույնպես ստեղծել է իր իրականությունը՝ ծնակուտյան իր տիեզերքը, բառի լայն իմաստով, բայց նաև իր հովիտը՝ «կանաչ դաշտն» է պատկերել, որտեղ Աստծու բոլոր արարածները գոյում են կողք կողքի, պայքարում են, որպեսզի դիմակայեն, և դիմակայում են՝ պարտությունն ու հաղթանակը պահ տալով կանաչ հովտին, և հեռանում են՝ մնալով սոված գայլուկների ու աստղազարդ քուռակի կենդանական հիշողության մեջ: Նաև՝ փոքրիկ հովվի հիշողության մեջ, նաև՝ դաշտի, հողի, խոտ ու ծաղկի, բլուրների ու երկնքի հիշողության մեջ:

Ամեն բան ստեղծվում է սիրուց և ավերվում է սիրո պակասից:

Երբ «կանաչ դաշտը» հայտնվեց իմ սիրո տարածքում, ես երկար ու խնամքով գուրգուրում էի նրա ամեն տառն ու բառը, տողարանքն ու պատկերը, ձայնը, գույնը, համն ու հոտը, լսում էի լռությունը և խլանում աղմուկի մեջ, մինչև որ հասկացա, թե ինչ էր ուզածս. մի ուրիշ կերպ, մի ուրիշ լեզվական հյուսվածքով հավաքել կտավը, ուրիշ թելերով հյուսել կանաչ դաշտի կարպետը, որ ուրիշներն էլ գլուխկոնծի ու տրտինգ տան մաթևոսյանական եզերքում, որ նրանց սիրտն էլ հովանա կանաչ հովտի հարատևության մեջ:

Ցանկությունը, այո, գործի կեսն է, բայց ամեն ծանրություն իր ծանրորդն է պահանջում, այլապես կմնա իր տեղում ընկած: Երբ սկսեցի թարգմանել, դեռ պատկերացում չունեի, թե ավարտից հետո որ մի անգլախոս, անգլագիր խմբագիրը կհամաձայներ ու կզորեր կոկել, հարթել խոփերս ու վրիպումներս, որոնք, անպայման լինելու էին հենց միայն այն պատճառով, որ անգլերենը, այսպես թե այնպես, օտար լեզու էր ինձ համար, որքան էլ այդ պահին (2006-ին) արդեն գրեթե չորս տասնամյակ փորձում էի Շեքսպիրի, Բայրոնի ու Ֆոլքների լեզուն ինձնով անել. կարդալ, հասկանալ ու թարգմանել, խոսել, անգամ մտածել անգլերեն: Այսօր էլ երախտագիտությունս ու հիացմունքս նույնքան խորն է Հակոբ Հաչիկյանի հանդեպ, որքան գրեթե տասնհինգ տարի առաջ, երբ Երևանում ծանոթացա ու մինչև իր երկրային կյանքի ավարտը իմ թանկ բարեկամը համարեցի նրան, որն այդ ժամանակ Կանադայում ճանաչված անգլագիր վիպասան էր արդեն: Հենց նրան էլ պարտական եմ թարգմանություններիս թե՛ անաչառ գնահատության, թե՛ անգնահատելի խորհուրդների համար, որոնք տարածվեցին «Հայ

ժամանակակից արձակ» (Contemporary Armenian Prose 2006) անթոլոգիայում ընդգրկված մի շարք հայ ժամանակակից արձակագիրների պատմվածքների անգլերեն թարգմանությունների նրա խմբագրման վրա, որոնց թվում ինը պատմվածք՝ իմ թարգմանությամբ:

Փոքր-ինչ վախվորած և ճիշտ հասկացվելու ակնկալությամբ ուզում եմ նաև հիշել, որ իմ համառ պնդումով անգլերեն անթոլոգիան բացվեց Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտով», որքան էլ ըստ նախագծի՝ այնտեղ համախումբ ներկայացվում էին այդ պահին **ողջ** և **ստեղծագործող** և որոշակի արժեք ներկայացնող արձակագիրների պատմվածքները: Շնորհակալություն երջանկահիշատակ Լևոն Անանյանին, որն այդ ծրագրի նախաձեռնողն էր, և ի վերջո, համաձայնեց իմ առաջարկին, թեպետ երկուսս էլ լավ էինք հասկանում, որ մեկի համար արված բացառությունը, նույնիսկ եթե այդ մեկը Հրանտ Մաթևոսյանն էր, մյուսներին անհարկի ստվերելու վտանգ էր պարունակում, բայց և այնպես, ես համառեցի ու թարգմանեցի, և ահա պատմվածքը զարդարելով բացում է անթոլոգիան, ու բարեբախտաբար, մինչ այսօր մեր մտահոգությունն անհիմն է եղել:

Հիմա դառնամ «Կանաչ դաշտի» անգլերեն թարգմանվածքին, այս անգամ որպես հետահայաց քննության հակված հետազոտող՝ վեր հանելու այն բոլոր խնդիրները, որոնք ստեղծագործաբար, զուցե ենթագիտակցորեն, նաև՝ թարգմանաբանի պահանջկոտությամբ, փորձել եմ լուծել՝ համարժեք թարգմանության հասնելու **նպատակով**:

Նախ, նշեմ թարգմանաբանական այն **խնդիրները**, որոնց անդրադառնում եմ այս հոդվածում՝ «Կանաչ դաշտի» անգլերեն թարգմանվածքի համարժեքությունը բնագրի համեմատ քննելիս.

1. Բառային համարժեքների տեսակները՝ հաստատուն, տարբերակային, համատեքստային (դիպվածային),
2. Դարձվածքների թարգմանության համարժեքությունը,
3. Իրակությունների թարգմանության եղանակները համարժեքության հասնելու նպատակով,
4. Քերականական-շարահյուսական համարժեքության տեսակները:

Այս քննությունն **արդիական է** թե՛ ժամանակակից հայ արձակագիրների պատմվածքների անգլերեն թարգմանության փաստը կարևորելու և գնահատելու տեսանկյունից, թե՛ այդ թարգմանվածքների համարժեքությունը բնագրի համեմատ քննելու, մասնավորապես, Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի անգլերեն թարգմանվածքի համարժեքությունն ուսումնասիրելու և գնահատելու տեսանկյունից:

Քննությունը կատարվում է լեզվաոճական, լեզվաբանաստեղծական և գրականագիտական **մեթոդներով**: Բնագիրը և թարգմանվածքը

դիտարկվում են բանասիրական մեկնարկվեստի՝ հերմենևտիկայի ընձեռած հետազոտական եղանակով, որն ազդարարում է. մասը վկայում է ամբողջի, ամբողջը՝ մասի էությունը:

«Կանաչ դաշտի» բնագրային տեքստը (Մաթևոսյան 1978, http://www.hrantmatevossian.org/m/up/Kanach_dashty.pdf) բացվում է բնության շարժուն պատկերի նկարագրությամբ, որն իր մեջ է ներառում թե՛ բնության հարահոս փոփոխությամբ պայմանավորված զանազան իրողությունների ու երևույթների՝ ժայռի, կանաչ գետնի, հովտի, կայծակի, կաղնու, շատ կենդանի, ես կասեի՝ աշխույժ փոխհարաբերությունը, երբ ակնհայտ է դառնում, որ Հր. Մաթևոսյանի ուրույն մտահղացմամբ դրանք օժտված են մարդկային հատկանիշներով և մարդկային վարք ցուցանելու կարողությամբ՝ «բախվել, շարտվել, թաղվել, կարողանալ, պոկել, վախից սրսփալ, կաղնիորեն շնորհակալ լինել, ձգել ու թաղել, փրկել, խանձվել», նաև՝ մարդեղեն բնության մեջ կարծես աչքիդ առաջ կատարվող իրադարձությունների մասին վառ, շնչասպառ անող, սիրտդ ոտքերդ զցող պատմությունը, որն ամփոփվում է վարպետորեն նկարված կինոկադրի չափ տեսանելի ու լսելի, կարելի է նույնիսկ ավելացնել՝ դեռ չվկայված հոտերն ու բույրերը ռունգերիդ հասցնող նախադասությամբ.

«Ժայռի տակ կանաչ գետինը այդ հովտում **ճայթող** բոլոր կայծակների գերեզմանոցն էր.գարունների և ամառների բոլոր կայծակները թաղվում էին ժայռի տակ...» (1)

հմմտ.

“The green ground under the rock was the cemetery of all the lightning bolts that **cracked** in that valley: all summer and spring lightning bolts were buried under the rock...” (16)

Պատմվածքի առաջին պարբերության մեջ կայծակի, ժայռի և կաղնու հարատև գոյակցությունը թանձրանում է «**ճայթյունով** բախվեց», «**ճայթող** կայծակներ», «ամեն **ճայթյունի** վախից» բառային հարակրկնություններով, որոնք անգլերեն թարգմանության մեջ փոխանցվել են “struck with a dry **crackle**”, “lightning bolts that **cracked**”, “terrified by each **crack** of lightning” արտահայտություններով, որտեղ «ճայթյուն, ճայթել» բառերն անգլերենում ունենալով բառարանային մի շարք հոմանշային տարբերակներ. “1) crack, snap, 2) explosion, burst, blast”, այդուհանդերձ, թարգմանվել են համատեքստին համարժեք բառերով՝ “crackle, crack”, քանի որ մյուս բոլոր տարբերակները կարող են նկարագրել ռումբի պայթյուն, քամու պոռթկում, մտրակի շրխկոց, կրակի ճարճատյուն, բայց ոչ կայծակի ճայթյուն: Այսպիսով՝ անգլերեն թարգմանվածքում համարժեքության պահպանման նպատակով գործածվել է բառային **տարբերակային համարժեքը**:

Առաջին շարժուն պատկերին հաջորդում է ոչ պակաս դրամատիկ, լարված, ահագնացող տագնապներով լի մի տեսարան, որը նախորդի բնապատկերային եռուզեռին հավելում է քուռակի ու նրա մոր փոխկանչը. կենդանական բնազդներով միմյանց ամուր կապված քուռակն ու մայրը հայտնվել են մի հովտում, որտեղ «կայծակը մտածում էր ճայթել», ուրեմն մայրը, որ գիտեր մոտեցող վտանգի մասին, «մեղմ խրխինջով կանչեց քուռակին», մինչդեռ անփորձ «քուռակը կարծեց մայրն իրեն կանչում է կուրծք տալու և **ականջ դրեց ինքը իրեն**, ականջները շարժեց և **ունկնդրել սկսեց ինքը իրեն...**» (1)

հմմտ.

“The little foal thought that his mother was calling him to suckle. He **pricked up his ears**, moved them around, and **began to listen to himself...**” (16)

Բնագրի «ականջ դնել» բառակապակցությունը, որն ունի «1.Լսել: 2.Ի նկատի ունենալ, հաշվի առնել, հետևել: 3.Գաղտնաբար լսել:» (Աղայան 1976ա:15) իմաստները և անգլերեն թարգմանվում է “to eavesdrop, to listen, to hearken, to hark” հոմանշային բառերի շարքով, թարգմանվածքում դարձել է “**pricked up his ears**” պատկերավոր դարձվածք, քանզի բնագրի համատեքստից ընկալելի է, որ քուռակն ականջները սրում է՝ պարզելու, թե մայրն ինչու է իրեն կանչում, որն ամրապնդվում է հաջորդ քայլով՝ «**ականջները շարժեց**», ապա ավարտվում ինքնասույզ փնտրտուքով՝ «**ունկնդրել սկսեց ինքն իրեն**»: Այս հատվածի յուրատեսակ լեզվական խաղը՝ «ականջ դրեց ինքը իրեն, ականջները շարժեց և ունկնդրել սկսեց», համարժեքորեն թարգմանելու նպատակով գործածվել է ոչ թե բառարանում ամրագրված բառային թարգմանական տարբերակներից որևէ մեկը, այլ **համատեքստային (դիպվածային) համարժեքը՝ «ականջ դրեց» - “pricked up his ears”** դարձվածքը, որը նաև պահպանել է բնագրի բառակապակցության պատկերը, ինչպես նաև տեղ թողել հետագա արարքների համարժեք նկարագրության համար անգլերեն թարգմանվածքում՝ «**ականջները շարժեց**» - “**moved them around**”, «**ունկնդրել սկսեց ինքը իրեն**» - “**began to listen to himself**”:

Եվ քանի որ «ինքն իրեն ականջ դրած» քուռակն արդեն գլխի էր ընկել, թե ինչն էր իր ուզածը՝ «խոտերից ու ծաղիկներից հոտ քաշել և մեկիկ-մեկիկ ճանաչել խոտերը», երբ «կայծակը ճայթեց», և քանի որ «միամայա նրա կյանքում դա առաջին կայծակն էր», քուռակը «խրտնեց ու վազեց դեպի մայրը» և «**պատսպարվեց մոր լանջի տակ**»: (1)

հմմտ.

“This was his first experience of lightning in his month-long life. He **sheltered himself under his mother’s breast.**” (16)

Բնագրում անակնկալ հայտնված այս արտահայտությունը՝ «**պատսպարվեց մոր լանջի տակ**», անակնկալ է թե՛ սյուժեի շարունակությունը ընթերցողին հրամցնելու, փաստի առաջ կանգնեցնելու, թե՛ բառաշերտի ընտրության և բառերի, այսպես կոչված, «արտիստիկ» համակցությանը քուռակի բնագրային ձգտումները վերհանելու տեսակետից:

Բանն այն է, որ երբ կայծակը ճայթեց, Հր. Մաթևոսյանը պատմում է, թե ինչ եղավ հետո. «Քուռակը խրտնեց ու վազեց դեպի մայրը, բայց շատ էր վախեցել, մորը չէր տեսնում, ուրիշ կողմ էր փախչում: Մայրն ուզեց գնալ դեպի քուռակը, բայց վզի պարանը խանգարեց: Եվ մայրը քուռակին խրխինջով կանչեց իր մոտ»: (1)

Այս «խրխինջը», որը մեղմ հնչել էր նաև այնժամ, երբ կայծակը դեռ չէր ճայթել. «քուռակի մայրը մեղմ խրխինջով կանչեց քուռակին», վիատեցնում է ընթերցողին նույնքան, որքան մայրն ու քուռակն էին վիատվել, որքան ողջ տեսարանն էր վիատեցնող, ուստի ամենաանսպասելին հենց քուռակի և մոր հանդիպումն էր, որն անակնկալ, բայց և մաթևոսյանական հայացքի համար միանգամայն բնական ու ակնկալելի շարունակություն է, քանի որ քուռակը «**մոր լանջի տակ պատսպարվելու**» համար է քուռակ, քանի որ քուռակը մոր խրխինջով կողմնորոշվելու, վտանգները շրջանցելու և փրկվելու ճանապարհին է հասունանում՝ կյանքի հարվածներին հետո անմայր դիմանալու համար: Այսքանը սյուժեի անկանխատեսելի ընթացքի մասին, որը լեզվական հյուսվածքի ինքնատիպ դրսևորմամբ նաև թարգմանական խնդիր է առաջադրել: Ո՞րն է այդ խնդիրը:

«Պատսպարվել» բառը, որի բառարանային բացատրությունն է «...2. չթաքնվել, պահվել: 3. փխբ. Մի բանից պաշտպանվել...» (Աղայան 1976, հ. 2:1195), բնագրի համատեքստում գործածվել է թե՛ ուղիղ, թե՛ փոխաբերական իմաստով. «թաքնվել է՝ կայծակից պաշտպանվելու նպատակով»: Այս դեպքում նկատելի է, որ «պատսպարվելը» նաև փոքր-ինչ վերամբարձություն և հանդիսավորություն է հաղորդում պատմողի խոսքին, մինչդեռ «լանջ» բառը, որի իմաստներն են. «1. Կուրծք: 2. Ձգեստի այն մասը, որ ծածկում է մարդու կուրծքը: 3. Լեռան զառիվայր մակերեսը, սարալանջ:» (նույն տեղում, հ. 1:515), այս համատեքստում գործածվել է «կուրծք» իմաստով, որը նույն տեսարանի նկարագրության վերջում դառնում է «փոր».
«Գանգուր, սև պոչիկը թափահարելով՝ քուռակը մտավ **մոր փորի տակ**»: (1-2)

հմմտ.

“Shaking his curly black tail, the foal went under his mother’s belly.”

(16)

Բանաստեղծական ներակա լիցքով առանձնացող «լանջ» բառը գալիս է արտասովոր թարմություն հաղորդելու «**պատսպարվել մոր լանջի տակ**» արտահայտությանը՝ խտացնելով հեղինակի ասելիքն ու ոճավորելով նրա «ասելու, պատմելու» եղանակը: Ահա այս վերլուծությունն օգնում է գնահատելու թարգմանական համարժեքի ընտրությունը, որը հանգել է «**լանջ-կուրծք**»-“**breast**” տարբերակային համարժեքին և թաքնվելով «**պատսպարվել**» - “**to shelter oneself under**” նախդրավոր բառակապակցությանը՝ անգլերենում նույնպես միահյուսելով որոշակի վերամբարձություն և բանաստեղծականություն, պահպանելով թե՛ բնագրային ասելիքի էությունը, թե՛ բառերի «արտիստիկ» համակցության ինքնատիպ ոճավորումը:

Կյանքի ու բնության հարափոփոխ էությունը պատկերելով՝ Հր. Մաթևոսյանը մեր աչքի առաջ շարժում է կադրը, և «անձրևի թմբկահարումը կաղնու տերևներին» մի քիչ լսած քուռակը, որ խրտնել ու փախել էր մոր մոտից, հիմա հայտնվում է կանաչ դաշտի «թացության ու առատ լույսի մեջ», որտեղ ամեն կենդանի ու անկենդան բան փայլում է. «Արևի մեջ կանաչ դաշտը **փայլում էր**: Թացության ու առատ լույսի մեջ **փայլում էր** նաև այդ հովտի միակ կաղնին, և մասրենու թո՛ւփն **էր փայլում**, և ձիու թաց մե՛ջքը, և քուռակի՛ մեջքը, և առո՛ւն, որ սկսվում էր մոխրագույն ժայռից և գալիս ու գնում էր կանաչ հովտով»: (2)

հմմտ.

“The green field **gleamed** in the sun. The rich, moist light **glinted off** the only oak tree in the valley, the wild rose bush, and the mare’s wet back. The brook that flowed from the gray rock and disappeared through the green valley **glittered** as well.” (17)

Բնագրային տեքստի այս հատվածում, որը բանաստեղծական ուրբանի և պատկերավորության խտացում է, երեք անգամ կրկնվող «փայլում էր» բայը հանդես է գալիս որպես շարահյուսական արտահայտչամիջոց՝ բառային հարակրկնություն, մեկ նշելով, որ կանաչ դաշտն էր փայլում, մեկ, որ «հովտի միակ կաղնին» էր փայլում, մեկ էլ՝ մասրենու թուփը, ձիու և քուռակի մեջքը, անգամ առուն էր փայլում: Հետաքրքիր է, որ բանաստեղծականությունն ամբողջանում է նաև շրջուն շարադասության կիրառությամբ. եթե մի դեպքում՝ «կանաչ դաշտը փայլում էր», կիրառված է ենթակա+ստորոգյալ ուղիղ շարադասությունը, ապա մյուս դեպքում՝ «փայլում էր... հովտի միակ կաղնին», կիրառված է ստորոգյալ+ենթակա շրջուն շարադասությունը, իսկ երրորդ դեպքում՝

«մասրենու թո՛ւին էր փայլում», կիրառված է ենթակա+շրջուն ստորոգյալ շարադասությունը:

Վերոհիշյալ լեզվաոճական բոլոր նրբերանգները՝ շարահյուսական արտահայտչամիջոց բառային հարակրկնությունը, բանաստեղծական ռիթմի և պատկերավորության յուրահատկությունը պահպանող շրջուն շարադասությունը բնագրից թարգմանվածք փոխադրելը համարժեք թարգմանության հասնելու անհրաժեշտ պայման է:

Եթե հայերենում երեք անգամ գործածվել է միայն «փայլել» բառը, ապա անզլերենում այն արտահայտվել է «փայլել» բառի հոմանշային շարքի նույն իմաստային դաշտին պատկանող երեք՝ իրար շատ մոտ, անգամ հնչողությամբ շատ նման, բայց և տարբեր բառերով. **“gleam”, “glint off”, “glitter”**:

Այս ընտրությունն արդարացված է, քանի որ անզլերենում **“gleam”** բառն ունի արևի փայլելու, ճառագայթելու իմաստը, (արևի մեջ էր փայլում), **“glint off”**-ը՝ փայլատակելու, լույսն անդրադարձնելու, արտացոլելու իմաստը, (լույսի մեջ էր փայլում), իսկ **“glitter”**-ը՝ փայլելու, պսպղալու և շողալու իմաստը, (այս դեպքում ընտրվել է՝ հատկապես ընդգծելու առվի ջրի պսպղալով փայլելը): Ինչպես տեսնում ենք, բառային հոմանիշների ընտրությունը, ըստ համատեքստի թելադրած պատկերների, միտված է համարժեքորեն փոխադրելու «փայլելու» նրբերանգները: Մյուս կողմից, քերականական շրջուն շարադասությունը՝ «լույսի մեջ **փայլում էր** նաև այդ հովտի միակ **կաղնին**», անզլերեն է փոխանցվել՝ պատկերի մեջ տրամաբանորեն ընկալելի լույսին վերապահելով ենթակայի դերը՝ **“light glinted off the only oak tree”**, արտաքին կառուցվածքի տեսանկյունից պահպանելով **“glinted off”** ստորոգյալի առաջադաս գործածությունը ուղիղ խնդրի՝ **“the only oak tree”**-ի հանդեպ:

Առվի նկարագրության հատվածը թարգմանվածքում դարձել է առանձին նախադասություն, որն էլ ապահովում է պատկերի անխաթար փոխադրությունը՝ անզլերենի լեզվամտածողությանը հարիր բարդ ստորադասական նախադասության օգնությամբ, որտեղ որոշիչ երկրորդական նախադասությունը միջանկյալ է՝ գործածվելով ենթակայի (**“the brook”**) և ստորոգյալի (**“glittered”**) արանքում: Թարգմանվածքում նախադասության նմանատիպ կառուցվածքը որոշակի մեղեդայնություն և ռիթմ է հաղորդում խոսքին, որը միտված է համարժեքորեն վերարտադրելու բնագրի բանաստեղծականությունը. **“The brook that flowed from the gray rock and disappeared through the green valley glittered as well.”** Նախադասությունը նաև մեղեդայնություն ունի, որը բաղաձայնոյթի կիրառության շնորհիվ (ընդծված **“r”**-երի բազմակի

կրկնությամբ) տեսանելի ու լսելի է դարձնում կանաչ դաշտի միջով հոսող գետի փայլկտող խայտանքը:

Եթե պատմվածքի սկիզբն ազդարարող կայծակի ճայթել-չճայթելու տեսարանը դեռ չվկայված հոտերն ու բույրերն է հասցնում ռունգերիդ, ապա հինգ-վեց քայլ այնկողմ հոտն ու բույրն այնպիսի ուժգնությամբ ու ողջ բազմազանությամբ են տարածվում, որ մարդու շունչ է կտրվում.

«Առվից կայծակի **հոտ էր գալիս**, և քուռակը մի քիչ խրտնեց: Մասրենուց նույնպես կայծակի **հոտ էր գալիս**. քուռակը մի երկու ցատկ խրտնեց, կանգ առավ, նայեց մասրենուն և տոտիկ-տոտիկ գնաց՝ նորից **հոտոտելու**:

Ձին ճանաչում էր այդ հովտի բոլոր **բույրերն ու հոտերը**: Նա գիտեր բոլոր հովիտների ու բլուրների **բույրերը**, բայց այս հովտի **բույրերն** ավելի լավ գիտեր, քանի որ ձիուն այս հովտում հաճախ էին կապում արածելու: Կայծակի հուրն անցողիկ էր, արևի տակ, ցողի հետ հիմա պիտի ցնդեր: Ուրցի **բույրը** նույնպես այս հովտի **բույրը չէր**, ուրցի **բույրը** քամին էր նետել բլուրներից հովիտ: Ձին արածում էր և ոչխարի թաց բրդի **հոտ էր զգում**»: (2-3)

հմմտ.

“The brook **reeked of** lightning, and the foal was a bit scared. The wild rose also **smelled of** lightning, and the foal was a bit scared: the foal leapt once or twice, then was scared and stopped. He gazed at the wild rose and ran over, one leg behind the other, to **smell** it once again.

The mare knew all the **scents and aromas** of the valley. She knew the **scents** of all the valleys and hills, but she knew best the **fragrance** of this valley, as she was often tied up here and had examined her surroundings. The lightning flash was momentary, displaced by the sun, and now it would vanish with the dew. The **fragrance** of thyme did not really belong to this valley; the wind had borne it down from the hills. The mare grazed and **smelled** wet sheep wool.” (17)

Եթե բնագրի այս շքեղ հատվածում գործածված են «**հոտ էր գալիս**», «**հոտոտել**», «**բույրերն ու հոտերը**» և «**հոտ էր զգում**» բառերն ու բառակապակցությունները, որոնք ոչ միայն բառային հարակրկնություններ են, այլև կրկնվող կառույցներ, որ հանդես են գալիս որպես քերականական հուզարտահայտչամիջոցներ՝ հատվածը դարձնելով գերխիտ ոճավորված ու այդպես պատկերելով կենդանի, շնչող ու բուրող իրականությունը, ավելին՝ անցնելով իրականի սահմանը ու հասնելով աներևույթ տարածվող անեզր անդինը, ապա թարգմանվածքում այդ բազմազանությունը ոչ միայն պահպանվել է, այլև՝ կրկնապատկվել:

Քանի որ անգլերեն **“to reek”** բայն ունի «1.ծխալ, մխալ. 2. վատ հոտ գալ, զարշահոտություն արձակել. փխբ. որևէ բանի հոտ գալ՝ փչել» իմաստները (Անգլերեն-հայերեն բառարան 1985:774), ապա «Առվից կայծակի **հոտ էր գալիս**»-ը նախընտրելի է թարգմանել հենց այս բայով, որը ոչ միայն փոխանցում է «որևէ բանի հոտ գալ»-ը, այլև «վատ հոտ գալ, զարշահոտություն արձակել»-ը՝ այդպիսով բացահայտելով նաև քուռակի՝ «մի քիչ խրտնելու» պատճառը:

Երբ բանը հասնում է մասրենուն, **“The wild rose also smelled of lightning”**, հոմանշային շարքից ընտրում ենք **“to smell”**-ը, քանի որ նրա բառարանային տարբերակները կամ չեզոք իմաստ են արտահայտում. «2.1) հոտ առնել, հոտ քաշել, հոտոտել, հոտ գալ», կամ հաճելի, դուրեկան հոտ ունենալու իմաստը. «2) բուրել, հոտ արձակել, հոտ ունենալ» (նույն տեղում, 887), որից քուռակը նույնպես խրտնում է:

Երբ խոսքը ձիու մասին է, որը «ճանաչում էր այդ հովտի բոլոր **բույրերն ու հոտերը**», ապա **“scents and aromas”** - «հոտ, բուրմունք, անուշահոտություն» (նույն տեղում, 56, 830) բառիմաստները՝ տարբերակային համարժեքները, կարելի է գտնված համարել:

Թարգմանվածքի հոմանշային բազմազանության մեջ աչքի է ընկնում նաև **“fragrance”** բառը, որի «բույր, բուրմունք, անուշահոտություն» (նույն տեղում, 370) իմաստները հատկապես հարիր են հենց հարազատ հովտին, բլուրներից քամու հետ հովիտ հասած ուրցի բույրին և «ոչխարի թաց բրդին»:

Այսպիսով, անգլերեն թարգմանվածքում առանձնացված և քննարկված բառային տարբերակային համարժեքներն իրենց բազմազանության մեջ առավել խոսուն են դարձնում բնագրային պատկերը:

Հովտում միայնակ կանգնած կարմիր պառավ ձին զգում էր, որ հովիտը դավաճանում էր իրեն, բայց «Կարմիր պառավ ձին **սիրտ չէր անում** գնալ դեպի քուռակը. վախենում էր իր ոտնաձայների մեջ կորցնի թշնամու թաքուն ձայները: Կարմիր պառավ ձին **սիրտ չէր անում** շնչել. վախենում էր իր թոքերի աղմուկի մեջ կորցնի թշնամու թաքուն շնչառությունը: Կարմիր պառավ ձին աչքերը չէր թարթում. վախենում էր, որ իր աչքաթարթի հետ թշնամին տեղից տեղ կցատկի, և ինքը չի հասցնի նկատել նրա ցատկը»: (4)

հմմտ.

“The old red mare **dared not** move towards the foal. She was afraid of covering over the secret sounds of the enemy with the noise of her own footsteps. The old red mare **dared not** breathe. She was afraid of covering over the cautious breathing of the enemy with the noise made by her own

lungs. The old red mare did not blink her eyes. She was afraid that the enemy would jump from place to place as she blinked, and she would not see him move.” (18)

Բնագրի այս հատվածում գործածված «սիրտ չէր անում» դարձվածքը, որի հաստատական ձևը՝ «սիրտ անել», ըստ դարձվածքների բացատրական բառարանի, նշանակում է «ա. Խիզախել. քաջություն ունենալ (այսինչ բանն անելու), բ. համարձակվել, համարձակություն հանդես բերել» (Բեդիրյան 2011:1155), անգլերեն է թարգմանվել “to dare” պարզ, լիմաստ բայով, որի բառարանային թարգմանական տարբերակներից են «1) համարձակվել, հանդգնել. 2) վտանգն արհամարհել. դիսկ անել» իմաստները (Անգլերեն-հայերեն բառարան 1985:223): Այս դեպքում ակնայտ է, որ հայերեն դարձվածքը թարգմանվել է “to dare” բայի «համարձակվել, հանդգնել» իմաստով, որը, չնայած դարձվածք չէ, բայց և այնպես, համարժեքորեն է արտահայտում «սիրտ անել» դարձվածքի «համարձակվել, համարձակություն հանդես բերել» իմաստը, որի ընտրությանը նպաստել է նաև համատեքստը:

Երբ ահագնացող տագնապների ու վտանգի մեջ անթարթ կանգնած մայր ձին «վախենում էր, որ իր աչքաթարթի հետ թշնամին տեղից տեղ կցատկի, և ինքը չի հասցնի նկատել նրա ցատկը» (4), քուռակն անհավասար կռվի էր ելել գայլի դեմ, ու «երբ գայլը տակից բռնեց նրա ետևի ոտքը» (5), մայր ձին տեսավ, թե ինչպես «Քուռակը ճչաց ու վեր ցատկեց, և այդ ժամանակ մայրը **ծառս եղավ** և ամբողջ ծանրությամբ ու ամբողջ կատաղությամբ ձգվեց դեպի գայլն ու քուռակը, և պարանը կտրվեց ու մտրակեց մոր ոտքերին»: (5)

հմմտ.

“The foal squealed and jumped up, just as his mother **sprang to her feet**, with all her weight and fury stretched out towards the wolf and the foal. The rope broke and whipped his mother’s legs.”(19)

Ըստ «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի»՝ «ծառս լինել» դարձվածքը բազմիմաստ է, ուստի ունի իր տարբերակային համարժեքները. «Ծառս լինել կամ կենալ, -1. Ծառանալ, ետևի ոտների վրա բարձրանալ: 2. (փխբ.) Ուրախությունից վեր-վեր թռչել, խայտալ: 3. (փխբ.) Ընդվզել, ոտքի ելնել պայքարելու» (Սուքիասյան, Գալստյան 1975:302):

Պատմվածքում այս վերջին՝ երրորդ իմաստով գործածված «**ծառս եղավ**» դարձվածքն անգլերեն է թարգմանվել “**sprang to her feet**” դարձվածային տարբերակային համարժեքով, որն ընտրվել է բառարանային ամրագրված երկու դարձվածքների՝ “to spring to one’s feet” և “to leap to one’s feet” շարքից: Ընտրությունը կանգ է առել “to

spring to one's feet" տարբերակի վրա, քանի որ այն առավել հարիր է մայր ձիու՝ իր քուռակին փրկելու, մայրական ամենազորեղ բնազդից դրդված՝ ուժգին և պոռթկուն ցատկը նշելու համար:

Ձիու և գայլի շատ սովորական ու այս դեպքում շատ արտառոց, անօրինակ կռիվը, անհրաժեշտ գոյապայքարը մանրանկարչական հմտությամբ է պատկերված բնագրում, որի շարժուն ու ամբողջական կադրը ցնցում ու ցավեցնում է ընթերցողին ոչ միայն ասելիքի շեշտադրումով, այլև ռճական հուզականությամբ, որն այս անգամ հասնում է իր կիզակետին նաև խոսուն՝ **«աչքերը բուլորովին մթնել էին»** դարձվածքի կիրառությամբ:

«Երբ իր մեջ այլևս ուժ չկար, և ռունգների ցավերը բթանում էին, և **աչքերը բուլորովին մթնել էին**, և ականջները լիովին խլացել էին, մայր ձին հեռու-հեռվում շների հաչոց լսեց և հավատաց, որ շները հաչում են իր քուռակի համար և իր համար. բախտը հո չէր կարող լինել այնքան դաժան, որ նրա քուռակն ապրեր ընդամենը մի հունիս»։ (7)

հմմտ.

“When there was no longer any strength left in her and the pain in her nostrils was beginning to diminish, when **her eyes had completely darkened** and her ears had become completely deaf, the mare heard the dogs barking in the far distance, and she thought the dogs were barking at her and her foal. Fate could not be so cruel. Her foal could not live for only one June. ” (21)

«Աչքերը մթնել» դարձվածքը, որի բացատրությունն է. «Հայացքը մի բանի դեմ փակվել, կարծես ոչինչ չտեսնել (բարկությունից, հուզմունքից ևն.) (Բեդիրյան 2011:89), անգլերեն է թարգմանվել **“eyes darkened”** բառարանային հաստատուն արտահայտությամբ, որը նման է բնագրի դարձվածքին ոչ միայն փոխաբերական իմաստով, այլև նույն բառաշերտի օգնությամբ ստեղծված պատկերով, ուստի կարելի է պնդել, որ անգլերեն արտահայտությունը նույնպես համարժեքորեն նշում է ցավից և հուսահատությունից աչքերը մշուշվելու իմաստը:

Թարգմանական համարժեքության խնդիրների թվում հաճախադեպ են իրակությունների թարգմանության դժվարությունները, որոնց հաղթահարման եղանակները կապված են իրակությունների տեսակների հետ (տե՛ս Влахов С., Флорин С. 1980:47-104):

«Կանաչ դաշտը» պատմվածքում հանդիպում են շների անուններ, որոնք մտնում են հատուկ անուններ մատնանշող իրակությունների տեսակի մեջ և ունեն թարգմանության երկու եղանակ՝ հնչյունադարձում և տառադարձում: Հատուկ անունները, թե՛ իմաստակիր նրբերանգով, թե՛ արտասանական առանձնահատկությամբ, հաճախ են ունենում

ընդգծված մշակութային տարրեր, և դրանց փոխադրումը մեկ այլ մշակութային կողեր կող լեզվական դաշտ կարևոր խնդիր է բնագրի ազգային կոլորիտը պահպանելու և հեղինակի կիրառած լեզվաոճական և հուզարտահայտչական միջոցներին հավատարիմ մնալու՝ համարժեք թարգմանություն ապահովելու տեսակետից:

«Փոքրիկ հովիվը բերանը բացեց ծղոտալու, բայց չկարողացավ ձայն հանել: Փոքրիկ հովիվը միայն ձեռքերը թափահարեց: **Գամփո շները** սրվեցին ու նայեցին: **Գամփո շները** տեսան ու թռան... **Թոփուշը, Բոբը, Սևոն, Բողարը, Չալակը, Չամբարը**: Սևադունչ **Թոփուշը** վարպետ շուն էր, լուռ գնում ու բռնում էր, նա առջևից հիմա էլ լուռ էր վազում, իսկ **Բողարը** ջահել շուն էր, գայլերից դեռ մի քիչ վախենում էր. այդ պատճառով էլ հաչում էր դեռ հեռվից, որպեսզի գայլերը փախչեն, և ինքը այդպիսով նրանց հետ չկռվի»: (7)

հմմտ.

“The little shepherd opened his mouth to scream, but was unable to make a sound. The little shepherd only waved his hands. The **sheep dogs** became more focused and watched. The **sheep dogs – Topush, Bob, Sevo, Boghar, Chalak, and Chambar** – saw what was happening and ran away. Black-muzzled **Topush** was an experienced dog; he was used to sneaking quietly up on his prey and catching it. Now he was running quietly. **Boghar**, on the other hand, was a young dog, still a bit frightened of wolves; that is why he kept up a barrage of barking from a distance, trying to scare the wolves away so he would not have to fight them.” (20-21)

Բնագրի և թարգմանվածքի համապատասխան հատվածների համեմատությունից պարզ երևում է, որ շների անունները հայերենից անգլերեն են փոխադրվել հնչյունադարձման եղանակով՝ այդպիսով պահպանելով հայերենի հնչյունային նրբերանգը և հայկական միջավայրի ձայնային առանձնահատկությունը:

Վերոբերյալ հատվածում աչքի է ընկնում նաև երկու անգամ կրկնվող «**գամփո շներ**» բառակապակցությունը, որը հայերենում հանդես է գալիս որպես կենդանիների տեսակը մատնանշող իրակություն: «**Գամփո շները**» անգլերեն է թարգմանվել “**sheep dogs**” բառակապակցությամբ, որը “**sheep**” բառով կարծես բացատրում և վկայում է, որ շան այդ տեսակը ոչխարի հոտը հսկելու և պաշտպանելու համար է, ուստի կարելի է հավաստել, որ հայերենի իրակությունն անգլերեն է թարգմանվել համարժեք արտահայտությամբ, որը բառարանային հաստատուն տարբերակ է, բայց և նկարագրական եղանակով բացատրում է հայերենի «**գամփո շներ**» իրակության իմաստը:

Պատմվածքում հաճախ են հանդիպում նաև քերականական-շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնց համարժեք փոխադրման համար կիրառվել են թե՛ տարբերակային, թե՛ դիպվածային համարժեքներ:

Պատմվածքի վերջին՝ եզրափակիչ հատվածը, ոճական «շրջանակում» (եզրը իմ առաջարկած տարբերակն է) կամ «ֆրեյմինգ» արտահատչամիջոցի կիրառման փայլուն օրինակ է, քանի որ պատմվածքը սկսվում և ավարտվում է նույն պատկերի նկարագրությամբ, երբ փոքրիկ հովիվը, որը գայլի և մայր ձիու գոյապայքարի ականատեսն էր, հետագայում պատմում է այդ պատմությունն իր որդուն, որն էլ խնդրում է, որ նա վերապատմի ամբողջը՝ իր ուզած վերջաբանով: Հատվածը նաև հարուստ է քերականական-շարահյուսական կառույցների յուրահատուկ կիրառությամբ, որոնք անգլերեն են փոխադրվել համարժեք տարբերակային կամ դիպվածային կառույցներով:

« - Կայծակը չոր ճայթյունով **բախվեց** որձաքարե ժայռին, մի կողմ **շարսվեց** և **թաղվեց** կանաչ գետնի մեջ: Մոխրագույն ժայռը կարծր էր, կայծակը **հազիվ թե կարողացավ** որձաքարե այդ ժայռից **պոկել** քարի մի երկու փշուր: Միայն թե **մի քիչ վախեցավ** կաղնին, որովհետև կայծակները խփում ու խանձում են կաղնիները, և **շատ վախեցավ** երկարոտն աստղազարդ փոքրիկ մտրուկը. քուռակին «մտրուկ» **են ասում...** այնպես վախեցավ, որ փախչում էր իբր մոր մոտ, բայց մորը չէր տեսնում և փախչում էր ուրիշ կողմ: Եվ կարմիր պառավ ձին մեղմ խրխիչոցով **հայտնեց նրան իր տեղը...**» (11)

հմմտ.

“`Lightning **struck** the rough rock with a dry crackle, **was thrown** aside, and **buried itself** in the green ground. The gray rock was tough; the lightning **could not have broken** more than a few small sards from its rough surface. Only the oak tree **was a little frightened**, because lightning strikes and burns oak trees, and the long-legged, star-spangled little colt was very frightened: a boy foal **is called** a colt... he **was so frightened** that he wanted to run to his mother, but he didn't see his mother and was running in the other direction. And the old red mare **let the foal know where she was** by neighing gently...” (24)

Ելնելով լեզուների կառուցվածքային տարբերություններից՝ հայերեն և անգլերեն ներգործական և կրավորական սեռով կիրառված բայերը կարող են միմյանց փոխարինել թե՛ որպես տարբերակային, թե՛ դիպվածային համարժեքներ: Հայերեն բնագրում «**բախվեց**», «**շարսվեց**» և «**թաղվեց**» կրավորական սեռով գործածված բայերն անգլերեն են թարգմանվել՝ մի դեպքում “**to strike-struck**” բայի ներգործական սեռով,

մյուս դեպքում՝ **“was thrown”** կրավորական կառույցով, իսկ երրորդ դեպքում՝ **“buried itself”** - **“to bury”** բայի ներգործական սեռով և **“itself”** անդրադարձ դերանունով կազմված արտահայտությամբ:

«**Հազիվ թե կարողացավ պոկել**» արտահայտությունը, որը քերականորեն հաստատական կառույց է, տրամաբանորեն՝ ժխտական, անգլերեն է թարգմանվել **“could not have broken”** ժխտական ձևով. կիրառվել է թարգմանության հականշային մեթոդը: «**Մի քիչ վախեցավ... շատ վախեցավ**» արտահայտությունները, որոնք ներգործական սեռով են դրված, թարգմանվել են կրավորական սեռով՝ **“was a little frightened, was so frightened”**, որը հիմնականում բնորոշ է անգլերենին: «**«Մտրուկ» են ասում**» ներգործական սեռով գործածված կառույցը նույնպես թարգմանվել է կրավորական սեռով՝ **“is called a colt”**: Այս օրինակները վկայում են, որ քերականական կառույցները, այս դեպքում՝ ներգործական սեռով կիրառված արտահայտությունները, հիմնականում փոխադրվել են անգլերեն կրավորական սեռով՝ որպես հաստատուն համարժեքներ:

«**Հայտնեց նրան իր տեղը**» արտահայտությունը, որը պարզ նախադասության կառուցվածք ունի, թարգմանվել է **“let the foal know where she was”** ստորադասական՝ տեղի պարագա երկրորդական նախադասությամբ, որն այս դեպքում դիպվածային համարժեք թարգմանություն է:

Օրինակները կարելի է շարունակել, բայց սահմանափակվելով քննարկված հատվածներում վեր հանված համարժեք թարգմանության բազմաթիվ խնդիրների վերլուծությամբ՝ եզրակացնում ենք, որ Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի և դրա անգլերեն թարգմանվածքի համեմատական քննությունը ընդհանուր առմամբ վկայում է թարգմանվածքի համարժեքությունը բնագրին, քանի որ համարժեքության բազմաթիվ խնդիրներ, ինչպիսիք են բառերի, բառակապակցությունների, դարձվածքների, իրակությունների, քերականական-շարահյուսական կառույցների համարժեք թարգմանության դժվարությունները, հաղթահարված են ըստ թարգմանության տեսության մեջ հայտնի համարժեքների տեսակների ապահովմամբ և թարգմանական անհրաժեշտ մեթոդների կիրառմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հր., հ. 1-2, Երևան, 1976:
2. Անգլերեն-հայերեն բառարան, խմբ.՝ Ասմանգուլյան և այլք, «Հայաստան», Երևան, 1985:
3. Բեդիրյան Պետրոս, «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան», «Երևանի պետական համալսարանի հրատարակչություն», Երևան, 2011:
4. Մաթևոսյան Հր., «Կանաչ դաշտը», //«Մեր վազքը», «Սովետական գրող», Երևան, 1978:
http://www.hrantmatevossian.org/m/up/Kanach_dashty.pdf (Այս պատմվածքի բոլոր հատվածների էջերը տե՛ս կից մեջբերումներին՝ ըստ առցանց հղման էջերի) :
5. Սուքիասյան Աշոտ, Գալստյան Սերգեյ, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, «Երևանի պետական համալսարանի հրատարակչություն», Երևան, 1975, 618 էջ:
6. Contemporary Armenian Prose, ed. by Agop J. Hacikyan, WUA, Yerevan, 2006, //Matevosyan Hrant, “The Green Field”, translated by Diana Hambardzumyan, pp.16-24. (Այս պատմվածքի անգլերեն թարգմանության բոլոր հատվածների էջերը տե՛ս կից մեջբերումներին):
7. Влахов С., Флорин С., Непереводимое в переводе. “Международные отношения”, Москва, 1980, 343 с.

REFERENCES

1. Aghayan E'd., Ardi hayereni bacatrakan bar'aran, «Hayastan» hr., h. 1-2, Er&an, 1976:
2. Anglaren-hayeren bar'aran, xmb.' Asmangowlyan & aylq, «Hayastan», Er&an, 1985:
3. Bediryan Petros, «Hayeren dard'vac'qneri y'ndard'ak bacatrakan bar'aran», «Er&ani petakan hamalsarani hratarakchowt'yown», Er&an, 2011:
4. Mat'osyan Hr., «Kanach dashty'», //«Mer vazqy'», «Sovetakan grogh», Er&an, 1978: http://www.hrantmatevossian.org/m/up/Kanach_dashty.pdf (Ays patmvac'qi bolor hatvac'neri e'jery' te's kic mejberowmnerin` y'st ar'canc hghman e'jeri) :

5. Sowqiasyan Ashot, Galstyan Sergey, Hayoc lezvi dard'vac'abanakan bar'aran, «Er&ani petakan hamalsarani hratarakchowt'yown», Er&an, 1975, 618 e'j'.
6. Contemporary Armenian Prose, ed. by Agop J. Hacikyan, WUA, Yerevan, 2006, //Matevosyan Hrant, "The Green Field", translated by Diana Hambardzumyan, pp.16-24. (Ays patmvac'qi angleren t'argmanowt'yan bolor hatvac'neri e'jery' te's kic mejberowmnerin):
7. Vlahov S., Florin S., Neperevodimoe v perevode. "Mezhdunarodnye otnoshenija", Moskva, 1980, 343 s.

ДИАНА АМБАРЦУМЯН - ПРОБЛЕМА ЭКВИВАЛЕНТНОСТИ В АНГЛИЙСКОМ ПЕРЕВОДЕ РАССКАЗА ГРАНТА МАТЕВОСЯНА «ЗЕЛЕНОЕ ПОЛЕ»

Ключевые слова: Грант Матевосян, «Зеленое поле», перевод, эквивалентность, лексический эквивалент, грамматический эквивалент, филологическая герменевтика, лингвостилистический, лингвопоэтический, литературоведческий методы.

Тема статьи - сравнительный анализ рассказа Гранта Матевосяна «Зеленое поле» и его английского перевода. Целью анализа является выяснить, насколько перевод соответствует оригиналу и как возникшие при переводе проблемы были преодолены для достижения эквивалентности. Особое внимание уделяется тем частям исходного текста и перевода, которые представляют собой сгущение поэтического ритма и образности, богаты лексическими и синтаксическими средствами выражения - повторами, инверсиями и т. д. В контексте оценки эквивалентности рассматриваются типы эквивалентов: фиксированные, дифференциальные, контекстные; эквивалентность словосочетаний, способы перевода реалий, типы грамматико-синтаксической эквивалентности. Исследование проводится с применением лингвостилистического, лингвопоэтического, литературоведческого методов. Оригинал и перевод рассматриваются с точки зрения филологической герменевтики, согласно которой часть свидетельствует о целом, целое - о сути части.

DIANA HAMBARDZUMYAN - EQUIVALENCE PROBLEMS IN THE ENGLISH TRANSLATION OF HRANT MATEVOSSYAN'S STORY "THE GREEN FIELD"

Keywords: Hrant Matevosyan, "The Green Field", translation, equivalence, word equivalent, grammatical equivalent, philological hermeneutics, linguo-stylistic, linguo-poetic, literary methods.

The main topic of the article is the comparative analysis of Hrant Matevosyan's story "The Green Field" and its English translation. It aims to point out how the problems encountered during the translation were overcome to achieve equivalence. Particular attention is paid to those parts of the original and its translation which are a condensation of poetic rhythm and imagery, rich in lexical and syntactic means of expressions, etc. Within the context of equivalence the types of equivalents, such as permanent, regular and occasional (contextual), the translation equivalence of phrases, methods of translating realia, types of grammatical-syntactic equivalence are examined. The examination is carried out by the linguo-stylistic, the linguo-poetic method and the method of literary studies. The original and the translated product are considered from the angle of philological hermeneutics, which states: a part testifies to the whole, the whole testifies to the essence of a part.

Ներկայացվել է՝ 01.10.2020
Գրախոսվել է՝ 03.10.2020

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՍԻՆԵՐԳԻԿ ՄՈՏԵՑՈՒՄԸ

**ԷՂՈՒԱՐԴ ՀԱՅԿԱԶՅԱՆ
ՍԱԹԵՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հիմնաբառեր՝ տեղեկատվության քանակ, հանրագումարային բնութագիր, համակցում, հավանականություն, սիներգիա, էնտրոպիա, սինտրոպիա

Հողվածում դիտարկվում են դիսկրետ համակարգի տարրերի հանրագումարային բնութագրերը և դրանց խմբային ու համակարգային բաժանումները: Խմբային բնութագրերը նույն հատկանիշային արժեք ստացող տարրերի բազմությունն է, իսկ համակարգի բնութագիրը հայտնվում է այն ժամանակ, երբ տարրեր խմբեր միավորված են մեկ ընդհանրականում: Հիմնավորված է, որ բնութագրերի հանրագումարային միջին կշռային արժեքի միջոցով կարելի որոշել տեղեկատվության չափը: Համակցային, հավանականային և սիներգիկ մոտեցումների միջև կա ընդհանրական փոխկապվածություն: Ցույց է տրված, որ սիներգիկ մոտեցմամբ ստացված տեղեկատվությունը առաջնային է, քան համակցայինը կամ հավանականայինը, այսինքն բացառվում է հնարավորություններից մեկի ընտրության անորոշությունը: Հիմնավորվում է տարրեր մոտեցումներում տեղեկատվության չափման բանաձևերի նույնականությունը:

Անցյալ դարի 70-ականների սկզբին փիլիսոփա Լ.Ա. Պետրուշենկոն, նկարագրելով տեղեկատվության տեսության իրավիճակը, գրել է. «Կիբեռնետիկայի ոլորտում տեղեկատվության տեսությունը նման է ճահճի, որի մակերեսին, մաթեմատիկոսների և ինժեներների թեթև ձեռքերով, բավականաչափ կոշտ գերաններ են շարվել: Ներքևում Շեննոնը և Վիեները խցկել են տեսությունների և պոստուլատների բավականին խիտ շերտ: Ավելի ցածրում առկա են մամռոտ ենթադրությունների շերտը: Եվ, վերջապես, շատ խորքում, կա քմահաճ հիպոթեզների սառցեկտոր, որտեղ ամեն ինչ բացարձակապես հեղիեղուկ է, և սառցեկտորը այնպիսի լայն ընդհանրացումներով և խորը արստրակցիաներով առկայծումներ է սփռում, որոնք դեռևս հայտնի չեն ժամանակակից գիտությանը» (Петрушенко 1971:52):

Տեղեկատվության տեսությունը դարձավ գիտության ճյուղ, երբ հնարավոր եղավ տեղեկատվությունը փոխանցել տառաթվային

հաղորդագրությունների տեսքով: Սկզբում տեղեկատվության քանակությունը չափվում էր համակցման (կոմբինատոր), իսկ այնուհետև հավանականային մոտեցմներով: Մոտեցումներից յուրաքանչյուրում սահմանված է տեղեկատվության որոշման չափանիշ: Նշված մոտեցումներում տեղեկատվությունը վերացականացվում է տեքստի շարահոսություններից, իսկ որպես չափանիշ է համարվում բազմաթիվ հնարավորություններից ստացված անորոշության գնահատականը (էտրոպիան): Համակցման մոտեցմամբ տեղեկատվության ստացման բոլոր հնարավորությունները համարվում են հավասարահավանական, իսկ անկախ հնարավորությունների դեպքում իրականացման հավանականությունները կարող են լինել տարբեր: Եթե համակարգը կարող է հայտնվել բազմապիսի իրավիճակներից մեկում, որոնք կազմում են ամբողջական լրիվ խումբ, ապա, ըստ նշված մոտեցումների, համակարգը գտնվում է որոշակի իրավիճակում և տեղեկություն է տալիս սկզբնական անորոշության չափի վերաբերյալ: Այսինքն, եթե վիճակների հավանականությունները նույնն են, ապա ստացված տեղեկատվության քանակը որոշվում է համակցման մոտեցմամբ, իսկ եթե հավանականությունները տարբեր են, ապա օգտագործվում է հավանականային մոտեցումը: Համակցման և հավանականային մոտեցումները լայնորեն կիրառվում են տարբեր ոլորտներում, բայց մինևնույն ժամանակ, դրանք թույլ չեն տալիս ճիշտ լուծելու խնդիրներ, որոնցում վերարտադրվող տեղեկատվության քանակը կախված է մեկ ամբողջականություն ներկայացնող վերջավոր թվով հատվող բազմություններից(Вяткин 2015:9): Այս հանգամանքը ստիպեց ստեղծել տեղեկատվության քանակի որոշման նոր՝ սիներգիկ մոտեցում, որում տեղեկատվությունը սահմանվում է որպես վերջավոր բազմության վերաբերյալ իրազեկություն, իսկ որպես տեղեկատվության չափ համարում հաղորդագրության տարրերի հանրագումարի միջինացված երկարությունը:

Մինչև տեղեկատվության սիներգիկ տեսության հայտնվելը՝ հողվածների հիմնական ուղղվածությունը կրում էր կանխարգելիչ բնույթ: Նշված տեսության առարկան, ենթահամակարգերի կապերի արտացոլման միջոցով, դիսկրետ համակարգի տեղեկատվության քանակական կողմի հայտնաբերումն է: Տեղեկատվության ընդհանրական հավասարումը ստացվել է արտացոլված I_0 , անդրադարձված I_2 և չանդրադարձված S տեղեկատվության միջև հարաբերությունից՝

$$I_0 = I_2 + S : \quad (1)$$

Անդրադարձված I_2 և չանդրադարձված S տեղեկատվությունները հանդես են գալիս որպես արտացոլման սինտրոպիա և էնտրոպիա,

որոնք բնութագրում են համակարգի կառուցվածքի կարգավորվածությունը և անորոշությունը:

Տեղեկատվության (1) հավասարման բազմանշանակությունը կախված է նրա մեկնաբանման տարբերակներից:

1. Արտացոլման տեղեկատվական օրենքը, համաձայն որի համակարգի կողմից իր մասերի ամբողջության միջոցով արտացոլված տեղեկատվությունը բաղկացած է արտացոլված և չարտացոլված մասերից, որոնք համապատասխանում են արտացոլման սինտրոպիային և էնտոպիային:
2. Քառասային և կարգավորված վիճակների քանակության պահպանման օրենքը, համաձայն որի, ինչ էլ իրականացնենք համակարգի հետ, նրանում ենթահամակարգերի քանակը չփոխելու դեպքում համակարգի կառուցվածքում քառասային և կարգավորված վիճակների գումարը միշտ կմնա անփոփոխ՝ անկախ մասնատման ձևից և մասնակցության բնութագրերից:
3. Միջմակարդակային տեղեկատվության պահպանման օրենքը, համաձայն որի, տեղեկատվության ցանկացած կառուցվածքային փոփոխության դեպքում սիներգիկ և հավանականային տեղեկատվությունների քանակային գումարը հաստատուն թիվ է:
4. Ընդհանրական հավասարումը արտահայտում է տեղեկատվության համակցական, սիներգիկ և հավանականային մոտեցումների անմիջական փոխկապվածությունը, որը տեղեկատվության տեսությունում քանակական հաշվարկների հիմքն է:
5. Թերմոդինամիկայում (1) հավասարումը համարժեք է իդեալական գազերի համակարգի կառուցվածքը կարգավորված վիճակից հավասարակշռության վիճակին հասցնելու հավասարմանը, որը էնտրոպիայի օգնությամբ ստացել էր Բոլցմանը:

Համակցային մոտեցում: Տեղեկատվության քանակի որոշման համակցային մոտեցումը մշակվել է Ռ. Հարթլիի կողմից: Նա առաջնորդվում էր այն փաստով, որ տեխնիկական հաղորդակցման ուղիներով N տառեր պարունակող այբուբենի օգնությամբ կազմված հաղորդագրությունը փոխանցելիս, յուրաքանչյուր տառ կարող է հանդես գալ որևէ մեկի ընտրության արդյունքում: Բոլոր տեսակի l երկարության հաղորդագրությունների քանակը կազմում է $n = N^l$:

Հարթլիի հիմնավորումը հետևյալն էր. «Մենք կարող ենք ենթադրել, որ տեղեկատվության քանակը համեմատական է ընտրության երկարությանը և համեմատականության գործակիցը ընտրվում է այնպես, որպեսզի հավասար երկարության հաղորդագրությունները պարունակեն նույն քանակի տեղեկատվություն» (Hartley 1928:540): Տեղեկատվության

քանակությունը ըստ Հարթլիի նշանակենք $H_{Հարթլի}$, իսկ համեմատականության գործակիցը K -ով՝ կստանանք հետևյալ բանաձևը՝

$$H_{Հարթլի} = K * l \quad (2)$$

Ըստ Հարթլիի սահմանման՝ K գործակիցը երկու տարբեր այբուբեններում պետք է որոշվի $N_1 * l_1 = N_2 * l_2$ պայմանի դեպքում: Եթե $H_{Հարթլի} = K_1 * l_1 = K_2 * l_2$, ապա հետևում է $H_{Հարթլի} = K_1 / \log_a N_1 = K_2 / \log_a N_2$: Այս հավասարությունը ճիշտ է ցանկացած N -ի համար, եթե N -ը և K -ն բավարարում են հետևյալ պայմանին՝

$$K = K_0 * \log_a N, \quad (3)$$

որտեղ $K_0 = \log_a a$ -ն համակարգի կապակցման հաստատուն է և $a = 2$ -ի դեպքում $K_0 = \log_2 2 = 1$: Տեղադրելով (3)-ը (2)-ի մեջ ստացվում է Հարթլիի բանաձևը՝

$$H_{Հարթլի} = \log_2 N * l = \log_2 N^l: \quad (4)$$

Իրադարձության վերաբերյալ տեղեկատվությունը ընդունում է երկու արժեք՝ «Ճիշտ» կամ «Միայն»: Արդյունքում, որպես կանոն, տեղեկատվության քանակի սահմանումում օգտագործվում է 2 հիմքով լոգարիթմը, որն ապահովում է տեղեկատվության փոխանցման, պահպանման և մշակման հետ կապված աշխատանքների կատարման հարմարավետությունը (Առաքելյան 2019:166):

Հավանականային մոտեցում: Ք.Շեննոնը, հանրահայտ «Կապի մաթեմատիկական տեսություն» հոդվածում, ընդհանրացրեց Ռ. Հարթլիի գաղափարը այն դեպքի համար, երբ հնարավորություններն ունեն տարբեր հավանականություններ (Առաքելյան 2019:170): Տեղեկատվության չափը սահմանվում է այն ենթադրությունից, որ իրադարձությունների $\{E_1, E_2, E_{13}, \dots, E_n\}$ բազմության տարրերը հանդես են գալիս $\{p_1, p_2, p_3, \dots, p_n\}$ հավանականություններով: Որոշակի ամրագրված հավանականություններով կարելի է որոշել, թե ինչ իրադարձություն է տեղի ունենալու: Իսկ Շեննոնին հետաքրքրում էր հետևյալ հարցը «Ինչքանով է հիմնավորված իրադարձությունների հավանականային «ընտրությունը» կամ որքա՞ն անորոշություն է այն պարունակում» (Shannon 1948:392): Առաջադրված հարցի պատասխանը

ստանալու համար նա սահմանեց $H_{\text{Շեննոն}}(p_1, p_2, p_3, \dots, p_n)$ ֆունկցիան, որը պետք է բավարարի հետևյալ երեք պայմաններին՝

1. ցանկացած p_i -ի համար այն պետք է լինի անընդհատ,
2. եթե բոլոր $p_i = 1/N$, ապա $H_{\text{Շեննոն}}$ -ը պետք է լինի մոնոտոն աճող ֆունկցիա ըստ N -ի: Իրադարձությունների հավասար հավանականությունների դեպքում կան ընտրության շատ հնարավորություններ կամ ավելի մեծ անորոշություն:
3. եթե ընտրությունը տրոհվում է երկու հաջորդական ընտրանքների, ապա սկզբնական $H_{\text{Շեննոն}}$ -ը պետք է լինի անհատական արժեքների կշռված գումարը:

Հիմք ընդունելով վերը նշված հատկությունները՝ Շեննոնը ապացուցել է թեորեմ, համաձայն որի, «գոյություն ունի եզակի ֆունկցիա, որը բավարարում է վերը թվարկված երեք հատկություններին»: Այդ ֆունկցիան ունի հետևյալ տեսքը՝

$$H_{\text{Շեննոն}} = -K \sum_{i=1}^N p_i \log_2 p_i, \quad (5)$$

որտեղ K -դրական հաստատուն է, կախված է լոգարիթմի հիմքից և որոշում է չափման միավորի ընտրությունը (Шеннон 1964, 14):

Տեղեկատվության չափման (5) բանաձևով որոշված ֆունկցիան ունի երկակի մեկնաբանում: Երբ N հնարավոր ելքերի դեպքում առկա է անորոշություն, ապա $H_{\text{Շեննոն}}$ -ը բնութագրում է այդ իրավիճակի անորոշության քանակական արժեքը: Հակառակ դեպքում, երբ իրավիճակը դարձել է որոշակի, ապա $H_{\text{Շեննոն}}$ -ի օգնությամբ գնահատվում է տեղեկատվության քանակը:

Ինչպես Հարթլիի համակցային տեղեկատվության քանակի (4), այնպես էլ Շեննոնի տեղեկատվական-էնտրոպիկ (5) չափանիշերը ստացվում են $K=1$ լոգարիթմը երկու հիմքով հաշվելիս: Եթե իրադարձությունների հավանականությունները ընդունում են հաստատուն արժեք՝ $p_i = 1/N$, ապա Շեննոնի և Հարթլիի չափանիշները համընկնում են՝

$$H_{\text{Շեննոն}} = - \sum_{i=1}^N p_i \log_2 p_i = - \sum_{i=1}^N \frac{1}{N} \log_2 \frac{1}{N} = - \log_2 \frac{1}{N} = \log_2 N = H_{\text{Հարթլի}} \quad (5)$$

Ստացվում է, որ հավանականային և համակցային մոտեցումներում կա ընդհանրականություն, համաձայն որի ավելի լայն կիրառելիության բնագավառ ընդգրկող «նոր տեսությունը» ներառում է «հին»:

Սիներգիկ մոտեցում: Տեղեկատվության քանակի որոշման այս մոտեցումը լուսաբանելիս նկատի է առնվում համատեղ, համակարգված

գործողություններ (Хакеи 1985:54): Փաստն այն է, որ այս մոտեցմամբ հաշվի են առնվում սուբյեկտների տեղեկատվական կողմերի հանրագումարային վերջնարդյունքը: Այս դեպքում համակարգի տարրերը տեղեկատվական գործընթացներին մասնակցում են որպես մեկ ամբողջություն, առանց դրանցից որևէ մեկը տարանջատելու, ինչպես դա արվում էր համակցային և հավանականային մոտեցումներում:

Սիներգիկ մոտեցումում տեղեկատվություն տերմինի տակ պետք է հասկանալ մեկ ամբողջականություն ներկայացնող բազմության վերաբերյալ բնութագրերի հայտնաբերում: Երբ տարբեր բնութագրիչներով ենթաբազմություններ հատվում են, նրանց միջև ի հայտ է գալիս փոխադարձ կապ և յուրաքանչյուրը մյուսների վերաբերյալ մատուցում է տեղեկատվություն ընդհանրական բնութագրերի վերաբերյալ: Այս արտացոլված տեղեկատվությունը մյուսներից տարբերելու համար անվանում են սինտրոպիա (Вяткин 2012:23):

Դիցուք՝ $D=\{d\}$ համակարգում առկա են p_a և p_b հատկություններով երեք վերջավոր բազմություններ՝

$$A = \{a|p_A(a)\} = \{d|p_A(d)\}, B = \{b|p_B(b)\} = \{d|p_B(d)\}, C = A \cap B$$

A , B և C բազմությունների տարրերի քանակը նշանակենք համապատասխանաբար $|A|$, $|B|$, $|C|$: Քննարկման են արժանի բազմությունների միջև առկա հարաբերությունների հետևյալ դեպքերը՝

1. $C = A \cap B = \emptyset$,
2. $C = A \cap B \neq \emptyset \ \& \ (C \neq A) \ \& \ (C \neq B)$,
3. $C = A \subset B$,
4. $C = B \subset A$,
5. $C = A = B$:

Դեպք 1՝ եթե $A \cap B$ բազմություններն ընդհանուր տարրեր չունեն, ապա սինտրոպիան որպես այդպիսին պարզապես գոյություն չունի:

Դեպք 5՝ եթե $C = A = B$ բազմությունները համընկնում են, ապա նրանց արտացոլումները իրար վրա՝ չեն տարբերվում, այսինքն, գոյություն ունեցող սինտրոպիան երկու բազմությունների համար նույնն է:

Մնացած դեպքերում I_{AB} սինտրոպիան ներկայացնում է տեղեկատվության մասը, որն արտացոլվում է յուրաքանչյուր բազմությունից: $A \ \& \ B$ բազմությունների տեղեկատվության արտացոլումն

իր վրա նշանակելով I_A և I_B ՝ արդյունքում կստանանք հետևյալ անհավասարությունները՝

$$0 \leq I_{AB} \leq I_A, 0 \leq I_{AB} \leq I_B:$$

Սիներգիկ մոտեցմամբ I_{AB} սինտրոպիայի գնահատումը նախորդում է I_A տեղեկատվության քանակի հաշվարկին, որը կամայական վերջավոր A բազմության արտացոլում է իր մասին՝ որպես մեկ ամբողջականություն: Պետք է նշել, որ I_A տեղեկատվությունը որպես «ինքնաարտացոլող տեղեկատվություն» սահմանվել է սիներգիկ մոտեցումից ավելի վաղ (Вяткин 2015:8): Հետևաբար, քանի որ I_A տեղեկատվությունը ասոցացվում է միայն A բազմության և նրա p_o հատկության հետ, ապա նպատակահարմար է այս տեղեկատվությանը տալ նոր անվանում՝ վերջնավոր բազմության հատկանիշերի տեղեկատվություն կամ պարզապես հատկանիշերի տեղեկատվություն: Այսինքն՝ հատկանիշային տեղեկատվությունը այնպիսի տեղեկություն է, որը վերջավոր բազմությունն արտացոլում է իր մասին որպես ամբողջական կառույց:

Հատկանիշային I_A տեղեկատվության քանակը սահմանվում է երկու հիմնական աքսիոմների օգնությամբ:

1. Մոնոտոնության աքսիոմը: Վերջավոր բազմության հատկանիշային տեղեկատվությունը նրա տարրերի ընդհանուր քանակից կախված մոնոտոն աճող ֆունկցիա է, այսինքն ցանկացած A և B երկու վերջավոր բազմությունների համար, եթե տեղի ունի $A \subset B$ և $|A| + 1 = |B|$ պայմանները, ապա $I_A < I_B$:

2. Ընդհանրականության աքսիոմը: Որպես ամբողջականություն հանդես եկող վերջավոր A բազմության ընդհանրական հատկանիշ է ծառայում յուրաքանչյուր տարրի համար այբուբենի տառերի հաջորդականությունը, որի համարը L_A երկարությունը ֆունկցիա է $|A|$ տարրերի ընդհանուր քանակից:

A բազմությունում տարրերի քանակի ավելացման գործընթացը ներկայացնում է կողմնորոշված աճող ծառի տեսք: Գազաթները համապատասխանում են $a \in A$ տարրերի շարքին, իսկ մեկ գազաթից դուրս եկող շղթաների առավելագույն երկարությունը հավասար է այբուբենից ընտրված տառերի քանակին: Յուրաքանչյուր հարակից աղեղ ստանում է իր սեփական տառն ըստ այբենական կարգի և, որպես հետևանք, ամեն մի շղթա հանդես է գալիս բառի տեսքով, որը համապատասխանում է ընդհանրական հատկանիշին:

Արտացոլման սինտրոպիայի I_{AB} մեծությունը գնահատելու համար նշենք, որ ատրիբուտային I_A տեղեկատվությունը որպես մեծություն կախված է L_A երկարությունից: Տվյալ փաստի հիմնավորման արդյունքում կամայական տարրի ընդհանրական բնութագրիչը ներկայացնում է որոշակի հաղորդագրություն A բազմության վերաբերյալ: Արդյունքում՝ I_{AB} -արտացոլման սինտրոպիայի բանաձևը ստացվում է համակարգի միջոցով I_A տեղեկատվությունը փոխանցելու գործընթացի վերլուծության հիման վրա, որում A և B բազմությունները փոխնիփոխ հանդես են գալիս որպես տեղեկատվության աղբյուր և ընկալիչ, իսկ $C = A \cap B$ բազմությունը հանդես է գալիս որպես հաղորդման միջավայր կամ հաղորդակցման կապուղի: Վերլուծության արդյունքում I_{AB} -արտացոլման սինտրոպիայի բանաձևը ներկայացվում է հետևյալ ձևով.

$$I_{AB} = \frac{|C|^2}{|A| \cdot |B|} \log_2 |C| \quad (6)$$

Ներկայացված բանաձևից հետևում է, որ I_{AB} սինտրոպիան հանդես է գալիս որպես $I_C = \log_2 |C|$ տեղեկատվության մաս: Քանի որ $C = A \cap B$ բազմությունում ինչպես A -ն, այնպես էլ B -ն ենթաբազմություններ են, հետևում է, որ AB -ի սինտրոպիան ներկայացնում է A և B բազմությունների բնութագրիչների տեղեկատվության մաս:

Տեքստային հաղորդագրությունները փոխանցելիս, յուրաքանչյուր տառի տեղեկատվության միջին քանակը հավասար է Շեննոնի էտրոպիային, որը որոշվում է հաղորդագրության լեզվով տառերի հավանականությունների հիման վրա: Այդ հավանականությունները արտահայտում են լեզվի վիճակագրական կառուցվածքը և որոշվում են ներկայացված տեքստի ծավալի վերլուծության հիման վրա: Այսինքն՝ մինչև Շեննոնի էտրոպիայի հաշվարկ իրականացնելը, անհրաժեշտ է նախնական վերլուծական աշխատանքներ կատարել տեքստում առկա տառերի ընդհանուր քանակի և N տառի այբուբենից յուրաքանչյուր տառի օգտագործման ($B_i \subset A$ մասերի տառերով, $|B_i|$, $i = 1, 2, \dots, N$) քանակների վերաբերյալ: Միայն դրանից հետո կարող ենք գնահատել տեքստում հայտնված յուրաքանչյուր տառի հավանականությունը ($p = |B_i|/|A|$) և Շեննոնի էտրոպիան: Վերլուծության նախնական փուլում անմիջապես որոշվում է վերլուծված տեքստին վերագրվող (I_A) ընդհանրական բնութագրերի և (I_{B_i}) տառերի բնութագրերի խմբային մասի միջին արժեքները:

Ընդհանրական բնութագրի խմբային և համակարգային մասերի կշռված միջին արժեքը ճշգրիտ ձևով արտահայտում է համակցային, հավանականային և սիներգիկ մոտեցումների վերաբերյալ տեղեկատվական տվյալները: Ավելին, սիներգիկ մոտեցմամբ համակարգի մասերի բնութագրերի կշռված միջին արժեքը համընկնում է համակցային և հավանականային մոտեցումների միջոցով ստացված ամբողջական համակարգի բնութագրիչների կշռված միջին արժեքին: Տեղեկատվության «ընդհանուր» սահմանումները, որոնք հիմնված են այնպիսի հասկացությունների վրա, ինչպիսիք են բազմազանությունը (Урсул 1968:228), տարասեռությունը (Гуревич 2010:67), ամրագրված ընտրությունը (Чернавский 2013:76), դիսկրետ համակարգերի համար թերի են և միակողմանի: Սա բխում է այն փաստից, որ սիներգիկ մոտեցմամբ որոշված տեղեկատվության քանակական գնահատումը բխում է Հարթլի-Շեննոնի վարկածի հիման վրա կառուցված տեղեկատվության տեսության ընդհանրացումից: Շեննոնի էնտրոպիան և արտացոլման ընդունակությունը՝ լինելով տեղեկատվության չափման տարբեր տեսակի միջոցներ, որոշվում են նույն բանաձևով:

Եզրափակելով տեղեկատվության չափը որոշելու սիներգիկ մոտեցման ընդհանուր նկարագրությունը, ստանում ենք, որ այս մոտեցումը սկզբունքորեն տարբերվում է հավանականային և համակցային մոտեցումներից, քանի որ դիտարկվող տեղեկատվությունը գոյություն ունի անկախ վերահսկման ձևից, այսինքն՝ կապված չէ բազմաթիվ գործոններից մեկի ընտրության հետ (Առաքելյան 2018:82):

Տեղեկատվության ընդհանրական (1) հավասարումը վկայում է, որ ի դեմս տեղեկատվության սիներգիկ տեսության, ունենք նոր տեսություն: Այս տեսության հետագա զարգացումը և ներդրումը գիտական և կիրառական հետազոտությունների պրակտիկայում մեծ նշանակություն կունենա ոչ միայն տեղեկատվության ընդհանուր տեսության համար, այլև այն առարկայական ոլորտների համար, որտեղ ճանաչողության օբյեկտները ներկայացված են դիսկրետ համակարգերի (վերջավոր զանգվածների) տեսքով: Դրա օգտին է խոսում այն փաստը, որ տեղեկատվության սիներգիկ տեսության վրա արդեն հղումներ են կատարվում այնպիսի առարկայական տարբեր ոլորտների թեմաներով հրապարակումներում, ինչպիսիք են՝ ատոմային ֆիզիկան, տնտեսագիտությունը, փիլիսոփայությունը, կառուցվածքային լեզվաբանությունը, սոցիալական քաղաքականությունը, որոնողական համակարգերը, մեքենական ուսուցումը: Կան նաև կրթական գործընթացում ընդգրկելու նախադեպեր, ինչպես ավագ դպրոցի մակարդակով, այնպես էլ հեղինակավոր բուհերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Առաքելյան Ս.Վ., Հայկազյան Է. Մ. Գործոնային վերլուծությունը գիտելիքի գնահատման գործընթացում: Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ԲԱՆԲԵՐ 1(44), Երևան, "ԼԻՆԳՎԱ", 2018թ., էջ 70-83:
2. Առաքելյան Ս.Վ., Հայկազյան Է.Մ., Ստակյան Յու.Մ. Գրավոր հաղորդագրության անորոշության գնահատումը տեղեկատվական էնտրոպիայի միջոցով: Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ԲԱՆԲԵՐ 2(49), Երևան, "ԼԻՆԳՎԱ", 2019թ., էջ 164-174:
3. Առաքելյան Ս.Վ., Հայկազյան Է.Մ., Պողոսյան Մ.Ջ. Հաղորդագրության իմաստային կապերի վերլուծության մաթեմատիկական մոդելը: Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ԲԱՆԲԵՐ 2(49), Երևան, "ԼԻՆԳՎԱ", 2019թ., էջ 155-163:
4. Вяткин В.Б. Синергетическая теория информации. Часть 2. Отражение дискретных систем в плоскости признаков их описания // Научный журнал КубГАУ, №45(1), 2009 г.; <http://ej.kubagro.ru/2009/01/pdf/12.pdf>.
5. Вяткин В.Б. К вопросу взаимосвязи комбинаторного, вероятностного и синергетического подходов к определению количества информации// Научный журнал КубГАУ, №108(04), 2015 г.; <http://ej.kubagro.ru/2015/04/pdf/99.pdf>
6. Гуревич И.М. Информация как универсальная неоднородность // Информационные технологии. – № 4, 2010. – С. 66-74; http://novtex.ru/IT/it2010/number_04_annot.html#13.
7. Петрушенко Л.А. Самодвижение материи в свете кибернетики. – М.: Наука, 1971. – 290с. <http://padaread.com/?book=204933&pg=52>.
8. Урсул А.Д. Природа информации: философский очерк // А.Д. Урсул; Челяб. гос. акад. культуры и искусств; Науч.-образоват. центр «Информационное общество»; Рос. гос. торгово-эконом. ун-т; Центр исслед. глоб. процессов и устойчивого развития. – 2-е изд. – Челябинск, 2010. – 231 с.; http://inion.ru/site/assets/files/1474/ursul_a_d_priroda_informacii.pdf
9. Хакен Г. Информация и самоорганизация: Макроскопический подход к сложным системам: Пер. с англ.- М.: Мир, 1991.– 240 с., ил. http://optimacenter.org/userfiles/file/070414_FA5F7_haken_g_informaciya_i_samoorganizaciya_makroskopicheskiy_pod.pdf;

10. Чернавский Д.С. Синергетика и информация: Динамическая теория информации. – М.: Либриком, 2013. – 304с.
11. Hartley R.V.L. Transmission of Information//Copyright 1928, Lucent Technologies, used by permission;
http://www.dotrose.com/etext/90_Miscellaneous/transmission_of_information_1928b.pdf.
12. Shannon C.E. (1948) A Mathematical Theory of Communication. Bell System Technical Journal, vol. XXVII, No. 3, , 379-423;
https://pure.mpg.de/rest/items/item_2383162/component/file_2456978/content/pure.mpg.de.

REFERENCES

1. Ar'aqelyan S.V, Haykazyan E'. M. Gorc'onayin verlowc'owt'yowny' giteliqi gnahatman gorc'y'nt'acowm: Er&ani V. Bryowsovi anvan petakan lezvahasarakagitakan hamalsarani BANBER 1(44), Er&an, "LINGVA", 2018t'., e'j 70-83:
2. Ar'aqelyan S.V, Haykazyan E'.M., Stakyan Yow.M. Gravor haghordagrowt'yan anoroshowt'yan gnahatowmy' teghekatvakan e'ntropiayi mijocov: Er&ani V. Bryowsovi anvan petakan lezvahasarakagitakan hamalsarani BANBER 2(49), Er&an, "LINGVA", 2019t'., e'j 164-174:
3. Ar'aqelyan S.V, Haykazyan E'.M., Poghosyan M.Z. Haghordagrowt'yan imastayin kaperi verlowc'owt'yan mat'ematikakan modely': Er&ani V. Bryowsovi anvan petakan lezvahasarakagitakan hamalsarani BANBER 2(49), Er&an, "LINGVA", 2019t'., e'j 155-163:
4. Vjatkin V.B. Sinergeticheskaja teorija informacii Chast' 2. Otrazhenie diskretnyh sistem v ploskosti priznakov ih opisaniya // Nauchnyj zhurnal KubGAU, №45(1), 2009 g.;
<http://ej.kubagro.ru/2009/01/pdf/12.pdf>.
5. Vjatkin V.B. K voprosu vzaimosvjazi kombinatornogo, verojatnostnogo i sinergeticheskogo podhodov k opredeleniju kolichestva informacii// Nauchnyj zhurnal KubGAU, №108(04), 2015 g.;
<http://ej.kubagro.ru/2015/04/pdf/99.pdf>
6. Gurevich I.M. Informacija kak universal'naja neodnorodnost' // Informacionnye tehnologii. – № 4, 2010. – S. 66-74;
http://novtex.ru/IT/it2010/number_04_annot.html#13.

7. Petrushenko L.A. Samodvizhenie materii v svete kibernetiki. – M.: Nauka, 1971. – 290s. <http://padaread.com/?book=204933&pg=52>.
8. Ursul, A. D. Priroda informacii: filosofskij ocherk // A. D. Ursul; Cheljab. gos. akad. kul'tury i iskusstv; Nauch.-obrazovat. centr «Informacionnoe obshhestvo»; Ros. gos. torgovo-jekonom. un-t; Centr issled. glob. processov i ustojchivogo razvitija. – 2-e izd. – Cheljabinsk, 2010. – 231 s.;
http://inion.ru/site/assets/files/1474/ursul_a_d_priroda_informacii.pdf
9. Haken G. Informacija i samoorganizacija: Makroskopicheskiy podhod k slozhnym sistemam: Per. s angl.- M.: Mir, 1991.– 240 s., il. http://optimacenter.org/userfiles/file/070414_FA5F7_haken_g_informacij_a_i_samoorganizacija_makroskopicheskiy_pod.pdf;
10. Chernavskij D.S. Sinergetika i informacija: Dinamicheskaja teorija informacii. – M.: Librikom, 2013. – 304s.

ЭДУАРД АЙКАЗЯН, САТЕНИК АРАКЕЛЯН – СИНЕРГЕТИЧЕСКИЙ ПОДХОД ОПРЕДЕЛЕНИЯ КОЛИЧЕСТВА ИНФОРМАЦИИ

***Ключевые слова:** количество информации, итоговое описание, комбинация, вероятность, синергия, энтропия, синтропия*

В статье рассматриваются совокупные характеристики элементов дискретной системы и показано, что эти характеристики подразделяются на групповые и системные. Характеристики группы - это множество элементов, которые получают одно и то же значение, а системные характеристики появляются, когда разные группы объединяются в одну. Утверждается, что с помощью суммы средневзвешенных значений характеристик может быть определена мера информации. Между комбинаторным, вероятностным и синергетическим подходами существует взаимная связь. Показано, что информация, полученная в синергетическом подходе, является первичной, чем комбинаторная и вероятная, то есть исключается неопределенность выбора одной из возможностей. Обоснована идентичность формул для измерения информации в разных подходах.

EDUARD HAYKAZYAN, SATENIK ARAKELYAN - SYNERGICAL APPROACH TO INFORMATION DETERMINATION

Keywords: *information quantity, overall description, combination, probability, synergy, entropy, syntropy*

The article discusses the aggregate characteristics of the elements of a discrete system and shows that these characteristics are divided into group and system. Group characteristics are a set of elements that receive the same value, and system characteristics appear when different groups are combined into one. It is argued that a measure of information can be determined using the sum of the weighted average values of the characteristics. There is a reciprocal relationship between combinatorial, probabilistic and synergetic approaches. It is shown that the information obtained in the synergetic approach is primary than combinatorial and probable, that is, the uncertainty of choosing one of the possibilities is excluded. The identity of formulas for measuring information in different approaches is substantiated.

Ներկայացվել է՝ 05.10.2020
Գրախոսվել է՝ 05.10.2020

**ՕԼԴՈՍ ՀԱՔՍԼԻԻ «ՉՔՆԱՂ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ» ՎԵՊՈՒՄ ԱՌԿԱ
ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԱՊԱԿՈՂԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ**

ՀԱՍՄԻԿ ՃԱՏՈՒՆՑ

Հիմնաբառեր՝ Օլդոս Հաքսլի, «Չքնաղ նոր աշխարհ», թարգմանություն, թարգմանաբանություն, նշան, դիստոպիա, պատկերայնություն, նշանագիտություն, պայմանական նշաններ, համատեքստային նշաններ, նշանագիտական թարգմանաբանություն:

Հոդվածի **թեման** Օլդոս Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ» վեպի և դրա հայերեն թարգմանվածքի նշանագիտական-թարգմանաբանական վերլուծությունն է, որի **նպատակն** է պարզել, թե հեղինակի կողմից ստեղծված նշանային համատեքստն ինչ ազդեցություն ունի վեպում առկա լեզվական նշանների թարգմանության վրա, առանձնացնել նշանագիտության և թարգմանաբանության տեսանկյունից առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող լեզվական նշանները և վերլուծել դրանց ապակողավորումը հայերեն թարգմանվածքում: Հոդվածում քննվում են վեպում առկա նշանային խմբերից երեքը՝ պատկերանշաններ, պայմանական նշաններ և համատեքստային նշաններ: Բնագրի և թարգմանվածքի համեմատական վերլուծությունը կատարվում է համեմատաբար նոր միջգիտակարգի՝ նշանագիտական թարգմանաբանության դաշտում: Նշանների, դրանց միջև գոյություն ունեցող կապերի և երևույթների, ինչպես նաև նշանաստեղծման գործընթացի և հեղինակի կողմից ստեղծված նշանային համատեքստի ուսումնասիրության միջոցով բացահայտվում են թարգմանության ավելի խորքային կողմեր և տրվում շատ հարցերի պատասխաններ, որոնք անհնար է բացատրել կամ ապացուցել զուտ թարգմանաբանական և լեզվաբանական մոտեցմամբ:

Լեզվի դիտարկումը նշանագիտության շրջանակում մեծ նշանակություն ունի գրական ստեղծագործությունների և դրանց թարգմանվածքի վերլուծության մեջ: Ուստի կփորձենք Օլդոս Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ» վեպի հայերեն թարգմանվածքը դիտարկել որպես բնագրի նշանագիտական վերլուծություն:

Օլդոս Հաքսլին համարվում է 20-րդ դարի ամենանշանավոր գիտաֆանտաստիկ գրողներից մեկը, իսկ «Չքնաղ նոր աշխարհ» վեպը՝ «Դարի երկու ամենաքննարկված գիտաֆանտաստիկ աշխատություններից մեկը: Մյուսը Ջորջ Օրուելի «1984»-ն է» (Schmerl 1959: 38): Վեպի վերնագիրը՝ «Չքնաղ նոր աշխարհ», Ուիլյամ Շեքսպիրի «Փոթորիկ» պիեսից է մեջբերված: Այս բառերը Միրանդան կրկնում է «Փոթորիկ» պիեսում, ինչպես նաև Վայրենին՝ Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ» վեպում (Grushow 1962: 42):

Հաքսլին իր «Չքնաղ նոր աշխարհ» վեպում փորձում է ներկայացնել տոտալիտար, սպառողական հասարակարգի, տեխնոլոգիական զարգացման և զանգվածային լրատվամիջոցների միջոցով տարածվող հայացքների հետևանքները: Հաքսլին նկարագրում է մի հասարակարգ, որը ստեղծվել է արհեստական ճանապարհով՝ լաբորատորիաներում, որտեղ գոյություն ունի հստակ արտահայտված և անխախտելի սահմաններով գծված ստորադասություն: Այստեղ հասարակությունը կառավարվում է «ընտրյալների» կողմից, ովքեր գենետիկորեն ծրագրավորված են որպես մտածողներ, վերլուծողներ, իսկ հասարակության մյուս զանգվածը թմրեցված է. նրանք միշտ ուրախ են և անհոգ, անկախ այն հանգամանքից, որ գրեթե չեն մտածում, ամեն ինչ անում են այնպես, ինչպես ծրագրել են «աշխարհի տերերը», իսկ տխրության, դժգոհության կամ հիասթափության պահին նրանք ունեն հատուկ դեղամիջոց՝ թմրադեղ, որն անվանում են «սոմա»: Սոմայի ինքնակամ ընդունումից հետո նրանք աշխարհը կրկին տեսնում են վառ գույներով: Ուստի՝ վեպն ամբողջությամբ կարելի է դիտարկել որպես մի հասարակարգի նկարագրություն, որտեղ սպառումը առաջնային նպատակն է:

Մենք ունենք բնագրում արտահայտված իրականություն, իսկ բնագրի լսարանը գտնվում է այդ իրականությունից որոշակի հեռավորության վրա: Ուստի, պահանջվում են հստակ ճանաչողական գիտելիքներ՝ հեղինակի մտքին հասնելու համար: Թարգմանության լեզուն կրող լսարանն այդ իրականությունից կրկնակի հեռավորության վրա է գտնվում և անհրաժեշտ է, որ թարգմանիչը կրճատի այդ հեռավորությունը՝ կատարելով համարժեք բացատրական թարգմանություն:

Լեզվական նշաններն ունեն դասակարգում՝ կախված իրենց գործառույթից: Ըստ Չ.Ս. Փիրսի՝ նշանները լինում են երեք տեսակի՝ պատկերային նշաններ (իկոնաներ), ցուցիչներ և խորհրդանշաններ, իսկ Վ. Ն. Կոմիսարովը նշանները դասակարգում է հետևյալ կերպ . պատկերներ, խորհրդանշաններ, ազդանշաններ և պայմանական

նշաններ (Комиссаров 2001:36): Հետևաբար՝ պատկերայնությունը, լեզվական նշանի կամայական և պայմանական լինելը այն բնորոշ հատկանիշներից են, որոնց բացակայության պայմաններում լեզվական նշանը չի կարող գոյություն ունենալ: Դրանց միջոցով որոշվում է նշանակչի և նշանակյալի միջև գոյություն ունեցող կապի բնույթը, որը հետագայում լեզվական նշանի դասակարգման և նկարագրության, ինչպես նաև վերլուծության համար կարևոր հիմք է ծառայում:

Լեզվական պատկերայնությունը լեզվական նշանի և դրա իմաստի միջև օրինաչափությունն է: Այն մեծ ուշադրության է արժանացել ընդհանուր լեզվաբանության և նշանագիտության մեջ: Գրավոր խոսքում պատկերայնության երևույթին առավել հաճախ հանդիպում ենք գրական-գեղարվեստական ստեղծագործություններում: Ինչպես նշում է Ուիլյամ Նոթը՝ պատկերայնությունը գեղարվեստական գրականության էությունն է (Nöth 2001: 22): Գրականությունն իրական կյանքի կրկնօրինակումն է, ուստի պատկերայնությունը կարող է մեծացնել գրական երկի գեղագիտական հմայքը: Հանգերը, կրկնությունները, բաղաձայնությունները (ալիտերացիաներ) և այլն, պատկերային նշաններ են և մեծ ազդեցություն ունեն հեղինակի ոճատեղծման գործընթացի վրա:

Չնայած պատկերայնությունը հատուկ է պոեզիային, այն կարող է ի հայտ գալ նաև արձակ ստեղծագործություններում, հատկապես, եթե խոսքը այնպիսի ստեղծագործությունների մասին է, որոնք ունեն ուժեղ արտահայտված գիտական մոտեցում, օրինակ՝ ուտոպիական կամ դիստոպիական գրականություն, գիտաֆանտաստիկ գրականություն: Օլդոս Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ» վեպը դասվում է հենց այդպիսի գրական ստեղծագործությունների շարքին, քանի որ հեղինակը բավականին հաճախ օգտագործում է փոխաբերություններ, անսովոր անուններ: Տեղի ունեցող իրադարձություններն ու նկարագրված երևույթներն ունեն գիտական հիմք կամ մեկնաբանվում են գիտության միջոցով, առկա են անհայտ, ոչ սովորական, երբեմն նույնիսկ անհասկանալի արտահայտություններ և այլն:

Որոշ նշանագետներ առանձնացնում են նաև պատկերայնության մեկ այլ տեսակ՝ հնչյունաբանական պատկերայնություն: Հնչյունաբանական պատկերայնությունը կամ ձայնային սիմվոլիզմը հիմնված է կրկնօրինակման բնագրի վրա (Marchand 1960: 397): Օրինակ, անգլերենում «ո» տառը ենթագիտակցորեն կապվում է քաղցրության հետ, իսկ առաջնային դիրքերում այն սովորաբար ցույց է տալիս բերանի որոշակի շարժում կամ շրթունքներով արտահայտված հնչյուններ (մոթմոթոթ), «s» հնչյունի միջոցով արտահայտվում են շչական ձայներ,

որոնք ստեղծվում են օդի ներշնչման և արտաշնչման արդյունքում:
Օրինակ՝

“... skies are blue inside of you,” sang sixteen tremoloing falsettos,
“the weather’s always.”

Then a hiccough and silence. Bernard had switched of the current.
(61)

հմմտ.

«Ներսում կապույտ երկինքներ,- երգում էին տասնվեց դողացող
ֆալցետ,- ներսում արև, ներսում սեր»:

Ապա՝ չխկոց և լռություն: Բեռնարդն անջատեց ռադիոալիքը»:
(110)

Բնագրի «**hiccough**» բառը, որով հեղինակը փորձել է վերարտադրել արձակված ձայնը, թարգմանվել է որպես «**չխկոց**»: Թարգմանությունը կարելի է համարել համարժեք, քանի որ թարգմանվածքում նույնպես «չխկոց» բառն օգտագործվում է որևէ կարծր առարկայի կողմից արձակված ձայնը նկարագրելու համար:

Ինչպես արդեն նշվեց՝ հնչյունային պատկերայնության հիմքը հնչյունն է, ուստի, այն կարող է տարբեր կերպ ներկայացվել տարբեր համատեքստերում, կախված թարգմանության լեզվի մշակույթից և այդ մշակույթի լեզվի ճկունությունից: Ստորև ներկայացված օրինակում միևնույն «**hiccough**» բառը թարգմանվել է այլ բառի օգնությամբ.

“She took a last sip, set the cup down on the floor beside the bed, turned over on her side, **hiccoughed** once or twice and went to sleep.” (88)

հմմտ.

«Լինդան վերջին կումն արեց, բաժակը դրեց հատակին՝ մահճակալի մոտ, շրջվեց կողքի, **զկոտաց** մեկ-երկու անգամ և քնով անցավ»: (159)

Այս օրինակում «**hiccoughed**» բառը թարգմանվել է որպես «զկոտաց», որը պայմանավորված է համատեքստով: Այս դեպքում ևս թարգմանչի ընտրությունն արդարացված է:

Չնայած Սոսյուրի այն պնդմանը, որ լեզուն «սկզբունքորեն, եթե ոչ բացառապես պայմանական է», քսաներորդ դարի լեզվաբանական շատ ուսումնասություններ ցույց տվեցին, որ պատկերայնությունը գործում է լեզվի բոլոր մակարդակներում (հնչյունաբանություն, շարահյուսություն և այլն) և բավականին հաճախ հանդիպում է գրական ստեղծագործություններում (Colapietro 2009: 5):

Ինչպես արդեն նշվել է, պատկերային և պայմանական նշանները հատուկ են գիտաֆանտաստիկ ժանրի ստեղծագործություններին և զարմանալի չէ, որ վեպում բավականին հաճախ հեղինակն օգտագործում

է պայմանական նշաններ, որոնց միջոցով նա ստեղծում է գրական-երևակայական պատկերներ, յուրահատուկ լեզվաոճական տրամադրություն.

“Five words he uttered and no more-five words, the same as those he had said to Bernard about the Arch-Community-Songster of Canterbury. **“Hani! Sons eso tse-na!”**.” (170)

հմմտ.

«Հինգ բառ նա արտասանեց և ոչ ավելին. այն նույն հինգ բառը, որ նա ասաց Բեռնարդին Քենթերբերիի Արքիամայնաերգչի մասին:

Հանի: Սոնս էսո ցե-նա՛»: (300)

Վայրենին ներկայացնում է քաղաքակիրթ աշխարհից կտրված, արգելոցում պահվող ցեղը, որի ներկայացուցիչներն իրենց ավանդույթներով, պահվածքով, ապրելակերպով և խոսելաձևով տարբերվում են լաբորատորիաներում ստեղծված հասարակարգից: **«Hani! Sons eso tse-na»** արտահայտությունն անհայտ ծագման է և հեղինակը չի բացահայտում դրա իմաստը: Սրանք հատուկ լեզվական նշաններ են, որոնց միջոցով ընդգծվում է քաղաքակիրթ աշխարհի և սովորական մահկանացուների միջև գոյություն ունեցող տարբերությունը: Թարգմանությունը կատարվել է տառադարձման միջոցով, որի շնորհիվ նույնությամբ պահպանվել է լեզվական նշանը՝ **«Հանի: Սոնս էսո ցե-նա՛»:**

Համարժեքության հասնելու նպատակով պայմանական նշանները տառադարձման մեթոդով թարգմանության լեզու փոխանցելու մեկ այլ օրինակ ներկայացված է ստորև.

“... like old Mitsima saying magic over his feathers and his carved sticks and his bits of bone and stone- **kiathla tsilu silokwe silokwe silokwe. Kiai silu silu, tsithl** - but better than Mitsima’s magic, because it meant more, because it talked to him ...” (88)

հմմտ.

«... ասես ծեր Միցիման մոգական խոսքեր ասելիս լինել իր փետուրների, նախշուն փայտիկների, ոսկրիկների ու քարերի վրա՝ **կիաթլա ցիլու սիլոկվե սիլոկվե սիլոկվե: Կիայի սիլու սիլու, ցիթլ.** Է՛լ ավելի լավը, քան Միցիմայի մոգությունը, քանզի դրանք ավելի էին նշանակում, քանի դրանք խոսում էին իր հետ»... (160)

Վեպում պատկերային նշանները շատ հաճախ արտահայտվում են նաև գրաֆիկական միջոցներով, որոնք օգնում են ուժգնացնել արտահայտված իմաստը: Տեսողական պատկերային նշանները ևս նույնությամբ փոխանցվել են թիրախ լեզու.

Eight minutes later, a new edition of The Hourly Radio was on sale in the streets of London. **“HOURLY RADIO REPORTER HAS COCCYX KICKED BY MYSTERY SAVAGE,”** ran the headlines on the front page. **“SENSATION IN SURREY.”** (170)

հմմտ.

Ութ րոպե անց «The Hourly Radio»-ի նոր տպաքանակն արդեն վաճառքի էր հանված Լոնդոնի փողոցներում: «**«HOURLY RADIO»-Ի ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏՈՒՅՔԸ՝ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՎԱՅՐԵՆՈՒ ՀԱՐՎԱԾԻ ԹԻՐԱՆ»**, - վկայում էին առաջին էջի գլխագրերը: **«ՏՆՑՈՂ ՄԻՋԱԴԵՂ ՍԱՐԻԵՅՈՒՄ»**: (300)

Տվյալ դեպքում նույնպես թարգմանությունը համարժեք է, քանի որ իմաստին զուգընթաց պահպանվել է նաև լեզվական նշանի ձևական կողմը:

Նշանագիտական թարգմանաբանության տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև դարձվածքները, փոխաբերական իմաստով գործածված լեզվական միավորները: Վերջիններս, եթե վերլուծենք նշանագիտական մեթոդի օգնությամբ, բացահայտում են լեզվական նշանի արտահայտության և բովանդակության պալնների ուրույն կապը և փոխհարաբերությունը: Այս լեզվական նշանները կարելի է երբեմն համեմատել խորհրդանշանների հետ: «Մեզ անհրաժեշտ են խորհրդանշաններ մտային պատկերները կենդանացնելու համար», - նշում է Ուինֆրիդ Նոթը (Nöth 2001:26), այլապես «մենք չեն կարող ասել որևէ բան աշխարհի մասին»: Չքնաղ Նոր Աշխարհ գիտաֆանտաստիկ վեպում մենք տեսնում ենք մի աշխարհ, որն ամբողջությամբ անծանոթ է մեզ և նույնքան անծանոթ 1932 թ. (վեպի տպագրման տարեթիվ) ընթերցողների համար: Ուստի զարմանալի չէ, որ աշխարհը նկարագրելու համար օգտագործվում է պատկերային, փոխաբերական լեզու այնպես, որ ընթերցողը կարողանա մտովի վերստեղծել այն «նոր» աշխարհը, որը մեզ է ներկայացնում հեղինակը:

Վեպում օգտագործվող փոխաբերության օրինակ է՝

“And from out of the bellies of these giant grasshoppers stepped men in white viscose-flannels.” (173)

հմմտ.

«Եվ այդ **հսկա մորեխների ստամոքսից դուրս էին գալիս տղամարդիկ՝** ճերմակ վիսկոզ-կիսաբամբակյա վերնաշապիկներով»... (305)

Այստեղ **«bellies of these giant grasshoppers»** արտահայտությունն օգտագործվել է փոխաբերական իմաստով: Փոխաբերությունը նույնությամբ ներկայացված է հայերեն թարգմանության մեջ՝ «հսկա

մորեխների ստամոքսից» և այն միանգամայն հասկանալի է նաև թարգմանության լեզուն կրող լսարանի համար: Փոխաբերությունը վերաբերում է ինքնաթիռի սրահին: Ինքնաթիռն իր ձևով որոշակի նմանություն ունի մորեխի հետ. ինչպես մորեխի ստամոքսը, ինքնաթիռի սրահը ևս գտնվում է միջնամասում: Բացի այդ մորեխի բզզոցը նույնպես որոշակի նմանություններ ունի ինքնաթիռի արձակած ձայնի հետ: Փոխաբերության միջոցով ընթերցողի մոտ ստեղծվում է նկարագրվող իրադարձության կամ գործողության մտային պատկերը, իսկ վերջինիս միջոցով տեսարանը դառնում է ավելի արտահայտիչ:

Վեպում կարելի է հանդիպել հանգավորված հատվածների, որոնք հիմնականում ունեն բարոյախրատական բնույթ: Դրանց նպատակը «Երկրում» կարգուկանոն հաստատելն է: Պարզ է, որ դիստոպիական վեպը չէր կարող զերծ մնալ հանգերից:

1. “Ending is better than mending.” (35)

հմմտ.

«Լավ է դեն նետել, քան կարկատել: Լավ է դեն նետել, քան կարկատել»: (63)

Թարգմանությունն, ինչպես տեսնում եք, համարժեք չէ: Համարժեքությունը պահպանվել է միայն իմաստային մակարդակում, որի արդյունքում ձևային մակարդակը խաթարվել է կամ փոխանցվել է ոչ ամբողջությամբ: Որպես ոճային «փոխհատուցում»՝ թարգմանիչը կիրառել է կրկնության մեթոդը, արտահայտության բարոյախրատական բնույթն ավելի ընդգծելու նպատակով: Այսպիսով՝ բնագրում կիրառված հանգերը փոխարինվել են կրկնությամբ:

2. «We – want – the whip» (305)

հմմտ.

«Մըտ-րակ-նենք ու-զում»: (307)

Այս նախադասության մեջ մենք գործ ունենք բաղաձայնայնությի՝ բառերի առաջին հնչյունների կրկնության հետ: Հայերենում բաղաձայնայն չի պահպանվել, սակայն փոխարենը տեղի է ունեցել բառերի վանկատում՝ բնագրի ոճական երանգը պահպանելու նպատակով: Մեր կարծիքով՝ նշանային մակարդակում համարժեքություն ստեղծելու և պատկերայնությունը պահպանելու նպատակով ավելի նպատակահարմար կլինի նշված արտահայտությունը թարգմանել հետևյալ կերպ՝

«Մենք մըտ-րակ-ենք ու-զում». այս պարագայում տեղի կունենա «մ» հնչյունի կուտակում, որը և կօգնի պահպանել համարժեքությունը:

Մեկ այլ կրկնության օրինակ է Ու. Շեքսպիրի «Տրոիլուս և Կրեսիդա» ստեղծագործությունից մեջբերված հատվածը.

“Fry, lechery, fry!” Frenzied, the Savage slashed again.” (175).

հմմտ.

«**Տապակվի՛ր, անառա՛կ, տապակվի՛ր**– մոլեգնած՝ Վայրենին կրկին մտրակեց»։ (309)

Այստեղ «fry» բառի կրկնությունը ստեղծում է հայելային համաչափություն, որն ավելի մեծ ոճական ուժ է հաղորդում բացականչությանը։ Այն գործում է որպես «ուժեղացուցիչ»։

Երբեմն կրկնությունը զուգորդվում է գրաֆիկ միջոցներով, որոնց շնորհիվ ստեղծվում է աստիճանավորում։ Օրինակ՝ «**Help! Help! HELP!**» (147) արտահայտությունը, որը հայերենում թարգմանվել է որպես՝ «**Օգնությո՛ւն։ Օգնությո՛ւն։ Օգնությո՛ւն։**» (257)։ Ինչպես Ուինֆրիդ Նոթն է նկարագրում, այստեղ մենք գործ ունենք «պարզ կրկնության համաչափության («symmetry of mere repetition»- թարգմանությունն իմն է,- Հ.Ճ)» հետ (Nöth 2001: 23). Այստեղ ևս ստեղծվում է հուզական ազդեցության ուժեղացում։ Առաջին «**Help!**»-ը հնչում է սովորական, երկրորդի դեպքում այն ունի ուժգնացման տարր, որն արտահայտված է արտալեզվական միջոցներով, մասնավորապես, շեղ տառաձևով, իսկ երրորդ «**HELP!**»-ը, որի բոլոր տառերը մեծատառ են, նկարագրում է Բերնարդի բացականչության գագաթնակետը։ Սա պատկերայնության օրինակ է, երբ արտալեզվական միջոցներով, նշանի ձևի օգնությամբ ստեղծվում են իմաստներ կամ իմաստային նոր երանգներ։ Հայերեն թարգմանության մեջ կրկնվող բառերի՝ գրաֆիկական միջոցներով արտահայտված տարբերությունը չի պահպանվել։ Մեր կարծիքով ինչպես իմաստային, այնպես էլ նշանային մակարդակում համարժեքության հասնելու համար անրաժեշտ էր պահպանել նաև բնագրի ձևային կողմը, մի դեպքում «**Օգնությո՛ւն**» բառը գրելով շեղատառ, մյուս դեպքում՝ բառի բոլոր տառերը գրելով մեծատառ . «**Օգնությո՛ւն։ Օգնությո՛ւն։ Օգնությո՛ւն։**»

Նշանների՝ գեղարվեստական համակարգի տարրերի միջև ընդհանրությունը պայմանավորված է ոչ թե նախնական իմաստով, այլ այն փաստով, թե ինչպես են դրանք դասավորված որոշակի խոսույթում և, հետևաբար, ինչ դեր են կատարում այդ խոսույթում։ Իմաստը նշանագիտության ամենակարևոր կատեգորիաներից է, իսկ լեզվական նշանի իմաստը բացահայտելը հեշտ գործ չէ՝ հաշվի առնելով նրա բազմակողմանիությունը, տարածականությունը և բազմակի գործառույթը։ Գոյություն ունի լեզվական նշանի իմաստի երկու տեսակ՝ «ընդհանրական» և «համատեքստային» (Nöth 2001: 64)։ «Ընդհանրական» իմաստը բավականին աղքատիկ է, քանի որ վերաբերում է բառի առաջնային, բառարանային իմաստին՝ անտեսելով

բառի շուրջը ձևավորված իրականությունը (տեղ, ժամանակ, իրավիճակ և այլն):

Գեղարվեստական ստեղծագործության տեքստը համարվում է նշանային փակ համակարգ (Семёнов 2016: 151), այդ իսկ պատճառով դրա նշանագիտական վերլուծությունը ենթադրում է հետևյալ **խնդիրները**.

1. Գտնել նշաններ կամ նշանային համակարգեր,
2. Որոշել նշանների խմբավորման բնույթը և եղանակները՝ համադրություն և հակադրություն,
3. Վեր հանել ինչպես նշանների, այնպես էլ նշանային խմբավորումների իմաստները,
4. Կատարել թարգմանվածքի համեմատական վերլուծություն:

Վեպը հանդես է գալիս որպես նշանագիտական տարածություն, որի սահմաններում միայն այս կամ այն լեզվական արտահայտությունը ձեռք է բերում նշանի կարգավիճակ: Վեպում տեղի ունեցող իրադարձությունները նպաստում են նշանային խմբավորումների աստիճանաբար ձևավորմանը: Ուսումնասիրելով վեպի նշանային համակարգը՝ առանձնացնում ենք նշանային խմբավորումների հետևյալ դասակարգումը.

Աշխատուժ կամ աշխատող դասակարգ

Այս նշանը ձևավորվում է աստիճանաբար՝ վեպում զարգացող իրադարձություններին զուգընթաց: «Աշխատուժ» նշանը ստանում է մեկ այլ իմաստ՝ շնորհիվ հեղինակի նկարագրությունների. անհատականությունը վերանում է «Ֆորդյան» կարգերի ընթացքում, անհատն իր գործը անդադար կրկնում է նույնությամբ, ամեն օր, և յուրաքանչյուր դասակարգի ներկայացուցիչ իրեն համարում ավելի լավը և ավելի երջանիկ, քան այլ դասակարգերի ներկայացուցիչները, նույնիսկ եթե վերջինս ավելի բարձր դիրք ունի: Այսպիսով, սովորական «աշխատող» դասակարգ ասելով՝ հասկանում ենք «իրականությունից կտրված, թմրած և նախապես ծրագրավորված անձանց խումբ»:

Ազատություն և երջանկություն

Երջանկությունը իշխելու մեթոդներից մեկն է: Հասարակությունն իր բնակիչներին երջանկություն է պարզևում՝ անկախ նրանց ցանկությունից: Աշխարհի տերերը վերացնում են այն ամենը, ինչ կարող է առաջացնել տխրություն կամ հարցականի տակ դնել երջանկությունը: Ցանկացած հոյզ արգելվում է, որի միջոցով ալֆաները, բետաները, դելտաները և էփսիլոնները պաշտպանված են տխրությունից: Այս նշանը վեպում հանդես չի գալիս ուղղակիորեն, այն ձևավորվում է աստիճանաբար՝

վեպի հերոսների պահվածքի և ստեղծված իրավիճակներում նրանց վարքի հիման վրա:

Սոմա

“Euphoric, narcotic, pleasantly hallucinant.” (37)

հմմտ.

«Բերկրալի, թմրեցնող, հաճելի տեսիլքներ առաջ բերող»: (68)

Ահա այսպես է նկարագրում Մուստաֆան «սոմա» կոչվող ըմպելիքը, որը երջանկություն էր պարգևում բոլորին: Այն ծառայում է որպես գործիք, որով կառավարությունը ղեկավարում է հասարակությանը. թմրեցնում է, հանգստացնում և, որ ամենակարևորն է, մարդկանց ուշադրությունը շեղում է իրականությունից, խանգարում նրանց նկատել, որ ինչ-որ բան այն չէ, որ իրենց հասարակությունը ոչ թե երջանիկ է, այլ ստրկացված: Հայերեն թարգմանվածքում «սոմա» բառը տառադարձվել է: Հատկանշական է այն փաստը, որ թարգմանիչը «սոմա» բառի որևէ բացատրություն չի ներկայացրել ընթերցողին, չնայած այն հանգամանքին, որ ողջ թարգմանության ընթացքում թիրախ լեզվի լսարանին անձանոթ ցանկացած բառ ուղեկցվում է թարգմանչի կողմից իրականացված բացատրությամբ կամ նկարագրությամբ:

“Christianity without tears-that’s what soma is.” (162)

հմմտ.

«Քրիստոնեություն առանց արցունքների. ահա թե ինչ է սոման»: (286)

Այս հայտնի խոսքերի միջոցով տեսնում ենք, թե հեղինակն ինչպես է կապում երկու՝ առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող երևույթները՝ սոման և քրիստոնեությունը: Նման համեմատությունների միջոցով պարզ է դառնում, որ քրիստոնեությունը, ինչպես և սոման, գործում է որպես թմրեցնող միջոց՝ մարդկանց կառավարելու համար: Այն ղեկավարում է հանգստացնելու միջոցով, առաջարկում երջանկություն՝ անհատականությունը կորցնելու գնով:

Էլեկտրական ցանկապատ

Վայրենիների արգելոցը արտաքին՝ քաղաքակիրթ և առաջադեմ հասարակությունից առանձնացված էր էլեկտրական ցանկապատով: Այն առանձնացնում է պարզունակ աշխարհը՝ զարգացածից: Եթե օբյեկտիվորեն մոտենանք հարցին, ապա երկու աշխարհներն էլ ոչ զարգացած են. մի կողմից մենք ունենք աշխարհ, որտեղ մարդիկ ստրկամիտ են, նրանց ցանկությունները և յուրաքանչյուր քայլը նախագծված է, իսկ մյուս կողմից ծեսերով տարված և ինքնախեղված մի աշխարհ:

Մուստաֆա Մոնդը՝ Եվրոպայի ղեկավարը, միշտ ասում է, որ ամենցածր խավը ներկայացնող Էփսիլիոնները երջանիկ են, քանի որ նրանք այդպես են ծարագրավորված: Չքնաղ նոր աշխարհի վեպում արտաքին ծրագրավորումը և կենսաբանական մանիպուլացիան գործիք են ստորակարգություն ստեղծելու համար: Օրինակ՝ Բոկանովսկիի մեթոդը կամ գործընթացը (Bokanovsky's Process) թույլ է տալիս մեկ ծվարանից ստանալ տասնվեց հազար չափահաս առանձնյակներ:

Դիստոպիա

Հաքսլիի աշխարհում ապագան գիտական է բոլոր առումներով: Նա նկարագրում է մի հասարակություն, որը ղեկավարում են գիտնականները, մերժում է կրոնը, էթիկան և ցանկացած արժեք, որն անհնար է ապացուցել լաբորատոր փորձերով: «Դիստոպիա» համատեքստային նշանը ստեղծվում է վեպի գաղափարային, լեզվաոճական և գեղագիտական առանձնահատկությունների հիման վրա:

Գիտական կրոն կամ գիտության միջոցով արտահայտված կրոն

Այսպես՝ իրադարձությունների զարգացման ողջ ընթացքում հեղինակն օգտագործում է առավել հայտնի արտահայտությունների, գաղափարների և նույնիսկ շինությունների վերափոխված ձևերը՝ դրանով իսկ հարստացնելով վեպի նշանային համակարգը՝ այն դարձնելով ավելի ֆուտուրիստական և դիստոպիական: Ստորև ներկայացնում ենք վեպի նշանային համակարգում բավականաչափ մեծ դեր ունեցող արտահայտությունները և դրանց զուգահեռ ձևերը: Այս արտահայտությունների և դրանց թարգմանության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակի կողմից ստեղծված նշանները և կոդերը ստեղծում են նոր՝ անուղղակի կերպով արտահայտված իմաստներ:

<i>Վեպում կիրառված տարբերակ</i>	<i>Առավել տարածված ձև</i>
Our Ford	Our Lord
A.F. ¹	A.D. ²
His Fordship	His Lordship

¹ «After Ford» (Meckier 2002: 429):

² Միջնադարյան լատիներենի «anno Domini» արտահայտությունից, որը նշանակում է «in the year of the Lord» (Collins English Dictionary, 23rd Edition, 2018)¹ «մ.թ.»:

Ford is in his Flivver	God is in His Heaven
Ford's Day	Sunday
Charing T	Charing Cross

«T» լեզվական նշանը կարելի է համարել խորհրդանշան, քանի որ նրա իմաստն արտահայտվում է պատկերի միջոցով: Որպես նշանակիչ ծառայում է «T»-ն, որը տեսողական կերպով կրկնօրինակում է կամ կրկնապատկերում է քրիստոնեական խաչը, սակայն արդեն առանց գազաթային մասի, իսկ որպես նշանակյալ ծառայում է այն փաստը, որ «Չքնաղ նոր աշխարհ»-ի բնակիչների համար սրբություն համարվող «T»-ն օգտագործվում է Ֆորդի T- մոդելի պատվին: Ֆորդի T- մոդելը համարվում է առաջին ավտոմեքենան, որն արտադրվում էր մեծ քանակությամբ և հասանելի էր բոլորին:

Նույն սկզբունքով քրիստոնեությունը խորհրդանշող Քենթրբերիի արքեպիսկոպոսը դառնում է «Քենթրբերիի Արք-համայնքային-երգիչ».

“She had spent one week-end with the Ford Chef-Justice, and another with the **Arch-Community-Songster of Canterbury**.” (110)

հմմտ.

«Հանգստյան օրերն անցկացրել էր գլխավոր դատավորի հետ, ևս մեկը՝ **Քենթրբերիի Արքերգիչի հետ**»: (200)

Արք-համայնքային երգիչ բառը բազմաշերտ նշան է: Այն առաջին հերթին ծառայում է որպես Քենթրբերիի արքեպիսկոպոս պաշտոնին զուգահեռ պաշտոն Հաքսլիի ստեղծած աշխարհում: Վեպում իրադարձությունների զարգացման ընթացքում բացահայտվում է այս լեզվական նշանի մեկ այլ իմաստ. Սոմայից և կանխորոշումից զատ, «Չքնաղ նոր աշխարհ»-ի բնակիչների կառավարման ձևերից մեկն է երգը: Երգի միջոցով մանուկները ծրագրավորվում են և այդպիսով որոշվում է նրանք հետագա պարտականությունները: Ոստի, Արքերգիչը նույնպես կառավարության մի մասն էր և անվան ընտրությունը պատահական չէ:

Այս պարագայում, մեր կարծիքով, անհրաժեշտ էր պահել «**համայնք**» բառը, քանի որ այն կարևորագույն տարր է ստեղծագործության նշանային համակարգում: «Չքնաղ նոր աշխարհ» վեպում նկարագրվող հասարակության առաջին դեմքերից մեկը համարվող Արքերգիչը՝ համայնքային էր, սրանով ենթադրվում է, որ կան նաև այլ համայնքներ օրինակ՝ (վայրենիների ցեղը): Որպես

թարգմանության տարբերակ առաջարկում ենք «Արք-համայնքային-երգիչ» տարբերակը:

Լոնդոն

Հեղինակային նորակազմությունների շնորհիվ վեպի իրադարձություններին զուգընթաց, աստիճանաբար ձևավորվում է մեկ այլ կարևոր լեզվական նշան՝ Լոնդոն քաղաքը: Չնայած այդ փաստին, որ վեպում հեղինակը երբեք չի հիշատակում Լոնդոն քաղաքի անունը և նույնիսկ չկա ուղղակի որևէ նշան, որը կհուշի, որ իրադարձությունները տեղի են ունենում Լոնդոնի կամ Մեծ Բրիտանիայի ներկայիս տարածքում, այնուամենայնիվ, բարդ ենթատեքստային կառույցների վրա հիմնվելով կարելի է անցկացնել զուգահեռներ տեղանունների միջև.

“They were standing on the roof; **Big Henry** had just sung eleven. The night was calm and warm.” (57)

հմմտ.

«Նրանք կանգնած էին տանիքում. **Բիգ Հենրին** քիչ առաջ էր տասնմեկն ազդարարել: Գիշերը տաք ու խաղաղ էր»: (104)

Այստեղ, մեր կարծիքով, բառացի թարգմանության պարագայում ավելի նպատակահարմար է տալ բացատրություն ծանոթագրության միջոցով, քանի որ փաստ չէ որ թարգմանության լեզվի լսարանը ծանոթ է նշված տեղանվանը և կարող է անցկացնել զուգահեռներ: Կարելի է նույնիսկ դիտարկել թարգմանության «**Բիգ Բենրի**» տարբերակը, որը լսարանին կհուշի, որ խոսքը «Բիգ Բենրի» մասին է:

Բավականին մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև այն լեզվական նշանները, որոնք ստեղծվել են այլ գրական ստեղծագործություններից մեջբերված արտահայտությունների միջոցով: Հեղինակն այս կերպ փորձում է ընթերցողին ժամանակ առ ժամանակ վերադարձնել իրականություն և ցույց տալ «չքնաղ նոր աշխարհի» և իրական կյանքի միջև կապը.

“Yes, that’s just like you. Getting rid of everything unpleasant instead of learning to put up with it. Whether **’tis better in the mind to suffer the slings and arrows of outrageous fortune, or to take arms against a sea of troubles and by opposing end them.**” (162)

հմմտ.

«-Այո՛, դա ձեզ բնորոշ է: Ազատվել ցանկացած տհաճ երևույթից դրանց հետ գոյատևել սովորելու փոխարեն: «**Ո՞րն է արդյոք մեզ ավելի ազնիվ թվում. Տանե՞լ վայրագ ճակատագրի պարսատիկներն ու նետերը, թե՞ զենք վերցնել աղետների մի ծովի դեմ ու դիմադրել, վերջ տալ դրանց**»»:

Հեղինակը մեջբերում է Ու. Շեքսպիրի «Համլետ» ստեղծագործությունը որպես Վայրենու խոսքի մի մաս՝ չառանձնացնելով այն կետադրական որևէ նշանով կամ այլ միջոցներով: Համլետի հայտնի մենախոսության այս հատվածը վերցված է Շեքսպիրի ստեղծագործությունների՝ 1623թ. հրատարակված առաջին ֆոլիոյից (First Folio, 1623 Mr. William Shakespeares Comedies, Histories, & Tragedies, published by Isaac Jaggard and Ed Blount in 1623)

Չնայած բնագրում ստեղծագործության այդ հատվածը մեջբերվում է նույնությամբ, թարգմանվածքում այն տարբերվում է առավել լայնորեն տարածված թարգմանությունից, որը կատարվել է Հ. Խ. Մասեհյանի կողմից: Ամենայն հավանականությամբ թիրախ տեքստում տեղ է գտել թարգմանչի սեփական թարգմանությունը:

Հ. Խ. Մասեհյանի թարգմանությունը ներկայացվում է ստորև.

«Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ, Տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքները, Թե զենք վերցնել ցավ ու վիշտերի մի ծովի ընդդեմ, Եվ դիմադրելով՝ վերջ տալ բոլորին»:

Սակայն ինչպես Ա. Թոփչյանն է նշում իր՝ «Շեքսպիրի «Համլետը»-ը հայերեն» հոդվածում. «Հ. Խ. Մասեհյանը «Համլետ»-ի 1921 թ. նախաբանում գրում է. «Մենք ամենևին հավակնություն չունինք Շեքսպիրի թարգմանության դժվարին և պատասխանատու գործն արժանապես կատարած լինելու. բայց եթե այս աշխատությունը կարող կլինի իբրև հիմք ծառայել, որի վրա ավելի ընդունակ թարգմանիչներ ավելի հարազատորեն կկառուցանեն շեքսպիրյան մտածության հայացրած շենքը, մեր ամենաջերմ իղձը կատարված պիտի համարենք» (Թոփչյան 2009: 34):

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ հայերեն թարգմանվածքը շատ հաճախ ծառայում է որպես բնագրի նշանագիտական վերլուծություն: Ինչպես ցույց տվեց մեր վերլուծությունը, թարգմանվածքը ժամանակ առ ժամանակ հանդես է գալիս որպես ավելի պարզ տեքստ՝ ի հակադրություն բնագրի: Բացատրական թարգմանության, ծանոթագրությունների, գրաֆիկական միջոցների և մի շարք այլ թարգմանական և լեզվաոճական գործիքների միջոցով բնագրում առկա լեզվական շատ նշաններ դառնում են ակնհայտ թարգմանվածքում:

Կատարելով բնագրում ոչ ուղղակիորեն արտահայտված լեզվական նշանների և վերջիններիս թարգմանության համեմատական վերլուծություն՝ գալիս ենք այն եզրահանգման, որ թարգմանության ընթացքում նշանի համատեքստը ուղղակիորեն ազդում է թարգմանության որակի վրա: Հեղինակի կողմից ստեղծված նշանային

տարածությունից դուրս շատ լեզվական նշաններ դառնում են անտեսանելի, կորցնում իրենց գեղագիտական արժեքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթայան Է. Ռ., Լեզվական աշխարհի կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, ԵՊՀ, 1981:
2. Աղայան Է. Բ. , Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:
3. Եզեկյան Լ., Հայերենի գործառական ոճերը, Երևան, «Նաիրի», 2003:
4. Զոհրապ Գ., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1962:
5. Համբարձումյան Դ., Գեղարվեստական ստեղծագործությունը և նրա թարգմանությունը որպես բանասիրական համալիր քննության առարկա, Երևան, 2008:
6. Հայ գրողները գեղարվեստական թարգմանության մասին, Մ. Վ. Մաքսապետյան, Երևան 1985թ., Medias and Culture, vol. 33, 2012:
7. Հաքսլի Լեոնարդ Օլդոս, Չքնաղ նոր Աշխարհ, «Չանգակ» հրատարակչություն, Երևան, 2017. Թարգմանությունն անգլերենից՝ Լիլիթ Հայրապետյանի (այս վեպի հատվածների էջերը տե՛ս բնագրային և թարգմանության մեջբերումներին կից):
8. Շեքսպիր, Համլետ, Դանեմարքի իշխան, անգլիերենից թարգմանեց Հովհաննես Խան Մասեհյան, Թիֆլիս, 1894, էջ 23–26
9. Պատկանյան Ռ., Լեզվի համար ինչ օգուտ ունի թարգմանությունը, 1857 (Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1968):
10. Զահուկյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, հատոր II, Երևան, ԵՊՀ, 1962:
11. Huxley 1932 – Huxley A. Brave New World. Stuttgart: Reclam, 1932 (այս վեպի հատվածների էջերը տե՛ս բնագրային և թարգմանության մեջբերումներին կից):
12. Colapietro Vincent, (Pennsylvania State University) Image, Diagram, and Metaphor, Seventh Biennial Symposium on Iconicity in Language and Literature, Iconicity in Language & Literature, University of Toronto - Victoria College, June 9-13, 2009:
13. Eco, Umberto and Nergaard, Siri (1998). Semiotic Approaches. In Routledge Encyclopedia of Translation Studies, Mona Baker and Kirsten Malmkjaer (eds.), London: Routledge, 2001/1998:
14. Gentzler, E. Contemporary Translation Theories. Clevedon: Multilingual Matters, 2001:

15. Göran, S. Translation and other acts of meaning: In between cognitive semiotics and semiotics of culture. *Cognitive Semiotics* 2014:
16. Gorrée, D. Semiotics and the problem of translation. With special reference to the semiotics of Charles S. Peirce. Amsterdam: Rodopi, 1994:
17. Meckier Jerome, Aldous Huxley's Americanization of the "Brave New World" Typescript *Twentieth Century Literature*, Vol. 48, No. 4, pp. 427-460, Duke University Press, 2002:
18. Nöth 2001 – Nöth W. Semiotic foundations of iconicity in language and literature // O.Fischer, M.Nänny (eds.). *The Motivated Sign. Iconicity in Language and Literature 2*. Amsterdam: Benjamins, 2001:
19. Petrilli, S. Translation and semiosis. Introduction. In *Translation*, ed. S. Petrilli, Amsterdam: Rodopi, 2003:
20. Torop, P. Toward the semiotics of translation. *Semiotica* 128-3/4, 2000:
21. Sadowski 2001 – Sadowski P. The sound as an echo to the sense. The iconicity of English gl-words // O.Fischer, M.Nänny (eds.). *The Motivated Sign. Iconicity in Language and Literature 2*. Amsterdam: Benjamins, 2001:
22. Schmerl Rudolf B.- Aldous Huxley's Social Criticism, *Chicago Review*, Vol. 13, No. 1 (Winter - Spring, 1959), pp. 37-58:
23. Waugh L. R., Mittelberg I., Metonymy first, metaphor second: A cognitive semiotic approach to multimodal figures of thought in co-speech gesture, "Multimodal Metaphor", pages 329-356, Walter de Gruyter GmbH, 2009,
24. Комиссаров В.Н. Современное переводоведение. Учебное пособие, Издательство «ЭТС», Москва, 2001:
25. Семёнов А.Н, СЕМИОТИЧЕСКИЙ АНАЛИЗ ТЕКСТА, Образование Югории: научно-методический журнал. Выпуск № 3 /41/ 2016:

REFERENCES

1. At'ayan E'. R'. , Lezvakan ashxarhi kerpavorowmy' & artaqin veraberowt'yowny', Er&an, EPH, 1981:
2. Aghayan E'. B. , Ardi hayereni bacatrakan bar'aran, «Hayastan» hratarakchowt'yown, Er&an, 1976:
3. Ezekyan L., Hayereni gorc'ar'akan otwery', Er&an, «Nairi», 2003:
4. Zohrap G., Erkeri jhoghovac'ow, h. 2, Er&an, 1962:

5. Hambard'owmyan D., Gegharvestakan steghc'agorc'owt'yowny' & nra t'argmanowt'yowny' orpes banasirakan hamalir qnnowt'yan ar'arka, Er&an, 2008:
6. Hay groghnery' gegharvestakan t'argmanowt'yan masin, M. V. Maqsapetyan, Er&an 1985t'., Medias and Culture, vol. 33, 2012:
7. Haqsli Leonard O'ldos, Chqnagh nor Ashxarh, «Zangak» hratarakchowt'yown, Er&an, 2017. T'argmanowt'yownn anglerenic' Lilit' Hayrapetyani (ays vepi hatvac'neri e'jery' te's bnagrayin & t'argmanowt'yan mejberowmnerin kic):
8. Sheqspir, Hamlet, Danemarqi ishxan, anglierenic t'argmanec Hovhannes Xan Masehyan, T'iflis, 1894, e'j 23–26
9. Patkanyan R'., Lezvi hamar inch o'gowt owni t'argmanowt'yowny', 1857 (Erkeri jhoghovac'ow, h. 5, Er&an, 1968):
10. Jahowkyan G. B., Lezvabanowt'yan patmowt'yown, hator II, Er&an, EPH, 1962:
11. Huxley 1932 – Huxley A. Brave New World. Stuttgart: Reclam, 1932 (ays vepi hatvac'neri e'jery' te's bnagrayin & t'argmanowt'yan mejberowmnerin kic):
12. Komissarov V.N. Sovremennoe perevodovedenie. Uchebnoe posobie, Izdatel'stvo «JeTS», Moskva, 2001:
13. Semjonov A.N, SEMIOTICHESKIY ANALIZ TEKSTA, Obrazovanie Jugorii: nauchno-metodicheskij zhurnal. Vypusk № 3 /41/ 2016:

АСМИК ЧАТУНЦ - ЯЗЫКОВЫЕ ЗНАКИ В РОМАНЕ ОЛДОСА ХАКСЛИ «О ДИВНЫЙ НОВЫЙ МИР» И ИХ РАСШИФРОВКА В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ

Ключевые слова: *Олдос Хаксли, «О дивный новый мир», перевод, переводоведение, знак, антиутопия, иконичность, семиотика, условные знаки, контекстные знаки, семиотическое переводоведение.*

Предметом статьи является семиотический и переводоведческий анализ романа Олдоса Хаксли - «О дивный новый мир», и его армянского перевода. Цель анализа - выяснить, как влияет созданный автором семиотический контекст на процесс перевода языковых знаков, а также выделить языковые знаки, представляющие большой интерес с точки зрения переводоведения и семиотики, проанализировать их расшифровку в армянском переводе. В статье исследуются три группы символов, присутствующие в романе: иконы, условные знаки, контекстные знаки. Сравнительный анализ исходного текста и перевода выполняется в

рамках относительно новой междисциплинарной области - семиотического переводоведения. Благодаря изучению знаков, семиозиса (процесса знакотворчества), а также семиотического контекста созданного автором, раскрываются более глубокие аспекты перевода. Мы находим ответы на многие вопросы, решения многих проблем, которые невозможно объяснить, доказать или решить с помощью чисто переводоведческого или лингвистического подхода.

HASMIK TSHATUNTS - THE LINGUISTIC SIGNS IN ALDOS HUXLEY'S NOVEL "BRAVE NEW WORLD" AND THEIR DECODING IN ARMENIAN TRANSLATION

Keywords: *Aldous Huxley, "Brave New World", translation, translatology, sign, dystopia, iconicity, semiotics, conventional signs, contextual signs, semiotic translatology.*

The subject of the article is the semiological-translatological analysis of Aldous Huxley's novel "Brave New World" and its Armenian translation. The aim of the analysis is to find out what effect the semiotic context, created by the author, has on the translation process of linguistic signs, as well as to distinguish the linguistic signs that are of great interest from the point of view of translatology and semiotics, to find out how they are decoded in target language. The article examines the three symbol groups which are present in the novel: icons, conventional signs, contextual signs. Comparative analysis of the original text and the translation is performed in the frames of a relatively new interdisciplinary field - semiotic translatology. Through the study of the signs, semiosis (sign-making process) as well as the sign context created by the author, the deeper aspects of the translation are revealed. We find out the answers to many questions, the solutions of many problems, that cannot be explained, proved or solved by a purely translational and linguistic approach.

Ներկայացվել է՝ 05.10.2020

Գրախոսվել է՝ 01.10.2020

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի հաղորդակցման և թարգմանության
ամբիոնի կողմից՝ 04.10.2020

LINGUO-PRAGMATIC STUDY OF THE SPEECH OF ARMENIAN PATIENTS
WITH SEMANTIC DEMENTIA

LILIT MOVSESYAN
NYARD GHAZARYAN

Keywords: *dementia, semantic dementia, semantic memory, semantic knowledge, conceptual knowledge, language impairment, verbal and non-verbal domains*

ABSTRACT

Semantic Dementia (hereafter SD), also called progressive fluent aphasia, is a progressive loss of semantic and conceptual knowledge. It affects performance on all tasks that require the access to or manipulation of word meanings, leading to extremely poor picture-naming skills and severely impaired verbal fluency. In contrast, sentence grammar and discourse are relatively preserved although disrupted by the prevalence of word-finding difficulties. Due to the deterioration of conceptual knowledge, reading comprehension and written communication are also impaired. This paper identifies the impact of dementia on verbal and non-verbal domains through the study of Armenian SD patients' speech peculiarities. The findings of questionnaires processed by SD patients' caregivers are discussed here to pinpoint the semantic and pragmatic aspects of SD impacts.

INTRODUCTION

The term "dementia", marked by the development of multiple cognitive deficits (such as *memory impairment, aphasia, and the inability to plan and initiate complex behavior*), is used to describe a collection of symptoms that may include *memory loss, planning, problem-solving, language, communication, reasoning difficulties* along with *changes in mood or behavior*. There is often an associated determination in the person's ability to carry out activities of daily living. Dementia is not a normal part of ageing. It occurs when *the brain is affected by a disease*.

There are many types of dementia, the most common ones are:

- *Alzheimer's disease (AD)*
- *vascular dementia*
- *dementia with Lewy bodies*
- *semantic dementia*

- *mixed dementia*(<https://www.healthline.com/health/dementia#types>).

SD is one of the three canonical clinical syndromes associated with frontotemporal lobar degeneration (FTLD) with the other two being frontotemporal dementia and progressive non-fluent aphasia.

Table 1. Types of Primary Progressive Aphasia (PPA) -- Clinical Features(Harciarek, Kertesz 2011).

Non-fluent PPA	Logopenic PPA	Semantic PPA
The speech sounds slurred. The voice changes.	Impaired repetition	Aphasia is a disorder of language, and there are several variants of primary progressive aphasia (PPA) where language declines slowly and in a manner that affects a particular aspect of language.
The speech gradually becomes slower and slower.	Phonological speech errors	Alzheimer's Disease (AD or Alz) is an age-related, non-reversible brain disorder that develops over a period of years.
Difficulty with pronouncing or mixing up sounds in familiar words	Poor comprehension of complex sentences	<p>Symptoms of Alzheimer's disease are:</p> <ol style="list-style-type: none"> 1. Difficulty in completing familiar tasks 2. Confusion with time or place 3. Changes in mood and personality <p>Symptoms of Semantic PPA are:</p> <ol style="list-style-type: none"> 1. Naming impairment 2. Difficulty in understanding words and objects 3. Difficulty in reading the vocabulary words

In general, AD is referred to as disorder affecting mainly *episodic memory*, defined as the memory related to specific, personal events distinct for each individual. Semantic dementia generally affects *semantic memory*, which refers to long-term memory that deals with common knowledge and facts.

This paper discusses SD in the light of the language impairments based on the study of the “disease profile” of the SD patients residing in Armenia. This is a challenging yet actual topic with inadequate attention paid to in Armenia. The number of people in Armenia with Alzheimer’s disease is expected to grow exponentially in the coming decades. Currently, around 14.4% of Armenia’s population is already over the age of 60. By 2050, 31.5% of Armenia’s population will be over the age of 60. With an aging population, AD and other dementias are prevalent and on the rise in Armenia, but the lack of information and education regarding diagnosis, care and treatment creates many challenges for those living with the disease and their loved ones (<https://www.alzheimerscarearmenia.org>).

HISTORICAL BACKGROUND

Until the end of the 19th century “dementia” was a much broader clinical concept. It included mental illness and any type of psychological incapacity, including conditions that could be reversed. Dementia at this type simply referred to anyone who had lost the ability to reason and it was applied equally to psychosis of mental illness, “organic” diseases that destroy the brain, and to the dementia associated with old age which was attributed to “hardening of the arteries”.

One of the earliest known allusions to dementia is attributed to the 7th century BC, Greek philosopher Pythagoras, who divided the human lifespan into six distinct phases, which were:

1. 0-6 (infancy)
2. 7-21 (adolescence)
3. 22-49 (young adulthood)
4. 50-62 (middle age)
5. 63-79 (old age)
6. 80–death (advanced age).

The last two he described as the “senium”- a period of mental and physical decay, and of the phases being where “the scene of mortal existence closes after a great length of time that very fortunately, few of human species arrive at, where the mind is reduced to the first epoch of infancy (Newman 1998:173).

Aristotle and Plato from Ancient Greece spoke of a mental decay of advanced age, but apparently simply viewed it as an inevitable process that affected all old men, and which nothing could prevent. Plato stated that the elderly were unsuited for any position of responsibility because there is not much acumen of the mind that once carried them in their youth, those

characteristic would call judgement, power of reasoning and memory. They see them gradually blunted by deterioration and can hardly fulfill their function(Papavramidou 2018:1).

During the 19th century doctors gradually came to believe that dementia in the elderly was the result of cerebral atherosclerosis, although opinions fluctuated between the idea that it was due to blockage of the major arteries supplying the brain or small strokes within the vessels of the cerebral cortex.

This viewpoint remained conventional medical wisdom through the first half of the 20th century, but by the 1960s it was increasingly challenged as the link between neurogenerative diseases and age-related cognitive decline was established.

By the 1970s the medical community maintained that vascular dementia was rarer than previously thought and Alzheimer's disease caused the vast majority of mental impairments in old age. More recently, however, it is believed that dementia is often a mixture of both conditions (Newman 1998:189).

METHODS

To find SD patients in Armenia, call for survey participation was shared via social mediato target SD caregivers. Pretty soon we got feedbacks from people suggesting assistance for our research. Some doctors reached out to guide us throughthe study of SD. We joined the Alzheimer's community in Armenia to cooperate with them and attend related trainings.


Interviewing SD patientscame to be challenging and almost impossible. Some families were against our idea of coming into contact with their patients considering emotionally complicated and aggressively hard psychological sides of this disease. There was no way out but to create a questionnaire to be processed by the patients' relatives living under the same roof with them.

There were six general questions given in the questionnaire with predefined objectives to:


1. reveal the complete absence of some common words or expressions in the patient's speech and identify their possible substitution,
2. discuss the formation of thought, underline frequently usedsentence types,
3. interpret the patients' perception of speech,
4. spotcontextually irrelevant words in the patients'lexicon,
5. report the frequent usage of some favorite phrases or expressions and non-verbal means of communication,

6. illustrate an interesting case for the patients' "linguocognitive behavior".


PROFILE OF 10 SD PATIENTS



Ch.1



Ch.2



Ch.3

ANALYSIS

- Difficulty with naming objects, phenomenon, people
- Selectively worse concrete word knowledge and association
- Retained knowledge and understanding of abstract words

Some specific words and expressions are totally missing in SD patients' lexicon being replaced by general terms, associations or descriptions.

*e.g. coffee- 1.black drink
2.something which [I] drink with chocolate
mirror - monster(the patient's appearance-based self-association with monster)*

SD patients forget the names of their relatives and instead name them through interesting associations because they have difficulties with memorizing the faces even of their close people.

*e.g. neighbor's son - Uncle
daughter - 1. daughter-in-law
2. birdie
sister - Stranger*

As seen, instead of a concrete word, patients with SD would often use other terms with broader meaning either related or not, or they may try to describe the subject or phenomenon with some of its core features (with sensory perception: look, taste, smell, touch, sound) to make others understand them.

- Single word comprehension
- Categorization of uses and features of objects

SD patients have difficulties with the formation of thought. They start with a specific topic and then provide an unexpectedly different ending. Their utterances are incomplete. There is no cohesion. The sentence comprehension is diminished.

We are to note that the language production and perception in case of SD patients is gradually getting back to the status of a child's language level, to the point where it has started to develop (Steinberg, Sciarini 2006:3). As observed, one-word sentences prevail in their speech.

e.g. water-instead of "Give me water."

Like children, SD patients communicate with the world with too simple and easy words.

e.g. *boy, girl, man- instead of naming the person.*

- Ability to discern syntactic violations and comprehend sentences with minimal lexical demands

SD patients display difficulties with the perception of quick speech. Short and simply structured sentences are much easier for them to understand than the long and compound ones. They may have no idea of what is being shown and reported on TV, as the delivered speech is too fast for them to catch it.

- Occupations tracked through SD patients' vocabulary

SD patients more often use those expressions which once were their favorite ones before the diagnosis of the disease. It is widely known that people's occupation impacts their vocabulary and our observation comes to show that it keeps its mark on SD as well.

For instance, the word "*coffee*" and the utterance "*I have not drunk any coffee today*" were frequently observed in one of the SD patient's speech who had been holding the role of housewife all her life.

Another example, citations to Armenian poets were often given by one of the SD patients being a former teacher of Armenian literature:

e.g. "*It is the work which is immortal.../Գործն է անմահ...*"
"*Frankly speaking, I'm tired.../Անկեղծ ասած ես հոգնել եմ...*".

- "The last hurrah"

At some unexpected point of time these patients could remember everything and switch back to reality, i.e. they experience temporary memory recovery. But unfortunately this would last only for a few minutes. What is interesting is that they have temporal recovery of memory loss after facing some emotional shock. For example, when one of the patients met her grandson after so many years of departure, she got so emotional that she did not only remember her relatives but also told them that she had much missed them. The warmest and sweetest feelings towards her grandson and the strongest desire to see him after so many years resulted in memory momentary recovery magic.

The other patient once could remember his granddaughter and give her advice on pursuing her dreams. There is an interesting finding to mention; in observed SD cases, the emotional triggers for memory recovery were the patients' children or grandchildren.

This phenomenon goes by different names, it is called “the last hurrah”, “the final goodbye” or “the end-of- life rally”. More recently it has been given the name of “terminal lucidity” by Michael Nahm, a German researcher and biologist. Terminal lucidity applies to someone who is close to death and has been unresponsive, yet will suddenly show a marked improvement in their energy and mental functioning. They will engage in meaningful conversation with others and even ask for food or drink. They appear to be their old selves (Nahm 2011:138).

- Switching back to the past

SD patients’ brain often switches to past and for them there is no present. This phenomenon is covered in the article “*Passage of time: why people with dementia switch back to the past*” by Hannah Keage, Tobias Loetscher (Keage, Loetscher 2015). They discuss that the experience from past remains in the patients’ brains and as the part of their life is completely removed from their memory, they often switch back to past thinking it is the reality they live in. Here it says that people with dementia live in past because they lost one important part of their life and their brain remained in the past. It is easier for them to remember what happened to them when they were a child, but may be rather hard for them to figure out what happened a minute ago. For that reason they often remember dead people thinking that they are alive and yet do not recognize people who are alive. The past time dominates in their brain and for that reason what happened in past is the only present reality for them.

- “It feels cold.”

One of the SD patients often says “*It feels cold*”, no matter what the weather is inside or outside at that very time. Dr. Frederic Calon from University Laval, Canada, has published an article about how body temperature is linked to dementia. For his research, he used mice and it turned out mice with dementia not only lost weight but also temperature. He drew a conclusion that people with dementia often feel cold and it is connected with normal ageing (<https://www.ulaval.ca>).

DISCUSSION AND CONCLUSION

The study of SD patients living in Armenia displays that they generally have difficulty in generating familiar words or recognizing familiar objects and faces. There are some basic words and expressions completely removed from their lexicon. Most patients may often describe an object or a phenomenon in other words but they will hardly name it directly. They are more likely to use

words with general reference (broader referential meaning, hypernyms) or describe the subject or phenomenon with some of its core features with the sensory perception. Patients have difficulty with the formation of thought and with the comprehension of quick speech.

Alzheimer's disease and other types of dementia are prevalent and on the rise in Armenia. Here we need to raise awareness and find solutions for the care and treatment of people with AD or SD. The elderly people with dementia are at a greater risk of abuse and neglect because of the lack of education and training of their family caregivers in Armenia. Increasing visibility about dementias in Armenia is the first step to address this mistreatment of the elders with dementia. It is important to realize that patience and sympathy are key for dementia caregivers.

REFERENCES

1. Harciarek M., Kertesz A. Primary progressive aphasia and their contribution to the contemporary knowledge about the brain-language relationship. Poland: Department of Social Sciences, University of Gdansk. 2011. pp. 271-287.
2. Keage H., Loetscher T. Passage of time: why people with dementia switch back to the past? *The Conversation*. 2015. Web: <https://theconversation.com>
3. Kempler D., Zelinski M. Language in dementia and normal aging. 1994. Web: <https://www.researchgate.net>.
4. Nahm M., Greyson B., Kelly E., Haraldsson E. Terminal lucidity: A review and a case collection. *Archives of gerontology and geriatrics*. 55. 2011. pp. 138-142.
5. Newman H. *What did people think of dementia in the past? Evolution in the Conceptualization of Dementia and Alzheimer's Disease: Greco-Roman Period to the 1960s*, *Neurobiology of Aging*. 1998. pp. 173-189.
6. Papavramidou N. The ancient history of dementia. *Neurological Sciences*. 39. 2018. pp. 1-6.
7. Steinberg D. Sciarini N. *An introduction to Psycholinguistics*. 2nd edition, Great Britain: © Pearson Education Limited. 2006. pp. 3-10.

URLs

8. <https://www.healthline.com/health/dementia#types>
9. <https://www.alzheimerscarearmenia.org>

10. <https://www.ulaval.ca/en/about-us/media-centre/press-releases/press-releases-2016/drop-body-temperature-associated-aging-could-aggravate-manifestations-alzheimers-disease>

ԼԻԼԻԹ ՄՈՎՍԵՍՅԱՆ, ՆՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ - ԻՄԱՍՏԱՅԻՆ ԹՈՒԼԱՄՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր՝ թուլամտություն(դեմենցիա), իմաստային դեմենցիա, իմաստային հիշողություն, իմաստային գիտելիք, հասկացության գիտելիք, լեզվի խանգարում, լեզվական և ոչ լեզվական տիրույթներ

Իմաստային թուլամտությունը (իմաստային դեմենցիան), որը հայտնի է նաև *շարունակական սահուն աֆազիա* անվամբ, իմաստային և հասկացության գիտելիքների պարբերաբար դրսևորվող կորուստն է: Իմաստային դեմենցիան ազդում է այն բոլոր առաջադրանքների իրագործման վրա, որոնց դեպքում անհրաժեշտ է բառային իմաստի կամ դրա շահարկման գործնական իմացություն. արդյունքում ձևավորվում է օբյեկտի, երևույթի կամ անձի անվանման ծայրահեղ վատ պատկեր և բանավոր խոսքի սահունության խստիվ անկում: Նախադասության քերականական կողմն ու խոսույթը համեմատաբար պահպանվում են, չնայած դրսևորվում են համապատասխան բառը դժվարությամբ գտնելու խաթարումներով: Հասկացության գիտելիքի վատթարացումը հանգեցնում է նաև գրավոր տեքստի ընկալման և գրավոր հաղորդակցման խանգարմանը: Սույն հոդվածը վեր է հանում իմաստային դեմենցիայի ազդեցությունը լեզվական և ոչ լեզվական տիրույթների վրա՝ ուսումնասիրելով դեմենցիայով հայ հիվանդների խոսքի առանձնահատկությունները: Այստեղ քննարկվում են նշված հիվանդների խնամակալներին տրամադրած հարցաթերթիկների վերլուծության արդյունքները՝ հիմնավորելու դեմենցիայի ազդեցության իմաստային և գործաբանական կողմերը:

ЛИЛИТ МОВСЕСЯН, НВАРД КАЗАРЯН - ЛИНГВОПРАГМАТИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ РЕЧИ БОЛЬНЫХ С СЕМАНТИЧЕСКОЙ ДЕМЕНЦИЕЙ В АРМЕНИИ

Ключевые слова: деменция, семантическая деменция, семантическая память, семантические знания, концептуальные знания, языковые нарушения, вербальные и невербальные области

Семантическая деменция, также известная как семантический вариант первичной прогрессирующей афазии, - это прогрессирующая

потеря семантических и концептуальных знаний. Это влияет на производительность при выполнении всех задач, требующих доступа к значениям слов или манипулирования ими, что приводит к чрезвычайно плохому именованию объекта, события или человека и серьезному нарушению беглости речи. Грамматика предложений и дискурс относительно сохранены, хотя и проявляются нарушения в виде трудностей с поиском подходящих слов. Из-за ослабления концептуальных знаний также нарушается понимание прочитанного и письменное общение. В этой статье определяется влияние деменции на вербальные и невербальные особенности речи пациентов на армянском языке, рассматриваются результаты анализа анкет, обрабатываемых лицами, ухаживающими за пациентами, с целью обоснования семантических и прагматических аспектов влияния деменции.

Ներկայացվել է՝ 03.10.2020
Գրախոսվել է՝ 29.09.2020

**ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Զ. ՌՈՒԼԻՆԳԻ «ՀԱՐՐԻ ՓՈԹԵՐԸ
ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔԱՐԸ» ՎԵՊՈՒՄ**

ԱՆՆԱ ՇԱՀՐԱԶՅԱՆ

Հիմնաբառեր՝ նորաբանություն, հեղինակային նորաբանություն, բառակապակցություն, ազատ բառակապակցություններ, կայուն բառակապակցություններ, հատուկ կայուն կապակցություններ, դարձվածային միավորներ

Հոդվածի ուսումնասիրության առարկան Զ. Ռոուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում բառակապակցությամբ արտահայտված հեղինակային նորաբանություններն են: Նպատակն է ներկայացնել վեպից դուրս քաղված բառակապակցություն- նորաբանությունները, վերլուծել դրանց կառուցվածքային, իմաստային առանձնահատկությունները, նորաբանության ստեղծման հիմքում ընկած՝ հեղինակի հաղորդակցական մտադրությունն ու այն զուգորդումները, որ նորաբանությունը կարող է առաջացնել ընթերցողի մոտ: Հետազոտության արդյունքում ակնհայտ է դառնում, որ վեպի բառակապակցությամբ արտահայտված հեղինակային նորաբանություններից գրեթե բոլորի հիմքում կազմության միևնույն կաղապարն է, այն է՝ գրեթե բոլոր միավորները գոյականական հատուկ կայուն կապակցություններ են և ունեն իմաստային որոշակի բեռնվածություն ու արտահայտում են հեղինակի՝ ընթերցողի վրա այս կամ այն ազդեցությունը գործելու մտադրությունը:

Լեզուն որպես համակարգ մշտապես աչքի է ընկնում իր ճկունությամբ ու պարբերաբար համալրվելու ունակությամբ: Այս համակարգի ենթահամակարգերի շարքում հատկապես բառապաշարը դինամիկ ու անկայուն բնույթ ունի: Նոր բառային միավորների ծագումն ու կազմությունը պայմանավորված է նոր նշանակյալների անվանման անհրաժեշտությամբ:

Բառային նոր միավորները լեզվում հայտնվում են զանազան պատճառներով և աղբյուրներից, դրանցից որոշները արմատանում են բառապաշարում՝ ստանալով լայն տարածում և կիրառություն գտնելով

լեզվակիրների կողմից, որոշներն էլ ավելի շուտ են մոռացվում կամ մի շարք պատճառներով կարճ «կյանք» են ունենում: Այս միավորները լեզվաբանության տեսության մեջ հայտնի են որպես **նորաբանություններ**՝ հունարեն *neo*՝ նոր և *logos*՝ խոսք բառերից:

Լեզվաբանական գրականության մեջ նորաբանությունների սահմանումները հաճախ նույնական են: Այսպես՝ դրանք հիմնականում սահմանվում են որպես նոր կամ նորաստեղծ բառեր՝ հորինված նոր նշանակյալներ նշանակելու համար, կամ որպես արդեն իսկ գոյություն ունեցող բառերի նոր իմաստներ: Նորաբանության այս սահմանումը կարելի է հանդիպել Ջ. Ալքեոյի (1980), Ա. Ռեյի (1995), Փ. Նյումարքի (1988) և այլ նշանավոր լեզվաբանների աշխատություններում:

Նորաբանությունների հեղինակները հաճախ կոնկրետ անհատներ են, որոնց հորինվածքները հազվադեպ են ընդհանուր կիրառություն գտնում լեզվի բառապաշարում և առավել հաճախ մնում են միայն տվյալ ստեղծագործության մեջ: Նորաբանությունների այս տեսակով՝ **հեղինակային նորաբանություններով** հատկապես աչքի են ընկնում գրական ֆենթազի ժանրի ստեղծագործությունները, որոնցում հորինված, երևակայական իրականության տարրերի անվանման նպատակով հեղինակները նոր միավորներ են ներմուծում՝ ակամայից բառահեղինակներ դառնալով: Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվում են «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի բառակապակցությամբ արտահայտված հեղինակային նորաբանությունները: Քննության են առնվում դրանց կազմության առանձնահատկություններն ու հիմքում ընկած հեղինակի հաղորդակցական նպատակն ու մտադրությունը:

Նորաբանությունների ստեղծման և կազմության գործընթացներին անդրադարձել են մի շարք տեսաբաններ, այդ թվում՝ Մ. Կաբրեն (1999), (2009), Փ. Նյումարքը (1988), Ֆ. Օ'Դելլը (2016): Այս տեսություններից կարելի է վերհանել նորաբանությունների բառաստեղծման հիմնական եղանակները, այդ թվում՝ բառակազմության արդյունավետ եղանակներ (բառակապակցություն, բառաձանցում, բառաբարդում և այլն), իմաստափոխություն (երբ գոյություն ունեցող բառերը սկսում են կիրառվել նոր նշանակությամբ), փոխառություններ և լիովին նորաստեղծ բառեր (երբ նորաբանությունը լիովին նոր, նախկինում չառկայացած հնչյունակազմով է առաջանում):

Հարկ է նշել, որ «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում հանդիպող հեղինակային նորաբանությունների ստեղծման հիմքում կարելի է դիտարկել բոլոր վերոթվարկյալ գործընթացների արդյունքում ստացված լեզվական միավորները: Սույն հոդվածը, սակայն,

կկենտրոնանա միայն բառակապակցությամբ ներկայացվող հեղինակային նորաբանությունների վրա, որոնք ընդամենը դուրս բերված 66 նորաբանություններից 13-ն են: Խնդրո առարկա 13 բառակապակցությունները համարվում են հեղինակային նորաբանություն, որովհետև կազմված են հեղինակի կողմից՝ անվանելու վեպի երևակայական իրողությունները, առարկաները, տեղանքը և այլն, այն է՝ նշանակյալները լիովին նոր են, գոյություն ունեն միայն ուսումնասիրվող վեպում պատկերված իրականության մեջ:

Բառակապակցությունները՝ որպես լեզվական ձևույթներ, սահմանվում են և՛ բառագիտական, և՛ շարահյուսական, և՛ իմաստաբանական ենթագիտակարգային դիրքերից: Լ. Եզեկյանը սահմանում է բառակապակցությունը հետևյալ կերպ. «Բառակապակցությունը երկու կամ ավելի լիմաստ բառերի այնպիսի ստորադասական կապակցություն է, որն ունի անվանողական նշանակություն և հանդես է գալիս որպես նախադասության մեկ անդամ»: (Եզեկյան 2007: 137) Ռ. Գինզբուրգը օգտագործում է «բառախմբեր» կամ «արտահայտություններ» հասկացությունները, որոնք սահմանում է որպես «բառեր, որոնք միացված են՝ բառային միավորներ կազմելու համար»: Ընդ որում, ինչպես նշում է Ռ. Գինզբուրգը, բառախմբերի կառուցվածքային և իմաստային կապակցվածության աստիճանը տարբեր կարող է լինել: Այսպես՝ որոշ բառախմբեր ֆունկցիոնալ և իմաստային առումով անանջատելի են, մինչդեռ այլ դեպքերում բաղադրիչները բառախմբերում ավելի մեծ իմաստային և կառուցվածքային անկախություն են վայելում: (Ginzburg et al 1979: 64) Ի. Առնոլդը տալիս է հետևյալ սահմանումը. «Քերականության մեջ բառակապակցությունը առնվազն երկու լիմաստ բառերի կապակցումն է՝ տվյալ լեզվում գոյություն ունեցող կանոններին համապատասխան, որն արտահայտում է մեկ ամբողջական իմաստ»: Վերջինս նշում է, որ «Ցանկացած լեզվի բառապաշարի հարստացում, այդ թվում՝ անգլերենի, տեղի է ունենում ոչ միայն նոր բառերի կազմության, այլ նաև նոր կայուն արտահայտությունների՝ բառակապակցությունների ավելացման միջոցով»: (Арнольд 2012: 198)

Լեզվաբանական գրականության մեջ բազմաթիվ են նաև բառակապակցությունների դասակարգումները, որոնցից յուրաքանչյուրի հիմքում ընկած է այս կամ այն չափանիշը: Հետազոտության շրջանակներում առաջնորդվում ենք մասնավորապես Ի. Առնոլդի և Ռ. Գինզբուրգի դասակարգումներով: Ի. Առնոլդը նախ և առաջ դասակարգում է բառակապակցությունները՝ **ազատ** և **կայուն** խմբերի: Ազատ են այն բառակապակցությունները, որոնց բաղադրիչները միմյանց

նկատմամբ ազատ հարաբերության մեջ են գտնվում և փոփոխական են: Կայուն են այն կապակցությունները, որոնց բաղադրիչները անփոփոխ են և որոնք արտահայտում են մեկ ընդհանուր իմաստ: Իրենց հերթին կայուն բառակապակցությունները կարող են լինել **ա. հատուկ կայուն կապակցություններ** և **բ. դարձվածային միավորներ**: Առաջին դեպքում բառակապակցությունները հիմնականում անվանական ֆունկցիա են կատարում: Դրանք առավել հաճախ գոյականական կապակցություններ են՝ որոշչով ուղեկցվող գոյական (department store) կամ բայական են (to give a sigh): Դարձվածային միավորները իրենց հերթին աչքի են ընկնում որոշակի ոճական և զգայական երանգավորմամբ (to take to one's heels): (Арнольд 2012: 198-203)

Ռ. Գինզբուրգը տարանջատում է ստորադասական և համադասական բառակապակցությունները: Այսպես, այն բառակապակցությունները, որոնցում առկա է կենտրոնական բաղադրիչ, այսպես կոչված՝ գլխավոր կամ գերադաս անդամ, որին ստորադասվում են մյուս բաղադրիչները՝ կատարելով որոշչի դեր (a red flower)՝ ստորադասական են, մինչդեռ այն կապակցությունները, որոնք չունեն գերադաս անդամ, և որոնց բաղադրիչները համազոր են՝ համադասական են (women and children): Ըստ գերադաս անդամի խոսքմասային պատկանելության՝ Ռ. Գինզբուրգը առանձնացնում է գոյականական, ածականական և բայական կապակցություններ: (Ginzburg et al 1979: 67-68)

Նմանատիպ դասակարգմամբ հանդես է գալիս նաև Ի. Անոլդը՝ բառակապակցությունները դասակարգելով քերականական կառուցվածքի հիմքով: Ըստ գերադաս անդամի խոսքամասային պատկանելության՝ բառակապակցությունները կարող են լինել **ա. գոյականական** (the root of the trouble), **բ. բայական** (to take the bull by the horns), **գ. ածականական** (as good as gold), **դ. մակբայական** (by fair means or foul), **դ. ձայնարկության բնույթի բառակապակցություններ** (Well, I never! My eye and Betty Martin!): (Арнольд 2012: 203-205)

Ռ. Գինզբուրգը անդրադառնում է նաև բառակապակցությունների տարրերի իմաստային և շարահյուսական փոխկապակցվածությանը: Նա որոշ պարզաբանումներ է անում՝ կապված բառակապակցությունների շարահյուսական կառուցվածքի հետ: Այսպես, լեզվաբանը տարբերակում է բառակապակցությունների բանաձևերը և կաղապարները: Բառակապակցությունների բանաձևերը կարող են ունենալ հետևյալ տեսքը՝ Ա. Adj+N, Բ. V+N, որտեղ շեշտադրվում է կապակցությունների բաղադրիչների դասավորությունն ու խոսքամասային

պատկանելությունը:¹ Կաղապարներում, այնուամենայնիվ, հստակ երևում է բառակապակցության գերադաս անդամը (to build+N): Գերադաս անդամի իմաստը, սակայն, կարող է փոխվել՝ կախված բառակապակցության կաղապարից: Այսպես օրինակ՝ “to get a letter” և “to get to Moscow” բառակապակցություններում “to get” գերադաս անդամը արտահայտում է միանգամայն տարբեր իմաստներ: (Ginzburg et al 1979: 70-71)

«Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպից վերհանված բառակապակցություն-նորաբանություններում կարելի է դիտարկել հետևյալ բանաձևերն ու կաղապարները.

1. Adj+N

Այսպես, “Bloody Baron”, “Leaky Cauldron”, “Daily Prophet” բառակապակցությունների կազմության մեջ հեղինակը օգտագործել է միևնույն կաղապարը: Երեք դեպքում էլ բառակապակցությունները հատուկ կայուն կապակցություններ են, քանի որ անվանումներ են և մատնանշում են անձ, տեղանք կամ իր: Բառակապակցությունները ստորադասական են և քերականական կառույցի տեսանկյունից՝ գոյականական, քանի որ գերադաս անդամները երեք դեպքում էլ գոյականներ են, որոնք ուղեկցվում են որոշչով: Բառակապակցությունների կաղապարները, այսպիսով, հետևյալ տեսքն ունեն. “Adj+Baron”, “Adj+Cauldron”, “Adj+Prophet”: Հատկանշական է այն, որ հեղինակի ստեղծարարությունը նորաբանությունները հորինելիս հստակ պատճառաբանվածություն է ենթադրում: Լեզվական միավորները, այսպիսով, պատահական ընտրված անվանումներ չեն՝ մատնանշելու վեպում պատկերված երևակայական իրականության իրողությունները, այլ՝ դրանց ընտրության մեջ նկատելի է հեղինակի՝ ընթերցողի մոտ համապատասխան զուգորդումները արթնացնելու մտադրությունը:

“Bloody Baron” մականունով են, օրինակ կոչում կախարդությունների դպրոց Հոգվորթսում շրջող ուրվականին: “Bloody”՝ «արյունոտ» և “baron”՝ «բարոն» բաղադրիչներով բառակապակցության կազմությունը կապվում է այն փաստի հետ, որ ուրվականը վեպում

¹Հոդվածում օգտագործված խոսքամասային հապավումները հետևյալն են.

N=Noun (Գոյական)

V=Verb (Բայ)

Adj=Adjective (Ածական)

A=Adverb (Մակբայ)

PI=Participle I (Ենթակայական դերբայ)

Prep=Preposition (Լախդիր)

Conj=Conjunction (Շաղկապ)

ներկայացվում է ամբողջովին արյունով ծածկված և սարսափազդու կերպարով:

*“Peeves’, he said, in a hoarse whisper, ‘the **Bloody Baron** has his own reasons for being invisible”.* (PS 2014: 294)

“Leaky Cauldron” անունն է կրում Լոնդոնում գտնվող հորինված պանդոկ-հյուրանոցը կախարդների համար: “Cauldron” բառն ունի «կաթսա» նշանակությունը, և պանդոկի անվանումը կապվում է վերջինիս ինտերիերի կարևորագույն մասնիկի՝ այնտեղ գտնվող վիթխարի կաթսայի հետ: “Leaky Cauldron” նորաբանությամբ Ջ. Ռոուլինգը ընթերցողի մոտ ստեղծում է հենց պանդոկային տրամադրություն. այն շատ տիպիկ ասոցացիա է ստեղծում հնամաշ այդ պանդոկի հետ, որտեղ հիմնականում հավաքվում են հարբելու:

*“This is it,’ said Hagrid, coming to a halt, ‘the **Leaky Cauldron**. It’s a famous place.”* (PS 2014: 73)

“Daily Prophet” բառակապակցությամբ անվանվում է մոգական աշխարհում հայտնի լրագիրը: Նորաբանությունը Ջ. Ռոուլինգը ստեղծել է “Daily News”, “Daily Mail” և լրագրերին հատուկ այլ անունների ու կաղապարների համանմանությամբ: Միևնույն ժամանակ այն աչքի է ընկնում որոշակի մոգական երանգով, քանի որ “prophet” բառն ունի «գուշակ, մարգարե» իմաստները:

*“Harry sat and thought about this while Hagrid read his newspaper, the **Daily Prophet**”.* (PS 2014: 69)

2. A+Adj+N

Այս բանաձևը “Nearly Headless Nick” նորաբանության հիմքում է: Տվյալ դեպքում գերադաս անդամը “Nick” գոյականն է, որը կրկին ուղեկցվում է որոշչով՝ “headless” ածականով, որը, թերևս, նույնպես հանդես է գալիս որոշչով՝ “nearly” մակբայով: Բառակապակցությունը հատուկ կայուն կապակցություն է, որը անվանական ֆունկցիա է կատարում, իսկ գերադաս անդամի համար որոշչի դեր կատարող մակբայ-ածական կառույցը նկարագրական գործառույթ է իրականացնում՝ նշանակյալի որոշակի ֆիզիկական հատկանիշներին ուղիղ հղում անելով:

*“I know who you are!’ said Ron suddenly. ‘My brothers told me about you – you’re **Nearly Headless Nick!**’”* (PS 2014: 132)

“Nearly Headless Nick” «Գրեթե Անգլուխ Նիք» մականունով էին դիմում Հոգվորթսում շրջող գրիֆինդորցի ուրվականին: Պատճառն այն է, որ, նրան փորձել են գլխատել, և գործը կիսատ է մնացել, և արդեն հինգ հարյուր տարի է, նա կիսաանգլուխ շրջում է Հոգվորթսի պատերի

ներսում՝ սրտնեղելով ամեն անգամ, երբ գլուխը անջատվում է պարանոցից և մի կողմի վրա շրջվում:

3. N+Adj

*“Bet it’s that one behind the statue of **Gregory the Smarmy** that we found in our first week. See you”*. (PS 2014: 164)

“Gregory the Smarmy” բառակապակցությունը նախորդ գոյականական կապակցություններից տարբերվում է շարադասության տեսանկյունից: Այնուամենայնիվ, անկախ բաղադրիչների հերթականությունից՝ բառակապակցության գերադաս անդամը կրկին գոյական է, ուստի վերջինս հատուկ կայուն, գոյականական կապակցություն է: Բառակապակցությունն ունի հետևյալ կաղապարը՝ “Gregory+Adj”: Գերադաս անդամի որոշի դերը կատարում է “Smarmy” ածականը, և այս նորաբանության դեպքում ևս հեղինակը նկարագրական անվանում է հորինել՝ կերպարի բնորոշ հատկանիշները մատնանշելու նպատակով: “Smarmy” ածականն ունի «շողոքորթ» նշանակությունը, և թեև մեծ քանակությամբ տեղեկատվություն անհնար է ստանալ կերպարի մասին, պարզվում է, որ նա միջնադարյան բրիտանական կախարդ է, որը հայտնի է “Gregory’s Unctuous Unction” թուրմի պատրաստմամբ: Թուրմի կախարդական հատկությունն այն է, որ խմողը սկսում է կարծել, թե թուրմն իրեն տվողն իր լավ բարեկամն է, ուստի վերջինս շողոքորթ է, ինչի մասին էլ հուշում է հեղինակային այս նորաբանությունը: (harrypotter.fandom.com)

4. N+N

*“Mr. and Mrs. Dursley, of number four, **Privet Drive**, were proud to say that they were perfectly normal, thank you very much”*. (PS 2014: 1)

“Privet Drive” բառակապակցությունը ստորադասական կապակցություն է, որում գերադաս բաղադրիչը “Drive” գոյականն է: Գոյականական այս կառույցում, ուստի, որոշի դերը իրականացվում է ևս գոյականի միջոցով: Նորաբանությունը հատուկ կայուն բառակապակցություն է, որը վեպում փողոցի անուն է: Փողոցի այս անվանման ընտրությունը հեղինակի կողմից նույնպես ունի իր բացատրությունը: Այս անվանումն է կրում այն փողոցը, որում բնակվում էին տխրահոշակ Դըրզլիները՝ Հարրի Փոթերին որդեգրած ընտանիքը: “Privet” լատիներեն “*Ligustrum vulgare*” թուփը ձիթազգիների ընտանիքից է: Հեղինակի բնորոշմամբ՝ նա օգտագործել է արվարձաններում աճող այս թփի անվանումը, որը կոկիկ ցանկապատում է շատ անգլիական տների այգիներ: Այս կերպ ստեղծվում է մտապատկեր՝ մի կողմից՝ ծայրամասային բնակավայրի, իսկ մյուս

կողմից՝ կախարդական աշխարհից պատասպարման, մեկուսացման: (wizardingworld.com)

5. N's+N

Վերոնշյալ բանաձևն ընկած է նաև “Godric’s Hollow”, “Hog’s Head” և “Devil’s Snare” բառակապակցությունների հիմքում: Տարբերությունն այն է, որ, ի հակադրություն նախորդ կաղապարի, այս դեպքերում կապակցությունների գերադաս անդամին ուղեկցող գոյական-բաղադրիչները ստացական հոլովով են և հանդես են գալիս որպես հատկացուցիչ:

*‘What they’re saying’, she pressed on, ‘is that last night Voldemort turned up in **Godric’s Hollow**. He went to find the Potters. ’* (PS 2014: 12)

“Godric’s Hollow” «Գոդրիքի Հովիտը» իր անունը ստացել է Գոդրիք Գրիֆինդորից՝ Հոգվորթսի հիմնադիրներից մեկից: «Գոդրիք» տղամարդու անունն անգլոսաքսոնական ծագում ունի: Հին անգլերենում վերջինս ծագում է “god” «աստված» և “ric” «ուժ, հզորություն» բառերից՝ նշանակելով «աստծո ուժ»: (nordicnames.de)

*“It’s not that unusual, yeh get a lot o’funny folk in the **Hog’s Head** – that’s one of the pubs down in the village”.* (PS 2014: 285)

“Hog’s Head” նորաբանությամբ անվանվող հաջորդ պանդոկի անվան ընտրությունը ևս որոշակի դիտավորություն է պարունակում հեղինակի կողմից: Այն այնքան կեղտոտ է, որ հատակը գրեթե անտեսանելի է կեղտի տակ: Զարմանալի չէ, որ պանդոկի դռան վրա կախված է մի մաշված փայտե ցուցանակ, որի վրա վայրի խոզի գլուխ է, որից արյունը ծորում է դրա շուրջը փաթաթված սպիտակ կտորի վրա: (hp-lexicon.org) Այստեղից էլ պանդոկը ստանում է իր անունը՝ “Hog’s Head” «խոզի գլուխ»:

*“**Devil’s Snare**, Devil’s Snare ... What did professor Sprout say? It likes the dark and the damp –”.* (PS 2014: 298)

“Devil’s Snare” նորաբանությունը հեղինակի կողմից գործածված է՝ անվանելու կախարդական բույսը, որը սկսում է փաթաթվել այն ամենի վրա, ինչ դիպում է իրեն և տարածվել: Հաշվի առնելով բույսի հատկությունները՝ Ջ. Ռոուլինգը միանգամայն նկարագրական անվանում է հորինել՝ այն նշանակելու համար: Բառակապակցությունը թարգմանաբար «Սատանայի ծուղակ» է նշանակում:

6. N+prep+PI+N

Այս բանաձևով է կազմված “Draught of Living Death” նորաբանություն- բառակապակցությունը: Բառակապակցության կաղապարում՝ “Draught+prep+PI+N”, գերադաս անդամը “Draught” գոյականն է:

*“Sit down”, he snapped at Hermione. ‘For your information, Potter, , asphodel and wormwood make a sleeping potion so powerful it is known as the **Draught of Living Death**.’.* (PS 2014: 147)

Որպես թուրմի անվանում՝ բառակապակցությունը հատուկ կայուն կապակցություն է: “Draught” գերադաս բաղադրիչն ուղեկցվում է համապատասխան լրացումներով:

“Draught of Living Death” «կենդանի մեռելների ըմպելիք» թուրմի անվանումն արտահայտում է այն փաստը, որ թուրմը այնպիսի խորը քուն է բերում այն խնոզներին, որ նրանք մահացած են թվում: Այստեղից էլ ծագում է վերջինիս անվանումը:

7. PI+N

Այս բանաձևը դիտարկվում է “PI+Hat” կաղապարում: Քերականական կառույցը գոյականական է: Բառակապակցության գերադաս անդամը “hat” գոյականն է, որն ուղեկցվում է որոշի դերում հանդես եկող ենթակայական դերբայով՝ “sorting”:
Բառակապակցությունը կրկին հատուկ կայուն կապակցություն է, քանի որ անվանում է մի նշանակյալ, որը հեղինակային երևակայական իր է:

*“Oh, you may not think I’m pretty,
But don’t judge on what you see,
I’ll eat myself if you can find
A smarter hat than me.*

*You can keep your bowlers back,
Your top hats sleek and tall,*

*For I’m the Hogwarts **Sorting Hat***

And I can cap them all..’. (PS 2014: 125)

Խոսքը «Բաշխիչ գլխարկ»-ի մասին է, որը Հոգվորթսի ուսանողները դնում են իրենց գլխին բաշխման արարողության ժամանակ, որպեսզի գլխարկը որոշի, թե որ ֆակուլտետում են իրենք սովորելու:

PI+N բանաձևը ընկած է նաև “Gallopin’ Gorgons” նորաբանություն-բառակապակցության հիմքում: Այս դեպքում, այնուամենայնիվ, գործ ունենք ձայնարկության բնույթի բառակապակցության հետ՝ ըստ Ի. Առնոլդի դասակարգման:

“Gallopin’ Gorgons, that reminds me’, said Hagrid, clapping a hand to his forehead with enough force to knock over a cart horse, and from yet another pocket inside his overcoat he pulled an owl – a real, live, rather ruffled-looking owl – a long quill and a roll of parchment”. (PS 2014: 56)

Բառակապակցությամբ արտահայտված հեղինակային այս նորաբանությունը բացականչություն է: “Gallop” բայը նշանակում է

«քառատրոփ արշավել»: Քաջատեղյակ լինելով հունահռոմեական դիցաբանությանը՝ Ջ. Ռոուլինգի ստեղծագործության մեջ քիչ չեն ակնարկներն ու հղումները հենց դիցաբանություն: Գորգոնան մեզ հայտնի է հունական դիցաբանությունից: Երեք Գորգոնա քույրերից առավել հայտնի է Մեդուզա Գորգոնան, որ կնոջ դեմքով հրեշ էր, իսկ մազերի փոխարեն՝ օձեր էին, և որը հայացքով քարացնում էր իր աչքերի մեջ նայողներին: Այս կերպարանքը Մեդուզա Գորգոնան ստացել էր Աթենասի պատժի արդյունքում, քանի որ վերջինս զայրացել էր այն բանից, որ Պոսեյդոնն իր տաճարում բռնաբարել էր Գորգոնային: Մեդուզան սպանվում է Պերսևսի կողմից: Այդ ժամանակ նա հղի էր Պոսեյդոնից, և երբ Պերսևսը սպանում է նրան Պեգաս անունով թևավոր ձին դուրս է ցատկում նրա մարմնից: Ձիու և Գորգոնայի զուգորդման միակ վկայությունը հունական դիցաբանության մեջ հենց այս դրվագն է, և ամենայն հավանականությամբ հենց սա է ծնունդ տվել Ռոուլինգյան “Galloping Gorgons” նորաբանություն բացականչությանը:

8. N+conj+N

*“They bought Harry’s school books in a shop called **Flourish and Blotts** where the shelves were stacked to the ceiling with books as large as paving stones bound in leather; books the size of postage stamps in covers of silk; books full of peculiar symbols and a few books with nothing in them at all”.* (PS 2014: 86)

“Flourish and Blotts” հատուկ կայուն կապակցությունը, որը վեպում որպես գրախանութի անվանում է հանդես գալիս, վերոնշյալ բառակապակցություններից տարբերվում է իր բաղադրիչների հավասարազորության տեսանկյունից: Այս դեպքում գործ ունենք համադասական բառակապակցության հետ, քանի որ դրա երկու բաղադրիչներն էլ համազոր են և կատարում են նույն գործառույթը, ինչ ամբողջ բառակապակցությունը: Իմաստային պատճառաբանվածության տեսանկյունից աչքի է ընկնում նաև այս նորաբանությունը: Իմաստային զուգորդումն այս դեպքում արտահայտվում է դրա երկու բաղադրիչների միջոցով միաժամանակ: “Flourish” բառը բազմիմաստ է, և դրա նշանակությունների շարքում *գիր* բառի իմաստային դաշտում կարելի է առանձնացնել «պարուրագարդ (ձեռագրի մեջ)» (Ասմանգուլյան 2004: 357) իմաստը, իսկ “blot” բառը, իր հերթին, նշանակում է «թանաքի կաթիլ» (Ասմանգուլյան 2004: 101): Անգլալեզու ընթերցողի դեպքում, հետևաբար, “Flourish and Blotts” նորաբանությունը համապատասխան զուգորդումներն է արթնացնում դրա նշանակյալի՝ գրախանութի հետ: Ընդ որում՝ հեղինակը ստեղծարարություն է ցուցաբերել նաև “blot” բառի կիրառության մեջ՝ կրկնապատկելով “t” հնչյունը:

Ամփոփելով «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպից վերհանված և բառակապակցությամբ արտահայտված հեղինակային նորաբանությունների հետազոտությունը՝ կարելի է փաստել, որ հեղինակային բոլոր նորարարությունները հատուկ կայուն կապակցություններ են. վերջիններս անվանական գործառույթ են կատարում և անփոփոխ, կայուն միասնություններ են: Բառակապակցություններից գրեթե բոլորը ստորադասական են՝ բացառությամբ մեկ համադասական բառակապակցության: Նկատելի է նաև, որ ըստ գերադաս անդամի խոսքամասային պատկանելության 13 բառակապակցություններից 12-ը գոյականական են, և միայն մեկ բառակապակցություն ձայնարկության բնույթի է: Վեպի բառակապակցությամբ արտահայտված հեղինակային բոլոր նորաբանությունների կազմության մեջ ակնհայտ է հեղինակի հաղորդակցական նպատակն ու ընթերցողի վրա որոշակի ազդեցություն գործելու միտումը՝ ուղղված ֆենթըզի ժանրի գրական ստեղծագործության մեջ նկարագրվող իրականության պատշաճ ընկալմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Երևան, 2007, 397 էջ:
2. Арнольд И.В., Лексикология современного английского языка, 2-е изд., Москва: Наука: Флинта, 2012, 377 с.
3. Algeo J., Where do all the new words come from, New York: American Speech, 1980, 55(4), pp. 264–277.
4. Cabré M. T., La Clasificación de Neologismos: Una Tarea Compleja, ALFA: Revista de Lingüística, 50(2), 2009, pp. 229- 250, available online at [<http://seer.fclar.unesp.br/alfa/article/download/1421/1122>]
5. Cabre' M. T., Terminology: Theory, Methods, and Applications, Amsterdam/Philadelphia: John Benjamins, 1999, 247 p.
6. Ginzburg R. S., Khidekel S. S., Knyazeva G. Y., Sankin A. A., A Course in Modern English Lexicology, 2-nd ed., Moscow, 1979, 269 p.
7. Newmark, P., A Textbook of Translation, Shanghai: Shanghai Foreign Language Education Press, 1988, 292 p.
8. O'Dell F., Creating New Words: Affixation in Neologisms, ELT Journal, Vol 7(1), Oxford University Press, January 2016, Web, pp 94-99
9. Rey A., Essays on Terminology, John Benjamins, 1995, 223 p.
10. Rowling J.K., Harry Potter and the Philosophers Stone, Bloomsbury, 2014, 342 p.

11. Ասմանգուլյան Հ.Ա., ՀովհաննիսյանՄ.Ի. խմբ., Անգլերեն-հայերեն բառարան,Երևան,«Հայաստան» հրատարակչություն, 2004, 1144 էջ:
12. Harry Potter Wiki[https://harrypotter.fandom.com/wiki/Gregory the Smarmy](https://harrypotter.fandom.com/wiki/Gregory_the_Smarmy), last retrieved 01.10.2020
13. Wizarding World <https://www.wizardingworld.com/writing-by-jk-rowling/number-four-privet-drive>, last retrieved 01.10.2020
14. Nordic Names, <https://www.nordicnames.de/wiki/Godric>, last retrieved 01.10.2020
15. The Harry Potter Lexicon, <https://www.hp-lexicon.org/place/great-britain-united-kingdom/scotland/hogsmeade/hogs-head/>, last retrieved 01.10.2020

REFERENCES

1. Ezekyan L., Hayoc lezow, Er&an, 2007, 397 e'j
2. Arnol'd I.V., Leksikologija sovremennogo anglijskogo jazyka, 2-e izd., Moskva: Nauka: Flinta, 2012,377 s.
3. Asmangowlyan H.A., HovhannisyanM.I. xmb., Angleren-hayeren bar'aran,Er&an,«Hayastan» hratarakchowt'yown, 2004, 1144 e'j

АННА ШАХБАЗЯН - СТРУКТУРНЫЕ И СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ АВТОРСКИХ НЕОЛОГИЗМОВ, ВЫРАЖЕННЫХ СЛОВСОЧЕТАНИЯМИ, В РОМАНЕ ДЖ. РОУЛИНГ “ГАРРИ ПОТТЕР И ФИЛОСОФСКИЙ КАМЕНЬ”

Ключевые слова: неологизм, авторский неологизм, словосочетание, свободные словосочетания, устойчивые словосочетания, собственно устойчивые сочетания, фразеологические единицы

Предмет исследования статьи - авторские неологизмы в романе Дж. Роулинг “Гарри Поттер и философский камень”, образованные посредством словосочетания. Цель - представить неологизмы-словосочетания романа, проанализировать их структурные и семантические особенности, замысел автора, лежащий в основе создания неологизмов, а также ассоциации, которые неологизмы могут вызвать у читателя. В результате исследования становится очевидным, что почти все авторские неологизмы в романе, образованные посредством словосочетаний, имеют одинаковую структуру, т.е. почти все единицы

являются субстантивными собственно устойчивыми сочетаниями, имеют определенную семантическую нагрузку и выражают намерение автора произвести определенное впечатление на читателя.

ANNA SHAHBAZIAN - STRUCTURAL AND SEMANTIC PECULIARITIES OF AUTHOR NEOLOGISMS-WORD COMBINATIONS IN J.K. ROWLING'S NOVEL "HARRY POTTER AND THE PHILOSOPHER'S STONE"

Keywords: *neologism, author neologism, word combination, free combinations, set expressions, stable phrases, phraseological units*

This article studies author's phraseological neologisms in J. Rowling's novel "Harry Potter and the Philosopher's Stone". The aim is to present the phraseological neologisms, analyze their structural and semantic peculiarities, the intention of the author underlying the creation of the neologisms and the associations that they can evoke in the reader. The analysis of the selected examples proves that almost all the phraseological neologisms in the novel have the same pattern of composition, i.e. almost all the units are nominal proper stable (non-free) phrases, have certain semantic load and express the author's communicative intent to influence the reader.

Ներկայացվել է՝ 05.10.2020

Գրախոսվել է՝ 04.10.2020

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի հաղորդակցման և թարգմանության
ամբիոնի կողմից՝ 04.10.2020

«WHITE FINGERS» ԿԱՄ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ՝ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ
ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

ԱԼԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ փոխաբերություն, աղբյուր-տիրույթ, թիրախ-տիրույթ, գունանուններ, մաշկ, հիվանդություն, կլինիկական նախանշան, ֆիզիկական զննում:

Հայտնի իրողություն է, որ բժշկագիտական անգլալեզու տերմինահամակարգի բաղադրիչային կազմում ընդգրկված միավորները հնարավորություն են ընձեռում բժշկության ոլորտի մասնագետներին՝ մասնագիտական գործունեության ընթացքում հաղորդել նեղ-մասնագիտական տեղեկություններ, խոսքայնացնել կլինիկական իրողություններ, անվանել ախտաբանական երևույթներ: Տվյալ պարագայում տերմինը ճանաչողական-տեղեկատվական տարր է, որն ունի որոշարկված լեզվական ձև, շրջանակ և որում խտացման հիմքով կուտակված է անհատի գիտական փորձառությունն ու մասնագիտական գիտելիքը՝ միևնույն ժամանակ երևան բերելով անհատի լեզվաճանաչողության և մշակութային աշխարհընկալման առանձնահատկությունները: Բժշկագիտական գրականության լայնածավալ ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ, հունալատինական տերմիններից զատ, այն հազեցած է նաև փոխաբերության հենքով ստեղծված մասնագիտական տերմիններով:

Ըստ այդմ, սույն հետազոտության **առարկան է** բժշկագիտության նեղ մասնագիտական ոլորտներում օգտագործվող փոխաբերական միավորները, որոնք անվանում են հիվանդություն կամ կլինիկական ախտաբանություն: Սույն հոդվածի շրջանակում քննարկվում է գունանուններով որոշարկված փոխաբերական միավորների կիրառելիությունը բժշկագիտության ոլորտում՝ որպես ախտորոշիչ գործիքակազմի արդյունավետ լեզվաբաղադրիչ:

Հետազոտության **արդիականությունը** և **կարևորությունը** պայմանավորված է անգլալեզու բժշկագիտական տերմինների ձևավորման և գործառության առանձնահատկությունների զարգացման հարացույցում փոխաբերություն երևույթի ոչ բավարար ուսումնասիրությամբ, ինչպես նաև բժշկագիտության ասպարեզում փոխաբերական միավորների գործածության վերաբերյալ

հետազոտական աշխատանքների սակավությամբ: Հոդվածի հիմնական **նպատակն է** վեր հանել գունաններով որոշարկված փոխաբերական այն միավորները, որոնք հատկապես հաճախադեպ են բժշկության նեղ մասնագիտական մի շարք ոլորտներում և ուսումնասիրել այդ միավորների գործածության կլինիկալեզվաբանական հենքը:

Լեզվական նյութի վերլուծության նպատակով օգտագործվել է բժշկագիտության, մասնավորապես՝ ներքին հիվանդությունների և գործնական բժշկագիտության մի շարք ոլորտներում փոխաբերացման արդյունքում ստեղծված միավորների *բաղադրիչների իմաստային առանձնահատկությունների նկարագրական վերլուծության մեթոդը*:

Սույն հոդվածում քննվող փոխաբերական միավորներն առանձնացվել են ներքին հիվանդությունների ոլորտում և գործնական բժշկագիտության մի շարք բնագավառներում լայնորեն գործածվող, թվով շուրջ 800 անգլալեզու փոխաբերական միավորների շարքից, որոնք հիմնականում չունեն հունալատինահիմք համարժեքներ և ներկայացված չեն կամ հազվադեպ են հանդիպում հոմանիշային զույգերով: Միավորներն ընտրվել են բժշկագիտական և կլինիկական գործունեության համար նախատեսված «Gray's Anatomy: The Anatomical Basis of Clinical Practice», «Harrison's Principles of Internal Medicine» մասնագիտական աշխատություններից, Stedmans Online Medical Dictionary բժշկական շտեմարանից, բնագավառին հատուկ տպագիր և առցանց հոդվածանյութերից և կլինիկական դեպքերի նկարագրություններից, ինչպես նաև բժշկական և կլինիկական ուղեցույցներից, որոնք տպագրել են բժշկագիտական, կլինիկական, հետազոտական հեղինակավոր միավորումներ և ընկերություններ Միացյալ Նահանգներում և Մեծ Բրիտանիայում:

Նախևառաջ, անդրադարձ կատարելով բժշկության ոլորտի մասնագիտական գրականության լայնածավալ ուսումնասիրությանը, պարզել ենք, որ տեսաբանը, հետազոտողը կամ կլինիցիստը մեծապես օգտագործում է փոխաբերություն՝ բժշկագիտական որևէ երևույթի կամ կլինիկական ախտաբանության բովանդակային լիցքն առավել մատչելի բացատրելու կամ նկարագրելու նպատակով: Գործածության արդյունքում այդ փոխաբերությանը տրվում է այնպիսի սահմանում, որը հստակորեն կբացահայտի հետազոտվող առարկայի առաջնային հատկանիշները և կապահովի անհրաժեշտ նկարագրությունը: Ըստ այդմ, փոխաբերությունը ստանում է բովանդակային բավարար և անհրաժեշտ սահմանում: Տեսաբանների կողմից շրջանառության մեջ դրվելով՝ այդ սահմանումը, կարելի է ասել, փոխաբերությանը հաղորդում է տերմինային արժեք,

հաստատուն դասակարգում և հիմնավորվածություն գիտության տվյալ ոլորտի տերմինահամակարգում:

Վերը նշված նպատակին զուգահեռ՝ փոխաբերությունների ներմուծումը կարող է թելադրված լինել նաև սոցիալական և գիտատեխնիկական պահանջով: Բժշկագիտության մեջ, կարելի է ասել, սոցիալական պահանջի հրամայականն է մասնագիտական բառապաշարն անհրաժեշտ և բացակայող միավորով համալրելը, իսկ գիտատեխնիկական պահանջի հիմքում ընկած է անձանոթ, աներևույթ իրողությունը կամ վերացական դրվագը լեզվականացնելը: Այս առումով նոր միավորների ձևավորման առավելապես արդյունավետ մեխանիզմներից եղել և առ այսօր համարվում է փոխաբերությունը՝ բժշկության մեջ նորահայտ երևույթները, գործընթացները որոշարկելու նպատակով (Дьяченко 2003):

Այս պարագայում թերևս հատուկ կարևորություն է ստանում բժշկագիտության բնագավառում փոխաբերության հիմնավորվածությունը: Ամերիկացի գրող, գրաքննադատ Անատոլ Բրոյարդը նշում է, որ «*փոխաբերությունը կարող է նույնչափ անհրաժեշտ լինել հիվանդության համադրեքստում, որչափ գրականության ասպարեզում... Բժշկական ծանր տերմինաբանությունն առնվազն թոթափվում է փոխաբերությամբ...*» (թարգմանությունն ըստ Ա. Պետրոսյանի) (Broyard 1992:18): Փոխաբերությունն այս դեպքում «կատալիզատորի» դեր է ստանձնում՝ հանգուցելով նախկինում իրար հետ գոյաբանական որևէ օղակով չկապված երկու առարկաներ: Համաձայն Հարվարդի համալսարանի գիտության պատմության և ֆիզիկայի պրոֆեսոր Ջերալդ Հոլթոնի՝ «*...փոխաբերության կիրառությունը գիտնականի աշխատանքում պայմանավորված է անհրաժեշտությամբ, այլ ոչ պարահականությամբ... այդ անհրաժեշտությունը գիտական ռացիոնալության հրամայականն է...*» (թարգմանությունն ըստ Ա. Պետրոսյանի) (Holton 1998:236):

Ի լրումն՝ փոխաբերության շնորհիվ հնարավոր է լինում իրագործել գործաբանական այնպիսի նպատակներ, ինչպիսիք են, օրինակ՝ հիվանդության ախտանշանները հեշտ բացահայտելը, ինչպես նաև կլինիկական նախնական ախտորոշում կայացնելը կամ տարբերակված ախտորոշումը հաստատելը՝ հիմնվելով ճառագայթային կամ լաբորատոր հետազոտության տվյալների և արդյունքների վրա (Roche et al. 2002): Նորագույն սերնդի բժշկական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում ճշգրիտ կերպով պատկերել կամ չափել մարդու մարմնի ցանկացած հյուսվածք, օրգան և այլն: Այդուհանդերձ, կյանքի համար վտանգավոր ախտանշանների, ախտահարված օրգանների

հյուսվածքների կամ բջիջների ախտաբանության մասին տեղեկատվությունն առավել մատչելի է և դյուրըմբռնելի, երբ այն ներկայացվում է փոխաբերություններով կազմված նկարագրությունների միջոցով (Roche et al. 2002):

Ուսումնասիրությունից նաև պարզ է դարձել, որ բժշկագիտական փոխաբերություններ կազմավորելու նպատակով լայնորեն օգտագործվում են գունանուններ: Այս եղանակով կազմված փոխաբերությունների գործածությունը նկատելի է հատկապես ախտաբանական երևույթների և տարբեր ախտանշանների խոսքայնացման տեսանկյունից: Գունանուններն օժտված են իմաստատարբերակիչ գործառույթներով և համարվում են հիվանդությունների նախնական ախտորոշման հիմնական գործիքներից մեկը, քանի որ հիվանդության կամ համակարգային որևէ ախտահարման կլինիկական նշաններից մի քանիսը կարող են դրսևորվել գունային որևէ երանգով:

Բժիշկները և կլինիցիստներն առանձնակի ուշադրություն են դարձնում մաշկի գուներանգին իրենց մասնագիտական գործունեության մեջ (Lott 1998), քանի որ ֆիզիկական զննության ընթացքում մաշկային ծածկույթի մակերեսին հաճախ տեսանելի են լինում կլինիկական նշաններ և ախտանիշներ, որոնք կարող են հուշել փափուկ հյուսվածքի վնասվածքների, ներքին օրգանների ախտահարման, ներքին արյունահոսության կամ որևէ այլ խնդրի մասին: Մաշկային ծածկույթն, այս առումով, առաջնային օղակն է հիվանդի առողջական ընդհանուր վիճակը գնահատելու տեսանկյունից: Ֆիզիկական հետազոտության ժամանակ բժիշկը գործի է դնում իր զգայարանները և զննում է հիվանդի մաշկի և տեսանելի լորձաթաղանթների գույնը, որը կարող է կողմնորոշել ախտորոշման ուղղվածությունը: Որպես կանոն, օրգանիզմում ներքին որևէ խնդիր ախտորոշելիս՝ կլինիցիստները, մի շարք այլ հետազոտությունների արդյունքներին զուգահեռ, կատարում են եզրահանգումներ՝ հիմք ընդունելով նաև մաշկի գույնի զննության արդյունքները: Ըստ այդմ, մաշկի գույնի վերաբերյալ անսխալ գնահատական տալը կարևոր է թե՛ կլինիկական, թե՛ գիտահետազոտական տեսանկյունից (Bennett 1995; Lindholm 2008):

Բժշկագիտական գրականության մեջ հաճախ է նշվում, որ օրգանիզմում հյուսվածքների բնականոն գունավորումը կարող է փոփոխվել՝ պայմանավորված արտաքին կամ ներքին մի շարք գործոններով: Օրինակ, ըստ որոշ աղբյուրների, ծխախոտի մեջ պարունակվող նիկոտինի չարաշահումը կարող է հանգեցնել լեզվի հյուսվածքի գունային երանգի փոփոխությանը, որը հայտնի է «**black**

tongue» (սև լեզու) կամ **«black hairy tongue»** (մազաձածկ սև լեզու) անունով: Նիկոտինի գերչափաբաժնի ազդեցությամբ լեզվի էպիթելում ավելանում է պիզմենտը, որը նպաստում է լեզվի մակերեսի պտկիկների գույնի փոփոխմանը: Արդյունքում լեզվի մակերեսը նմանվում է մազաձածկույթի և ստանում է սև երանգ: Նշված կլինիկական նշանները նկարագրված են հետևյալ օրինակներում.

*«**Black hairy tongue (BHT)** is a benign medical condition characterized by elongated filiform lingual papillae with typical carpet-like appearance of the dorsum of the tongue. Its prevalence varies geographically, typically ranging from 0.6% to 11.3%. Known predisposing factors include smoking, excessive coffee/black tea consumption, poor oral hygiene, trigeminal neuralgia, general debilitation, xerostomia, and medication use.»* (Gurvits 2014)

*«**Black hairy tongue** is characterized by abnormal hypertrophy and elongation of filiform papillae. ... The Naranjo Probability Scale revealed a probable adverse drug reaction of linezolid-induced **black hairy tongue**. Potential contributing factors included other antibiotics, drug–drug interaction and poor oral hygiene.»* (Khasawneh 2013)

*«**Black hairy tongue... is a painless, benign condition characterized by an abnormal brownish–black coating of the dorsal surface of the tongue. Although its exact pathogenesis is unclear, it is thought to be related to defective desquamation and reactive hypertrophy of the filiform papillae.... Black hairy tongue usually appears in people over age 40 years with a history of poor oral hygiene, smoking and antibiotic use. Black hairy tongue has also been reported following stem cell transplantation.»*** (Körber 2012)

Ինչպես նշվեց, հիվանդություններ կամ ախտանշաններ անվանող միավորները որոշարկված են գունանուն բաղադրիչներով՝ ելնելով այն հիմնավորումից, որ մարդու մարմնի արտաքին ծածկույթի գունավորումը կարող է վկայել առողջական վիճակի, ներքին օրգանների կենսագործունեության խանգարման կամ վերքերի ապաքինման մասին: Ըստ այդմ, գունանունների ենթախմբի լեզվամիավորների ուսումնասիրության արդյունքում առանձնացրել ենք նաև **«blue baby syndrome»** (կապույտ երեխայի համախտանիշ) փոխաբերությունը: Վերջինս նկարագրում է ախտաբանական վիճակ, որի ժամանակ նորածնի մոտ դիտվում է լորձաթաղանթի կապտություն բերանի հատվածում, ինչը պայմանավորված է լինում արյան մեջ թթվածնի ոչ բավարար քանակով: Այս ախտաբանության մանրամասն նկարագրությանը հանդիպում ենք հետևյալ օրինակներում.

*“Infant methemoglobinemia is also called **“blue baby syndrome.”** It is a condition where a baby’s skin turns blue. This happens when there is not enough oxygen in the blood.”* (<https://www.dhs.wisconsin.gov/water/blue-baby-syndrome.htm>)

*“Two cases of **blue baby syndrome** were recently investigated. Both cases involved infants who became ill after being fed formula that was reconstituted with water from private wells.”* (<https://pubmed.ncbi.nlm.nih.gov/10903623/>)

Մեկ այլ օրինակ է **«white fingers»** (սպիտակ մատներ) փոխաբերությունը, որը մատնանշում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված հիվանդություն: Այն հանդիպում է պնևմատիկ մուրճ գործարկող անձանց մոտ, քանի որ վերջիններս հաճախ աշխատում են եղանակային սառը պայմաններում, արյան ճնշումը ծայրանդամներում նվազում է՝ հանգեցնելով ձեռքերի գունազրկմանը (այստեղից էլ՝ «սպիտակ մատներ» արտահայտությունը), ինչպես բացատրվում է հետևյալ օրինակներում.

*«Current common opinion regards the pathogenesis of **white fingers** to be a result of longterm exposure to various physical and psychological environmental stressors, but the relative importance of one stressor or other is unknown.»* (Gemne 1994:57)

*«Vibration-induced **white finger** (VWF) is a secondary type of Raynaud’s phenomenon (RP) caused by exposure to hand-arm vibration.»* (Olsen 2002:75)

Գունանուններով լրացված փոխաբերությունների շարքին է դասվում նաև **«red half-moon»** (կարմիր կիսալուսին) արտահայտությունը, որի պարագայում խոսքը մատների եղունգների աճման հիմքային հատվածում կիսալուսնի մեջ դիտվող կարմիր և անկանոն բծերի մասին է: Այս նշանը կարող է դրսևորվել որևէ չարորակ հիվանդության, սրտի կանգային անբավարարության կամ այլ հիվանդությունների ժամանակ: Դեռևս 2019 թվականին բռնկված համաշխարհային՝ «COVID» անվանումով համաճարակի բացահայտված ախտանշաններից մեկը նույնպես «կարմիր կիսալուսինն» է: Այս ախտաբանությունը նկարագրված է հետևյալ օրինակներում.

*«In the ordinary person **the half moon** has a clear, ground-glass appearance, lighter than the immediately distal portion from which a darker red halo radiates. In the person with congestive failure who exhibits **the red half moons**, the most intense red color is at the base of the nail as it appears from beneath the cuticle.»* (Bean 1963:164)

*“The **red half-moon nail sign**: a novel manifestation of coronavirus infection”, “Further studies are needed to validate our finding and to assess whether **red half-moon nail** could represent a pathognomic sign of COVID19.” (<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7323324/>)*

Փոխաբերական միավորով է կոչվում նաև «**pink disease**» ախտաբանությունը, որի նշանները, ըստ բժշկագիտական հետազոտական աղբյուրների, դրսևորվում են սնդիկով թունավորվելու արդյունքում, և որի անվանումը, ամենայն հավանականությամբ, վերագրվում է վերին և ստորին վերջույթների կարմրածությանը, ինչպես նկարագրվում է հետևյալ օրինակներում.

«Primarily attributed to exposure to mercury (Hg) commonly found in teething powders, the condition was developed by approximately 1 in 500 exposed children.»

*“Case studies provided a comprehensive clinical picture of pink disease long before its etiology was established. The most commonly reported symptoms included: irritability, neurosis, photophobia (light sensitivity), hyperhidrosis (excessive sweating), hypotonia (low muscle tone), ataxia (lack of coordination), digestive problems (including loss of weight, loss of appetite, vomiting, and constipation), anemia, excessive salivation, respiratory problems, lethargy, extreme misery, slurring/loss of speech, loosening/loss of teeth, swollen extremities, and **perhaps most famously (and from which the name “pink disease” was derived), marked reddening of the extremities, particularly the hands and feet**»:* (<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3173747/>)

Օրգանիզմում որոշակի ղեղանյութերի ազդեցության հետևանքով նույնպես կարող են զարգանալ համակարգային խնդիրներ, որոնցից մեկը «**purple glove syndrome**» կոչվող ախտաբանական փոփոխությունն է: Այն կարող է առաջանալ օրգանիզմում ֆենիտոին ղեղանյութի ներերակային ներմուծման հետևանքով, որի արդյունքում ներարկման օջախի արտաքին հատվածում դիտվում է այտուց և մանուշակագույն կամ սև գունային երանգավորում, այն է՝

*«Intravenous (IV) administration of phenytoin with or without extravasation can result in a devastating complication called as “**Purple Glove Syndrome (PGS)**” for its characteristic purplish-black discoloration accompanied by edema and pain distal to the site of injection.»* (<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3139342/>),

*«**Purple glove syndrome (PGS)** is a rare complication of intravenous (IV) phenytoin administration that is characterized by delayed soft tissue*

injury of the skin adjacent to the site of IV phenytoin infusion»:
(<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4567206/>)

Մեկ այլ՝ արտաքին գրգռիչների ազդեցությամբ զարգացող հիվանդություն կոչվում է «**yellow fever**»: Վերջինս վարակիչ հիվանդություն է, որը տարածվում է «Aedes» և «Haemagogus» տեսակի մոծակների միջոցով և որի զարգացման համար բարենպաստ են համարվում արևադարձային և մերձարևադարձային կլիմայական պայմանները Հարավային Ամերիկայում և Աֆրիկայում: Ըստ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության տվյալների՝ այս պարագայում հիվանդի մաշկային ծածկույթի տարբեր հատվածներում դրսևորվում է դեղնավուն երանգավորում, և ուղեկցվելով այլ նշաններով՝ հուշում է տենդի զարգացման մասին՝ «**Yellow fever is an acute viral haemorrhagic disease transmitted by infected mosquitoes. The "yellow" in the name refers to the jaundice that affects some patients. Symptoms of yellow fever include fever, headache, jaundice, muscle pain, nausea, vomiting and fatigue**»: (<https://www.who.int/news-room/fact-sheets/detail/yellow-fever/>)

Հատկանշական է, որ բժշկական հաստատություններում առողջության վերաբերյալ տվյալները նույնպես «երանգավորված են» և կոչվում են «**gray literature**», ինչն իմաստային թարգմանությամբ հնչում է որպես «գորշ գրականություն»: Այդ գրականությունը բաղկացած է փաստաթղթերից, որոնցում պարունակվում է հանրության առողջական վիճակի և հիվանդությունների վերաբերյալ տվյալներ և տեղեկատվություն: Եվրոպայում 1920-ականներից սկզբնավորված այս գրականությունը հիմնականում մատչելի չէ հասարակությանը և չի հրատարակվում զանգվածայնորեն: Տվյալ դեպքում «գորշ» բառը կապվում է ուղեղի գորշ նյութի հետ, որն անվանվում է «**gray matter**» և պատասխանատու է գլխուղեղում տեղեկատվության մշակման համար (Standring 2005): Այստեղ զուգորդություններ են տարվում գորշ նյութի գործառույթի և գիտական բնույթի բարդ տվյալները ներըմբռնելու տեսանկյունից, քանի որ այս պարագայում ուղեղի գորշ նյութի գործառույթով է պայմանավորված, թե այդպիսի տեղեկությունները որքանով կյուրացվեն անհատի կողմից:

Ամփոփելով՝ նշենք, որ սույն հոդվածի շրջանակը չի նախատեսում համալիր քննության առնել գունանուններով փոխաբերությունների այն ողջ շարքը, որը հանդիպում է ախտաբանական տարատեսակ երևույթների անվանումներում: Այդուհանդերձ, կատարված ուսումնասիրության արդյունքներից ակնհայտ է, որ կլինիցիստները և բժիշկները հաճախ որոշարկում են իրենց կլինիկական դիտարկումները և բացահայտումները

գունաններով լրացված փոխաբերություններով, որոնք առավել հեշտ ճանաչելի են դարձնում տվյալ հիվանդության կլինիկական պատկերը: Առանձին դեպքերում մաշկի գուներանգի մասով արված գնահատումներն ու եզրահանգումներն արդյունավետ են նախնական կլինիկական ախտորոշումների կայացման տեսանկյունից: Ընդ որում, այս միավորները, ինչի մասին վկայում են վերը նշված օրինակները, օժտված են ճանաչողական գործառույթներով և իրողությունը մատչելի և իմաստային առումով խտացված կերպով պատկերելու ներուժ ունեն՝ տարբեր տիրույթների միավորները համադրելու միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Дьяченко А.П., Метафоры и терминологически устойчивые выражения в медицине: слов.-справ. // Минск: Новое знание, 2003, 428 с.
Dyachenko A.P. Metafory i terminologiceski ustojcivye vyrazenia v medicine: slov.-sprav. // Minsk: Novoe znanie 2003, 428 с.
2. Bean W.B., A discourse on nail growth and unusual fingernails. // Trans Am Clin Climatol Assoc. 1963;74: 152-167.
3. Bennett M.A., Report of the task force on the implications for darkly pigmented intact skin in the prediction and prevention of pressure ulcers. // Advances in Skin & Wound Care. 1995;8(6):34-35
4. Broyard A., Intoxicated by My Illness and Other Writings on Life and Death. // New York: Ballantine Books, 1992.
5. Gemne G., Pathophysiology of white fingers in workers using hand-held vibrating tools. // Nagoya J Med Sci. 1994.
6. Gurvits G.E., Tan A. Black hairy tongue syndrome. // World J Gastroenterolgy. 2014;20(31):10845-50.
7. Holton G.J., The Advancement of Science, and Its Burdens. // Harvard University Press, 1998.
8. Kasper D.L., Fauci A.S., Hauser S.L., Longo D.L., Jameson J.L., Loscalzo J. Harrison's Principles of Internal Medicine, 19th edition. New York: McGraw Hill Education, 2015, 2770 p.
9. Khasawneh F.A., Moti D.F., Zorek J.A., Linezolid-induced black hairy tongue: a case report. // Journal of Medical Case Reports, 7, 2013, p. 46.
10. Körber A., Voshege N., Black hairy tongue in an infant. // CMAJ. 2012;184:68.
11. Lindholm C., Sterner E., Romanelli M., Pina E., Torra y Bou J., Hietanen H., Dealey C., Hip fracture and pressure ulcers: The Pan-European

- pressure ulcer study: Intrinsic and extrinsic risk factors. // International Wound Journal. 2008;5:315–328.
12. Lott J.W, Hoath S.B., Neonatal skin: The ideal nursing interface. // Journal of Pediatric Nursing. 1998;13:302–306.
 13. Olsen N., Diagnostic aspects of vibration-induced white finger. // Int Arch Occup Environ Health. 2002;75(1-2):6-13.
 14. Roche C.J., O’Keeffe D.P., Lee W.K., Duddalwar V.A., Torreggiani W.C., Curtis J.M., Selections from the buffet of food signs in Radiology. // RadioGraphics, 2002;22(6), 1369–1384.
 15. Standring S., Gray’s Anatomy: The Anatomical Basis of Clinical Practice. 39th edition. ELSEVIER: Churchill Livingstone, 2005, 1600 p.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

16. Stedmans Online Medical Dictionary, <http://stedmansonline.com/>

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

17. <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7323324/> Last retrieved 2020 Jul 25
18. <https://www.dhs.wisconsin.gov/water/blue-baby-syndrome.htm> Last retrieved 2020 May 13
19. <https://pubmed.ncbi.nlm.nih.gov/10903623/> Last retrieved 2020 Sep 05
20. <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/yellow-fever/> Last retrieved 2019 Oct 10
21. <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4567206/> Last retrieved 2018 Jul 11
22. <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3139342/> Last retrieved 2018 Dec 14
23. <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3173747/> Last retrieved 2018 Aug 8

АЛИНА ПЕТРОСЯН - «WHITE FINGERS» ИЛИ КОЛОРИСТИЧЕСКАЯ МЕТАФОРА КАК НАИМЕНОВАНИЕ БОЛЕЗНЕЙ И ИХ ПРИЗНАКОВ

Ключевые слова: метафора, сфера-источник, сфера-мишень, названия цветов, кожа, болезнь, клинический признак, симптом, визуальное обследование

Целью данной статьи является изучение медицинских терминов метафорического характера, в которых присутствует компонент «цвет» и которые используются в целях наименования различных клинических

симптомов. Эти метафоры рассматриваются как полезный языковой «инструмент» в плане диагностирования болезней и их признаков. Во время визуального обследования на кожных покровах больного наблюдаются клинические признаки и симптомы различных заболеваний, поскольку кожа служит основным ориентиром для оценки состояния здоровья пациента в определенных случаях. Следует отметить, что результаты обследования и общего осмотра часто находят отражение в колористических метафорах как наименования болезней и их признаков. В этом плане метафоры функционируют как своеобразные универсалии естественных языков, делая клиническую картину более визуальной и запоминающейся посредством присущей метафоре наглядности.

ALINA PETROSYAN - “WHITE FINGERS” OR THE COLOUR METAPHOR IN THE DIAGNOSTIC TOOLBOX

Keywords: *metaphor, source-domain, target-domain, names of colours, human skin, disease, clinical sign, symptom, physical assessment*

This paper focuses on a number of colour-related metaphors used in a medical setting and often referred to as a useful tool in the diagnostic toolbox. During physical assessment, certain clinical indicators and symptoms of various diseases are observed on the human skin. In this sense, the skin serves as the primary interface for evaluating the patient’s overall health status. Colour assessments also add value in making decisions and diagnoses in certain cases. It should be mentioned that clinicians often verbalise their assessments and findings through color metaphors, which act as distinctive markers, thus making the clinical picture more memorable. In addition, colour metaphors foster understanding and primary recognition of clinical symptoms.

Ներկայացվել է՝ 30.09.2020
Գրախոսվել է՝ 28.09.2020

LINGUISTIC ANALYSIS OF CONFLICT AND MILITARY OPERATION NAMES

SYUZANNA STEPANYAN

Keywords: *military conflict, linguistic tools, public perception, euphemism, irony*

Our life is a conflict - a conflict within ourselves and outside ourselves, a constant conflict with the God and the devil.

It is a widely known fact that conflicts are an indispensable part of our life. Our relationships develop around conflicts, cease, resume or are born through a conflict.

The language we choose to get our message across directly affects the outcome of the conflict. Threatening, intimidating, humiliating, aggressive, defensive, respectful, understanding, empathetic; these are just some of the innumerable verbal options which we choose depending on what we are trying to achieve. Equally important are the names we attribute to conflicts which may inconspicuously define our aims in the conflict and our attitude to it.

There is abundant material on the English words and expressions concerning military conflicts, operations and procedures. However, less attention has been given to the analysis of conflict names from the linguistic perspective.

Another reason behind our motivation to study military conflict names was the attempt to reveal certain linguistic strategies and tools, diplomatic verba ltechniques of those who are responsible for igniting modern military conflicts.

Giving a name to a war, a conflict or an operation is a unique means of expression. It is somewhat self-sufficient, it is a message, a text, a declaration and, last but not least, a challenge to be met.

In the given article we are focusing on the language of military conflicts, particularly, on the process of conflict and operation naming. Through the brief introduction of the background and the circumstances of the conflicts or military operations, the names of which are the main focus of our study, we will try to understand the history and the basic motives of the process of giving a name to the conflict or a military operation. In addition, the possible role that the names play in the development of the conflict will be offered. Ultimately, the focus will be drawn to the analysis of conflict names

from the perspective of their linguistic-pragmatic value with the objective to reveal and analyse disguised euphemistic techniques.

With English being in the center of our interest we will mainly focus on conflict names originally dubbed in English. However, we have included several names which were translated from other languages but were of interest for the given study.

Wars tend to get their names in several stages: at initiation, during and once they are over. Naming conflicts and military operations at initiation is a relatively new practice. In the past conflicts and wars were named mainly with a reference to the sides involved, for instance, **Ottoman-Russian Wars**, **Roman- Persian Wars**, or the decisive battles: **The Battle of Guagamela**, **The Battle of Waterloo**. In some cases, wars get multiple names by the major combatants, for instance, **American Civil War-The War of Northern Aggression**. In such cases the name of the victor tends to remain in history.

Some conflicts change names over time. This phenomenon can be observed with, for instance **WWI**. Interestingly, the latter was initially named **the Great War** and only after **WWII** it started to be referred to as **WWI**.

Another way wars get their names is connected with the location, for instance; **The Great Northern War**, **The Turkish War**.

Length is another factor that may eventually define the name of the conflict after it is over, for instance; **30 Years' War** (a war fought primarily in Central Europe between 1618 and 1648).

The nature of the conflict can also be defining: **The English Civil Wars**, **Independence Wars**, etc.

Whatever the defining factor, at the beginning of the 20th century conflict naming acquired a whole new meaning and significance. Moreover, in the modern world the phenomenon of conflict naming has evolved so much that the word "war" itself seems to have vanished from the discourse of the ones who initiate it. Wars or conflicts are most often referred to as "a military operation", "an offensive", "an intervention", "clashes" or "raids". A name is carefully thought out and given to both the military actions and the conflict often long before the actual "military operation" takes place. Hence, the name has become the indispensable attribute of a modern conflict if not one of its most powerful weapons.

So how did it all start and what is the driving force behind this urge to name a war, a conflict or a military action?

Interestingly, the same conflict can acquire different names attributed to it by the sides of the conflict. On the other hand, the international community comes up with its own term to describe the conflict. However, the

Ենթակայական դերբայի համար հիշատակվում են երկու վերջավորություններ՝ **աղ** և **ող**, որոնք խառն վկայված են մեր սկզբնաղբյուրում, և մինչ օրս դժվար է որոշել՝ որն է դրանցից ավելի հին: Կրավորական սեռի բայերը, ինչպես նաև՝ *ու* լծորդության չեզոք սեռի բայերն ու որոշ անկանոն բայեր գրաբարում չեն ունեցել ենթակայականի կազմություններ: Այդ իսկ պատճառով այս ձևերի սահմանափակությունը գրաբարում լրացվում է այլընտրանքային եղանակներով: Անդրադառնանք *-իչ* մասնիկով ենթակայական դերբայի հնագույն կազմությանը: Գրաբարում, ինչպես նշեցինք, այս դերբայը սովորաբար կազմվում էր *-ող* մասնիկի միջոցով, որը դրվում էր ինչպես անցյալ կատարյալի, այնպես էլ՝ ներկայի հիմքի վրա: Սակայն ենթակայականի իմաստն արտահայտվում էր նաև *-իչ* մասնիկով կազմվող բայանվանական ձևերով, որոնք վաղնջահայերենից եկող դերբայական ձևեր են, սակայն հետագայում գործածվել են ածականի և մասամբ էլ գոյականի իմաստներով (Աբրահամյան 1976:161): Նշենք նաև, որ այս մասնիկով ենթակայական դերբայ են կազմել հատկապես անցողական բայերը: Ահա՝ այս ձևույթով կառուցված՝ «Գիրք պահոց»-ում մեզ հանդիպած դերբայների օրինակները՝ *հրահանգիչ* (էջ 87), *սնուցիչ* (էջ 87), *ստեղծիչ* (էջ 152), *վայրընկղմիչ* (էջ 88): Բացի այս ձևերից՝ հանդիպում են նաև սովորական՝ *-ող* մասնիկով ենթակայական դերբայներ, ինչպես՝ *տեսող* (էջ 64), *զայրացուցանող* (էջ 121),

պատերազմող (էջ 89), իմանող (էջ 154), կենդանագրող (էջ 152), կործանող (էջ 110), լցող (էջ 137), տուող (էջ 137): Նշենք, որ *իմանող* (էջ 154) ենթակայական դերբայը, ըստ կանոնի, պիտի կազմվեր կատարյալի հիմքից, սակայն այստեղ ունենք ներկայի հիմքից պարականոն կազմություն:

Անցյալ դերբայը, որը կազմվում է **-եալ** դերբայական մասնիկի միջոցով և դրվում է անցյալ կատարյալի, մասամբ էլ՝ ներկայի հիմքի վրա, ևս կիրառական է Կեսարացու թարգմանական երկում՝ *սասանեցուցեալ* (էջ 96), *դարձուցեալ* (էջ 105), *փայլեալ* (էջ 120), *փախուցեալ* (էջ 121), *մտեալ* (էջ 124), *զարթուցեալ* (էջ 141), *դատեցեալ* (էջ 62), *ժուժկալեալ* (էջ 56), *մեղուցեալ* (էջ 125): Կեսարացու երկում կան նաև անցյալ դերբայի՝ **ից** ձևությամբ կազմության հունաբան օրինակներ, որոնք համարվում են *ից*-ով արհեստական բայահիմքից ստեղծված կառույցներ: Այդ ձևերի ստեղծումը բացատրվում է հատուկ կրավորական սեռի դերբայ ստեղծելու փորձերով՝ ի հակադրություն *եցեալ*-ով ներգործական ձևերի(Մուրադյան 2010:122): Նմանատիպ կազմություններ են անցյալ դերբայի հետևյալ օրինակները՝ *ծնիցելոյ* (էջ 256), *ծնիցելոց* (էջ 211), *ծնիցելոյն* (էջ 433) և այլն:

«Ապառնի դերբայը գրաբարում երկու տարբերակ ունի: Դրանցից մեկը ձևավորվում է *-ոց*, իսկ մյուսը՝ *-ի* մասնիկով: Դերբայական այս մասնիկները դրվում են անորոշ դերբայի վրա» (Աբրահամյան 1976:130): Կեսարացու երկի թարգմանիչները հիմնականում կիրառել են ապառնի դերբայի **-ոց**-ով ձևերը՝ *տաւնեցելոցն*, *տիրելոցն* (էջ 219), *կիզեցելոցն*, *կարացելոց*, *բարձեցելոց* (էջ 88), *բարբառելոց* (էջ 102) և այլն: **-ի**-ով գտել ենք *գնալի* (էջ 15), *փախչելի* (էջ 215) նմուշները: Երբեմն թարգմանիչները հունարենի հետևողությամբ ապառնի դերբայը կազմել են ոչ թե ներկայի հիմքով անորոշից, այլ բայերի կատարյալի հիմքից կազմված անորոշից՝ *տաւնեցելոցն*, *բարձեցելոց*, *կիզեցելոցն*, *կարացելոց*: Այս արհեստական ձևերի շնորհիվ փորձ էր կատարվում անկատար և կատարյալ կերպի իմաստ հաղորդել դերբայներին:

Անդրադառնալով եղանակաժամանակային ձևերին նշենք, որ «Գիրք պահոց»-ում հանդիպում են ժամանակաձևերի իմաստային փոխանցումներ, այսինքն՝ մի ժամանակաձևով դրված բայը մեկ այլ ժամանակաձևի իմաստով է հանդես գալիս: Առանձնացրել ենք սահմանական ներկայի իմաստ արտահայտող ստորադասական եղանակի հետևյալ բայաձևերը՝ *համբերեսցես* (էջ 57), *ածցէ* (էջ 76), *կամիցիս* (էջ 92), *երեսեսցի* (էջ 96), *ունայնացուցէ* (էջ 106) և այլն: Վերոնշյալ բառերից մի քանիսի համար ծանոթագրությունների մեջ հիշատակված է դրանց կանոնավոր ձևը, ինչպես՝ *համբերեսցես*–

համբերես (էջ 57), *կամհցիս-կամիս* (էջ 92), *երեւեսցի-երեւի* (էջ 96), որից ակններն է, որ ստորադասական ապառնիները ժամանակի ընթացքում սկսել են արտահայտել նաև սահմանական ներկայի իմաստ, տեղի է ունեցել եղանակաժամանակային տեղաշարժ, որը կարող էր պայմանավորված լինել ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ, որոշ դեպքերում նաև սխալագրությամբ: Այստեղ պետք է նաև նշել, որ դեռևս V դարում գրաբարյան սահմանական ներկան և անցյալ անկատարը կիրառվում էին ստորադասական ապառնիների փոխարեն, որն առաջացնում էր բազմիմաստություն և ժամանակաձևերի խառնակություն: Այս խառնաշփոթը վերացնելու համար է ստեղծվել **կու** մասնիկը միջին հայերենում, որն արդեն, սահմանական ներկայի և անցյալ անկատարի իմաստ էր արտահայտում, իսկ ստորադասական եղանակն ընդհանրապես դուրս է մղվում՝ իր տեղը զիջելով երկու ուրիշ եղանակների:

Ուշագրավ է անցյալ կատարյալի ներգործածն խոնարհման եզակի երրորդ դեմքի **ե-** նախահավելված մասնիկով կազմությունների գերակշռությունը՝ *եմուր* (էջ 129), *եպես* (էջ 129), *եսպեղծ* (էջ 122), *եսպան* (էջ 126), թեև կիրառվում են նաև առանց **ե-**ի ներգործածն խոնարհման կատարյալի ձևեր, ինչպես՝ *ած* (էջ 65), *մուր* (էջ 76), *ծանուն* (էջ 118), **գալ** անկանոն բայը կանոնավորվել է այս երկում՝ անկանոն *եկն*-ի փոխարեն *եկալ* (էջ 127) ձևի կիրառությամբ:

Եմ պակասավոր բայը առանձնահատուկ կիրառություն ունի «Գիրք պահոց»-ում: Ինչպես հայտնի է՝ այս բայը չունի անորոշ դերբայ, սակայն Կեսարացու երկում վկայված է *ելով* (էջ 119) անորոշ դերբայի գործիականը, որը երկի թարգմանիչները ստեղծել են հունարեն **սταρω**-ի ուղղակի թարգմանությամբ:

«Գիրք պահոց»-ը հարուստ է նաև բայական փոփոխակներով: Երբեմն պարզ բայը ածանցավոր համանիշ է ունենում, այսինքն միևնույն բայը և՛ պարզ է, և՛ ածանցավոր: «Այս երևույթը երկու բացատրություն կարող է ունենալ. կամ բայական մի ձևը իր քայքայման ճանապարհին փոխանորդվում է մյուսով և կամ գալիս է առանձին-առանձին բարբառներից» (Առաքելյան 1954:151): Մեզ հանդիպած այդպիսի բայերի օրինակներ են՝ *ցանկամ* (էջ 141)-*ցանկանամ* (էջ 460), *ցուցանել* (էջ 149)-*ցուցել* (էջ 143):

Սակայն պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս: Ինչպես փաստում է Վ. Առաքելյանը, «Եթե պարզ և ածանցավոր զուգաձև բայերը իրար փոխանորդում են առանց որևէ քերականական զանազանության, ապա արդեն այդպես չեն զուգախոնարհման բայերը. միևնույն բայը հաճախ մի խոնարհման մեջ այլ նշանակություն կամ քերականական

կարգի արտահայտություն ունի, մյուսում այլ» (Առաքելյան 1954:152): Ահա՛ խոնարհման զուգաձև կազմություններից են *քանեն-քանիմ-քուցանեն* բայերը, որոնցից վերջինը՝ *քուցանէ* (էջ 72) դրսևորվել է Կեսարացու երկի գրաբարյան թարգմանության մեջ՝ *վիատվել-վիատեցնել* իմաստով՝ *Եթէ անգիտանաս, զի զոր արինակ ի պատերազմի ընկերոյն կոուակցութիւն պարտութիւն առնէ միտոյն, տոյնպէս որ մարմնոյ առդնէ զոգին քուցանէ, եւ որ առ հոգին կարգին՝ ծառայեցուցանէ զմարմինն* (էջ 72):

Ստորադասական եղանակի առաջին և երկրորդ ապառնիները, բացի վերոնշյալ յուրահատկությունից՝ սահմանական եղանակի իմաստ արտահայտելու, «Գիրք պահոց»-ում վկայված են նաև մի շարք այլ նորագյուտ ձևերով: Այսինքն՝ փոխվել է նրանց ոչ միայն բովանդակությունը, այլև կազմությունը:

Առաջին ապառնու կազմության ոչ կանոնավոր ձև ունի *յառնել* բայը՝ *յառիցես* (էջ 118): Առաջին ապառնու՝ սահմանական ներկայի իմաստով գործածության մասին վկայում է Մ. Աբեղյանը. «Ստորադասական ապառնին համապատասխան է նաև աշխարհաբարի սահմ. Ներկային. 1) երբ խոսքը հարցական է, 2) երբ խոսքը նմանությամբ, ենթադրությամբ, երկբայությամբ է ասվում կամ կարծեցյալ իմաստ ունի» (Աբեղյան 1974, հ. 2:748): Մեր բերած օրինակում առկա է Աբեղյանի նշած տարբերակներից երկրորդը: Տեղի է ունեցել եղանակաժամանակային ձևերի իմաստային փոխանցում. գրաբարյան ստորադասական եղանակի առաջին ապառնին արտահայտում է սահմանական ներկայի իմաստ:

Երկրորդ ապառնու վերաբերյալ պետք է նշել, որ ունենք կազմության կանոններից շեղվող դեպքեր, ինչպես՝ *ընթասցես* (էջ 57)– այս բայի երկրորդ ապառնին պետք է խոնարհվեր կրավորակերպ, այնինչ ունի ներգործաձև խոնարհման վերջավորություն: Նույն ձևով՝ *երթայցես* (էջ 113) բայաձևը, որը պետք է, ըստ կանոնի, ունենար *երթիցես* ձևը, *ասցես, ասայցես* (էջ 56), որը պետք է կազմվեր *ասասցես* ձևով:

Ինչ վերաբերում է հրամայական եղանակի բայաձևերին, ապա նկատելի է, որ դրանց կազմության ընթացքում շեղումներ գրեթե չեն հանդիպում, պետք է նշել միայն, որ Կեսարացու երկի գրաբարյան թարգմանության մեջ չենք հանդիպել հորդորական հրամայականի կազմությունների: Ինչպես նշվում է տարբեր աղբյուրներում, հորդորական հրամայականը կիրառվել է միայն գրաբարում և գործածությունից դուրս է եկել շատ վաղ, իսկ եթե, այնուամենայնիվ, հանդիպել է ինչ-ինչ երկերում, ապա համարվել է գրաբարաբանություն: Ուստի, այս ամենից եզրակացնելով արձանագրենք, որ «Գիրք պահոց»-ում հորդորական հրամայականի գրաբարաձև կազմություններ չեն կիրառվել՝ ելնելով

թարգմանության ժամանակաշրջանից: Հորդորական հրամայականի իմաստն արտահայտվել է բուն և արգելական հրամայականների միջոցով: Բուն, արգելական հրամայականները մեծավ մասամբ կազմվել են եզակի թվով: Սա, թերևս, պայմանավորված է երկի ոճական առանձնահատկությամբ. այն իր բնույթով կոչ-հորդորներ է պարունակում, հեղինակը դիմում է իր գրուցակցին, ուստի կիրառում է հիմնականում եզակի թվով հրամայականի բայաձևեր:

«Գիրք պահոց»-ում քիչ չեն նաև բաղադրյալ ժամանակների կիրառությունները: «Գրաբարում բաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ և ապառնի դերբայներով ու օժանդակ բայով: Որպես օժանդակ բայ գրաբարում սովորաբար գործածվում են *եմ* և *լինիմ* բայերը» (Աբրահամյան 1976:211), նաև՝ *ունիմ*, *կամ*: Կեսարացու երկում մեզ հանդիպած բաղադրյալ ժամանակաձևերի օրինակներից են՝ *բերեալ լինել* (էջ 59), *յաջողեալ լինել* (էջ 142), *իմացեալ լինել* (էջ 151), *ստեղծեալ լինել* (էջ 240), *ընձեռեալ լինել* (էջ 240), *սպրեալ լինել* (էջ 240), *ածեալ լինել* (էջ 159), *յղացեալ լինել* (էջ 240), *ցուցեալ լինել* (էջ 66), *տապակեալ լինել* (էջ 70), *գործեալ լինել* (էջ 88), *լուեալ լինել* (էջ 88), *սրբեալ լինել* (էջ 197), *մեռեալ լինել* (էջ 213), *բաղձացեալ եմք* (էջ 395), *երկուցեալ եմք* (էջ 395), *ցանկացեալ եմք* (էջ 395) և այլն: Բերված օրինակներից պարզ է, որ բաղադրյալ ժամանակաձևերից միայն անցյալ դերբայով և *եմ* ու *լինել* բայերով կազմություններ են վկայված Կեսարացու երկի գրաբարյան թարգմանության մեջ: Ապառնին արտահայտվել է ստորադասական առաջին և երկրորդ ապառնիների ձևերով:

Անդրադառնանք բայասեռի քերականական կարգի դրսևորմանը Կեսարացու երկում: Այստեղ ունենք կրավորականի յուրօրինակ կառույցներ, որոնք կազմվել են հունարենի նմանողությամբ: Նշենք *ե* լծորդության բայերի կրավորական սեռի և *ի* լծորդության բայերի անցյալ անկատարի եզակի թվի երրորդ դեմքի *իւր* վերջավորության կազմության դրսևորումները «Գիրք պահոց»-ում: «Դասական լեզվում անկատար անցյալում «ե» լծորդության բայերի ներգործական և կրավորական սեռի վերջավորությունները համընկնում էին՝ «էի», «էիր», «էր», «էաք», «էիք», «էին»: Նույնպիսին էին «ի» լծորդության բայերի վերջավորությունները: Հունարան դպրոցի թարգմանիչները կրավորական սեռի և «ի» լծորդության բայերի երրորդ դեմքի եզակի թվի համար հորինեցին «իւր» վերջավորությունը» (Մուրադյան 2010:120): Հունարան թարգմանիչների ստեղծած այս վերջավորությամբ օրինակներից են Կեսարացու երկում հանդիպող *երեւիւր* (էջ 433), *գտանիւր*, *տեսանիւր* բայերը: Գ. Մուրադյանն իր հիշյալ աշխատության մեջ քննում է նաև *ա* և *ու* լծորդության բայերի «արիեստական» կրավորական ձևերը, որոնք

«կազմվել են «ե» լծորդության բայերի նմանությամբ՝ «ի»-ով հիմքերից» (Մուրադյան 2010:121), հունարան նման կառույցների հանդիպել ենք նաև «Գիրք պահոց»-ի հայերեն թարգմանության մեջ: Այդ ձևերից են՝ *ստացանին* (էջ 371), *ընթերցանի* (էջ 221), *արգելանի* (էջ 325): Բացի *ընթերցանի* բայից, որը կազմվել է անցյալ կատարյալի ցոյական հիմքից, մյուս երկու օրինակներում *ան* ածանցը ավելացել է ներկայի պարզ հիմքին:

Եզրափակելով «Գիրք պահոց» երկի գրաբարյան թարգմանության խոնարհման համակարգի քննությունը՝ արձանագրենք հետևյալ կարևոր առանձնահատկությունները.

ա) դերբայների կազմության յուրահատուկ դրսևորումներ են ի հայտ գալիս Կեսարացու երկի գրաբարյան թարգմանության մեջ՝ օրինաչափ կազմություններին զուգահեռ: Հանդիպում են անորոշի կազմության *-իլ*-ով ձևեր, ենթակայական դերբայի կազմություն՝ ներկայի հիմքից, անցյալ դերբայի *-ից* ածանցով արհեստական բայահիմքից կազմություններ: Որոշ դեպքերում թարգմանիչները հունարենի հետևողությամբ ապառնի դերբայը կազմել են ոչ թե ներկայի հիմքով անորոշից, այլ բայերի կատարյալի հիմքից կազմված անորոշից՝ *տանեցելոցն, բարձեցելոց, կիզեցելոցն, կարացելոց*: Այս արհեստական ձևերի շնորհիվ փորձ էր կատարվում անկատար և կատարյալ կերպի իմաստ հաղորդել բոլոր դերբայներին,

բ) ստորադասական առաջին և երկրորդ ապառնիները հաճախ սահմանական եղանակի իմաստ են արտահայտում,

գ) որոշ անկանոն բայեր գործածվում են հետդասական խոսակցական լեզվին բնորոշ կանոնավորված խոնարհման ձևերով,

դ) *եմ* պակասավոր բայի համար անորոշ դերբայի ձև է վկայված՝ *ել*,

ե) հրամայական եղանակն ունի միայն բուն և արգելական հրամայականների ձևեր. հորդորական հրամայականը դուրս է եկել գործածությունից. «Գիրք պահոց»-ում չկան հորդորական հրամայականի բայաձևեր,

զ) բաղադրյալ ժամանակաձևերից գործածական են անցյալ և ապառնի դերբայով և եմ կամ լինիմ բայերով կազմությունները, բայց ապառնի դերբայը ոչ միայն –ոց մասնիկով է կազմված, այլև՝ -ի, օրինակ՝ *գնալի է, անկարծելի լինէր* (էջ 153),

է) հանդիպում են կրավորական սեռի արտահայտման յուրահատուկ կազմություններ, որոնք գալիս են հունարենից,

ը) սահմանական ներկան լայնորեն կիրառվում է ապառնու իմաստով:

Այսպիսով՝ Կեսարացու երկի թարգմանիչները պահպանել են խոնարհման համակարգի գրաբարյան կանոնները, սակայն ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությունն արդեն զգալի է, թարգմանիչների հիմնական նպատակն էր երկի լեզուն հասու դարձնել ընթերցողների հնարավոր լայն շերտերին: Չենք բացառում նաև գրչագրական վրիպակների առկայությունը:

Մեր շարադրանքը ամփոփենք Հ. Մանանդյանի հետևյալ խոսքերով. «Յունաբան հնագոյն թարգմանություններում լեզուական խմբաւորումները շատ անելի որոշ ու ակներեւ են, քան ոսկեդարեան գրաբարում, որովհետեւ հիմնուած են ո՛չ թե «ոճի ու կերպի», այլ, գլխաւորապէս, քերականութեան ու արուեստական բառակազմութեան բացայայտ տարբերութիւնների վրայ» (Մանանդյան 1928:14): «Գիրք պահոց»-ում, ինչպես տեսանք, քերականական կանոնները ճշգրիտ պահպանված չեն, և շեշտը դրված է խոսքը հասկանալի դարձնելու և ոճականորեն գեղեցիկ դրսևորելու վրա, ուստի, հաշվի առնելով նաև Հ. Մանանդյանի փաստարկը, կարող ենք եզրակացնել, որ Կեսարացու երկի գրաբարյան թարգմանությունը չի կարելի համարել հունաբան, այլ՝ որակյալ հայկաբան թարգմանություն: Մեր խոսքը հիմնավորենք ևս մեկ փաստարկով. «Դասական շրջանի թարգմանությունները կոչված էին բավարարություն տալու սկզբնավորվող հայ մատենագրության առաջնահերթ պահանջներին, ապահովելու եկեղեցու գաղափարական և արարողական գործունեությունն ու կրթական գործի կազմակերպումը: Այդ պատճառով առաջին հայ թարգմանիչների ջանքերի մեջ նկատվում է մի այնպիսի նպատակասլացություն, որը, գերմանացի հայագետ Ֆ. Ֆինկի բնորոշմամբ, իրավացիորեն կարելի է անվանել «մշակույթի փոխանցման գիտակցված ծրագիր»» (Տեր-Պետրոսյան 1984:8):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա., Հայոց լեզվի պատմություն, ԵՊՀ հր., Ե., 2017, 442 էջ:
2. Աբեղյան Մ., Երկեր հ. 2, ՀՍՍՀ ԳԱ հր., Ե., 1974, 847 էջ:
3. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Լույս հր., Ե., 1976, 557 էջ:
4. Առաքելյան Վ., Գրաբարի քերականութիւն, Վիամիր հր., Ե., 2010, 416 էջ:
5. Առաքելյան Վ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Հայկական ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1984, 228 էջ:

6. Մանանդեան Հ., Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, 299 էջ:
7. Մուրադյան Գ., Հունաբանությունները դասական հայերենում, Նաիրի հր., Ե., 2010, 291 էջ:
8. Ս. Բարսեղ Կեսարացի, «Գիրք պահոց», Մայր Աթոռ Սբ. Էջմիածին հր., Ս. Էջմիածին, 2008, 519 էջ:
9. Տեր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականություն, Ե., 1984, 58 էջ:

REFERENCES

1. Abajyan A., Dilbaryan N., Yowzbashyan A., Hayoc lezvi patmowt'yown, EPH hr., E., 2017, 442 e'j:
2. Abeghyan M., Erker h. Z, HSSH GA hr., E., 1974, 847 e'j:
3. Abrahamyan A., Grabari d'er'nark, Lowys hr., E., 1976, 557 e'j:
4. Ar'aqelyan V., Grabari qerakanowt'iwn, Viamir hr., E., 2010, 416 e'j:
5. Ar'aqelyan V., Hingerord dari hay t'argmanakan grakanowt'yan lezown & otwy', Haykakan SSH GA hr., E., 1984, 228 e'j:
6. Manandean H., Yownaban dprocy' & nra zargacman shrjannery', Vienna, 1928, 299 e'j:
7. Mowradyan G., Hownabanowt'yownnery' dasakan hayerenowm, Nairi hr., E., 2010, 291 e'j:
8. S. Barsegh Kesaraci, «Girq pahoc», Mayr At'or' Sb. E'jmiac'in hr., S. E'jmiac'in, 2008, 519 e'j:
9. Ter-Petrosyan L., Hay hin t'argmanakan grakanowt'yown, E., 1984, 58 e'j:

ЗИНА ОГАНЯН - СИСТЕМА СПРЯЖЕНИЯ В ЯЗЫКЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ПЕРЕВОДА "КНИГИ О ПОСТЕ" ВАСИЛИЯ КЕСАРИЙСКОГО

Ключевые слова: "Книга о посте", греческий подлинник, древнеармянский перевод, постклассический грабар, спряжение, причастия, неправильные глаголы, неполные глаголы, наклонение глагола, залог глагола

В статье анализируется система спряжения в языке древнеармянского перевода "Книги о посте" Василия Кесарийского. Текст принадлежит первому периоду армянской переводной литературы, это постклассический древнеармянский литературный язык. Исследование

системы спряжения переводного языка доказывает, что переводчики труда Василия Кесарийского сохранили правила древнеармянского языка, однако есть и некоторые отклонения, своеобразные конструкции, которые встречались в диалектах, в разговорной речи. В глагольной системе есть тенденция упорядочить неправильные глаголы, создавать новые причастия, которые сформировались в габаре после VII века.

ZINA OHANYAN - VERBAL CONJUGATION IN CLASSICAL ARMENIAN TRANSLATION OF THE "BOOK OF FASTING" OF SAINT BASIL OF CAESAREA

Keywords: *Book of Fasting, Greek original, Classical Armenian translation, postclassical grabar, verbal conjugation, participle, irregular verbs, defective verbs, grammatical mood, compound tense, voice*

The system of verbal conjugation of Classical Armenian version of the "Book of Fasting", a homiliarium by fourth-century theologian Saint Basil the Great, is studied. The research aims at identifying the peculiarities of verbal conjugation, employed in this prominent work of the first period of Armenian translated literature, thereby revealing the specifics of the literary language of the time and the worldview of native speakers.

Our analysis of the system of conjugation, featured in the language of translation, demonstrates that the translators of Saint Basil's work adhered to the rules of Classical Armenian, albeit certain deviations, originating from contemporary vernacular, are discernible. The verbal system exhibits trends of regularization of irregular verbs and development of new participle forms, typical of the period after the seventh century AD. We attribute the presence of parallel forms to various levels of language proficiency of scribes over the centuries, as well as to scribal errors.

Ներկայացվել է՝ 24.09.2020

Գրախոսվել է՝ 11.09.2020

Երաշխավորվել է ԵՊՀ Հայոց լեզվի պատմության ամբիոնի կողմից՝
23.09.2020

**ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ ԵՎ ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆ. ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ
ՉՈՒԳԱՀԵՌ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

ԹԱՄԱՐԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ աշխարհընկալում, կենսամտածողություն, իրապաշտություն, կերպարային համակարգ, գրական առնչություն, սոցիալական շեշտադրում, հոգեբանություն, ամբոխային հոգեբանություն

Արևմտահայ ութսունականների իրապաշտ սերնդի երկու ինքնատիպ ներկայացուցիչների՝ Արշակ Չոպանյանի և Լևոն Բաշալյանի գեղարվեստական ստեղծագործությունների միջև գրական առնչությունների գոյությունը խոսում է հեղինակների՝ գրականությանը առաջադրվող պահանջների շուրջ ունեցած ընդհանրական մոտեցումների, աշխարհայացքի և կենսամտածողության նմանությունների մասին:

Գրողներին միավորողը առավելապես հայ մարդու հոգսերով ու ցավերով ապրող հայ գործչի հայրենասեր ու անձնվեր տեսակն է, որը նրանց ուղեկիցը եղավ և՛ հայրենիքում, և՛ հայրենիքից դուրս: Թե՛ Բաշալյանը և թե՛ Չոպանյանը անձնուրաց նվիրումով ծառայեցին հայրենիքի հարատևման և ժողովրդի փրկության գաղափարին՝ ի սպաս դնելով իրենց գեղարվեստական ստեղծագործությունները, գրական-տեսական, հրապարակախոսական հոդվածները՝ բազմաթիվ փորձությունների ու զրկանքների ենթարկելով նաև սեփական անձը: Իհարկե, այս հոդվածում մեզ առավելապես հետաքրքրել է հեղինակների գեղարվեստական արձակում գրական առնչությունների առանձնացումը, որը աշխատել ենք իրականացնել գրողների՝ իրապաշտական գրականությանը ներկայացվող պահանջների շուրջ ունեցած մոտեցումների, կերպարակերտման առանձնահատկությունների, երևույթների խորքային կամ հպանցիկ ներկայացման, պատկերավորման եղանակների, կերպարների հոգեբանության (որոշ տեղերում նաև «ամբոխային» հոգեբանության) դիտարկումների միջոցով:

Լևոն Բաշալյանը արևմտահայ գրական միջավայրում հայտնվեց կարևորագույն մի ժամանակահատվածում, երբ Արփիար Արփիարյանի գլխավորությամբ երիտասարդ գրական-մտավորական սերունդը ակտիվ պայքար էր մղում գրականության մեջ նոր ուղղության՝ իրապաշտության

հաստատման համար, որը 1890-ական թվականներին արդեն իշխող մեթոդ էր արևմտահայ գրականության մեջ:

Լինելով «Արևելք» օրաթերթի, «Մասիս» երկշաբաթաթերթի, հետագայում նաև «Հայրենիք» օրաթերթի գրական մասի պատասխանատու օգնական խմբագիրը՝ Բաշայանը մեծ հոգածությամբ էր վերաբերվում այս պարբերականներին թղթակցող երիտասարդ հեղինակների աշխատանքներին, և պատահական չէ, որ նա է եղել նաև Ա. Չոպանյանի առաջին գրական քայլերի խրախուսողը, անաչառ քննադատն ու ուղղորդողը: Հետագայում «Անահիտ»-ի էջերում այս մասին Չոպանյանը գրում է. «Բաշայանն է որ գրական եղբոր մը ջերմութեամբ գնահատելով իմ սկսնակի էջերուս մէջ ինչ-որ կար դրական ու ինքնայատուկ, ցոյց տալով նաև ձեւի թերութիւնները զոր կը նկատէր անոնց մէջ, եւ հիւրընկալելով զանոնք Արևելքի ու Մասիսի մէջ, մեր գրական հրապարակին վրայ երեսուն դիւրացուց եւ իմ լեզուիս ու ոճիս կազմաւորման մէջ իր ազդեցութեան բաժինն ունեցաւ: Ատոր համար իրեն հանդէպ ունիմ երախտագիտութիւն մը որ անջնջելի է» («Անահիտ», 1934, թիվ 5-6, էջ 97):

Արևմտահայ 80-ականների իրապաշտ սերունդը, գրականության համար ուղենիշ դարձնելով «կյանքն ինչպես որ է» գեղագիտական դրոյթը, իրենց գեղարվեստական ստեղծագործություններով փորձում էր թափանցել առօրյա կյանքի բոլոր անկյունները, գրականության միջոցով բարձրաձայնել հասարակությանը մտահոգող զանազան խնդիրների մասին, գրողական մանրադիտակի տակ առնել միջավայրը, բարքերը, սովորությունները: Լևոն Բաշայանը ևս այս սկզբունքների կրողն էր, այդ պատճառով Փարիզում գտնվող իր կրտսեր, գրչակից ընկերոջը՝ Ա. Չոպանյանին, գրում է. «Մոռցիր ի քեզ գտնվող նախկին մարդը: Նոր կյանք մը շինե քեզի համար, բարոյական նոր կյանք մը: Իջիր էությանդ խորունկները, պրպտե ինքզինքդ ու անողոք ու վստահ ձեռքով մը քաշե ու նետե անկից ինչ որ պետք եղածին չափ մեծ, ազնիվ, վեհ, լայն չես գտներ... Փնտռե գտիր ուղղությունդ ու ա՛լ մի ձգեր զայն: Մի՛ ջանար լոկ միտքդ, ականջդ, աչքերդ կրթելու: Նայե, որ սիրտդ կրթես: Անով պիտի գտնես հոգեկան անդորությունդ ու պայծառությունդ: Աշխատե զորացնելու բոլոր լավ բնազդներդ ու հակումներդ, որք կան մարդուս ներսդին» (Ազնավուրյան... 1972:97-98):

Ավելի ուշ, չնայած գրողների միջև արդեն ձևավորված բարեկամական ամուր կապի, Բաշայանը կարողանում է իսկական գրագետին բնորոշ արդարամտությամբ քննության առնել Չոպանյանի «Թրթռումներ» բանաստեղծությունների շարքը և դրանց մասին տալ անկողմնակալ կարծիք. «Այդ 25 կտոր բանաստեղծութեանց մէջ ամէն

երանգները կան, ամէն փողփողումները, ամէն ճայները, ամէն տեսիլները, ինչ-որ մեր արտաքին զգայարանքներուն ազդեցութեան տակ կ' իյնայ: Բայց ներքին կեանքը որ պիտի թրթռացնէ գանոնք, այդ կեանքն է որ կը պակսի» («Հայրենիք», 1892, թիվ 180): Ըստ գրողի՝ այդ բանաստեղծությունների մեջ կա ամեն բան, «ինչ բնութիւնը ունի իր մէջ տարօրնապէս փայլուն ու անզգաց», «գոյներն ամէնէն ավելի կենդանի», «բոյրերն ամէնէն ավելի թափանցած», բայց բացակայում է ամենակարևորը՝ «այդ անշարժութեանց խօրը թաղված ներքին կեանքը զոր իմաստասէրը դուրս պիտի բերէ եւ զոր բանաստեղծը զգալ պիտի տայ մեզ...» («Հայրենիք», 1892, թիվ 180):

Մեծ քաղաքներում ապրող «փոքր» մարդկանց ճակատագրերը եղել են երկու հեղինակների ուշադրության կենտրոնում: Մուրացկաններ, մարմնավաճառներ, փողոցային երաժիշտներ. ահա այն ընդհանուր կերպարային համակարգը, որին կարելի է հանդիպել նրանց ստեղծագործություններում: Ե՛վ Բաշայանը, և՛ Չոպանյանը կարողացել են մեծ քաղաքների ճոխ ու գունառատ պատկերների կողքին սուր հակադրությունների օգնությամբ ստեղծել մարդկային խիղճն ու զգացմունքները տակնուվրա անող, կամա թե ակամա իրենց ներկայությամբ այդ գեղեցկությունները «աղավաղող», հասարակության մեջ անհավասարությունների մասին աղաղակող «գորշ» ու «ողորմելի» պատկերներ:

Չոպանյանի գործերում հանդիպվող հերոսներից շատերը կանայք են, ովքեր տարբեր միջոցներով, տարբեր պայմաններում պայքարում են կյանքի մատուցած դժվարությունների դեմ: Այդ միջոցներից շատերը անընդունելի են գրողի համար: «Սրբապղծություն», «Փողոցի աղջիկը», «Ստրիտեա Փանայիրին» գործերում գրողը անդրադարձ է կատարել մարմնավաճառ կանանց: Երեք գործերում էլ նկատելի է գրողի ընդգծված քննադատական վերաբերմունքը երևույթի հանդեպ: Չոպանյանը չի փորձում խորամուխ լինել խնդրի անտեսանելի շերտերի մեջ, այլ քննում է այն արդեն «պատրաստ» վիճակում: Թե ի՞նչն է մղել այդ կանանց բռնել անառակության ճանապարհը, թե մինչև այս վիճակին հասնելը ինչպիսի՞ ճանապարհ են նրանք անցել, գրողի մոտ մնում է անորոշ, օրինակ՝ «Սրբապղծություն» պատմվածքում, Չոպանյանը նկարագրում է հուղարկավորության տեսարան. սգակառքերի սև հոսքը սևազգեստ մարդկանց տանում է գերեզմանատուն: Եվ ահա այդ «սևերի» մեջ հայտնվում է անսովոր «սպիտակը». «Բայց ի՞նչ սպիտակություն է, որ սևը կարատե» (Չոպանյան 1988:178): «Սպիտակ»-ի հետ սովորաբար նույնացվում են մաքուր, լուսավոր, անմեղ երևույթները: Սակայն, գրողի կողմից գույնի՝ մարդու գիտակցության մեջ ամրագրված սովորական,

առաջնային իմաստով ընկալելու հանգամանքի խախտումը տանում է այն մտքին, որ շատ հաճախ թվացյալ «սպիտակը» կարող է ավելի «սև» լինել: Այս դեպքում հուղարկավորության սև պատկերի վրա հայտնված երեք անառակ կանանց սպիտակ զգեստներն են իրենց մեջ խտացնում գույնի այսպիսի մեկնաբանությունը. «Այո՛, երեք կիներ են, շուշանաթույր շղարշե հանդերձներով, և այդ կիները երեք ծաղիկներ են մոլության...» (Չոպանյան 1988:178):

Փողոցում հայտնված կնոջ ճակատագրին ու նրա հոգեվիճակին է անդրադառնում նաև արևմտահայ ութսունականների մյուս ներկայացուցիչը՝ Լ. Բաշայանը: Եթե Չոպանյանի գործերում հստակ ընդգծված չեն մարմնավաճառությամբ զբաղվելու խորքային պատճառները, գրողը միայն տվել է բարոյահոգեբանական նկարագրությունը, ապա Բաշայանը շեշտում է երևույթի սոցիալական ակունքները: Սոցիալական ծանր կացության մեջ հայտնված կնոջ խնդիրն է անդրադառնում գրողը «Չարթոնք» նորավեպում: Գործողությունները տեղի են ունենում Փարիզում, երբ «Ծնունդի խթման գիշերը» ամեն ոք շտապում է իրեն նետել համատարած զվարճանքերի ու կրքերի հորձանուտը: Պատկերը տպավորիչ է. զվարճանում է Փարիզը: Հանկարծ բոլոր գունագեղ պատկերները աղոտանում են՝ իրենց տեղը զիջելով փողոցի անկյունում անհույս կանգնած մարմնավաճառ կնոջ ուրվագծին: Թվում է՝ Փարիզը կլանող լույսերի ու գույների մեջ տեղ չպիտի ունենա թշվառության ու ցավի մասին ակնարկող որևէ բան, սակայն անձրևի տակ սարսռացող կնոջ պատկերը այլ բան է ասում: Այստեղ Բաշայանը նկատում է. «Գիշերվա այդ ժամուն, երբ ամենքն ալ, ամենեն անժառանգներն անգամ, ընդհանուր խնջույքին փշրանքներովն իսկ խաբուսիկ երջանկություն մը կվայելեն, իրոք շատ անբախտ ըլլալու է այդ խեղճ կինը, որ անձրևին տակ, դեռ կհամառի անցորդի մը «կառչելու»» (Բաշայան 1962:207-208):

Հեղինակը, որը միաժամանակ նորավեպում նկարագրվող հերոսներից մեկն է, սկզբում անտարբերությամբ անցնում է մարմնավաճառ կնոջ կողքով, հետո վերջինիս կերկերուն ծայնը ստիպում է նրան շրջվել և մի հայացք ձգել այն կերպարանքի վրա, որ կրնակակոխ հետևում է իրեն: Բոպեններ առաջ իր և այդ կնոջ միջև հսկայական անդունդի գոյությանը հավատացող Բաշայանը, լսելով կնոջ սրտառուչ պատմությունը իր ծննդավայրի, հեռվում թողած հարազատների մասին, հանկարծ հասկանում է, որ իրենց միջև գոյություն ունեցող անդունդը «հիմա կլեցվի, խելահեղ արագությամբ մը...» (Բաշայան 1962:213): Հետաքրքրականն այն է, որ երբ մարմնավաճառ կինը Փարիզի փողոցներում խլրտացող ամբոխի չճանաչված մասն էր, դեռևս չկար նրա

մասնավոր պատմությունը, գրողը, անտարբերությունից ու նրա տհաճ ներկայությունից վայրկյան առաջ ազատվելու ցանկությունից զատ, ոչ մի ուրիշ զգացմունք չուներ, սակայն, երբ հասկանալի են դառնում կնոջը այդ քայլին մղող սոցիալական դրդապատճառները, փոխվում է նաև նրա բացասական վերաբերմունքը:

Հետաքրքիր ընդհանրություններ և տարբերություններ կարելի է նկատել երկու հեղինակների հատկապես նկարագրական պատկերներում: Ա. Չոպանյանի այս բնույթի գործերը խմբավորված են «Պատկերներ» խորագրի տակ, Բաշայանի մոտ գործերի նման առանձնացում չկա: Թե՛ Չոպանյանը, թե՛ Բաշայանը կարողացել են խոր դիտողականությամբ տալ կյանքի համընդհանուր նկարագրությունը՝ ամբողջության մեջ ներկայացնելով մարդուն ու նրան շրջապատող միջավայրը՝ շատ հաճախ անկենդան պատկերները դարձնելով միջոց՝ հոգեբանական բացահայտումներ կատարելու համար: Գրողների մոտ նկատելի է հետաքրքրությունը հավաքների, տոնակատարությունների կամ մեկ այլ առիթով առաջացած մարդկային կուտակումների՝ այլ խոսքով ամբոխի հոգեբանության ու վարքագծի հանդեպ: Շատ ավելի բարդ է ներկայացնել ամբոխային հոգեբանությունը, այն դիտարկել իբրև առանձին մասերից բաղկացած համընդհանուր «զանգված», քան այդ ամբոխի մաս կազմող առանձին անհատների ներաշխարհը, ապրումներն ու հոգեվիճակը:

1895 թ. ֆրանսիացի հոգեբան, սոցիոլոգ, պատմաբան Գյուստավ Լե Բոնը, իր «Զանգվածների հոգեբանություն» գրքում գրում է, որ «ամբոխ» բառը սովորական իմաստով անհատների միավորում է, ինչպիսին էլ լինի նրանց ազգությունը, մասնագիտությունը կամ սեռը, և ինչպիսին էլ որ լինեն այն պայմանները, որոնք առաջացրել են այդ միավորումը: Ըստ Լե Բոնի՝ հոգեբանության տեսանկյունից այս բառը ստանում է ամբողջովին այլ նշանակություն: Որոշակի պայմաններում ամբոխը ունի ամբողջովին նոր առանձնահատկություններ, որոնք տարբերվում են այդ ամբոխի մեջ մտնող առանձին անհատների բնութագրություններից: Նա նաև նշում է, որ ամբոխը, գրեթե առանց բացառության, ղեկավարվում է անգիտակցականի կողմից, և քանի որ գիտակցականը չի կառավարում նրան, ամբոխը գործում է պատահականության սկզբունքով: Ենթարկվելով արտաքին ազդակներին՝ ամբոխը ցուցադրում է դրանց փոփոխությունները (հղումը՝ ըստ Լե Բոնի, էջ 4):

Ա. Չոպանյանի հեղինակած «Ամբոխը» վերտառությամբ գործը, ըստ էության, Լե Բոնի ներկայացրած ամբոխային հոգեբանության գեղարվեստական պատկերումն է: Գրողը փորձում է ներկայացնել, թե

ինչպիսի փոփոխությունների է ենթարկվում անհատը, երբ դառնում է ամբոխի մի մասը: Հետաքրքրականն այն է, որ Չոպանյանը ներկայացնում է ամբոխը տարբեր իրավիճակներում ու պայմաններում, ու, դրանով պայմանավորված, ցուցահանում նաև այն բոլոր փոփոխությունները, որոնք նկատվում են ամբոխը ղեկավարող և առաջ մղող հույզերի և ազդակների մեջ:

Ահա ինչ է գրում Չոպանյանը ամբոխի մասին. «Ամբոխը կարսափեցնե գիս, կընեղե գիս, կընկճե գիս և կխռովե գիս: Բնության մեծ տարրերուն պես խորունկ, հզոր ու կույր է ան... Անգիտակից է ան, ու կխլտա հովին համեմատ, որ զայն կցնցի: Ու հովին համեմատ, անոր դեմքը, ինքնին անանձնական ու անգույն, արտահայտություն կստանա» (Չոպանյան 1988:205): Եթե ուշադիր լինենք, ապա Լե Բոնի՝ «ամբոխին» հոգեբանության տեսանկյունից տված ձևակերպմանը այստեղ ևս կարող ենք հանդիպել: Ամբոխը «անգիտակից է», այսինքն այն չի կառավարվում մեր գիտակցականի կողմից, նրա դեմքը՝ «անանձնական ու անգույն», միայն «հովին համեմատ» է խլտում: Այսինքն՝ այստեղ Չոպանյանը ևս խոսում է այն արտաքին ազդակների մասին, որոնք ուղղորդում և առաջ են մղում ամբոխին: «Ամբոխին» տրվող նմանատիպ բնորոշման հանդիպում ենք նաև Լ. Բաշայանի «Սիրո գիշեր» նորավեպում: Նկարագրելով փարիզյան գիշերներից մեկը՝ հեղինակը գրում է. «Ու ամբոխը կանցնի անընդհատ, անդադար, կողմնակի փողոցներեն թափվելով պուլվարներուն վրա, այլազան ու այլատարր բազմություն մը...» (Բաշայան 1962:123):

Զանգվածի մեջ մարդը դառնում է անկառավարելի, նա աստիճանաբար տրվում է այն կրքերին ու ցանկություններին, որ սկզբնապես կային իր մեջ, սակայն վերահսկվում էին գիտակցության կողմից, բայց ամբոխի ներսում նա կորցնում է այդ վերահսկողությունը: Լե Բոնը գտնում է, որ մեկուսացված անհատը ունի իր ռեֆլեքսները ճնշելու ունակություն, իսկ ամբոխը այդ ունակությունը չունի (հղումը՝ ըստ Լե Բոնի, էջ 6):

Չոպանյանը վերոնշյալ ստեղծագործության մեջ «ամբոխը» ներկայացնում է մի շարք «դիմափոխություններով»: Դա փարիզյան գիշերներին անզուսպորեն զվարճացող, Արմաշի ուխտագնացության միստիկ, «ողորմելի», 1895-ի Բաբ-Ալիի ցույցից ոգեշնչված, 1895-ի ջարդերի սարսափից ու ցավից խելակորույս, Րամազանի տոնին մզկիթի շուրջը ժողովված, մոլեռանդ Ամբոխն է, որը ձևավորման պատճառներով պայմանավորված՝ յուրօրինակ հոգեբանական կազմություն է ձեռք բերում:

Երկու գրողների աչքից չի վրիպել գիշերային Փարիզը՝ ընկղմված զվարճանքի, սիրո ու հեշտանքի գրկում: Չոպանյանը քննարկվող գործում առաջին հերթին անդրադարձել է հենց փարիզյան ամբոխին՝ այն համարելով «ոստոստուն, հիմար, սիրուն»: Այս ամբոխի «մոնչյունը» բարկության պահին «վիթխարի քահքահի» է նմանվում: Գրողի ներկայացրած փարիզյան ամբոխը միշտ շարժման ու փոփոխման մեջ է: Ու այդ շարժումը գնալով ուժգնանում է «ծովու մը պես, որ կարծես միայն փրփուրե շինված է» (Չոպանյան 1988:207):

Եթե Չոպանյանի գործում փարիզյան զվարճացող ամբոխի նկարագրությունը հատկապես առանձնանում է աստիճանաբար սաստկացող շարժումների առկայությամբ, ապա Բաշայանի մոտ նկատելի է և՛ շարժումների, և՛ ձայների առատությունը: Սկզբում ձայները աննկատ են, գրեթե անլսելի: Ցերեկվա տաքությունը «մթերած» ասֆալտի արտաշնչանքը, Նոտր-Դամի «սարսոխչ լռությունը» փոխարինվում են հոսող ջրի «մեղմ պղպջանքով», այնուհետև մարդկանց հոսքը իր հետ բերում է նաև ձայների առատություն. ծիծաղ, որ քիչ անց պետք է վերածվի անզուսպ քրքիջի, աղմուկ, որ ավելի է սաստկանում անհամար կառքերի վազքից. «Աղմուկը կբարձրանա ամեն կողմե, անորակելի ժխոր մը, խուլ, մոտ ու հեռու ժխոր մը, լայն ու վիթխարի շունչը, սրտի տրոփումը գոզցես այս քաղաքին, որուն վրա գաղափար մը կարելի չէ կազմել, որ չես գիտեր ինչե՛ կբաղկանա, որուն մեջեն կանցնիս կդառնաս՝ անոր ըմբռնումն իսկ կորուսած» (Բաշայան 1962:123):

Հետաքրքրական է նաև երկու հեղինակների ներկայացրած կրոնական կամ միստիկ ամբոխը: Չոպանյանի մոտ նկարագրվող մի դեպքում քրիստոնյա ժողովուրդն է՝ Արմաշի ուխտավորները, մյուս դեպքում՝ Րամազանի տոնին հավաքված մուսուլմանների մոլեռանդ բազմությունը:

2. Ֆրոյդը «Չանգվածների հոգեբանություն և մարդկային «Եսի» վերլուծություն» աշխատության մեջ, խոսելով զանգվածների հոգեբանության մասին, գտնում է, որ մարդը, որոշ ժամանակ մնալով ամբոխի մեջ, այդ ամբոխից եկող էներգիայի ազդեցությամբ կամ մեկ այլ պատճառով հայտնվում է մի վիճակում, որը հիշեցնում է հիպնոսացված վիճակը: Հիպնոսացված վիճակում վերանում է մարդու գիտակցականը, կամքն ու դատողականությունը: Բոլոր զգացմունքներն ու մտքերը ենթարկվում են հիպնոսողի կամքին (հղումը՝ ըստ Ֆրոյդի, էջ 2):

Ֆրոյդը զանգվածների ձևավորման գործում կարևորություն է տալիս նաև առաջնորդի դերակատարությանը, որը կրոնական ամբոխի դեպքում Քրիստոսն է, ում նա զորքի պարագայում նմանեցնում է հրամանատարի հետ, իսկ այդ զանգվածը ձևավորող ուժը համարում է

Քրիստոսի սերը: Յուրաքանչյուր անհատի կապը Քրիստոսի հետ պատճառ է դառնում նրանց՝ միմյանցից կախված լինելուն (հղումը՝ ըստ Ֆրոյդի, էջ 8):

Ա. Չոպանյանը, խոսելով Արմաշի եկեղեցում հավաքված հավատացյալների բազմության մասին, որոնց մեծ մասը «ցավագարներ», «դժբախտներ» և «հուսահատներ» էին, իբրև նրանց միավորող ուժ համարում է տիրամոր պատկերը: Եվ որքան էլ այդ պատկերը անկենդան է, ինչպես գրողն է նշում, «իր անշարժ, անկենդան աչվրներովը կդիտեր անխոսուկ», այդ խելված ու հաշմված անբոխը շարունակում էր «ոռնալ», «մլավել»՝ սպասելով «Աներևոյթին», «Անկարելիին», «Հրաշքին» (Չոպանյան 1988:207):

Ավելի ահասարուռ տեսարան է նկարագրում Չոպանյանը՝ պատկերելով Բամազանի նախօրեին Տոլմապաղչեի մզկիթը շրջապատած ամբոխը: Եթե նախորդ պատկերում զանգվածին դեկավարող ուժը Տիրամոր նկատմամբ ունեցած հավատն էր ու սերը, ապա այստեղ մենք գործ ունենք շահի զորավոր ուժի հետ: Նկարագրվող պատկերում կառավարության կողմից բաժանվող «ուտեստի թերթերը» շտապում է ձեռք բերել ավազակներից, մուրացիկներից, հաշմանդամներից կազմված խառնակ բազմությունը:

Հետաքրքրական է նաև Լ. Բաշայանի նկարագրած կրոնական ամբոխը: «Արմաշի ուխտագնացությունը» ուղեգրության «Եկեսցե» գլխում, գրողը, խոսելով Տիրամոր պատկերի շուրջ ժողովված բազմության մասին, գրում է. «Ու ձայնարկությունները կհաջորդեն իրարու, հեծկլտունքները ու թառաչանքները օղակ օղակ կբարձրանան օդի մեջ, եկեղեցիին կամարներուն զարնվելով: Խոնված բոլոր այդ ժողովուրդը, հավատքի անդիմադրելի մղման մը տակ, ամբողջ անձնամատույց հոգի մըն է լոկ, առ տիրամայրն ուղղված, անձնամոռաց աղերսանք մը, պաղատանք մը, անոր մեջ հալելու, երկրային կապերեն ազատվելու, դեպի վեր սավառնելու հզոր ըղձանքով մը» (Բաշայան 1962:180): Նկատելի է, որ Բաշայանի նկարագրած պատկերում Արմաշի վանքում հավաքված ուխտավորներին միավորող ուժը կրկին Տիրամոր, երկնային զորության հանդեպ սերն ու հավատն է: Այստեղ ևս, ինչպես Բաշայանի՝ վերևում նկարագրած փարիզյան պատկերում, նկատվում է ձայների առատություն: Ձայնարկություններ, հառաչանքներ, հեծկլտանքներ. սրանք են կազմում նկարագրվող պատկերի առանցքը: Նույնը նկատվում է նաև Չոպանյանի նկարագրած Արմաշի դպրեվանքի պատկերում. «Գիշերային եղերգություններուն լավկան միօրինակությանը մեջեն, զոր գյուղացի աղջիկներուն միամիտ ու գողտր ձայները կերկնցնեին տաճարին գմբեթն ի վեր, դիվահարներու բարձրաղաղակ զառանցանքը,

խենթերու քրքիջը, հաշմերու պաղատանքը, հիվանդներու լացը, ու բոլոր անձկություններն ու չարչարանքները մատնված ու դավաճանված գոյություններուն՝ կպոռթկային, կկուտակվեին, կգալարվեին...» (Չոպանյան 1988:207): Այստեղ ևս գերակշռողը ձայների առատությունն է. գառանցանք, քրքրիջ, պաղատանք, լաց, որոնց աստիճանական սաստկացումը զուգահեռվում է եկեղեցում հնչող «գիշերային եղերգության» հետ:

Գրական ավագ ընկերոջ հոգածությամբ Լ. Բաշայանը միշտ հետևել է Չոպանյանի հաջողություններին, մեծ ոգևորությամբ վերաբերվել «Անահիտ»-ի լույսընծայմանը, հայ գրականությունն ու մշակույթը ճանաչելի դարձնելու գրողի ջանքերին: Չոպանյանն էլ իր հերթին շատ բարձր է գնահատել Լ. Բաշայանի դերը արևմտահայ իրապաշտ շարժման, արևմտահայ աշխարհաբարի ձևավորման, ժամանակաշրջանի համար կարևոր դերակատարություն ունեցող «Արևելք», «Մասիս» և հատկապես «Հայրենիք» պարբերականների տպագրման գործում:

Այսպիսով՝ և՛ Լևոն Բաշայանը, և՛ Արշակ Չոպանյանը իրենց գրական առաջին քայլերը սկսել են Կ. Պոլսում: Հեղինակները ակտիվորեն մասնակցություն են ունեցել արևմտահայ իրականության մեջ 1880-ականներին ծավալվող իրապաշտ շարժմանը՝ գրականությանը առաջադրվող խնդիրներին ու պահանջներին մոտենալով իրապաշտության դիրքերից: Կարծում ենք, այդ է պատճառը, որ թեմատիկ ընդհանրություններ, պատկերավորման ու կերպակերտման առանձնահատկությունների առումով որոշակի նմանություններ կարելի է գտնել գրողների՝ վերը քննարկված գործերում: Այդ ընդհանրությունների կողքին կարելի է նկատել նաև հարցադրումների խորքայնության, գեղարվեստական լուծումների առումով մի շարք տարբերություններ, որոնց նույնպես աշխատել ենք անդրադառնալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արևմտահայ գրողների նամականի, գիրք 6, պր. 1, կազմ. և ծանոթագր. Գ. Հ. Ազնավուրյան, խմբ. Գ.Խ. Ստեփանյան, Երևան, Երևանի համալ. հրատ., 1972, 510 էջ:
2. Բաշայան Լ., Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1962, 283 էջ:
3. Չոպանյան Ա., Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988, 861 էջ:
4. Лебон Г., Психология масс. http://loveread.ec/read_book.php?id=48103&p=4/ 11.09.2020

5. Фрейд З., Психология масс и анализ человеческого „Я“. /<https://www.litmir.me/br/?b=75648&p=2> / 14.09.2020

REFERENCES

1. Ar&mtahay groghneri namakani, girq 6, pr. 1, kazm. & c'anut'agr. G. H. Aznavowryan, xmb. G.X. Step'anyan, Er&an, Er&ani hamal. hrat., 1972, 510 e'j:
2. Bashalyan L., Y'ntir erker, Er&an, Haypethrat, 1962, 283 e'j:
3. Chopanyan A., Erker, Er&an, «Sovetakan grogh» hrat., 1989, 861 e'j:
4. Lebon G., Psihologija mass. http://loveread.ec/read_book.php?id=48103&p=4/ 11.09.2020
5. Frejd Z., Psi'ologija mass i analiz chelovecheskogo „Ja“. /<https://www.litmir.me/br/?b=75648&p=2> / 14.09.2020

ТАМАРА АНДРЕАСЯН - АРШАК ЧОПАНЯН И ЛЕВОН БАШАЛЯН: ПАРАЛЛЕЛЬНЫЙ АНАЛИЗ НЕКОТОРЫХ ПРОИЗВЕДЕНИЙ

Ключевые слова: мировосприятие, образ мышления, реализм, система образов, литературная связь, социальный акцент, психология, психология толпы.

Существование литературных отношений представителей западноармянских двух благочестивых поколений – Аршака Чопаняна и Левона Башаляна говорит о сходстве общих подходов, мировоззрения и жизненного мышления вокруг требований литературы. Объединяет писателей главным образом тип самоотверженного армянского деятеля-патриота, живущего заботами и болью армянина, что сопровождало их и на родине, и за её пределами.

Башалян и Чопанян самозабвенно служили идее сохранения родины и спасения народа, вложив в это свои художественные произведения, литературно-теоретические, публицистические статьи, подвергая себя многочисленным испытаниям и лишениям. Конечно, в этой статье нас более всего интересовало выделение связи в художественной прозе двух авторов, что мы и постарались осуществить посредством анализа подхода писателей к требованиям, предъявляемым реалистической литературой, особенностей создания образов, психологии образов (в некоторых случаях и психологии „толпы“).

TAMARA ANDREASYAN - ARSHAK CHOPANYAN AND LEVON BASHALYAN: PARALLEL EXAMINATION OF SOME WORKS

Keywords: *world outlook, way of thinking, realistic, image system, literary relationships, social accent, psychology, crowd psychology.*

The existence of literary ties between the fictional creations of Arshak Chopanyan and Levon Bashalyan, two original representatives of WestArmenian pious generation of the 80s, testifies to the similarities of the writers in their world outlook, way of thinking and approaches to the literary requirements. These writers are united by the patriotic type of an Armenian figure that is concerned about the suffering of the Armenian people, and that type accompanied them both in the motherland and abroad.

Both Bashalyan and Chopanyan were devoted to the cause of the motherland's preservation and the people's salvation. These ideas were expressed in their literary works and publicistic articles. Of course, in this article we are mostly interested in drawing parallels between the literary relationships in the two writers' prose. We've fulfilled it through the study of the writers' approaches to the requirements of the realistic literature, peculiarities of character drawing, deep or surface methods of presentation, psychology of characters (in some places "crowd" psychology).

Ներկայացվել է՝ 25.09.2020

Գրախոսվել է՝ 23.09.2020

Երաշխավորվել է Գորիսի պետական համալսարանի բանասիրության
և պատմաիրավագիտության ամբիոնի կողմից՝ 18.09.2020

**ՎԱՆԽՈՐՈՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ Վ.
ՇԵՔՍՊԻՐԻ «ՄԱԿԵԹ» ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

ՎԱՇԵ ԱՐՍԵՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ ընտրություն, կանխորոշվածություն, գույակություն, այնկողմնային ուժեր, գոյության Միասնական շղթա, Հերմես Եռամեծ, մրային շղթա

Հողվածում քննության է առնվել Մակբեթի ընտրության խնդիրը վիուկների գույակությունների համատեքստում: Արդյո՞ք Մակբեթն ունի ընտրություն, թե՛ շարժվում է կանխորոշված ապագայի արահետով. հողվածի հիմնական հարցն է, որը լուծվում է պիեսի հերոսների խոսքերի, նրանց մտային շղթաների համադրման միջոցով:

Ատեղծագործության բանալին դրա սկզբում տեղադրելու ավանդույթը չի շրջանցել նաև Շեքսպիրի ամենամոայլ «Մակբեթ» ողբերգությունը, որտեղ գործ ունենք ոչ թե ի սկզբանե ու բացարձակ չար հերոսի կողմից գործվող հանցանքի և դրա հետևանքով չարագործությունների ու դաժան սպանությունների մի ամբողջ շղթայի և, ի վերջո, այդ հերոսի կործանման հետ, այլ (մինչ չարաբաստիկ գույակություններն ու գայթակղվելը) բարոյական և ազնիվ անհատի հետ, (հանգամանք, որ հատկապես է սրում այս պիեսի ողբերգականությունը), որի մեծ ողբերգությունը սեփական տեսակին դավաճանելն ու իր էության փոխակերպումն է, ինչի արդյունքում էլ «Մակբեթը» համարվում է Շեքսպիրի ողբերգություններից մոայլագույնը:

Կա ընդունված կարծիք, որ Շեքսպիրի «Մակբեթը» ստեղծագործություն է դավաճան թենի մասին, որը գայթակղվում է թագավորական գահով և իր կնոջ դրդմամբ ստորաբար սպանում է օրինական թագավոր Դունկանին և նրա մտերիմներին և ի վերջո տիրանում գահին: Բայց մենք այս աշխատանքում լիովին այլ հարցի ենք ցանկանում անդրադառնալ: Հարց, որը քչերն են նկատում պիեսում, և որը քչերն են տալիս, չնայած այն հանգամանքին, որ պիեսը հենց «հարց»-ով, անորոշությամբ ու քառսով է սկսվում, իսկ Մակբեթի արտաբերած առաջին խոսքը (որին հանգամանորեն կանդրադառնանք քիչ ավելի ուշ) նույնպես հակասական ու շփոթեցնող է, իսկ երկրորդ խոսքը հրաման-խնդրանք է քառսը տարածող ու մշուշում թակարդներ

հյուսող վիուկներին՝ «Եթե կարող եք, խոսեցեք. ի՞նչ եք»(Շեքսպիր 1971: 18): Մեր հիմնական հարցն այսպես է հնչում՝ արդյո՞ք Մակբեթն ունի ընտրություն: Եվ եթե կարճ, մի քանի բառով ներկայացնելու լինենք այս պիեսը, արդյո՞ք կարող ենք ասել, որ սա պիես է մի թեմի մասին, որը, չունենալով ընտրություն, դառնում է կանխորոշված ճակատագրի զոհը, լոկ կամակատարը ճակատագրի, որից ոչ միայն հնարավոր չէ փախչել, այլ որի իրագործումը մեծ խորհուրդ ու դաս է մյուսների համար (ճիշտ այնպես, ինչպես փաստում են Հուդա Իսկարիովտացու կերպարի մասին պարականոն գաղափարների կրողներն ու ինքը՝ Հուդան՝ իր ավետարանում): Պիես զոհի և ոչ դավաճանի մասին:

Ի դեպ, մեկ այլ կարևոր նկատառում. առաջին հայացքից թվում է, թե վիուկները գուշակում են ապագան, և այնկողմնային աշխարհից հայտնված այդ էակների գուշակությունները կատարվում են. սակայն դրանք ոչ թե մոտավոր ու խորհրդանշական գուշակություն են անում, այլ պայծառատեսորեն նկարագրում են գալիքը ամենայն մանրամասնություններով: Դրանք ոչ թե գուշակում են ապագան, այլ հստակ գիտեն այն, գիտեն ապագայի սխեմատիկ պլանը: Եվ սրանից կարո՞ղ ենք եզրակացնել, որ վիուկները պիեսի իրականություն են թափանցել ապագայից կամ առնվազն տեղյակ են դրանից (հնարք, որ Շեքսպիրը կիրառում է իր մի շարք ստեղծագործություններում, երբ որոշ կերպարներ, և բնականաբար նրանց օգնությամբ նաև հանդիսատեսը, ավելին գիտեն, քան մյուս կերպարները) և բեմում խաղացվողն արդեն անցյալ է նրանց համար, եղած-ավարտված գործողությունների հաջորդականություն, որի ամեն տառին դրանք նախապես տեղյակ են: Եվ միթե վերոգրյալից հետևություն անելով՝ առաջին հայացքից տրամաբանական չէ այն ենթադրությունը, որ Մակբեթն իրականում ընտրություն չունի և շարժվում է կանխորոշված ապագայի բավիղներով՝ սրանով իսկ վերածվելով ոչ թե ազատ կամք ունեցող սրիկայի, այլ ճակատագրի զոհի, որը, ենթագիտակցորեն հետևելով իր *անվիճարկելի ճակատագրին (անանկե դոգմա)*, վիուկներին կարգադրում է մնալ և խոսել՝«Սպասեցե՛ք դեռ, թերի՛ գուշակներ: / Դեռ ուրիշ բան էլ պետք է հայտնեք ինձ» (Շեքսպիր 1971: 20) (Stay you imperfect souls, tell me more!): Սակայն, դեռ չշտապենք ենթադրություններ անել՝ էլ ավելի խորամուխ լինելով ստեղծագործություն մեջ, քանի որ գործ ունենք մի հեղինակի հետ, որը մարդկային հոգեբանության բարձրագույն գիտակ է, նաև հանդիսատես-ընթերցողին մտային ծուղակը զգելու սիրահար: Շեքսպիրի տողերն ու կերպարների մտքերը հաճախ երկիմաստ են, հաճախ աբսուրդային ու անհասկանալի, նրա ստեղծած իրավիճակները գոյաբանական են, ու կերպարները մշտապես կանգնում են ընտրության

առաջ, և ոչ թե հասարակ մի ընտրության, այլ ընտրության, որ կյանք ու կյանքեր է արժենում:

Առհասարակ ընտրության խնդիրը Շեքսպիրի արվեստում յուրահատուկ և ճակատագրական դեր ունի. այս պիեսում՝ վիուկների գուշակությունները, «Ռոմեո և Ջուլիետ»-ում՝ Մերկուտիոյի և Ռոմեոյի երազները, Կալփուրնիայի տեսիլ-երազը՝ «Հուլիոս Կեսար»-ում, որի գլխավոր հերոսը, լսելով այդ օրը տնից դուրս չգալու իր կնոջ հորդորը, պատասխանում է.

«Հնարավոր է խույս տալ մի բանից,

Որ աստվածներն են վերուստ սահմանել:

Ո՛չ, Կեսարն այսօր պե՛տք է դուրս գնա. որովհետև այս երևույթները

Վերաբերում են աշխարհին նույնչափ, որչափ Կեսարին» (Շեքսպիր

1951: 137) :

Կեսարի հարցն արդիական է նաև Մակբեթի ընտրության պարագայում. «հնարավոր է խույս տալ» վիուկների գուշակություններից, արդյո՞ք կա ընտրություն, թե՞ ապագային հաղորդ այդ էակները լոկ գալիքն են մի պահ հայտնում ու անէանում: Հարցն անչափ էական է, քանի որ ընտրության անհնարինությունը Մակբեթին ազատում է մեղքից և մեղսագործությունից, նրան դարձնում լոկ խաղալիք վերին ուժերի ձեռքում, մի սովորական խամաճիկ: Բայց Մակբեթը բնավ խամաճիկ չէ, նա հզոր զորավար է, որ գիտի և՛ սպանել, և՛ նվիրվել: Եվ ուրեմն, ընտրության անհնարինությունը կզրկեր Շեքսպիրի այս ամենաողբերգական պիեսը հենց ողբերգականությունից, իր հիմնական իմաստից ու նպատակից: Մակբեթն իհարկե ունի ընտրություն, բայց գայթակղությունն ավելի ուժեղ է, նրա մարդկային-կենցաղային կողմն գերակշռում է աստվածային-արարչական կողմին, և մեր հերոսը ստեղծագործ սկիզբը փոխարինում է կազմաքանդման՝ դեկոնստրուցիայի օրենքով: Սակայն ինչպե՞ս է սկսվում այդ կազմաքանդումը, ո՞ր պահից: Ի դեպ, հարկ է նշել, որ Շեքսպիրի այս ողբերգությունը յուրահատուկ է նաև նրանով, որ այստեղ չի գործում Միասնական շղթայի կոնցեպցիան, որը լայնորեն կիրառվել է Վերածննդի մշակույթում, նաև Շեքսպիրի մի շարք ստեղծագործություններում. «Շեքսպիրի որոշ ողբերգություններում հայտնվում են ֆանտաստիկ էակներ, սակայն եթե «Համլետ»-ում ուրվականի հայտնվելը սկիզբ է առնում գոյության Միասնական շղթայի կոնցեպցիայից (ինչը հետևանքն է հանցագործ արարքի իրագործման), ապա «Մակբեթ»-ում վիուկները հայտնվում են հերոսի գործած սպանությունից առաջ. դրանք չարի այն տեսակի ներկայացուցիչներն են, որն ունի ոչ թե ժամանակավոր բնույթ (քառսի ժամանակաշրջանում), այլ աշխարհի մշտական բաղկացուցիչն է» (Лыков 2003: 132): Այս

հանգամանքը փաստում է նաև այն մասին, որ այս պիեսում Շեքսպիրն աշխարհի էության և մարդու հոգեբանության խնդիրներին անդրադառնում է ավելի գլոբալ ու ընդհանրական տեսանկյունից՝ չարի և բարու պայքարը դիտարկելով որպես հավերժական և անլուծելի երևույթ:

Վերլուծենք «Մակբեթի» մեկնարկային տողերը զուտ որպես մտային տրամաբանական մի շղթա. «Ա. Վհուկ. Ե՞րբ պիտի մենք կրկին խմբվինք երեքով, / Որոտով ու կայծակով կամ անձրևով» (Շեքսպիր 1951: 213): Վերոգրյալ տողում մտային շղթան ավելի քան հստակ է և լիովին տեղավորվում է իրավիճակի տրամաբանության հետ: Այնուհետ խոսում է մյուս վհուկը, և մենք հասկանում ենք, որ այս էակները երկխոսում են. «Բ. Վհուկ. – Երբ թո՛հ ու բո՛հն ավարտվի. / Մեկը հաղթե, մյուսն հաղթվի: / Գ. Վհուկ. – Դա կըլինի անկասկած / Դեռ արևը չմտած», և շարունակում նույն տրամաբանությունը, երբ հաղթողի դեպքում, միշտ էլ պարտվող, կամ ինչպես բառացի ասվում է՝ «հաղթվող» պետք է լինի: Վհուկները շարունակում են երկխոսել՝ «Ա. Վհուկ. – Եվ տեղն ո՞ր: / Բ. Վհուկ. – Ցախուտը: / Գ. Վհուկ. – Այնտեղ տեսնենք Մակբեթին: / Ա. Վհուկ. – Եկա, եկա, Գրեյմալքին», սակայն երկխոսության երեքով միաժամանակ ու միաբերան ծնունդ են տալիս ընդհանուր տեքստի տրամաբանության և առհասարակ տրամաբանության մեջ չտեղավորվող մի տող՝ «Ամենքը. – Պաղոկն ահա կանչում է: – Գալիս ենք: / Լավը վատ է, վատը՝ լավ: / Եկեք ճախրենք մեզի մեջ, / Եվ ժանտահոտ օդի մեջ»:

«Լավը վատ է, վատը՝ լավ» միտքը, որ մի յուրահատուկ պարադոքս է, ընդհատում է տրամաբանական շղթան և մեզ տեղափոխում մտային լիովին այլ՝ անտրամաբանական հարթություն: Ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը, որ ստեղծագործության բանալին է և իր թվացյալ անտրամաբանականության մեջ ինքնին ամբողջ պիեսի մտահղացման և կառուցման մեթոդի տրամաբանությունն է: Իսկ վերջին երկտողը՝ «Եկեք ճախրենք մեզի մեջ, / Եվ ժանտահոտ օդի մեջ», կարծես մտային քառսը սրում է եղանակային քառսի պատկերով՝ համադրելով երկու լիովին տարբեր տիրույթներ: Հեղինակը կարծես կրկին շեշտում է, որ պիեսի էությունը սքողված է ու պատված շղարշով, և եթե հանդիսատեսը ցանկանում է տեսնել ավելին, տեսնել ներսը, պիեսի ծպտյալ շերտերը, պետք է լարի իր միտքն ու բոլոր զգայարանները: Միայն այդպես է հնարավոր հասկանալ պիեսի կարևորագույն ու հանգուցային գաղափարը՝ «Լավը վատ է, վատը՝ լավ», որին հանդիսատեսի մեծամասնությունն ուղղակի ուշադրություն չի դարձնում, ընթերցողն էլ հիմնականում ընկալում է որպես պոետական այլաբանություն կամ վերացարկություն ու անցնում առաջ, այնինչ այն հենց ստեղծագործության մեխն է, յուրաքանչյուր երևույթի երկակիության,

երկրևեռության, գիտակցական–անգիտակցական շղթայի, հոգու և անձի երկվության խորհրդանիշը:

Մի շարք գրաքննադատներ և շեքսպիրյան ժառանգության գիտակներ որպես վերոգրյալ բանաձևի սկզբնաղբյուր դիտարկում են Մեծ Անալոգիայի օրենքը, որը վերագրվում է Հերմես Եռամեծին, որի կենսագրության և անձի մասին մեզ շատ բան հայտնի չէ (մոտ. II-IV մ.թ.ա.): Վերջինիցս մեզ են հասել 15 տրակտատներ, որոնցից ամենահայտնին «Ձմրուխտյա հուշատախտակն է», և որտեղ գտնում ենք նման ձևակերպում–բանաձև՝ «Այն, ինչ ներքևում է, նույնական է նրան, ինչը վերևում է: Եվ վերևում գտնվողն էլ նույնական է ներքևում գտնվողին, որպեսզի իրագործի Եզակիի հրաշքը»:

Նշենք նաև, որ Շեքսպիրը համարվում է պիեսի «տարածքը» ամենառացիոնալ ձևով օգտագործող հեղինակներից մեկը: Նրա ոչ մի պիեսում ազատ տարածքներ ու ձգձգված տեսարաններ չկան, չկան բուն գործողության հետ կապ չունեցող կերպարներ, երկարախոսություններ, գործողության մեջ արհեստական հանգույցներ կամ ներդիր տեսարաններ ու կոնկրետ պիեսի բուն խնդրից հեռացող կամ դրա հետ կապ չունեցող զուգահեռ ծավալվող սյուժետային գծեր: Սակայն անգամ այս համատեքստում «Մակբեթ» ողբերգությունն առանձնանում է իր լակոնիզմով, ստեղծագործության ամենասկզբից սյուժեի զարգացման բացառիկ սրընթացությամբ. «Շեքսպիրի որևէ ողբերգությունում ավելորդ ոչինչ չկա, սակայն Մակբեթն աչքի է ընկնում էկոնոմիայի բացառիկությամբ: Գործողությունը ուղղագծորեն ու շեշտակի ընթանում է դեպի ճգնաժամ, և ճգնաժամից դեպի սյուժեի անմիջական գործողությունն ու հիմնաթեման» (The Age of Shakespeare 1964: 241):

Կարծես առաջին արարվածի առաջին տեսարանի՝ «Լավը վատ է, վատը՝ լավ» բանալի–գաղափարի տրամաբանական շարունակությունն է նույն արարվածի երրորդ տեսարանում տեղ գտած այս տողը, որն արտասանվում է Մակբեթի շուրթերով՝ «Երբեք այսպիսի լավ և վատ մի օր դեռ տեսած չըկամ» (Շեքսպիր 1951: 216): Ի դեպ, այսկերպ է հեղինակը ազդարարում իր գլխավոր հերոսի մուտքը բեմ, սրանք Մակբեթի առաջին խոսքերն են պիեսում: Հետաքրքրական է, որ երեք վիուկների զրույցի հանգուցալուծումն ու զագաթնակետային բանալի–գաղափարը ծագում է միաժամանակ նաև Մակբեթի գլխում այն ժամանակ, երբ ինքը դեռ չի հանդիպել վիուկներին, սակայն շարժվում է նրանց ուղղությամբ և ակնթարթներ հետո տեսնելու է այդ տարօրինակ էակներին: Այս իրողությունը Շեքսպիրի ծավալուն մտահղացման խիստ մանրակրկիտ գծագրված կառուցվածքի մասին է խոսում: Յուրաքանչյուր նոր տող հնի շարունակությունն ու տրամաբանական–շղթայական զարգացումն է:

Գայթակղող սատանայի դերը մշտապես վերագրվել է լեդի Մակբեթին, սակայն, խոր քննության դեպքում տեսնում ենք, որ այն պահին, երբ Մակբեթը մեծագույն սիրով գայթակղվում է և վիուկներին հրամայում իրեն պատմել ավելին, նրա կողքին միայն Բանքոն է, իսկ լեդի Մակբեթը անչափ հեռու է ամուսնուց: Մեկ այլ սխալ, որին մշտապես հանդիպում ենք Մակբեթի վերլուծություններն ուսումնասիրելիս: Մակբեթը դիտարկվում է ավելի դրական տեսանկյունից, քան լեդի Մակբեթը, սակայն դա բնավ էլ այդպես չէ: Լեդի Մակբեթի ներաշխարհն ավելի նուրբ ու զգայուն է, քան Մակբեթինը: Հանցանքը գործելուց հետո Մակբեթը կորցնում է քունը, սակայն նրա հոգին դիմանում է տիեզերական մեղանշումին, և նա մինչև վերջ փորձում է առաջ տանել իր չարագործ մտադրությունը: Նույնը չենք կարող ասել լեդի Մակբեթի մասին: Ամուսնու ձեռքով կատարված հանցանքը կնջը հասցնում է խելագարության, այն է՝ հոգու ինքնասպանության, զագրելի իրականության կատարյալ մերժում՝ մեղսավոր հոգու կողմից:

Իսկ միգուցե, «Մակբեթում» վիուկները հայտնվում են այն պատճառով, որ Մակբեթի սրտում արդեն իսկ գործվել է գայթակղության սարդոստայնը: Եվ համաձայն շեքսպիրյան հանրահայտ հնարքի՝ երբ անարդարություն կամ խարդավանք է տեղի ունենում, երկրային և այնկողմնային ուժերը խաչվում են և տեղի են ունենում անոմալիաներ և արհավիրքներ, մեռյալները դուրս են գալիս գերեզմաններից, վիուկներն ու ուրվականները մարդկանց համար դառնում են տեսանելի, փոթորիկ է բարձրանում և այլն:

Վիուկներին կարելի էր համարել նաև Մակբեթի պատրանքի արգասիք, սակայն Շեքսպիրը մեզ այդ հնարավորությունը չի ընձեռում՝ վիուկներին տեսանելի դարձնելով միաժամանակ երկու կերպարի համար՝ Մակբեթի և Բանքոյի (ինչպես Համլետի պարագայում, երբ ուրվականը խոսում է միայն ու միայն Համլետի հետ, չնայած տեսանելի է դառնում նաև մյուսներին): Ի դեպ, վերոգրյալ երկուսը լիովին տարբեր ձևով են ընկալում վիուկներին և հետևաբար նրանց հանդեպ լիովին տարբեր վարք դրսևորում. Մակբեթի համար դառնալով ցանկալի, իսկ Բանքոյի համար՝ անէական, չնայած վիուկների մարգարեությունն երկուսի համար էլ իրականություն է դառնում: Եվ այս կետում կարող ենք վերադառնալ հոդվածի սկզբում արծարծված «ընտրության» խնդրին: Արդյո՞ք գործողությունների ընթացքում ինչ-որ բան կփոխվեր, եթե Մակբեթը չհավատար վիուկներին և չլսեր նրանց գուշակությունն ու չտարվեր ու հրամայեր շարունակել գուշակությունը: Այսինքն՝ վարվեր ինչպես Բանքոն: Թե՛ անհնար էր ազդել գալիք ողբերգական ընտրության և

ողբերգական ոճիրների վրա: Չէ՞ որ Բանքոն արհամարհում է նրանց, չնայած դեմ չէ լսել նաև իր բաժին գուշակությունը.

«Եթե կարող եք դուք ժամանակի սերմերին նայել
Եվ ասել, ի՞նչ սերմ պտուղ պիտի տա և ի՞նչ սերմ՝ ոչ,
Խոսեցե՛ք ինձ էլ, ի՞նձ, որ ոչ ձեզանից շնորհ եմ հայցում,
Ոչ էլ վախենում ձեր չարիքներից» (Շեքսպիր 1971: 19):

Այս հարցի պատասխանը գտնելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Մակբեթի, Բանքոյի և վիուկների հանդիպման մեկնարկին: Չնայած նրան, որ Բանքոն առաջինն է նկատում վիուկներին և նրանց հարց ուղղում. «Կենդանի՞ եք դուք կամ թե այնպիսի՞ արարածներ եք, / Որոնց կարող է մարդ հարցում անել», նրա հարցը մնում է անպատասխան: Ասեմ ավելին՝ վիուկները սկզբում նրան նույնիսկ բարևի չեն արժանացնում, այլ բարևում են միայն Մակբեթին, իսկ երբ Բանքոն պնդում է, որ իր հետ խոսեն, վիուկները պատասխանում են, սակայն նրանց բառերից կարելի է հասկանալ, որ նրանք հստակ տարբերություն են դնում Մակբեթի և Բանքոյի միջև: Վիուկների խայծն ուղղված է Մակբեթին և ոչ Բանքոյին: Եթե Մակբեթին բարևելիս երեք վիուկներն էլ տալիս են Մակբեթի անունը, իսկ նրանցից երկուսը երկու անգամ կրկնում «ողջույն» բառը. «Ա. ՎՀՈՒԿ - Ողջո՛ւյն քեզ, Մակբե՛թ, ողջունում ենք քեզ, ո՛վ թեն Գլամիսի: / Բ. ՎՀՈՒԿ - Ողջո՛ւյն քեզ, Մակբե՛թ, ողջունում ենք քեզ, ո՛վ թեն Կավդորի: / Գ. ՎՀՈՒԿ - Ողջո՛ւյն քեզ, Մակբե՛թ, որ ապագայում արքա կլինես», ապա Բանքոյի պարագայում «բարև»-ը շատ ավելի սառն է. «Ա. ՎՀՈՒԿ - Ողջո՛ւյն: / Բ. ՎՀՈՒԿ - Ողջո՛ւյն: / Գ. ՎՀՈՒԿ - Ողջո՛ւյն» (Շեքսպիր 1971: 19-20): Իսկ այնուհետև, երբ արդեն գուշակություն հայտնող վերջին վիուկը Բանքոյի անունը տալիս է միայն Մակբեթի անունից հետո. «Գ. ՎՀՈՒԿ - Թագավորների ծնող կդառնաս, բայց ոչ թագավոր: / Ուրեմն, ողջո՛ւյն, Մակբե՛թ և Բանքո՛»): Այսինքն՝ վիուկային այս բեմադրությունը նախատեսված էր հենց Մակբեթի համար, որի կանխագագողությունը ճիշտ էր, և որին այնպիսի առաջարկ էր արվելու, որին Մակբեթն արդեն պատրաստ էր, այլապես այդքան հեշտ չէր գայթակղվի ու դառնար կամակատարը անվստահելի ու այլակերպ ուժերի, որոնց ինքը ոչ թե խնդրում, այլ հրամայում է մնալ և խոսել, մնալ և խոսել-ասել ավելին:

Ահա՛, Մակբեթի մտքերն իր անչափ հեռուն գնացող քայլերի մասին, երբ նրա տիկինը դեռ չի էլ կարդացել նամակը: Նամակ, որով ինքը նախապես, թույլ շուտ ցանկացել էր տիկնոջն ավետել վիուկների իր ականջին բարեհունչ գուշակությունը, որից սկիզբ պետք է առներ իր նոր կարգավիճակը, ինչին հասնելու արյունոտ ծրագիրն արդեն շողջողում է նրա գլխում.

«Իշխան Կումբերլանդի... քա՛ր գայթակղության,
Որի վրայից կա՛մ պետք է ցատկեն, կա՛մ վար տապալվեն,
Քանի որ ուղիղ ճամփիս վրա է:
Աստղե՛ր, ծածկեցե՛ք ձեր վառ բոցերը,
Լույսը չտեսնի՛ սև ու խոր իղձերս,
Թող աչքը փակվի ձեռքի վրա, սակայն թող կատարվի այն,
Որ երբ կատարվի, աչքը կսոսկա վրան նայելուց» (Շեքսպիր 1971:

30):

Մակբեթն արդեն իր համար խոչընդոտ է համարում Կումբերլանդի իշխանին՝ Դունկանի ավագ որդի Մալկոմին, որի մասին քիչ առաջ հիշատակել էր վերջինիս հայրը՝ ստիպելով Մակբեթին իր մենախոսության մեջ նրան համեմատել ճանապարհին հայտնված խոչընդոտի՝ «քարի» հետ, որը չվերացնելու դեպքում կտապալվեն իր բոլոր ծրագրերը:

Ինչպես տեսնում ենք, խոսքի բացառիկ նրբանկատությամբ Շեքսպիրը շատ ավելի շատ ինֆորմացիա է հաղորդում հանդիսատեսին, ինչը, սակայն, թատրոնում խաղացվող պիեսի ընթացքում անչափ դժվար է ընկալելն ու հասկանալը: Սակայն պիեսի մանրազնին ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում խորամուխ լինել շեքսպիրյան բացառիկ բառաշերտերի մեջ և տեսնել լեզվական հոգեբանության բազում գլուխգործոց դրվագները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վիլյամ Շեքսպիր, Մակբեթ, «Հայաստան» հրատ., Երևան, 1971:
2. Վիլյամ Շեքսպիր, Ընտիր երկեր, հատոր III, «Հայպետհրատ» հրատ., Երևան, 1951:
3. Վիլյամ Շեքսպիր, Ընտիր երկեր, հատոր I, «Հայպետհրատ» հրատ., Երևան, 1951:
4. Луков В. А., История литературы, изд. “Академия”, Москва, 2003.
5. The Age of Shakespeare, Volume 2, Penguin Books, 1964.

REFERENCES

1. Vilyam Sheqspir, Makbet', «Hayastan» hrat., Er&an, 1971.
2. Vilyam Sheqspir, Y'ntir erker, hator III, «Haypethrat» hrat., Er&an, 1951.
3. Vilyam Sheqspir, Y'ntir erker, hator I, «Haypethrat» hrat., Er&an, 1951.
4. Lukov V. A., Istorija literatury, izd. “Akademija”, Moskva, 2003 .

**ՎԱԿԵ ԱՐՏԵՆՅԱՆ - ՍՐՈԲԼԵՄՆԵՐ ԲԱՆՈՒՄՈՒՄ ԵՎ ՎԻՅՈՐԱ Վ
ՍԵՆՏԵՆՆԵՐ ԱՐՏԵՆՅԱՆԻ «ՄԱԿԵԹ»**

***Ключевые слов:** выбор, предначертанность, предсказание, потусторонние силы, Концепция Единства бытия, Гермес Трисмегист, мысленные цепочки*

В статье исследуется спорная проблема выбора Макбета в контексте предсказаний ведьм. Есть ли в действительности у Макбета выбор, или он следует по предначертанному пути? В этом заключается главный вопрос данной статьи, на который можно найти ответ только сопоставив высказывания и мысленные цепочки героев пьесы.

**VANE ARSENYAN - THE PROBLEM OF PREDESTINED AND CHOICE IN
DRAMA «MACBETH» BY W. SHAKESPEARE**

***Keywords:** choice, predestination, prophecy, otherwordly forces, United Chain of existence, Hermes Trismegistus, mental chain*

The article touches upon the disputable problem of choice of Macbeth in the scope of witches' prophecy. Does Macbeth really have a choice or does he follow the predestined way? This is the main question of the present article, answer to which can be found only by combining the speech and mental chains of the characters of the play.

Ներկայացվել է՝ 05.10.2020
Գրախոսվել է՝ 05.10.2020

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԴԱՐՁԻ ՀԱՐՑՈՒՄ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հիմնաբառեր՝ Հայաստանի Հանրապետություն, արևմտահայ փախստականներ, արևմտահայ փախստականների տունդարձ, Արևմտահայ 2-րդ համագումար, արևմտահայ Գործադիր Մարմին

Արևմտահայ 2-րդ համագումարի կողմից Գործադիր Մարմնի (այսուհետ՝ ԳՄ) առջև խնդիր էր դրվել իրագործելու արևմտահայ փախստականների տունդարձը: Արևմտահայ 2-րդ համագումարը լիազորել է ԳՄ-ին իր որոշումների իրագործումը կազմակերպել «Արարատեան Հանրապետութեան կառավարութեան և խորհրդարանի գործակցութեամբ և համաձայնութեամբ» (Համառոտ Տեղեկագիր;14-15): Տունդարձը հանդիսացել է Հայաստանի Հանրապետության իշխանությունների փախստականական քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Տունդարձի շուրջ ԳՄ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչների միջև տեղի ունեցած բազմաթիվ հանդիպումները և բանակցությունները աստիճանաբար վերածվել են որոշակի գործակցության: Սակայն այդ գործընթացը մնաց անավարտ, քանզի արևմտահայ փախստականների տունդարձի իրականացումը 1919թ. հունիսի սկզբներին դադարեցվել է:

1918թ. փետրվարին Օսմանյան Թուրքիայի զորքերը ներխուժել են Արևմտյան, այնուհետև Արևելյան Հայաստան: Արևմտահայերը՝ համարյա ամբողջությամբ, և արևելահայ ազգաբնակչության մի զգալի մասը բռնել է գաղթի ճանապարհները: Նորանկախ Հայաստանի Հանրապետության (1918-1920թթ.) «Նոր Բայազետի ամբողջ գավառում, Երևանի և Էջմիածնի գավառների կես մասերում, Դարալագյազում, Նախիջևանի գավառի մեկ փոքրիկ մասում և Ղազախի հայկական գավառամասում» փախստականների ընդհանուր թվաքանակը՝ համաձայն 1918թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարի (Հայրապետյան;4), կազմել է 244 հազար մարդ, որից 80 հազար արևմտահայ, 148 հազար արևելահայ փախստականներ (Ա-ԴՈ;527): Փախստականներին սովի և համաճարակների ճիրաններից փրկելու իրական ուղիներից է

հանդիսացել հայրենի բնակավայրեր վերադարձի իրագործումը և տեղերում նրանց կարիքները հոգալու գործի կազմակերպումը: Այդ է պատճառը, որ տունդարձի իրականացումը եղել է հանրապետության իշխանությունների փախստականական քաղաքականության հիմնարար դրոյթներից մեկը: Փախստականների նկատմամբ պետական քաղաքականությունը հանրությանը ներկայացվել է 1918թ. օգոստոսի 3-ին: Հայաստանի Խորհրդում ներկայացված հանրապետության առաջին կառավարության հայտարարությունում այն ձևակերպվել է հետևյալ կերպ. «Տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը՝ մասամբ վերադարձնելով իրանց նախկին տեղերը, մասամբ տեղավորելով նոր վայրերում» (Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.:10-11): Փախստականական քաղաքականությունը Հայաստանի Խորհրդի կողմից օրենսդրորեն ձևակերպվել է 1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին (Հայրապետյան;5): Բաթումի բանակցությունների արդյունքում ամրագրվել է իրենց նախկին բնակավայրեր արևելահայ փախստականների վերադառնալու իրավունքը (Հայրապետյան;6): ԲՆական է, որ Օսմանյան Թուրքիայի իշխանությունների կողմից իրականացվող հայատյաց քաղաքականության առաջնահերթ թիրախ արևմտահայերի հանդիսանալու պայմաններում արևմտահայ փախստականների տունդարձը անհնար է եղել: Հայաստանի Հանրապետության իշխանությունների օժանդակությամբ արևմտահայ փախստականները տեղավորվել են Երկրի, որպես կանոն, ազատ, լքված, հիմնականում նախկին մահմեդական բնակավայրերում (Հայրապետյան;7):

1918թ. նոյեմբերին Համաձայնության (Անտանտի) պետությունների հաղթանակով Առաջին աշխարհամարտի ավարտը տարածաշրջանում ստեղծել է աշխարհաքաղաքական նոր իրավիճակ: Այն Հայաստանի Հանրապետության կառավարությանը հնարավորություն է տվել հրաժարվել Բաթումի ստորացուցիչ պայմանագրից և արևմտահայ փախստականների տունդարձի խնդիրն առաջադրել որպես իր առաջնահերթ լուծումներ պահանջող արտաքին քաղաքական հարց: Տունդարձի խնդրի լուծման անհետաձգելիությունը պայմանավորվել է երկրում ստեղծված ռազմաքաղաքական և սոցիալտնտեսական ծանր կացությամբ, որի նկարագրությունը ներկայացվել է 1918թ. դեկտեմբերի 7-ին Ա. Ջամալյանի¹ Ֆ. Թախթաջյանին² ուղարկված նամակում:

¹ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ:

² Օսմանյան կայսրությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ:

Նկարագրելով «մեր ժողովրդի վիճակը և նրանից բխող կարիքները», նամակի հեղինակը առաջնահերթ անդրադարձ է կատարել հանրապետության ազգաբնակչության ամենաանապահով և խոցելի խավի՝ գաղթականության վիճակին (ՀԱԱ; ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 16): «Գաղթականների վիճակը ուղղակի հուսահատական է,- գրել է Ա. Զամայանը,- նրանց մի մասը չի կարող վերադառնալ երկիր, որովհետև թուրքերը դեռ այնտեղ են և նրանց սարսափը մեծ է, այդ գաղթականներ են Տաճկահայաստանցիք, Ղարսեցիք և Էջմիածնի, Սուրմալուի, Շարուրի, Նախիջևանի և Ախալքալաքի որոշ մասերից եկած ժողովուրդը» (ՀԱԱ; ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 16): Ելնելով երկրում ստեղծված վիճակից, ինչպես նաև «հաշվի առնելով տեղի և ժամանակի հանգամանքները», վերը նշված նամակ-հրահանգում հայ դիվանագիտական ներկայացուցիչներին առաջարկվել է դաշնակիցների առաջ դնել մի քանի «կոնկրետ պահանջներ» (ՀԱԱ; ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 16): Այդ պահանջներից առաջինը վերաբերել է «առանց սպասելու» Արևմտյան Հայաստանը դաշնակից զորքով գրավելուն, ապահովել «որպեսզի տաճկահայ գաղթականությունը, որ այսօր ծանրացած է մեր վրա, վերադառնա այնտեղ» (ՀԱԱ; ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 16): Միաժամանակ՝ Համաձայնության պետությունների առջև դրված նամակ-հրահանգի պահանջներից հինգերորդում նշվել է.- «Հացով, հագուստով և դրամով օգնել մեր գաղթականներին, համապատասխան մարմինների միջոցով տեղաւորելու իրենց վայրերում և վերաշինելու երկիրը» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 16): Փախստականների տունդարձի խնդիրը փաստացի վերածվել է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգային հարցի:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության սահմանների ներքո հայտնված արևմտահայ փախստականները և նրանց ղեկավար շրջանակները տարբեր ժամանակներում և հարթակներում արտահայտել են իրենց ազգային-քաղաքական հիմնանպատակը՝ վերադառնալ Արևմտյան Հայաստան և հայրենի բնակավայրերում ինքնուրույն տնօրինել իրենց հետագա ճակատագիրը: Նրանք ոչ միայն բարձրաձայնել են վերադարձի իրենց անկոտրուն ցանկությունը, այլև 1917թ. Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո իրագործել են մոտ 150 հազար «Վասպուրականի, Տարոնի և Էրզրումի գաւառներէն» արևմտահայերի տունդարձը (Փափագյան;440): Համաձայնության պետությունների հաղթանակը արևմտահայ փախստականների և նրանց ղեկավար շրջանակների մոտ նորից արթնացրել է տունդարձի կամ ինչպես իրենք են անվանել «ներգաղթի» հետ կապված որոշակի ակնկալիքներ: Հայրենագրված արևմտահայ

փախստականների համար տունդարձը իրենց հայրենի բնակավայրեր և «Արևմտեան Հայաստանի համարեա թէ անմարդաբնակ մեր հայրենիքը բազմամարդելու և վերաշինելու, մէկ խօսքով Ներգաղթի խնդիրը» վերածվել է առաջնահերթ լուծում պահանջող ազգային-քաղաքական հարցի (ՀԱԱ; ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 31):

Արևմտահայ 2-րդ համագումարի կազմակերպիչ կոմիտեն դեռևս 1918թ. հունվարի 1-ին «Արևմտյան Հայաստանի փախստական հայության» ուղղված կոչում որպես ազգային-քաղաքական «մեծ» նպատակ մատնանշել է Արևմտյան Հայաստան արևմտահայ փախստականների տունդարձի (ներգաղթի) խնդրի լուծման անհրաժեշտությունը (ՀԱԱ; ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 31): 1919 թ. փետրվարի 6-ից 13-ին Երևանում կայացած է Արևմտահայ 2-րդ համագումարը (Հայրապետյան;8) ոչ միայն ձևակերպել է Հայաստանի Հանրապետությունում գտնվող արևմտահայ փախստականների ազգային-քաղաքական նպատակների և իդեալների իրականացմանն ուղղված քաղաքականությունը, այլև դրանք իրագործելու համար ընտրել է «Արարատեան Հանրապետութեան մէջ ապրող արևմտահայ հատածի «Գործադիր Մարմին» (Համառօտ Տեղեկագիր;15): ԳՄ-ն կոչված է եղել «Արարատեան Հանրապետութեան կառավարութեան և խորհրդարանի գործակցությամբ և համաձայնությամբ» (Համառօտ Տեղեկագիր; 14-15) իրագործել Արևմտահայ 2-րդ համագումարի որոշումները:

Արևմտահայ 2-րդ համագումարում ընդունված կարևոր փաստաթղթերից է հանդիսացել «Ներգաղթի մասին» բանաձևը (Համառօտ Տեղեկագիր;12): «Նկատի ունենալով մօտիկ ապագային տեղի ունենալիք արևմտահայ փախստականներու ներգաղթը դէպի իրենց ծննդավայրը և որ այդ ներգաղթը նպատակայարմար և արդիւնաւետ կը լինի միայն այն ժամանակ, երբ այն կատարւի որոշ կանոնաւորութեամբ, ժողովրդի ֆիզիքական ապահովութեան անհրաժեշտ պայմաններու մէջ»,- նշվել է բանաձևում (Համառօտ Տեղեկագիր;12): Համագումարը հրահանգել է «ընտրելիք մարմնին այժմէն անհրաժեշտ միջոցներու ձեռնարկել պատմական Միացեալ Հայաստանի կառավարութեան մօտ և դաշնակիցներու ներգործօն միջամտութեամբ և աջակցութեամբ պետականօրէն ապահովելու ներգաղթող ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը և պարենաւորման անհրաժեշտ պայմանները, ինչպէս նաև անոր հետևող վերաշինութեան գործի իրականացման անհրաժեշտ տեսլները հաւաքելու» (Համառօտ Տեղեկագիր;12): Ինչպես տեսնում ենք, «Ներգաղթի մասին» բանաձևը հստակ մատնանշել է արևմտահայ փախստականների տունդարձի նպատակները և սկզբունքները, նրա իրականացման գործում համագործակցության հնարավոր կողմերին:

«Համագումարը մեզ տվել է ընդհանուր սկզբունքների տեսակետներ, իսկ մենք պետք է հանդիսանանք այն օրգանը, որը պետք է Համագումարի տաժ տեսակետները գործնական կեանքում իրականացնի: Այդ տեսակետից մենք պետք է Համագումարի անունով և նրա որոշումների համաձայն պետք է միջոցներ ձեռք առնենք մտնելու կառավարական, պետական և օրենսդրական ֆունկցիաների մեջ, առանց այդ խողովակների Գործադիր Մարմինը չի կարող իր ընտրող ժողովրդի կարիքներին ծառայել»,- նշել է 1919թ. մարտի 8-ի ԳՄ-ի նիստի իր զեկուցման մեջ ԳՄ-ի նախագահ Վ. Տերոյանը (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 6 հալ.):

Վերը շարադրվածից ակներև է, որ արևմտահայ փախստականների տունդարձի հարցում ՀՀ կառավարության և ԳՄ-ի քաղաքական նպատակները փաստացի համընկել են: Այդ հանգամանքը հնարավորություն է ստեղծել ՀՀ կառավարության և ԳՄ-ի միջև երկխոսության հաստատմանը և տունդարձի հետ կապված առանձին խնդիրների շուրջ փոխադարձ շփումների իրականացմանը: Այդ ընթացքում հիմքեր են ստեղծվել միմյանց միջև հարաբերությունների հստակեցման և զարգացման համար, ճշտվել է ծավալվող գործակցության սկզբունքները և ձևաչափերը: Արդյունքում՝ տունդարձի հետ կապված հարցերի շուրջ ծագել է որոշակի գործակցություն, որը ունեցել է ընդգծված հատվածական բնույթ: ՀՀ կառավարության և ԳՄ-ի, նրանց առանձին ներկայացուցիչների միջև տեղի ունեցած շփումների և երկխոսության, այդ ընթացքում հաստատված հարաբերությունների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ իրականացված քայլերի, ծավալված միջհատվածական գործակցության արդյունքում ձեռք բերված քաղաքական փորձի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ինչպես հայ ժողովրդի արևմտահայ հատվածի, այնպես էլ Հայաստանի առաջին հանրապետության պատմության բազմակողմանի և ամբողջական ուսումնասիրության համար:

Ներգաղթի հանձնաժողովի նախագահ Ա. Սասունին և տունդարձի հարցի շուրջ համագումարում ելույթ ունեցած պատգամավորներն առանձնակի ընդգծել են արևմտահայ փախստականների հայրենի բնակավայրեր վերադարձը պետական հիմունքներով կազմակերպելու անհրաժեշտությունը («Աշխատանք», 18 փետրվարի 1919): Համագումարի կողմից կոչված լինելով իրագործելու արևմտահայերի տունդարձը, ԳՄ-ն իրեն փաստացի դիտարկել է որպես Հայաստանի Հանրապետության սահմաններում գտնվող արևմտահայ փախստականներին վերաբերող հարցերով պետական կառավարման որոշակի գործարարություններով օժտված մարմին: Ա. Վրացյանը արդարացի նշել է, որ ԳՄ-ն կազմակերպվել է

«պետական հիմունքներով՝ տալով իրեն մի տեսակ նախարարության բնույթ», իսկ իր նախագահին և անդամներին «նախարարական դեր» (Վրացյան; 275): Օրինակ, այդ մասին է վկայում այն փաստը, որ ԳՄ-ի նիստում հարևան պետության պետական կառավարման նորակազմ մարմնի ստեղծման կապակցությամբ «առաջարկում է ողջունել Վրաստանի անդրանիկ Սահմանադիր ժողովը, Գործադիր Մարմնի անունից» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 13): Դրա վկայությունն է հանդիսանում նաև այն, որ ԳՄ-ն «նյութական կողմով հետ չմնաց կառավարությունից. Նախագահին նշանակեց վարչապետական ոտճիկ, անդամներին՝ նախարարական» (Վրացյան; 275):

Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ ԳՄ-ն արդեն իսկ առաջին նիստում՝ 1919թ. փետրվարի 15-ին «լսելով դեր. նախագահ պ. Պոնապարտեանի առաջարկը Պոլիս և Փարիզ գնալու իր ծախսով, որոշում է ուղարկել Պոնապարտեանին, տալով լիազորություն ներկայացնել Համագումարի որոշումները Դաշնակիցներու ներկայացուցիչներուն, Պողոս-Նուբար փաշային, ազգային հաստատություններին և հետամուտ լինել մեր դատի լուծման...» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 2 հակ.): ԳՄ-ն լիազորել է Խ. Բոնապարտյանին «ներկայացնել Գործադիր Մարմինը ուր որ հարկն է և ստեղծել կապ և յարաբերություն դրանց մէջ», «իրազեկ պահել Գործադիր Մարմինը անցուդարձերին», ինչպես նաև հանձնարարել է արևմտահայ փախստականների «ներգաղթի և տնտեսական խնդիրների, ինչպես և վերաշինութեան գործերը ներկայացնել իր տուած հարցերի համապատասխան» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 2 հակ.): Իր գործունեության մասին Խ. Բոնապարտյանը հայտնել է ԳՄ-ին նամակով, որը ընթերցվել է մարտի 13-ի նիստում, «ապա Յօսիկեանը զեկուցում է Ներգաղթի շուրջն արած դիմումների մասին և ապա կարդում ժողովին այն տեղեկագրի պատճենը, որ ներկայացրել է Բոնապարտեանը Անգլիական Թիֆլիսի շտաբին համաձայն Գործադիր Մարմնի ցուցմունքների» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 9 հակ.):

Նման լիազորություններ է տրվել նաև ԳՄ-ի «անդամ Քրմոյեանին, որը Արարատեան Հանրապետութեան Կառաւարութեան յանձնարարութեամբ մեկնում է Տրապիզոն, որպէս դիւանագիտական կցորդ» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 2 հակ): Նրանք փաստացի հանդիսանալու էին արտերկրում ԳՄ-ի լիազոր ներկայացուցիչները՝ ինչը նույնպես վկայել է այն մասին, որ իրեն վերապահել է նախարարության դերակատարություն: Միաժամանակ ԳՄ-ն՝ քննարկելով տունդարձի հարցերով ամերիկացիների կողմից Տիֆլիսում հրավիրվելիք ժողովին մասնակցության հարցը «անհրաժեշտ է համարում երկու անդամ

Գործադիր Մարմնից ուղարկել Տփխիս այդ ժողովին ներկայացնելու Գործադիր Մարմնի ծրագիրը ներգաղթի և այլ կարևոր խնդիրների մասին» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 9 հակ.): Որոշվում է Տփխիս ուղարկել Ա. Սասունուն և Սմբատին (Ս. Բորոյանին) (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 9 հակ.): Այդ որոշումը վերահաստատվում է նաև ԳՄ-ի մարտի 14-ի նիստում (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 10 հակ.): Նույն նիստում քննարկվել է նաև տունդարձի ապահովության հարցը: Զեկուցող Ա. Սասունին, «բերելով այն առաջարկը, որ դաշնակիցներու ղեկավարութեամբ և նրանց անմիջական հրամանատարութեան տակ պէտք է կազմակերպել Արևմտահայ զորամասեր մօտ 12,000-ից» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 11): Այդ հարցի մասին նման որոշում ընդունելով, ԳՄ-ն հաստատել է իր կողմից որդեգրած մոտեցումները այն մասին, որ նա պատրաստ է դաշնակիցների օժանդակությամբ ինքնուրույն զորամասեր ձևավորել՝ իր վրա վերցնելով պետական գործառույթներ և փաստացի անտեսելով Հայաստանի Հանրապետության իշխանություններին:

Տունդարձի իրականացումը անհրաժեշտ էր սկսել մինչև մայիսը: Հակառակ դեպքում անհնար կլիներ հայրենի բնակավայրեր վերադարձած փախստականների կողմից գարնանացանի իրագործումը: Այսպես, օրինակ, Հայաստանի Խորհրդի նախագահ Սահակյանը մարտի 20-ին տեսակցություն ունենալով ԳՄ նախագահ Վ. Տերոյանի հետ «յայտնել է, որ ներգաղթը Արևմտահայութեան համար անյետաձգելի մեկ հարց է, որովհետև եթէ մինչև ապրիլը ժողովուրդ չգնայ հետևապէս չի կարող ցանքս անել» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 12 հակ.): Հաշվի առնելով տունդարձի հրատապության հանգամանքը, համագումարը «Կազմակերպական բանաձևի» 5-րդ կետով պարտավորեցրել է ԳՄ-ին հրավիրել համագումարի 2-րդ նստաշրջանը մայիսի 1-ին, «եթէ մինչ այդ ներգաղթը չէ կատարած և եթէ հնարաւոր է պատգամաւորներու կէսէն աւելին հաւաքել» (Համառոտ Տեղեկագիր;15): Այդ է պատճառը, որ ԳՄ-ն՝ իր 1919թ. փետրվարի 15-ի առաջին նիստում քննարկել է նաև «ներգաղթի բիւջեն»: Որոշում է կայացվել «ներգաղթի մանրամաս բիւժէի կազմութիւնը» հանձնարարել ԳՄ-ի անդամներ Ռ. Դրամփյանին և Ա. Սասունուն (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 1):

Երկու օր անց՝ ԳՄ-ի երրորդ նիստում Ռ. Դրամփյանը հանդես է եկել «ներգաղթի նախահաշվի մասին» զեկուցումով: «Ներգաղթի համառոտ նախահաշիւը» ամփոփվել է «հետևեալ կէտերու մէջ:

1. Ներգաղթի համար պատրաստ է 400.000 ժողովուրդ, որը կազմում է մօտաւորապէս 150.000, որոնց անհրաժեշտ է տալ 5 ամսւայ ուտելիք 1,500,000 փութ և նոյնքան սերմացու հաշւելով՝ իւրաքանչիւր ընտանիքին միջին հաշւով 20 փ. սերմ:

2. Անհրաժեշտ է ներգաղթեալ ժողովրդի համար ճանապարհի ապահովություն և երկրի մեջ կարգը վերականգնել, որի համար պետք են զինուորական և քաղաքական կազմակերպություն:

3. Անհրաժեշտ է իրաքանչիւր ներգաղթող ընտանիքին տալ միանագ 5.000 ռ. բնակարանի յարմարություններու համար, 3.000 ռ. ճանապարհաճախսի և 2.000 ռ. ճանապարհի սնունդի համար:

4. Պէտքէ Երկրի մէջ և թիկունքում ստեղծել պարէն մատակարարող խանութներ և վաճառել ներգաղթող ժողովրդին դրամով:

5. Իրաքանչիւր ընտանիքին պէտքէ տալ մեկ կով և մի զոյգ լծկան կամ համապատասխան միջոցներ դաշտային աշխատանքներու համար:

6. Այս նկատառումներով անհրաժեշտ է կազմել արևմտահայերի վիճակագրություն Արարատեան Հանրապետութեան սահմաններում, Վրաստանի և Ադրբեջանի մէջ և որոշել ժողովրդի տնտեսական վիճակն ու նախապայմանները վաղայ վերաշինութեան գործի մէջ» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 2): Ռ. Դրամփյանի զեկուցումը լլսելուց հետո ԳՄ-ն հանձնարարել է արևմտահայ փախստականների տունդարձի բյուջեն «աւելի մանրամասնութեամբ» ներկայացնել հաջորդ նիստին (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 2): Միաժամանակ ԳՄ-ն «յանձնարարում է ներգաղթի և տնտեսական խնդիրների, ինչպէս և վերաշինութեան գործերը ներկայացնել իր տուած հարցերի համապատասխան» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 2 հակ.): Մարտի 14-ի նիստում ԳՄ-ին ներկայացվում է «Վ. Յօխիկեանի և Ռ. Դրամբեանի կազմած տեղեկագիրը ներգաղթի մասին և ընդունում, որը պէտքէ ներկայացւի Գործադիր Մարմնի կողմից Դաշնակիցներուն» Տիֆլիս գործուղված ԳՄ-ի անդամներ Ա. Սասունու և Սմբատի միջոցով (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թթ. 10 հակ. և 11):

ՀՀ կառավարության հետ հարաբերությունների հարցը ԳՄ-ում քննարկման է դրվել մարտի 13-ին: Մինչ այդ ԳՄ-ն փորձել է հարաբերություններ հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի՝ Հայաստանի Խորհրդի հետ՝ նպատակ ունենալով առնվազն 12 արևմտահայ մուտքագրել խորհրդարանի կազմում՝ նպատակ ունենալով ապահովել Արևմտահայ 2-րդ համագումարի քաղաքական բանաձևը գործադրումը (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 3 հակ.): Մարտի 13-ի ԳՄ-ի նիստում Վ. Տերոյանը հայտնել է, որ պարլամենտը հայտարարում է դադար, ինչի պատճառով «մեզ չի յաջողում Խորհրդարան մտնել, որով յառաջ է գալիս մի նոր հարց, ինչ յարաբերություն պէտք է պահել կառաարութեան հետ և ինչ պարտաւորություններ դնել նրանց վրայ» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 3 հակ.): Հաջորդ օրը Վ. Տերոյանը զեկուցել է ԳՄ-ին, «որ ինքը Արևմտահայ գումարների և փոխառնութեան համար դիմել է Մինստր

Նախագահին պաշտօնապես» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 10 հակ.): ՀՀ վարչապետը՝ ընդառաջելով ԳՄ-ին, լուծել է վերջինիս գործունեության ֆինանսավորման հետ կապված հարցը (Հայրապետյան; 9): Այնուհետև «Մինստր Նախագահը յայտնել է Տերոյեանին, որ պետք է կառավարութեան և Գործադիր Մարմնի յարաբերութիւնը ճշտել: Ժողովը որոշում է բերանացի բանակցութիւններ շարունակել և եթէ որոշակի արտայայտութիւն կը լինի խնդիրը բերել ժողովի» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 10 հակ.): Ինչպես տեսնում ենք, վարչապետը ԳՄ-ի առաջ դրել է ՀՀ կառավարության և ԳՄ-ի հարաբերությունների ճշտման հարցը: Այդ առաջարկը՝ փաստացի, հանդիսացել է երխոսության առաջարկ, ինչը կարելի է համարել սկզբնավորվող գործակցության հաստատման ուղղությամբ առաջին քայլը:

ՀՀ կառավարության և ԳՄ-ի հարաբերությունների ճշտման գործում կարևոր նշանակություն է ունեցել մարտի 17-ի կառավարության որոշումն այն մասին, որ «տաճկահայերի վիճակագրությունը և ներգաղթի կազմակերպումը» հանդիսանում է «պետության ներքին գործ» (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ.:133): Քաղաքական այդպիսի դիրքորոշումը նշանակել է, որ ՀՀ կառավարությունը իր վրա է վերցնում արևմտահայ փախստականների տունդարձի կազմակերպման և իրագործման ողջ պատասխանատվությունը: Խնամատարության նախարարությունից ԳՄ է ուղարկվել նամակ՝ խնդրելով «նշանակել մեկ ներկայացուցիչ Խնամատարութեան մինիստրի հետ ներգաղթը կազմակերպելու համար» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 12 հակ.): Այդ նամակին կցված է եղել կառավարության վերը նշված որոշման պատճեն (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 6, թ. 51): Մարտի 24-ին ԳՄ-ն նամակով դիմել է «Արարատյան Հանրապետության» մինիստր-նախագահին (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 9, թթ. 55-55 հակ.): Ներկայացնելով իր տեսակետը կառավարության նման մոտեցման նկատմամբ, ԳՄ-ն գտել է, որ տունդարձը «հայկական ընդհանուր մի հարց է» և որ հայրենի բնակավայրեր արևմտահայ փախստականների վերադարձի գործը իրականացնելու համար ԳՄ-ն, ըստ ամենայնի, ցանկանում է առաջին հերթին համաձայնության գալ «Հանրապետական կառավարութեան հետ» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 9, թթ. 55): Մնում էր բանակցությունների միջոցով ճշտել թե ինչպիսի կարգավիճակով և ծավալով կլինի ԳՄ-ի մասնակցությունը տունդարձի կազմակերպման և իրականացման գործում:

ԳՄ-ի և ՀՀ կառավարության հարաբերությունները գործակցության վերաճման գործում կարևոր նշանակություն են ունեցել նրանց

ներկայացուցիչների բազմաթիվ հանդիպումների ընթացքում տեղի ունեցած շփումները և բանակցությունները: Ընդ որում այդպիսի հանդիպումների ժամանակ ոչ միայն արծածվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այլև նույնիսկ ձեռք է բերվել համաձայնություն Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության ներկայացուցիչների հետ հանդիպումների և խորհրդակցությունների ժամանակ միասնական, փոխհամաձայնվացված գործելակերպի և դիրքորոշումների մասին: Այսպես, օրինակ, ԳՄ-ի մարտի 25-նիստում Վ. Տերոյանը մասնակիցներին հայտնել է, որ «Խատիսեանը ներգաղթի վերաբերմամբ միանգամայն համաձայն է Գործադիր Մարմնի տեսակետի հետ, որ պետք է Տոմսոնի³ հետ խօսել կտրուկ պահանջներով ներգաղթի վերաբերմամբ» և տունդարձի հարցի շուրջ նա ցանկութիւն է հայտնել մշակել ԳՄ-ի հետ դիմումներ՝ ուղղված դաշնակիցներին:

ՀՀ վարչապետի կամ կառավարության այլ անդամի հետ յուրաքնչյուր մի հանդիպում անվերապահորեն դարձել է քննարկման առարկա ԳՄ նիստերում: Օրինակ՝ ՀՀ կառավարությունը՝ մարտի 24-ի ԳՄ-ի նամակի պատասխանը ձգձգելու պատճառով վերջինիս մարտի 31-ի նիստում քննարկվել է «Գործադիր Մարմնի և կառավարութեան յարաբերութեան խնդիրը» և նշվել է, որ ԳՄ-ն այդ հարցի մասին գրել է ՀՀ կառավարությանը և պահանջել, «որ նա որոշի իր դիրքը, և յատնէ, սակայն մինչև հիմա պատասխան չէ ստացված» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 15 հակ.): Որոշվել է «բերանացի յիշեցնել կառավարութեան» որ պատասխանի (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 15 հակ.): Դրանից հետո առաջարկվել է «համագործակցութեան մի ծրագիր մշակել կառավարութեան հետ աշխատելու՝ տանելու զինուորական, ներգաղթի և այլ խնդիրներ» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 15 հակ.): Ապրիլի 3-ին ԳՄ-ի նիստում Վ. Տերոյանը զեկուցել է ՀՀ վարչապետի հետ հանդիպման մասին, որի ժամանակ նորից խոսել է քաղաքական խնդիրների մասին և առաջարկել Հ. Քաջազնունուն պատասխանել «Արարատեան Հանրապետութեան քաղաքական դիրքը ճշտելու մասին» ԳՄ-ի դիմումին (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 17):

Իսկ ապրիլի 10-ի նիստում Վ. Տերոյանը ասել է, «որ Քաջազնունին յայտնել է, որ ըստ Խատիսեանի հեռագրի բանակցությունները Տոմսոնի հետ մեզ համար բարեհաջող են ընթանում» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 19): ԳՄ-ի ապրիլի 12-ի նիստում Վ. Տերոյանը հայտնել է Ա. Խատիսյանի

³ Այսրկովկասում բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Ուիլյամ Մ. Թոմսոն:

հետ իր տեսակցության մասին: Նա տեղեկացրել է, որ Ա. Խատիսյանը «յայտնել է թե Անգլիական ընդհանուր հրամանատար գեներալ Միլնը շուտով սպասում է Թիֆլիզում, ցանկալի է Գործադիր Մարմինը յատուկ մարդ դրկի Թիֆլիզ գեներալ Միլնի հետ տեսակցելու և ներկայացնելու մեր կարիքները: Խատիսյանը յայտնել է որ Թիֆլիզ գեներալ Տոմսոնը և Բիչը խնդրել են իրեն, իրենց մօտ ուղարկել Արևմտահայ գործիչներ: Տոմսոն յայտնել է, որ մինչև Մայիսի 1-ը գաղթականները չեն կարող գնալ, իսկ Մայիս 1-ից յետոյ գաղթականութիւն իր պատասխանատուութեամբ կարող են գնալ, ըստ Անգլեական ագենտների տեղեկութեանց Էրզրումում կան 2 դիվիզիայ կանոնաւոր զօրք, իսկ վեց վիլայէթում 50,000 հայ ազգաբնակութիւն» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 20): Ինչպես տեսնում ենք ԳՄ-ի և ՀՀ կառավարության գործակցությունը տեղ է գտել նաև Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության հետ դիվանագիտական շփումների ժամանակ:

Մայիսի 4-ին ՀՀ վարչապետին ուղարկված գեներալ Թոմսոնի նամակում նորից նշվել է, որ «ոչ մի զորախումբ Անգլիական կամ Հայկական չի անցնելու թրքական սահմանը, փախստականների վերադարձը Տաճկահայաստան լինելու է իրենց ռիսքով և տեղափոխությունը տեղի է ունենալու Սարիղամիշ-Էրզրում և Շահթախտ-Բայազետ երկաթուղիներով» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 27): Նույն օրը ԳՄ-ի հերթական նիստում քննարկվել է ներգաղթի մասին հարցը: Նիստում ներգաղթի կազմակերպման հարցի շուրջ խոսել են ԳՄ-ի բոլոր ութ անդամները և «նկատի ունենալով, որ ներգաղթի խնդիրը կախած է միանգամայն արտաքին հանգամանքներից – Դաշնակից ուժերից և Գործադիր Մարմինը կամ Հանրապետական կառավարութիւնը ինքնուրոյն կերպով ոչինչ չեն կարող անել», որոշել են «մնալ իր նախկին դիրքի մէջ ներգաղթի»՝ «այսինքն անընդհատ հետապնդել ներգաղթի շուտափոյթ կազմակերպութիւնը» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 28 հակ.):

ՀՀ կառավարության և ԳՄ-ի հարաբերությունների ճշտման գործում առանցքային դերակատարություն է ունեցել ԳՄ-ի կարգավիճակի վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշման պարզաբանման հանգամանքը: Ընդ որում այն տեղի է ունեցել մայիսի կեսերին՝ արևմտահայերի տունդարձի կազմակերպման և իրագործման հետ կապված հարցերի քննարկումների ժամանակ: Մայիսի 13-ին ՀՀ նախարարների խորհուրդը քննարկել է Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու մասին մինիստր-նախագահի պաշտոնակատար, խնամատարության նախարար Ս. Թորոսյանի զեկուցումը: Կառավարությունը որոշել է հանձնարարել վարչապետին

«բանակցությունների մեջ մտնել արևմտահայ կազմակերպությունների հետ Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու հարցի առթիվ» (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ.;187): Զինվորական նախարարին հանձնարարվել է ներկայացնել զեկուցում՝ Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու համար անհրաժեշտ զինական ուժի և նախարարության կողմից այն տրամադրելու հնարավորությունների մասին, իսկ խնամատարության նախարարությանը՝ ներգաղթի համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվ: Միաժամանակ որոշվել է դաշնակիցներին հաղորդել Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու գործում «անգլիական զորքերի սակավության և նրանց շուտ հեռանալու ցանկության պատճառով» դժվարությունների մասին (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 28 հալ.): Մայիսի 15-ին կառավարությունում քննարկվել է մինիստր-նախագահի պաշտոնակատար, խնամատարության նախարար Ս. Թորոսյանի «Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու գործում Արևմտահայ փախստականների Գործադիր Մարմնի ունենալիք մասնակցության մասին» զեկուցումը⁴: ՀՀ կառավարությունը միանշանակ որոշել է «արևմտահայերի ներգաղթի գործը ճանաչել պետական խնդիր» և այն իրականացնել պետության համապատասխան մարմինների միջոցով, իսկ արևմտահայերի ԳՄ-ին «ճանաչել իբրև արևմտահայ կյանքին լավատեղյակ մի հաստատություն, որի խորհուրդներից և գործնական աջակցությունից օգտվելն անհրաժեշտ համարել» և «երբ Մինստրների Խորհրդում քննվեն ներգաղթի վերաբերյալ խնդիրներ, խորհրդակցական ձայնով հրավիրել Արևմտահայ Գործադիր Մարմնի ներկայացուցչին» (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ.;190):

ԳՄ-ի անդամների մոտ առկա էին տարածայնություններ ՀՀ կառավարության հետ գործակցության շուրջ, ինչը հնարավորություն չի տվել նրանց հանգելու միասնական դիրքորոշման: Մայիսի 13-ին ԳՄ-ի հերթական նիստում «կարդացում է Դաշնակից պետութիւններուն Պողոս Նուբար փաշայի, Ա. Ահարոնեանի ներկայացուցած յուշագիրը ներգաղթի մասին: Նախագահն յայտնում է, որ միաժամանակ մեկ գրութիւն են ուղղել դաշնակիցներուն պարենաւորման խնդիրներու շուրջը, իսկ Ա. Ահարոնեան մեկ հատուկ գրութեամբ պահաջել է իրեն տեղ տալ Հաշտութեան Կոնֆերանսում, որպէս Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչի, որ Անդրկովկասի անկախութենէն ետքը թիւրքերու դէմ

⁴ Այդ նիստին մասնակցել է նաև մինիստր-նախագահ Հ. Քաջազնունին

պատերազմող է և այլն» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 30 հակ.): Դրանից հետո Տերոյանը հայտնել է «Խատիսեանի հետ ունեցած տեսակցութեան մասին» և նշել, որ «Խատիսեանը վերադառնալով Թիֆլիզից յայտնում է. 1) Որ Անգլիացիները համաձայնել են, որ կառավարութիւնը վերցնէ Մակուի երկաթգիծը և սկսէ ներգաղթ դէպի Բայազէտ, Ալաշկերտ. 2) Յայտնել են, որ իրենք Անգլիացիներն էրզրումում ամրանում են» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 30 հակ.):

Մայիսի 13-ին կայացած երկրորդ նիստում նորից քննվում է տունդարձի խնդիրը: Արձանագրելով, որ Ա. Խատիսեանը «յայտնել է, որ մի շաբաթից Արևմտահայերի ներգաղթը սկսում է» և «առաջարկել է մտածել այդ մասին» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 31): «Առաջարկում է զինուորական, վարչական, խնամատարական և պարենաւորման գործում ներգաղթի պահուն և նրա ընթացքին Հանրապետական կառավարութեան հետ համագորակցել,- նշվել է նիստի արձանագրությունում,- Այդ տեսակէտեն նախագահը քննութեան է դնում ժողովի հիմնական տեսակէտը. Մնալ մինչ այժմեան մեր դիրքի վրայ, որպէս ներգաղթի իրաւատէր կամ որպէս պաշտօնեաներ: Ընել աշխատանք կառավարական զանազան օրգաններում: Ահա երկու տեսակէտներ, որ յառաջ են եկած առաջինը՝ գործադիր Մարմնի կողմեն, երկրորդը Հանրապետական կառավարութեան կողմեն» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 31): Այդ երկու հիմնական տեսակէտները քննարկելուց հետո նիստում առաջադրվել երեք հետևալ բանաձևերը՝

«1. Կառավարութեան յայտարարութիւնը ներգաղթի առթիւ ընդունել ի գիտութիւն և ներգաղթի պահուն լծել աշխատանքի: 2 ձայն:

2. Վաղլանից և եթ յայտնել կառավարութեան մեր պատրաստականութիւնը անմիջականօրէն մասնակցելու ներգաղթի բոլոր աշխատանքներուն, և մշակել համագործակցութեան ծրագիր: 6 ձայն:

3. Բանակցել Արևմտահայ կուսակցութեան հետ և ներգաղթի մի ընդհանուր համագործակցութիւն մշակել: 3 ձայն» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 31): Վեց ձայնով ընդունվում է երկրորդ բանաձևը՝ ինչը նշանակել է ԳՄ-ում ՀՀ կառավարության հետ գործակցության կողմնակիցների հաղթանակը (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 31): Այնուհետև «յանձնարարում է Ա. Սասունիին, Ա. Կիտուրին, Վ. Քրմոյեանին ներգաղթի համար մշակել համագործակցութեան ծրագիր և ներկայացնել յաջորդ ժողովին ի քննութիւն» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 31): Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախորդած նիստերից մեկում ԳՄ-ն փաստացի մերժել էր իր կողմից ներկայացրած ՀՀ կառավարության հետ գործակցության պլատֆորման, ինչպէս նաև վերը նշված գործակցության կողմնակիցների հաղթանակը, նախագահ Վ. Տերոյանը՝ ունենալով ՀՀ կառավարության

հետ գոծակցության հարցերում առավել արմատական հատվածական դիրքորոշում, հրաժարական է տալիս: Ձայների մեծամասնությամբ Գործադիր Մարմնի նախագահ է ընտրվել ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցության կողմնակից Վ. Քրմոյանը:

Նորընտիր նախագահ Վ. Քրմոյանը Գործադիր Մարմնի մայիսի 17-ի նիստում «յայտնում է, որ Գործադիր Մարմնի ներկայացրած ներգաղթի համագործակցության ծրագիրը կառավարության կողմից ընդունված է. Գործ.[ադիր] Մարմնի նախագահը մասնակցում է Մինիստրական Խորհրդին ներգաղթի հետ կապ ունեցող բոլոր խնդիրներում» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 32 հակ.): Իսկ մայիսի 21-ի նիստում «Ընթացիկ գործերու բաժնում» ընթերցվում է «Հանրապետական կառավարության գրուֆինը համագործակցության մեր առաջարկած ծրագրին ի պատասխան» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 34): Հետաքրքրական է, որ նույն նիստում ներկայցվել է Այսրկովկասում բրիտանական հրամանատարության ներկայացուցիչների և կառավարության անդամների ներկայությամբ արևմտահայերի ներգաղթի մասին վարչապետի տեղակալ Ա. Խատիսյանի զեկուցումը, որտեղ նա մատնանշել է, «որ մեր ժողովրդի համար իրար բաժանող սահման չկայ, որ Միացեալ Հայաստանի գաղափարը ժողովրդական և իրացրած գաղափար է, և որ մեր ժողովուրդը երբեք չի հանդուրժի թիրջական վարչութիւնը» (ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 33 հակ.): Այնուամենայն, ԳՄ-ի և ՀՀ կառավարության միջև սկզբնավորվող գործակցությունը շարունակություն չունեցավ՝ մի կողմից, արևմտահայ փախստականների տունդարձի գործընթացի, մյուս կողմից, ԳՄ-ի գործունեության դադարեցման պատճառներով:

Այսպիսով՝ Արևմտահայ 2-րդ համագումարը պարտավորեցրել է ԳՄ-ին իրագործել արևմտահայ փախստականների տունդարձը՝ «Արարատեան հանրապետութեան» կառավարության և խորհրդարանի հետ «համաձայնության» և «գործակցության» միջոցով: Տունդարձը եղել է Հայաստանի Հանրապետության իշխանությունների փախստականական քաղաքականության հիմնական դրույթներից մեկը: Տունդարձի հետ կապված հարցերի շուրջ ՀՀ կառավարության և ԳՄ-ի միջև տեղի ունեցած շփումների և երկխոսություն արդյունքում ծագել է որոշակի գործակցություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա-ԴՈ (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայության երկունքը, Եր., 2019:
2. Վ. Փափազյան, Իմ յուշերը, Բ հատոր, տպարան Համազգային ընկերության, Պեյրուֆ, 1952:
3. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993:
4. Կ. Հայրապետյան, 1918թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարը Հայաստանի հանրապետությունում, ԵՊՀ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Եր. 2014, էջ. 76-88:
5. Կ. Հայրապետյան, Փախստականների նկատմամբ պետական քաղաքականության օրենսդրական ձևակերպումը Հայաստանի Հանրապետությունում (1918թ. սեպտեմբեր-հոկտեմբեր), ՀՀ ԳԱԱ, «Պատմա-բանասիրական հանդես, N 1 (165), Եր., 2004, էջ. 39-48:
6. Կ. Հայրապետյան, Փախստականների հարցը Բաթումի բանակցությունների ավարտական փուլում, ԵՊՀ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Եր. 2016, էջ. 60-72:
7. Կ. Հայրապետյան, Արևմտահայ փախստականների տեղավորման քաղաքականությունը նորաստեղծ Հայաստանի առաջին հանրապետությունում, ԵՊՀ, «Հայագիտական հարցեր» հանդես, N 3 (12), Եր., 2017, էջ. 112-121:
8. Կ. Հայրապետյան, Արևմտահայ 2-րդ համագումարը, «Բանբեր Երևանի համալսարանի», հասարակական գիտություններ, ԵՊՀ, Եր., 1992, էջ. 136-146:
9. Կ. Հայրապետյան, Միացյալ Հայաստանի հարցը Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ արևմտահայ Գործադիր Մարմնի հարաբերություններում, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի», Եր, 2020, էջ 198-218:
10. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Եր., 2010:
11. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., Եր., 2014:
12. Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, Թիֆլիս, տպ. «Աշխատավոր», 1919:
13. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թթ. 27, 31:
14. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 16:
15. ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 6, թ. 51:

16. ՀԱԱ, Ֆ. 243, ց. 1, գ. 7, թ.թ. 1, 2, 2 հալ., 3 հալ., 6 հալ., 9 հալ., 10 հալ., 11, 12 հալ., 13, 15 հալ., 20, 28 հալ., 30 հալ., 31, 32 հալ., 33 հալ., 34:
17. ՀԱԱ, Ֆ. 243, ց. 1, գ. 9, թթ. 55, 55 հալ.:
18. «Աշխատանք», Եր., 18 փետրվարի 1919:

REFERENCES

1. A-DO (Hovhannes Ter-Martirosyan), Hayowt'yan erkownqy', Er., 2019:
2. V. P'ap'azyan, Im yowshery', B hator, tparan Hamazgayin y'nkerowt'ean, Peyrowt', 1952:
3. S. Vrcyan, Hayastani Hanrapetowt'yown, Er., «Hayastan», 1993:
4. K. Hayrapetyan, 1918t'. hoktemberi 1-i mio'rya mardahamary' Hayastani hanrapetowt'yownowm, EPH, «Patmowt'yown & mshakowyt'» hayagitakan handes, Er. 2014, e'j. 76-88:
5. K. Hayrapetyan, P'axstakanneri nkatmamb petakan qaghaqakanowt'yan o'rensdrakan d'akerpowmy' Hayastani Hanrapetowt'yownowm (1918t'. september-hoktember), HH GAA, «Patma-banasirakan handes, N 1 (165), Er., 2004, e'j. 39-48:
6. K. Hayrapetyan, P'axstakanneri harcy' Bat'owmi banakcowt'yownneri avartakan p'owlowm, EPH, «Patmowt'yown & mshakowyt'» hayagitakan handes, Er. 2016, e'j. 60-72:
7. K. Hayrapetyan, Ar&mtahay p'axstakanneri teghavorman qaghaqakanowt'yowny' norasteghc' Hayastani ar'ajin hanrapetowt'yownowm, EPH, «Hayagitakan harcer» handes, N 3 (12), Er., 2017, e'j. 112-121:
8. K. Hayrapetyan, Ar&mtahay 2-rd hamagowmary', «Banber Er&ani hamalsarani», hasarakakan gitowt'yownner, EPH, Er., 1992, e'j. 136-146:
9. K. Hayrapetyan, Miacyal Hayastani harcy' Hayastani Hanrapetowt'yan ishxanowt'yownneri het ar&mtahay Gorc'adir Marmni haraberowt'yownnerowm, «Banber V. Bryowsovi anvan petakan hamalsarani», Er, 2020, e'j 198-218:
10. Hayastani Hanrapetowt'yan par'lamenti nisteri ard'anagrowt'yownner 1918-1920 t't', Er., 2010:
11. Hayastani Hanrapetowt'yan kar'avarowt'yan nisteri ard'anagrowt'yownner 1918-1920t't', Er., 2014:

12. Hamar'o't Teghekagir Ar&mtahay erkrord hamagowmari & kazmakerpich ko'mite'i hashivy', T'iflis, tp. «Ashxatavor», 1919:
13. Hayastani Azgayin arxiv (HAA), f. 199, c. 1, g. 23, mas 1, t't'. 27, 31:
14. HAA, f. 200, c. 1, g. 145, t'. 16:
15. HAA, f. 243, c. 1, g. 6, t'. 51:
16. HAA, f. 243, c. 1, g. 7, t'.t'. 1, 2, 2 hak., 3 hak., 6 hak., 9 hak., 10 hak., 11, 12 hak., 13, 15 hak., 20, 28 hak., 30 hak., 31, 32 hak., 33 hak., 34:
17. HAA, f. 243, c. 1, g. 9, t't'. 55, 55 hak.:
18. «Ashxatanq», Er., 18 p'etrvari 1919:

КАРЕН АЙРАПЕТЯН - О ВЗАИМОДЕЙСТВИИ ИСПОЛНИТЕЛЬНОГО ОРГАНА ЗАПАДНЫХ АРМЯН И ПРАВИТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПО ВОПРОСУ ВОЗВРАЩЕНИЯ ЗАПАДНОАРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ К РОДНЫМ ОЧАГАМ

Ключевые слова: Республика Армения, западноармянские беженцы, возвращение западноармянских беженцев, Второй съезд западных армян, Исполнительный орган западных армян

Перед Исполнительным органом западных армян Вторым съездом была поставлена задача по осуществлению возвращения западноармянских беженцев к родным очагам. Второй съезд западных армян уполномочил Исполнительный орган организовать реализацию своих решений в согласии и взаимодействии с правительством и парламентом Республики Армения. Возвращение западноармянских беженцев к родным очагам являлось одной из первоочередных задач беженской политики Республики Армения. Многочисленные встречи и переговоры по вопросу возвращения беженцев между представителями Исполнительного органа и правительством Республики Армения переросли в некоторое политическое взаимодействие между этими двумя органами. Однако этот процесс остановился в связи с приостановкой возвращения западноармянских беженцев к родным очагам.

KAREN HAYRAPETYAN - ON THE INTERACTION OF THE EXECUTIVE BODY OF WESTERN ARMENIANS AND THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA ON THE ISSUE OF THE RETURN OF WESTERN ARMENIAN REFUGEES TO THE HOMELAND

Keywords: Republic of Armenia, Western Armenian refugees, immigration to Western Armenia, Second Congress of Western Armenians, Executive Body of Western Armenians

The Executive Body of Western Armenians was tasked by the Second Congress to implement the return of Western Armenian refugees to their homes. The Second Congress of Western Armenians authorized the Executive Body to organize the implementation of its decisions in agreement and cooperation with the government and parliament of the Republic of Armenia. The return of Western Armenian refugees to their homes was one of the primary tasks of the refugee policy of the Republic of Armenia. Numerous meetings and negotiations on the return of refugees between representatives of the Executive Body and the Government of the Republic of Armenia have developed into some political interaction between these two bodies. However, this process came to a halt due to the suspension of the return of refugees from the West to their homes.

Ներկայացվել է՝ 05.10.2020
Գրախոսվել է՝ 05.10.2020

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԵՐԸ ԵՎ
ՊԱՐՍԿԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XIX Դ.
ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ

Հիմնաբառեր՝ իրանահայ հոգևոր թեմեր, Արրպատականի թեմ, Իրանահնդկական թեմ, Գևորգ եպիսկոպոս, Թադեոս եպիսկոպոս, Նասրեդին շահ, բռնի կրոնափոխություն, եկեղեցական կալվածքներ

Հոդվածում փորձ է արվել վերհանել Հայ առաքելական եկեղեցու Ատրպատականի, Նոր Զուղայի կամ Իրանահնդկական թեմերի ջանքերը պարսկահայության իրավա-քաղաքական վիճակի բարելավման ուղղությամբ XIXդ. երկրորդ կեսին: Հատուկ ուշադրություն է դարձվել թեմակալ առաջնորդների ազգանպաստ գործունեությանը և պարսկահայերի կրոնական ազատությունների հարցում գրանցված հաջողությունների վերհանմանը:

XIXդ. երկրորդ կեսին, ինչպես և նախորդ դարերում, հայ առաքելական եկեղեցու իրանահայ թեմերն իրենց ինքնավարության շնորհիվ հանդիսանում էին պարսկահայ գաղթօջախների բնակչության իրավական դրության երեշխավորները և պարսկական պետություն-հայ համայնք իրավա-քաղաքական հարաբերությունները կարգավորող միակ լիազոր մարմինները: Այս գործընթացում կարևոր դեր էր հատկացված թեմակալ առաջնորդներին, որոնք հոգևոր պետեր լինելուց բացի, պարսկական իշխանությունների կողմից ճանաչվում էին հայ համայնքների կառավարիչներ: Պատահական չէր, որ թեմակալ առաջնորդի անձից և նրա գործունեությունից էր կախված այս կամ այն թեմի իշխանության տակ գտնվող հայության բարօրության խնդիրը: Այս առթիվ ավելորդ չենք համարում մեջբերել Նոր Զուղայի պատմությանը քաջագիտակ Հարություն Տեր Հովհանյանցի դիպուկ ձևակերպումը. «Երջանկութիւն և ապերջանկութիւն ժողովրդեանն Հայոց Պարսկաստանի կախի զառաջնորդէն, զի եթէ իցէ առաջնորդն ժողովրդասէր և արիաջան պաշտպանօղ իրաւանց ժողովրդեան, առանց թոյլ տալոյ զրկանաց և անիրաւութեանն, տիրելոյ նոցա՝ անդորրանայ ժողովուրդն, որպէս անդորրացեալ կայ յայսմ ժամանակի շնորհիւ հզօր պաշտպանութեանցն ներկա Սրբազան առաջնորդի /**նկատի ունի Տեր**

Թադեոս եպս. Բեկնազարյանին-Ա.Ա./» (Տէր Յովհաննէանց 1881: 93): Հարկ է նշել, որ Իրանահայ թեմերը 1441թ-ից ի վեր միշտ եղել են Էջմիածնի հոգևոր-իրավական ենթակայության տակ, որը բխում էր դարավոր սովորության իրավունքից և հնագույն եկեղեցական կանոններից (Մարտիրոսյան 2007: 147): Պարսկական իշխանությունները թե՛ Սեֆյան և թե Ղաջարական հարստությունների օրոք Հայոց եկեղեցուն ու նրա թեմերին բավական լայն ինքնավարություն էին շնորհել, որոնք արձանագրվել էին շահական ֆերմաններում: Միևնույն ժամանակ գոնե մինչև XXդ. սկիզբը պաշտոնական որևէ փաստաթղթով չէր սահմանվել պարսկահայության ու հոգևոր թեմերի իրավա-քաղաքական կարգավիճակը:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում պարսից պետության սահմաններում գործում էին Հայ Առաքելական եկեղեցու Ատրպատականի (Թավրիզի) և Նոր Ջուղայի կամ Իրանահնդկական թեմերը՝ Թավրիզ և Նոր Ջուղա կենտրոններով: Ատրպատականի թեմը Սբ. Թադեի վանք կենտրոնով Հայոց եկեղեցու հնագույն կրոնավարչական կառույցներից էր և ժամանակին նրա դերն այնքան մեծ էր, որ յուրաքանչյուր Հայոց նոր կաթողիկոսի ընտրության դեպքում անհրաժեշտ էր թեմակալ առաջնորդի հավանությունը: Մինչև 1833թ. Թադեի վանքը մնաց որպես թեմական կենտրոն, սակայն պարսկահայերի Արևելյան Հայաստան գաղթից հետո, վանքի դերն ու նշանակությունը խամրեց, իսկ թեմական կենտրոնը փոխադրվեց Թավրիզ: Բանն այն էր, որ Թադեի վանքի վիճակի ենթակայության տակ գտնվող Պարսկաստանի հյուսիս-արևմտյան գավառների՝ Բոյի ու Սալմաստի հայության գերակշիռ մասը հեռացավ: Պարսկական իշխանությունների բոլոր ջանքերը Սիմեոն Բզնունի արքեպիսկոպոսի միջոցով ստեղծել այստեղ «Նոր Էջմիածին» ապարդյուն անցան (Մարտիրոսյան 2007: 148-149) և վանքը վերջնականապես կորցրեց իր դերը որպես թեմական կենտրոն: Թավրիզի կամ Ատրպատականի թեմը մինչև XIXդ. կեսերը բավական թշվառ գոյություն էր պահպանում և Էջմիածնից ուղարկված առաջնորդները կամ կարճ շրջան էին կառավարում հոգևոր հոտը կամ էլ հանդիպելով դժվարությունների շուտափույթ հեռանում էին հաջորդ առաջնորդներին թողնելով անխնամ եկեղեցիներ և հազարավոր թումանների հասնող պարտքեր: Սրանց մեջ քիչ թե շատ օգտավետ գործունեություն ծավալեցին Հովհաննես եպս.Ղրիմեցին և Սաթունյան Սրբազանը: Դրությունը կտրուկ փոխվեց թեմում Գեորգ եպիսկոպոսի առաջնորդության տարիներին, ինչ մասին կխոսենք իր տեղում: Հետագա տարիներին, շնորհիվ Նասրեդին և Մոզզաֆարեդին շահերի հայանպաստ քաղաքականության Թավրիզի

հայ բնակչությունը և հոգևոր թեմը ստացան բազում արտոնություններ, որոնց տրամաբանական ավարտը հանդիսացավ 1901թ. ընդունված Ատրպատականի թեմական կանոնադրությունը և թեմական առաջնորդի ընտրության կարգը, որն ամրագրվեց «Ատրպատականի թեմական առաջնորդի ընտրության համար կայանալիք ընտրողական տնդիանուր ժողովի ներքին կանոնադրությունը» վերնագրով փաստաթղթում (Մարտիրոսյան 1969: 172): Նորաստեղծ թեմական խորհուրդը բաղկացած էր 6 անդամից և 7-րդ անդամը հանդիսանում էր թեմակալ առաջնորդը: Ճիշտ է թեմական խորհրդի ստեղծումով սահմանափակվում էր թեմակալ առաջնորդի իրավունքներ, բայց միևնույնն է իրանահայ համայնքի և պետության միջև հարաբերությունների կարգավորման համար լիազորված անձ մնում էր ու ցայժմ հանդիսանում է հոգևոր առաջնորդը:

Նոր Ջուղայի կամ Իրանահնդկական թեմը ձևավորվել է XVIIդ. սկզբներին Շահ Աբբաս-1-ի կողմից Սպահան տեղափոխված հայ բնակչության հոգևոր իշխանությունն ապահովելու նպատակով: Արդեն հաջորդ դարում, երբ Սեֆյան հարստության կործանումից և աֆշարների ու զենդերի միջև արյունալի գահակալական կռիվների արդյունքում բազմաթիվ նորջուղայեցիներ հեռացան երկրից, հաստատվելով աշխարհի տարբեր կողմերում, թեմի հոգևոր իշխանության աշխարհագրությունը փոխվեց և քանի որ հեռացածներից շատերը հաստատվել էին Հնդկաստանում՝ չկտրելով կապերը «փոքր հայրենիքի» հետ, թեմը հին անվան կողքին ստացավ նաև նոր անվանում՝ Իրանահնդկական: Ինչպես և Ատրպատականի թեմի պարագայում, այնպես էլ Իրանահնդկականի դեպքում, մինչև XIXդ. կեսերը վիճակը անմխիթար էր: Հնդկահայ գաղութի թուլացումը բացասական ազդեցություն ունեցավ Նոր-Ջուղայի հոգևոր թեմի համար, քանզի հնդկահայ մեծահարուստները մեծ գումարներ էին նվիրաբերում քաղաքի և շրջակա հայերով բնակեցված գավառների կրոնական և կրթական հիմնարկները պահելու համար: Այս ամբողջին գումարվում էին նաև իրանական քոչվոր ցեղերի ասպատակություններն ու տեղական կառավարիչների անսանձ թալանը: Նորջուղայեցիների հարստությունը և բարեկեցիկությունը շարժում էր տեղական ապադասակարգային տարրերի նախանձը և հրահրվելով տեղի մոլեռանդ մահմեդական տարրերի կողմից կազմակերպում էին հայկական թաղամասերի թալան և ջարդեր: Ճիշտ է իր ժամանակին Ֆաթհալի շահը մի քանի անգամ զսպեց քոչվոր լոռերի ու բախտիարների ավազակախմբերին, բայց ջուղայեցիների իրավական անպաշտպան կարգավիճակը նոր ասպատակությունների և զանազան խժժությունների լայն

հնարավորություն էր տալիս: Ղաջարական առաջին տիրակալները և նրանց նշանակած պաշտոնյաները հրաժարվեցին հաշվի նստել այն արտոնությունների հետ, որոնք ստացել էին նորջուղայեցիները Շահ Աբբաս 1-ց և նրա հետնորդներից: Նոր Ջուղայի և շրջակայքի 30-ից ավելի եկեղեցիներից որպես գործող մնացել էին մի քանիսը: Այս դժվարին պայմաններում թեմակալ առաջնորդներից շատերը ներփակվել էին սեփական հոգևոր հոտի շրջանակներում և երկչուտ փորձեր էին կատարում փոքր ինչ բարելավելու գաղութահայության դրությունը: Ինչպես նշեցինք վերը, պարսկահայության վիճակը կտրուկ փոխվեց Նասրեդին շահի օրոք, որի հայերի հանդեպ բարեխնամությունը հմտորեն օգտագործեց Թադեոս եպս. Բեկնազարյանը, ում ազգանվեր և եկեղեցանպաստ գործունեության մասին կխոսենք իր տեղում: Ինչ վերաբերվում է թեմական կանոնադրությանը, ապա այն ընդունվեց Պարսկաստանում ծավալված հեղափոխական շարժումների ազդեցության տակ 1909թ. և կոչվում էր «Կանոնադրություն Պարսկա-Հնդկաստանի թեմի հայոց ազգային սահմանադրության» (Մարտիրոսյան 2007: 150-151):

Ինչպես Պարսկաստանի ազգային և կրոնական մյուս փոքրամասնությունները, այնպես և հայերը, չնայած որոշ բացառությունների, երկրում գործող շարիաթական օրենքների համաձայն իրավական բազմաթիվ սահմանափակումների էին ենթարկվում: Հայերին չէր թույլատրվում կրել պարսկական զգեստ, անձրևի ժամանակ դուրս գալ տանից, մի քանի անգամ շուկայում ձեռք տալ մթերքին, ձի հեծնել, մզկիթներից բարձր եկեղեցիներ կառուցել և զանգեր հնչեցնել, չէին կարող մեկ հավատից անցնել մյուսին, բացի մահմեդականությունից, իրավունք չունեին զենք կրել, վարել պետակն պաշտոններ և իշխալ մահմեդականներին (Բայբության 2005: 22-23): Դրությունը փոխվեց և բազմաթիվ սահմանափակումներ մեղմացվեցին Նասրեդին և նրա հաջորդ Մոզզաֆար շահերի օրոք: Նասրեդին շահի հայերի նկատմամբ տածած հարգանքից հմտորեն օգտվեցին Ատրպատականի և Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդները, որոնց շնորհիվ լուրջ իրավա-քաղաքական ձեռքբերումներ ունեցան պարսկահայերը: Այս խնդրի հետ կապված ստորև բերենք երկու տիպական օրինակ:

Ատրպատականի թեմի առաջնորդ Գեորգ եպիսկոպոս Վեհապետյանը 1855թ. Նասրեդին շահին մի բողոքագիր է ներկայացրել իր հոգևոր հոտի ծանր դրության մասին: Գեորգ Սրբազանը խնդրել էր շահին իրավա-քաղաքական ու տնտեսական բնույթի մի շարք միջոցներ կիրառել, որոնք նրա կարծիքով կբարելավեին Թավրիզի և հարակից գավառների հայ բնակչության վիճակը: Շահին առաջարկված

միջոցառումներին վերաբերվող արխիվային փաստաթուղթը պահվում է ՀՀ Ազգային արխիվում և առաջին անգամ շրջանառության մեջ է դրել պրոֆեսոր Ա.Գ.Աբրահամյանը (Աբրահամյան 1967: 226-227): 14 կետից բաղկացած բողոքագրում ներկայացված են հետևյալ խնդիրները. 1. Իրավունք չտալ հավատափոխ հային պահանջել իր հարազատների գույքը, որը բխում էր այսպես կոչված «Իմամ Ջաֆարի» օրենքի դրույթներից (Բայբուրդյան 2005: 27) և լայնորեն կիրառվում էր Պարսկաստանում, 2. Արգելել հայերի բռնի հավատափոխությունը, 3. Թույլ չտալ ամերիկյան բողոքական միսիոներներին քարոզչությամբ զբաղվել Պարսկաստանում, 4. Արգելել կալվածատերերին՝ հայ գյուղացիներից պահանջել խոտ և ցախ, 5. Սահմանվածից ավելի մաքս չպահանջել Ռուսաստան մշակության գնացող պարսկահայերից, 6. Արգելել աղջիկ փախցնել և պատժել փախցնողներին, 7. Սանձել Ղարաղաղի խաների և բեկերի անիրավությունները, 8. Օգնել Թավրիզի հայկական Ներսիսյան դպրոցին 250 թուման նպաստով, 9. Պարսկական գյուղերում ցրված հայերին հավաքել մի տեղ, 10. Սիրով վարվել հպատակ հայերի հետ, 11. Թեհրանի և Թավրիզի հայերին ազատել հարկերից, 12. Արգելել անզավակ հայ մարդկանց գույքի գրավումը, 13. Թույլ տալ հայ եկեղեցիներում զանգեր հնչեցնել, 14. Օրինականացնել հայկական եկեղեցիների կալվածքների սեփականության իրավունքը (Աբրահամյան 1967: 226-227): Իր ժամանակի համար թեմակալ առաջնորդի վերոհիշյալ առաջարկությունները բավական համարձակ էին, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ բողոքագրի առաքումից ոչ շատ առաջ Թավրիզում մոլեռանդ մահմեդականները երկու անգամ 1848 և 1850 թվականներին խժոժություններ էին կազմակերպել հայերի դեմ և ջարդեր կազմակերպելու փորձեր էին արել, որոնց արդյունքում նույնիսկ հայերի բռնի մահմեդականացման դեպքեր էին գրանցվել: Թավրիզի փողոցային խուժանը և յուրապենացված հասարակության մաս կազմող լրթիները, օգտվելով տեղական իշխանությունների բացահայտ թողտվությունից և հայերի իրավական խոցելի, պետականորեն չկարգավորված կարգավիճակից, փորձեցին տիրանալ հայերի գույքին և միայն կենտրոնական իշխանությունների պատժիչ գործողությունների արդյունքում հաջողվեց հանդարտեցնել իրավիճակը քաղաքում (Բայբուրդյան 2005: 25): Գետրգ Սրբազանը լավ էր հասկանում, որ նման դեպքերը կրկնվելու միտում ունեն և շահական հրամանագիրը ստանալով կկարողանա իր հոգևոր հոտը պաշտպանել հետագա ոտնձգություններից: Նասրեդին շահը բավարարեց Գետրգ եպիսկոպոսի բողոքագրի 13 կետերը՝ մերժելով հայոց եկեղեցիներում զանգահարության պահանջը: Շահը և նրա շրջապատը լավ էին

հասկանում, որ նույնիսկ պարզ զանգահարության հանգամանքը կարող էր նորից գրգռել մոլեռանդ ամբոխին և պատրվակ հանդիսանար նոր խժոժությունների համար Թավրիզում և Թեհրանում: Շուտով հրապարակվեց շահական ֆերման (հրովարտակ), որը Պարսկաստանում բարձրագույն իրավական ակտի ուժ ուներ և որում ամրագրված էին Ատրպատականի հոգևոր թեմի հովանու տակ գտնվող հայերի իրավունքները: Գեորգ Եպիսկոպոսի ջանքերով ձեռք բերված իրավունքները դրական դեր խաղացին Ատրպատականի հայերի կյանքում ինչը արձանագրում են ժամանակակիցները և իրանահայ գաղութի ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողները: Նազարեթ Գորոյանցը այսպես է բնութագրում Գեորգ Եպս. Վեհապետյանին. «Փառահեղ դեմքով, քաղաքավար ձևերով, ծանրաբարո մեկն էր: Գիտեր ըստ պատշաճի վարվիլ օտարներու հետ և իր արժանապատվությունը հարգել տալ: 1855-ին Թեհրան գնաց և կառավարության կողմանե շատ պատվով ընդունվեցավ և հաջողեցավ հրովարտակներ և արտոնագրեր ձեռք բերել» (Գորոեանց 1968: 356):

Նասրեդին շահը գահ բարձրանալուց հետո ձեռնարկել էր Պարսկաստանում տնտեսական բարեփոխումների լայնածավալ գործընթաց, որը կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր պարսկահայ համայնքների գործուն մասնակցությունը երկրի հետմնաց ու քայքայված տնտեսության վերականգնման ուղղությամբ: Շահը և իր շրջապատը քաջ գիտակցում էին, որ պարսկահայ համայնքներին տնտեսական, իրավական և կրոնական բնույթի որոշ արտոնությունների տրամադրումը դրական խթան կհանդիսանան պարսկական պետության հպատակ ձեռներեց հայերի տնտեսական ներուժի բազմապատկման համար ի շահ պարսկական պետության:

Գեորգ Եպս. Վեհապետյանից ոչ պակաս ազգանվեր և եկեղեցանվեր գործունեություն ծավալեց նաև Նոր Զուղայի կամ Իրանահնդկական թեմի առաջնորդ Թադեոս Եպս. Բեկնազարյանը, ով իր առաջնորդության 12 տարիների (1851-1863թթ.) ընթացքում կարողացավ բազմաթիվ արտոնություններ և շնորհներ ձեռք բերել պարսկական իշխանություններից ի նպաստ Նոր Զուղայի և շրջակա հայաշատ գավառների հայ բնակչության: Հարություն Հավհանյանցի վկայությամբ 1848թ. Նոր Զուղայի առաջնորդ Հովհաննես Եպս. Սուրենյանցի մահից հետո թեմը և մայրավանքը գտնվում էին ծայրահեղ ծանր վիճակում, միայն հազար թուման կազմում էր Ամենափրկիչ վանքի պարտքը: Նորջուղայեցիները մի քանի անգամ խնդրագիր ուղարկեցին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին իրենց էջմիածնից առաջնորդ նշանակելու համար: Ի վերջո կաթողիկոսի 1851թ. հունիսի 3-ի կոնդակով

Թադետու վրդ. Բեկնազարյանը ստանալով եպիսկոպոսական գավազան նշանակվեց թեմակալ առաջնորդ (Տէր-Յովնանեանց 1881: 81): Մեկ այլ ժամանակակից հեղինակ՝ Ն.Գորոյանցը հակիրճ բնութագրում է Թադետու Սրբազանի ազգանպաստ գործունեությունը. «1851թ. Տ.Տ.Ներսես կաթողիկոսի կոնդակով Թադետու եպիսկոպոս Բեկնազարյանը ժամանեց Նոր Զուղա: Այս ազատական թեմակալ առաջնորդի ազգագուտ գործերը շատ էին և բազմատեսակ: Յուր աշխատության և դիմումների շնորհիվ Սպահանի թեմի հայերն ազատեցան զինվորատվութենե, որի պատճառով շատ կեղեքմանց և հարստահարության կենթարկվեին: Զուղայեցվոց հարկատվությունն ու կալվածական տուրքերն չափավորվեցան, հարստահարողներու և բռնակալներու հեղինակությունն ոչնչացավ: Թեհրան երթալով հաջողեցավ Վեհափառ Շահեն (**Նասրեդին շահ-Ա.Ա.**)ստանալ հրովարտակ մը, որով գավառի հարկատվությունը թեթևացավ, վաճառականները և ուրիշ հայերն պարսից հավասար տուրք միայն պարտավոր եղան վճարել: Սուքիասյան Մարգարի և Հ.Հարությունյանի տիկին՝ Մարիամի օժանդակությամբ Նոր Զուղայի մեջ երեք դպրոց հաստատեց: Այսպես, շատ ժամանակ իմաստությամբ և խոհեմությամբ և շրջահայացությամբ կառավարելով, կնքեց յուր բազմարդյուն կյանքը և թաղվեցավ Ամենափրկիչ եկեղեցու Ավագ դրան մոտ» (Գորոեանց 1968: 365): Թադետու եպիսկոպոսի ջանքերը Նոր Զուղայի և Փերիայի հայ բնակչության անձի ապահովության, հարկերի և տուրքերի թեթևացման, հայ երիտասարդներին զինվորագրությունից ազատելու ուղղությամբ իրավամբ անգնահատելի էին: Եվ այս գործում ներդնելով մեծ եռանդ ու դիվանագիտական ակնառու հմտություններ, Թադետու Սրբազանը կարողացավ շահել Նասրեդին շահի և արքունիքի բարյացկամությունը և ստանալ շահից մի քանիստայանպաստ ֆերման ու արտոնագիր: Թեմակալ առաջնորդը կարողացավ ապացուցել, որ տեղական իշխանությունները շրջանցելով գոյություն ունեցող իրավական ակտերը, ապօրինաբար հավելյալ հարկ ու տուրք էին գանձում հայ բնակչությունից, որը գնում էր ոչ թե պետական գանձարան, այլ նստում էր այդ իշխանիկների գրպանում: Շահի հատուկ ֆերմանով արգելվեցին վերոհիշյալ ապօրինի գանձումները և բացի այդ որոշվեց, որ նորջուղայեցիներն ու փերիացի հայերը արքունի գանձարան պետք է վճարեն նույնքան հարկ, որքան տեղացի պարսիկները: Պարսկահայության այս հատվածի համար իրավա-քաղաքական առումով այս որոշումները առաջընթաց քայլ էր, որը հետագայում նպաստեց գաղթօջախի վերածնունդին և նույնիսկ տեղի հայ բնակչության քանակական աճին: Թադետու եպիսկոպոսի ջանքերով կարծես թե լուծվեց քոչվոր ցեղերի՝ լոռերի և բախտիարների, ավազակային

հարձակումներից հայ բնակչության ապահովության հարցը պետական բարձր մակարդակով: Այս քոչվոր ավազակները պարբերաբար հարձակվում և թալանում էին Նոր Ջուղայի և շրջակա հայկական բնակավայրերի հայերին՝ պահանջելով նույնիսկ հարկ վճարել իրենց: Երբ պարսկական պետական հարկահանները գալիս էին հայկական բնակավայրեր պետական տուրքերը գանձելու, հայերը հարցնում էին.«Հիմա ու՞մ հարկ վճարենք, լոռերին, բախտիարներին, թե շահին»: Թաղետոս Եպիսկոպոսի պահանջով Թեհրանից ժամանած կառավարական կանոնավոր բանակը ցրեց բախտիարների ավազակախմբերը, իսկ դրանց պարագլուխները ձերբակալվեցին և պատվեցին (Աբրահամյան 1967: 227, Մարտիրոսյան 2007: 150): Ավելորդ չենք համարում փաստել, որ 1857թ. Նոր Ջուղայի հոգևոր դասը և աշխարհականները ժողով գումարեցին և 31 կետից բաղկացած «Երախտագիտության հայտարարություն» ուղարկեցին Աբ.Էջմիածնի Սինոդ: Բավական ընդարձակ այս փաստաթղթում մանրամասն նկարագրվում էին Թաղետոս Սրբազանի այն բոլոր արժանահիշատակ գործերը, որոնք նպաստ էին բերել Նոր Ջուղայի և գավառի բնակչությանը, հնդկահայությանը, եկեղեցաշինությանը և այլն (Տէր-Յովնանեանց 1881: 82-89):

Գեորգ և Թաղետոս Եպիսկոպոսների թափած ջանքերը պարսկահայության իրավա-քաղաքական կարգավիճակի հստակեցման, տնտեսական և սոցիալական որոշակի արտոնությունների ձեռքբերման ուղղությամբ շուտով տվեցին իրենց դրական արդյունքները՝ Նասրեդին և Մոզզաֆարեդին շահերի գահակալության օրոք: Ոչ կրոնափոխ հայերին սկսեցին վստահել պետական և արքունի պաշտոններ,⁵ օրենսդրական կարգով պարսկահայերը վերցվեցին պատության հովանավորության տակ՝ ձեռք բերելով «հավատարիմ ժողովրդի» կարգավիճակը, ինչը միշտ այդ անիրագործելի երևույթ էր համարվում: Նասրեդդին շահի հայանպաստ ֆերմաններից մեկում նշվում էր, որ. «հայերը լավ հպատակներ են և տերության հավատարիմ քաղաքացիներ»: 1858թ. Նասրեդին շահը հրապարակեց մի հրովարտակ, համաձայն որի Պարսկաստանի բոլոր նախկին տիրակալների հայերին շնորհված իրավունքներն ու արտոնությունները ուժի մեջ են մնում և պահպանվում են (Բայբուրդյան 2005: 26):

⁵ Մահմեդականություն ընդունած բազմաթիվ հայեր վաղուց ի վեր բարձր պետական և զինվորական պաշտոններ էին վարում Պարսկաստանում, որոնցից շատերը մեծ վաստակ ունեին երկրի առջև:

Ամփոփելով փաստենք, որ շնորհիվ Ատրպատականի և Իրանահդկական հոգևոր թեմերի ազգանպաստ գործունեության մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հաջողվեց արմատական փոփոխությունների հասնել պարսկահայության իրավա-քաղաքական կարգավիճակի բարելավման խնդրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Գ.Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.Բ, «Հայաստան» հրատ, Երևան, 1967:
2. Վ.Բայբուրդյան, Էջեր իրանահայության պատմությունից XIX դարում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2005:
3. Ն.Յ. Գորոեանց, Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968:
4. Հ.Հ.Մարտիրոսյան, ժամանակակից իրանահայ գաղութի ինքնավարության մարմինները և իրավական դրություն, Պատմա-բանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ հրատ, № 1 (171), Երևան, 1969
5. Հ.Հ. Մարտիրոսյան, Իրանահայ գաղութի պատմություն, «Զանգակ-97», հրատ., Երևան, 2007
6. Յ.Տէր Յովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. II, Նոր Ջուղա, 1881, էջ 93:

REFERENCES

1. A.G.Abrahamyan, Hamar'ot ovragic' hay gaght'avayreri patmowt'yan, h.B, «Hayastan» hrat, Er&an, 1967:
2. V,Baybowrdyan, E'jer iranahayowt'yan patmowt'yownic XIX darowm, Merd'avor & Mijin Ar&elqi erkrner & jhoghovowrdner, h.XXIV, HH GAA Ar&elagitowt'yan institowt, «Zangak-97» hrat., Er&an, 2005:
3. N.Y. Goroeanc, Parskastani hayery', T'ehran, 1968:
4. H.H.Martirosyan, Jhamanakacic iranahay gaghowt'i inqnavarowt'yan marminnery' & iravakan drowt'yown, Patma-banasirakan handes, HH GAA hrat, № 1 (171),Er&an, 1969
5. H.H. Martirosyan, Iranahay gaghowt'i patmowt'yown, «Zangak-97», hrat., Er&an, 2007
6. Y.Te'r Yovhaneanc, Patmowt'iwn Nor Jowghayow or yAspahan, h. II, Nor Jowgha, 1881, e'j 93:

АРМАН АНДРИКЯН - ДУХОВНЫЕ ЕПАРХИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ ИРАНА И ПРАВОВОЕ-ПОЛИТИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ПЕРСИДСКИХ АРМЯН ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

Ключевые слова: *духовные епархии иранских армян, Атрпатаканская епархия, Иранско-Индийская епархия, Епископ Геворг, Епископ Фаддей, Насреддин Шах, принудительное обращение, церковные усадьбы*

В статье сделана попытка представить роль и усилия епархий армянской апостольской церкви Атрпатакана и Новой Джуги в деле улучшения правового и политического положения персидских армян. Особое внимание уделено роли архиереев епархий в деле достижения религиозных свобод персидских армян.

ARMAN ANDRIKYAN - THE SPIRITUAL DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THE LEGAL-POLITICAL SITUATION OF THE PERSIAN ARMENIANS IN THE SECOND HALF OF THE 19TH CENTURY

Keywords: *Dioceses of the Armenian Apostolic Church in Iran, Diocese of Atrpatakan, Diocese of New Julfa and the Indo-Armenian Diocese, Bishop George, Bishop Thaddeus, Nasreddin Shah, forced conversion, church estates.*

The article attempts to reveal the efforts of the Armenian Apostolic Church in Atrpatakan, New Julfa and the Indian-Armenian Dioceses. The article attempts to reveal the efforts of the Armenian Apostolic Church in Atrpatakan, New Julfa and the Indian-Armenian dioceses to improve the legal and political situation of the Persian-Armenians in the second half of the 19th century. A special attention was paid to the patriotic activities of the diocesan leaders, revealing the successes registered in the issue of religious freedom of the Persian-Armenians.

Ներկայացվել է՝ 04.10.2020

Գրախոսվել է՝ 04.10.2020

Երաշխավորվել է ԲՊՀ Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի խորհրդի կողմից՝ 30.09.2020

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

ԼԻԼԻԹ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, անգլերենի ամբիոն, ԲՊՀ

ЛИЛИТ АБРАМЯН - кандидат филологических наук, доцент, каф. английского языка, ГУ им. В. Брюсова

LILIT ABRAHAMYAN - Ph.D, Associate Professor, Chair of English, BSU

ՇԱՐՄԱՂ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, անգլերենի ամբիոն, ԲՊՀ

ШАРМАХ АБРАМЯН - кандидат филологических наук, доцент, каф. английского языка, ГУ им. В. Брюсова

SHARMAGH ABRAHAMYAN - Ph.D, Associate Professor, Chair of English, BSU

ԹԱՄԱՐԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ - հայցորդ, Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոն, ԵՊՀ

ТАМАРА АНДРЕАСЯН - соискатель, каф. истории армянской литературы имени академика Гранта Тамразяна, ЕГУ

TAMARA ANDREASYAN - Ph.D applicant, Chair of History of Armenian Literature after acad. Hrant Tamrazyan, YSU

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ - ասպիրանտ, Աստվածաբանության ֆակուլտետ, ԵՊՀ

АРМАН АНДРИКЯН - аспирант, фак. Богословия, ЕГУ

ARMAN ANDRIKYAN - Ph.D student, Faculty of Theology, YSU

ՍԱԹԵՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ - ավագ դասախոս, էլեկտրոնային ուսուցման և ռեսուրսների բաժնի ղեկավար, ԲՊՀ

САТЕНИКАРАКЕЛЯН - старший преподаватель, руководитель отдела электронного обучения и электронных ресурсов, ГУ им. В. Брюсова

SATENIK ARAKELYAN - Senior Lecturer, Head of E-Learning and Electronic Resources Division, BSU

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ - ասպիրանտ, անգլերենի ամբիոն, ԲՊՀ

АННА АВETИСЯН - аспирант, каф. английского языка, ГУ им. В. Брюсова

ANNA AVETISYAN - Ph.D Student, Chair of English, BSU

ՎԱՇԵ ԱՐՍԵՆՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, արտասահմանյան գրականության ամբիոն, ԵՊՀ

ВАГЕ АРСЕНЯН - кандидат филологических наук , доцент, каф. иностранной литературы, ЕГУ

VAHE ARSENYAN - PhD, Associate Professor, Chair of Foreign Literature, YSU

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵԴՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, անգլերենի ամբիոն, ԲՊՀ

ГАЯНЕ БАРСЕГЯН - кандидат филологических наук, старший преподаватель, каф. английского языка, ГУ им. В. Брюсова

GAYANE BARSEGHYAN - Ph.D, senior lecturer, Chair of English, BSU

ՎԱԼՏԵՐ ԲԵՐԲԵՐՅԱՆ - մագիստրոս, հայ բանասիրության ֆակուլտետ, մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն, ԵՊՀ

ВАЛЬТЕР БЕРБЕРЯН - магистр, факультет армянской филологии, Центр педагогики и развития образования, ЕГУ

VALTER BERBERYAN - MA Student, Faculty of Armenian Philology, Pedagogy and Education Development Center, YSU

ՆԱՐԻՆԵ ԳԻՇՅԱՆ - դասախոս, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԲՊՀ

НАРИНЕ ГИШЯН - преподаватель, каф. коммуникации и перевода английского языка, ГУ им. В. Брюсова

NARINE GISHYAN - lecturer, Chair of English Communication and Translation, BSU

ԱՆՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆ - ասպիրանտ, հայոց լեզվի ամբիոն, ԵՊՀ

АНУШ ХАЧАТРЯН - аспирант, каф. армянского языка, ЕГУ

ANOUSH KHACHATRYAN - PhD student, Chair of Armenian language, YSU

ԹԱԳՈՒՇԻ ԽՈՋԱՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, գերմաներենի ամբիոն, ԲՊՀ

ТАГУИ ХОДЖАЯН - кандидат филологических наук, доцент, каф. немецкого языка, ГУ им. В. Брюсова

TAGUHI KHOJAYAN - Ph.D, Associate Professor, Chair of German, BSU

ԴԻԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԲՊՀ

ДИАНА АМБАРЦУМЯН - доктор филологических наук, профессор, каф.

комуникации и перевода английского языка, ГУ им. В. Брюсова
DIANA HAMBARDZUMYAN - Doctor in Philology, Professor, Chair of English Communication and Translation, BSU

ԷԴՈՒԱՐԴ ՀԱՅՎԱԶՅԱՆ - տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլեկտրոնային ուսուցման և ռեսուրսների բաժին, ԲՊՀ

ЭДУАРД АЙКАЗЯН - кандидат технических наук, доцент, отдел электронного обучения и электронных ресурсов, ГУ им. В. Брюсова

EDUARD HAYKAZYAN - Ph.D, Associate Professor, e-Learning and Electronic Resources Division, BSU

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - պ.գ.թ., գիտության բաժնի պետ, ԲՊՀ

КАРЕН АЙРАПЕТЯН - к.и.н.,, руководитель по научной части, ГУ им. В. Брюсова

KAREN HAYRAPETYAN - Ph. D, Head of the Science Department, BSU

ՆՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ - մագիստրոս, ԲՊՀ

НВАРД КАЗАРЯН - магистрант, ГУ им. В. Брюсова

NVARD GHAZARYAN - MA student, BSU

ՀԱՍՄԻԿ ՃԱՏՈՒՆՑ - հայցորդ, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԲՊՀ

АСМИК ЧАТУНЦ - соискатель, каф. перевода и коммуникации английского языка, ГУ им. В. Брюсова

HASMIK TSHATUNTS - Ph.D applicant, Chair of English Communication and Translation, BSU

ԼԻԼԻԹ ՄՈՎՍԵՍՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն, ԲՊՀ

ЛИЛИТ МОВСЕСЯН - кандидат филологических наук, старший преподаватель, каф. языкознания и теории коммуникации, ГУ им. В. Брюсова

LILIT MOVSESYAN - Ph.D, senior lecturer, Chair of Linguistics and Theory of Communication, BSU

ԱՆՆԱ ՇԱՀԲԱԶՅԱՆ - դասախոս, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԲՊՀ

АННА ШАХБАЗЯН - преподаватель, каф. перевода и коммуникации английского языка, ГУ им. В. Брюсова

ANNA SHAHBAZYAN - lecturer, Chair of English Communication and Translation, BSU

ԱԼԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դասախոս, Օտար լեզուների ամբիոն, ԵՊԲՀ
АЛИНА ПЕТРОСЯН - кандидат филологических наук, преподаватель, каф. иностранных языков, ЕГМУ
ALINA PETROSYAN - Ph.D, lecturer, Department of Foreign Languages, YSMU

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ - դասախոս, անգլերենի ամբիոն, ԲՊՀ
СЮЗАННА СТЕПАНЯН - преподаватель, каф. английского языка, ГУ им. В. Брюсова
SYUZANNA STEPANYAN - lecturer, Chair of English, BSU

ԶԻՆԱ ՕՇԱՆՅԱՆ - բանասիրության մագիստրոս, Երևանի Վ. Տերյանի անվան հ. 60 դպրոցի ուսուցիչ, հայոց լեզվի պատմության ամբիոն, հայ բանասիրության ֆակուլտետ, ԵՊՀ
ЗИНА ОГАНЯН - магистр филологии, учительница школы N60 им. В. Тeryан, кафедра истории армянского языка, факультет армянской филологии, ЕГУ
ZINA OHANYAN - Master of Philology, Teacher at School N60 after V. Teryan, Chair of Armenian Language History, Faculty of Armenian Philology, YSU

Համակարգչային ձևավորումը՝

Հասմիկ Փիլավջյանի,
Աննա Ավետիսյանի

Տպաքանակը՝ 100

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (374 11) 300-150
Էլ. հասցե՝ info@brusov.am
<http://www.brusov.am>

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 1(54) համարը երաշխավորվել է տպագրության ԲԴՀ-ի գիտական խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի № 2 նիստի որոշմամբ: